



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակզդման ուղղությամբ կատարված աշխատանքները.....	3
2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.....	42
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ.....	93
4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ.....	151
5. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.....	155
6. Պետական շահերի պաշտպանության ոլորտ	180
7. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ	196
8. Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ.	219
9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ.....	245
10. 2020թ. պատերազմական գործողությունների ընթացքում արձանագրված հանցագործությունների քննություն.....	259
11.Քաղաքացիների ընդունելության, դիմումների քննարկման և հանրային կապերի ոլորտ.....	277

1. Հանցավորության կառուցվածքը, շարժընթացը. հանցագործությունների դեմ պայքարի, հանցավորության հակազդման ուղղությամբ կատարված աշխատանքները

2020թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ հանրապետությունում հանցավորության հակազդման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության, օրինականության ապահովման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2020թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.468 դեպք (2019թ.՝ 26.850), որոնցից 13.892-ը (2019թ.՝ 14.961)՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերը նվազել են 382-ով կամ 1.4%-ով (2019թ.՝ աճել էին 2172-ով կամ 8.8%-ով):

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ հանցագործությունների դեպքերի նվազումը ապահովվել է ծանր հանցագործությունների հաշվին, մինչդեռ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը աճել են:


Այսպես, ծանր հանցագործությունների դեպքերը 2020թ. նվազել են 413-ով (4490-4077) կամ 9.2%-ով, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործությունները աճել են 16-ով կամ կամ 0.1%-ով (14613-14629), միջին ծանրության հանցագործությունները՝ 3-ով (7463-7466), առանձնապես ծանր հանցագործության դեպքերն աճել են 12-ով կամ 4.2%-ով (284-296):

Տարեթիվը	Հանցագործության դեպքերի ընդհանուր թիվ	ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	միջին ծանրության հանցագործության դեպքեր	ծանր հանցագործության դեպքեր	առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2019	26.850	14.613	7463	4490	284
2020	26.468	14.629	7466	4077	296
2020 թ. աճ/ նվազում	-382 -1.4%	+16 +0.1%	+3	-413 -9.2%	+12 +4.2%

Առանձնապես ծանր հանցագործությունները ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմել են 1.1%-ը (2019թ.՝ 1.1%), իսկ ծանր հանցագործությունները՝ 15.4%-ը (2019թ.՝ 16.7%):

2020թվական

2019 թվական



Վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցագործությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է սեփականության (14.199-13.129 կամ 7.5%-ով) և տնտեսական գործունեության դեմ ուղղված (924-783 կամ 15.3%-ով) հանցագործությունների դեպքերի նվազումով: Մասնավորապես, էականորեն նվազել են անձնական գույքի հափշտակությունների դեպքերը (12.737-11.583 կամ 9.1%-ով), այդ թվում՝ ավագակությունների (62-39 կամ 37.1%-ով), կողոպուտների (186-163 կամ 12.4%-ով), բնակարանային գողությունների դեպքերը (1695-1258 կամ 25.8%-ով), ինչը, անշուշտ, դրական դինամիկայի վկայություն է:

Հանցավորության շարժընթացի դրական դինամիկայի մասին է խոսում նաև դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների և ՃԵԿ-ի կանոնները խախտելու դեպքերի նվազումը, ինչպես նաև առավել լատենտային համարվող թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների, հրազեն, ռազմամթերք պատրաստելու և ապօրինի շրջանառելու դեպքերի հայտնաբերման աճը:

2020թ. թեև ոչ էականորեն, սակայն աճել են մարդու դեմ ուղղված և հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները: Մասնավորապես, աճել են սպանությունների (47-50 կամ 6.4%-ով), սպանության փորձերի (30-39 կամ 30.0%-ով) և խուլիգանության (326-338 կամ 3.7%-ով) դեպքերը:

Ստահոգիչ է հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի աճը: Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության նման դեպքերի թիվն աճել է 9-ով կամ 12.2%-ով (74-83):

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2020 թվականի 1-ին կիսամյակում արձանագրվել է հրազենի գործադրմամբ ավելի շատ դեպք (54), քան ամբողջ 2017 թվականի ընթացքում (52):

Նշված ցուցանիշն առավել մտահոգիչ է այն առումով, որ այն ոչ միայն քանակական, այլ նաև որակական առումով է բացասաբար ազդում հանցավորության մակարդակի վրա: Վերլուծությունը ցույց է տվել, որ հատկապես ավելացել են հրազենի գործադրմամբ սպանության, սպանության փորձի, ավագակության և խուլիգանության դեպքերը: 2020թ. 1-ին կիսամյակում հրազենի գործադրմամբ կատարված հիշյալ 54 հանցագործության դեպքերից 24-ը սպանության, սպանության փորձի և նախապատրաստության դեպքեր են եղել (համապատասխանաբար՝ 11, 12, 1): Ամբողջ 2019 թվականի ընթացքում արձանագրվել է հրազենի գործադրմամբ խուլիգանության 11 դեպք, իսկ միայն 2020 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է նման 18 դեպք:

Հրազենի գործադրմամբ դեպքերի վերլուծության արդյունքներով, իրավիճակը վերահսկելի դարձնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ոստիկանության պետին տրվել է հանձնարարություն, որի արդյունքներն արդեն իսկ տեսանելի են վիճակի բարելավման առումով: 2020թ. երկրորդ կիսամյակում առաջին կիսամյակի համեմատ էապես նվազել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: Այսպես, երկրորդ կիսամյակում արձանագրվել է 33 նման դեպք՝ առաջի կիսամյակի 50-ի դիմաց:

2020 թվականին հայտնաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 1114 դեպք, որոնցից 157-ը՝ կաշառքի, 160-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով յուրացման, 155-ը՝ պաշտոնեական կեղծիքի, 389-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, 52-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքեր:

Ինչպես վերը նշվեց, 2021թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.468 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է հասնում 894 դեպք (2019թ.՝ 906): Պետք է նշել, որ այս ցուցանիշով մեր երկիրն էական դրական պատկեր է ապահովել:

2021թ. մարտի 3-ին worldpopulationreview.com կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ հանցավորության մակարդակի 2021 թվականի ցուցիչով (ցուցիչը հաշվարկվում է 0-ից 100 ինդեքսով՝ հանցավորության ցածր մակարդակից դեպի բարձր մակարդակ կարգով) Հայաստանը զբաղեցնում է 12-րդ տեղը՝ 22.69 ինդեքսով՝ առաջ անցնելով ինչպես ԱՊՀ բոլոր երկրներից, այնպես էլ՝ եվրոպական երկրների մեծ մասից¹: Համեմատության համար նշենք, որ Բելառուսը զբաղեցնում է 17-րդ տեղը՝ 25.02 ինդեքսով, Ֆինլանդիան՝ 19-րդ տեղը՝ 25.53 ինդեքսով, Ղանիան՝ 20-րդ տեղը՝ 26.09 ինդեքսով, Գերմանիան՝ 42-րդ տեղը՝ 34.14 ինդեքսով, Ռուսաստանը՝ 53-րդ տեղը՝ 40.6 ինդեքսով, Ղազախստանը՝ 98-րդ տեղը՝ 54.81 ինդեքսով:

Հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգընթաց՝ 2020թ. արձանագրվել է նաև հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում:

Այսպես, համաձայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2020 թվականին հանրապետության քրեական հետապնդման մարմինների վարույթում գտնված քրեական գործերով և նյութերով անցնող բացահայտման տոկոսում հաշվվող 31.953 դեպքից (2019թ.՝ 30.500) բացահայտվել է 17.806-ը (2019թ.՝ 17.701), չի բացահայտվել 14.147-ը (2019թ.՝ 12.799):

Այսինքն, 2020թ. բացահայտման ցուցանիշը կազմել է 55.7%, նախորդ տարվա 58.0%-ի դիմաց: Այսպիսով, 2019թ. համեմատ, 2020թ. բացահայտման ցուցանիշը նվազել է 2.3%-ով:

Սակայն պետք է փաստել, որ չնայած տոկոսային առումով արձանագրվել է բացահայտման ցուցանիշի նվազում, սակայն բացահայտման աշխատանքների ծավալների որոշակի աճ, այդուհանդերձ, արձանագրվել է: Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ հաշվետու տարում բացահայտվել են 105-ով ավելի հանցագործություններ /17.701-17.806/:

2020թ. նվազել է միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը, իսկ ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշն աճել է:

¹ Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://worldpopulationreview.com/country-rankings/crime-rate-by-country>

Այսպես.

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 42.8%, այն դեպքում, երբ 2019թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը եղել է 45.2%:

Ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 35.3%, այն դեպքում, երբ 2019թ. այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 34.0%:

Առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 54.9%՝ նախորդ տարվա 57.8%-ի դիմաց:

Որպես դրական ցուցանիշ պետք է նշել հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի բարձրացումը: Եթե 2019թ. բացահայտվել էր այդ հանցագործությունների 66.1%-ը, ապա 2020թ.՝ 74.2%-ը:

Ըստ հիմնական հանցատեսակների՝ բացահայտման ընդհանուր ցուցանիշից առավել բարձր է սպանությունների՝ 70.1%, սպանության փորձերի՝ 80.6%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու՝ 83.9%, այդ թվում՝ ծանր՝ 71.8%, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման՝ 82.1%, ավազակության՝ 75.0%, իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելու՝ 83.0% և տրանսպորտային միջոց փախցնելու՝ 74.4% դեպքերի բացահայտման արդյունավետությունը, իսկ ցածր է՝ կեղծ փողեր, արժեթղթեր պատրաստելու, պահելու և իրացնելու դեպքերի՝ 2.4%, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների՝ 2.6%, թմրամիջոցների մաքսանենգության՝ 23.1%, ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության՝ 14.3% դեպքերի արդյունավետությունը:

Չնայած ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշի նվազմանը՝ պետք է փաստել, որ մարդու դեմ ուղղված հանցավորության մակարդակում աճ է արձանագրվել: Այսպես՝ 2020 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4410 դեպք, որոնցից 1763-ը կամ 40.0%-ը՝ Երևան քաղաքում, իսկ 2647-ը կամ 60.0%-ը՝ ՀՀ մարզերում:

Փաստորեն, նախորդ տարվա համեմատությամբ (4293 դեպք), մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերն աճել են 117-ով կամ 2.7%-ով, ինչը, ընդհանուր հանցավորության նվազման ֆոնի վրա, բացասական ցուցանիշ է: Չնայած, փաստենք, որ նախորդ տարիներին արձանագրվել էր մարդու դեմ ուղղված հանցագործությունների անընդմեջ նվազում՝ 2016 թվականի համեմատությամբ 2019 թվականին նվազումը 602-ով կամ 12.3%-ով: Այսպես՝

<i>Տարեթիվը</i>	<i>մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը</i>	<i>Նվազման կամ աճի քանակային ցուցանիշը</i>	<i>Նվազման կամ աճի տոկոսային ցուցանիշը</i>
2016թ.	4895		
2017թ.	4868	-27	-0.6
2018թ.	4799	-69	-1.4
2019թ.	4293	-506	-10.5
2020թ.	4410	+117	+2.7

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ աճը, ի թիվս այլ հանցատեսակների, ապահովվել է նաև սպանության և սպանության փորձի դեպքերի հաշվին: Այսպես՝ սպանության դեպքերն աճել են 3-ով կամ 6.4 %-ով /47-50/, իսկ սպանության փորձի դեպքերը՝ 9-ով կամ 30 %-ով /30-39/: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է սպանության նախապատրաստության 3 դեպք:

Փաստենք, որ սպանության դեպքերի թվի աճն արձանագրվել է մարզերի հաշվին: Այսպես, մարզերում սպանության դեպքերն աճել են 9-ով կամ 30%-ով /30-39/, իսկ Երևան քաղաքում արձանագրվել է սպանության դեպքերի նվազում՝ 35.3 %-ով կամ 6-ով /17-11/:

Դրան հակառակ, սպանության փորձի դեպքերի աճն արձանագրվել է Երևան քաղաքի հաշվին. աճը 10-ով կամ 111.1%-ով (9-19), իսկ մարզերում արձանագրվել է սպանության փորձի դեպքերի նվազում՝ 4.8 %-ով կամ 1-ով (21-20):

2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 50 դեպքից 9-ը վերաբերում է անձի անհետ կորելու փաստին:

Նախորդող տարիներին արձանագրվել էր նշված ցուցանիշի անընդմեջ նվազում, իսկ 2020 թվականին անձի անհետ կորելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործերի թիվը նախորդ տարվա հենմնատությամբ աճել է 8-ով կամ 800%-ով:

Տարեթիվը	2016-2020թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	Որից՝ անհետ կորածների թիվը
2016թ.	66	10
2017թ.	49	6
2018թ.	35	3
2019թ.	47	1
2020թ.	50	9

Հաշվետու ժամանակահատվածի և նախորդող 10 տարիներին արձանագրված սպանությունների տվյալները ներկայացվում է ստորև՝

Տարեթիվը	1995-2011թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	1995-2011թթ. մշտական բնակչության թիվը ՀՀ-ում ² /հազար մարդ/	Գործակիցը 100 հազար մարդու հաշվով
2010 թ.	41	3055.2	1,3
2011 թ.	60	3018.9	2
2012թ.	50	3021.4	1,6
2013թ.	48	3026.9	1,6
2014թ.	53	3017.1	1,7
2015թ.	52	3010.6	1,7

²Մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի ապշտմական կայքից՝ <https://www.armstat.am/file/doc/99520878.pdf> էջ 5:

2016թ.	66	2998.6	2,2
2017թ.	49	2986.1	0,6
2018թ.	35	2972.7	0.8
2019թ.	47	2965.3	0.6
2020թ.	50	2959.7	0.6
Տարեկան միջին	50	3003.0	1

Նշենք, որ 2020 թվականին 100.000 բնակչին բաժին է ընկնում սպանության 0.6 դեպք: Այս ցուցանիշը վերջին 10 տարվա տարեկան միջին ցուցանիշից (1) ցածր է 0.4-ով:

Սպանության դեպքերի աճը, ինչ խոսք, մտահոգիչ է: Սպանությունների վիճակագրությունը, դրա շարժընթացի միտումները, ի թիվս այլ հանգամանքների, կարևորագույն ցուցիչ են յուրաքանչյուր երկրում հանցավորության ընդհանուր վիճակի, հանցավորության դեմ տարվող պայքարի, հատկապես կանխարգելիչ միջոցների, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության, սոցիալ-հոգեբանական բազում գործոնների մակարդակի գնահատման համար:

Նշենք, որ դեռևս 2019 թվականի կիսամյակի տվյալներով ուսումնասիրությունը փաստել էր սպանության դեպքերի աճի միտումը և այս ոլորտի հանցավորության վիճակի վերահսկելիության ցուցիչն իրական գնահատելու նպատակով կատարված ուսումնասիրությունների, ամփոփումների և վերլուծությունների արդյունքներով ՀՀ ոստիկանությանը տրվել են համապատասխան հանձնարարություններ:

2020 թվականին արձանագրված սպանությունների թվում շարունակել են գերակշիռ մաս կազմել հրազենի գործադրմամբ դեպքերը: Բացի այդ, նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ դեպքերի շարքում զգալի մաս են կազմում այնպիսիք, որոնք նախկինում կատարված հանցագործության դեպքերի շարունակությունն են:

Նման իրավիճակում փաստվել է հանցավորության վիճակի ավելի խոր վերլուծության և դրա արդյունքներով առավել համապարփակ լուծումների անհրաժեշտությունը, սակայն ակնհայտ է, որ եթե արձանագրված առանձին դեպքերը կատարվել են պահի ազդեցության տակ առաջացած վիճաբանությունների ընթացքում և ոստիկանության ծառայություններին օբյեկտիվորեն տվյալներ հայտնի չէին կարող լինել դրանց մասին, հետևաբար դրանց նախականխման ուղղությամբ չէին կարող ձեռնարկվել միջոցառումներ, ապա խիստ մտահոգիչ է առանձին դեպքերով հանցագործության նախականխման հնարավորության պայմաններում այդպիսի միջոցառումներ չձեռնարկելը:

Կարծում ենք, այս մասով կանխարգելիչ միջոցառումների պատասխանատու իրավապահ մարմինները լուրջ հետևություն և գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն ունեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է ՀՀ դատախազության ստորաբաժանումներին դատախազական հսկողության գործիքակազմի կիրառմամբ ուշադրություն դարձնել հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով կանխարգելիչ գործողությունների ձեռնարկմանը՝ նախկինում կատարված հանցագործության դեպքերի հնարավոր շարունակության դրսևորումների բացահայտման և բացառման նպատակով:

Հանձնարարվել է սպանության դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում պարտադիր կերպով վերհանել հանցագործության

պատճառները և նպաստող պայմանները, դրանց վերացման նպատակով միջնորդագրեր ներկայացնել համապատասխան իրավասություն ունեցող պետական մարմնին կամ պաշտոնատար անձին:

Ի կատարումն նշված հանձնարարականի՝ հաշվետու ժամանակահատվածում հիմքերի առկայության բոլոր դեպքերում նման միջնորդագրեր են ներկայացվել:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչությունում ուսումնասիրվելու են 2021 թվականի առաջին երեք ամսվա ընթացքում արձանագրված սպանության դեպքերի շարժընթացը, համեմատական վերլուծություն է իրականացվելու 2020 թվականի նույն ժամանակահատվածի հետ, վերհանվելու են սպանության դեպքերի աճի պատճառները և նպաստող պայմանները, դրանց վերացման նպատակով անհրաժեշտ գործողությունների կատարման վերաբերյալ համապատասխան հաղորդում կներկայացվի ՀՀ ոստիկանության պետին:

2020թ. ընթացքում սպանության դեպքերի բացահայտման ցուցանիշը նվազել է, իսկ սպանության փորձի դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ զգալիորեն աճել: Այսպես, եթե 2019թ. սպանության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմում էր 72.7%, ապա 2020թ. այդ ցուցանիշը կազմում է 70.1%: 2019թ. սպանության փորձի դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է 70.5%, ապա 2020թ.՝ 80.6%:

88-ով կամ 7.9%-ով /1112-1024/ նվազել են առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերը: Ընդ որում՝ Երևան քաղաքում նշված դեպքերը նվազել են 80-ով կամ 18.1%-ով, ՀՀ մարզերում՝ 8-ով կամ 1.2%-ով:

Նշենք, որ նվազել են նաև առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ 7-ով կամ 3.0%-ով /231-224/: Ընդ որում՝ Երևանում նշված դեպքերը նվազել են 9-ով կամ 9.8%-ով /92-83/, իսկ մարզերում աճել են 2-ով կամ 1.4%-ով /139-141/: Դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 71.8%՝ նախորդ տարվա 72.2%-ի դիմաց:

Ստորև ներկայացվում է 2010-2020թթ. սպանության, սպանության փորձի, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ինչպես նաև հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործությունների վերաբերյալ աղյուսակը.

Տարեթիվը	Հրազենի գործադրմամբ հանցագործություններ	Սպանություն	Սպանության փորձ	Դիտ. առողջ. ծանր վնաս
2010թ.	66	41	27	167
2011թ.	60	60	29	170
2012թ.	63	50	25	170
2013թ.	66	48	25	186
2014թ.	68	53	28	216
2015թ.	69	52	35	173
2016թ.	62	66	36	200
2017թ.	52	49	23	194
2018թ.	60	35	30	191
2019թ.	74	47	30	231
2020թ.	83	50	39	224

Հաշվետու ժամանակահատվածում բռնաբարության և բռնաբարության փորձի դեպքերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են 2-ով կամ 8.7%-ով (23-25), իսկ, ընդհանուր առմամբ, սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները նվազել են 23-ով կամ 22.1%-ով:

2020 թվականին արձանագրվել է ինքնասպանության և ինքնասպանության փորձի 633 դեպք՝ նախորդ տարվա 613-ի դիմաց: Փաստորեն, այդ դեպքերի թիվն աճել է 20-ով կամ 3.3%-ով: Ընդ որում՝ հաշվետու ժամանակահատվածում ինքնասպանությունների թիվն առանձին կազմել է 183՝ նախորդ տարվա 153-ի դիմաց:

Փաստորեն, ինքնասպանության դեպքերն աճել են 30-ով կամ 20.0%-ով, իսկ ինքնասպանության փորձի դեպքերը նվազել 10-ով կամ 2.0%-ով:

Նշենք, որ 100.000 բնակչի հաշվով ինքնասպանության գործակիցը 2020 թվականին կազմում է 0.16, այնքան, որքան վերջին 10 տարվա տարեկան միջինն է:

Վերջին 10 տարվա ինքնասպանության դեպքերի թիվը և 100 հազար բնակչի հաշվով գործակիցները ներկայացվում են ստորև՝

	Տարեթիվը	Մշտական բնակչության թիվը ՀՀ-ում /հազար մարդ/	Ինքնասպանությունների թիվը	100000 բնակչի հաշվով ինքնասպանությունների գործակիցը
1.	2011 թ.	3018.9	195	0.15
2.	2012թ.	3021.4	214	0.14
3.	2013թ.	3026.9	203	0.15
4.	2014թ.	3017.1	168	0.18
5.	2015թ.	3010.6	208	0.14
6.	2016թ.	2998.6	195	0.15
7.	2017թ.	2986.1	157	0.19
8.	2018թ.	2972.7	179	0.17
9.	2019թ.	2965.3	153	0.19
10.	2020թ.	2959.7	183	0.16
	Տարեկան միջին	3003.0	185.5	0.16

Նշենք, որ 2020 թվականին ինքնասպանության դիմած 183 անձից 68-ը եղել են գործազուրկ, 48-ը՝ թոշակառու:

Նախորդ տարի ինքնասպանության դիմած 153 անձից գործազուրկ են եղել 60-ը, թոշակառու՝ 50-ը:

Փաստորեն, 2019 թվականին ինքնասպանության դիմած 153 անձանց գերակշիռ մասը՝ 110-ը կամ 72%-ը, եղել են գործազուրկ կամ թոշակառու, իսկ հաշվետու ժամանակահատվածում ինքնասպանության դիմած 183 անձից գործազուրկ կամ թոշակառու է եղել 116-ը կամ 63.4 %-ը:

Նշենք, որ, ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի՝ ՀՀ գլխավոր դատախազությունում 2020 թվականին ուսումնասիրվել ու ամփոփվել են ՀՀ-ում վերջին 10 տարիներին՝ 2010-2019թթ. արձանագրված ինքնասպանության և ինքնասպանության փորձի դեպքերը՝ հատկապես ըստ տարիքային ու սոցիալական խմբերի:

Ուսումնասիրությամբ փաստվել է, որ 2015-2019թթ. ինքնասպանություն կատարած անձանց կազմում բացարձակ գերակշիռ մաս են կազմում գործազուրկները և ապա՝ թոշակառուները: Տոկոսը տատանվել է 71-ից մինչև 80, միջինը՝ 76%, իսկ 65 տարեկանից բարձր անձանց ինքնասպանությունների թվում դրսևորվել է ավելացման միտում:

Տվյալները՝ ըստ տարիների՝ ստորև բերված աղյուսակում՝ ներառված նաև 2020 թվականը, երբ այդ թիվը տարեկան միջինից 11%-ով պակաս է:

Տարեթիվը	Ինքնասպանություն կատարած անձանց թիվը	Գործազուրկ և թոշակառու	Գործազուրկ և թոշակառու ինքնասպանություն կատարած անձանց %-ը ընդհանուր ինքնասպանություն կատարածների թվում
2015թ.	208	148	71
2016թ.	195	154	79
2017թ.	157	126	80
2018թ.	179	141	79
2019թ.	153	110	72
2020թ.	183	116	63
Տարեկան միջին	179	133	74

Վերը նշված վերլուծության արդյունքները 65 տարեկանից բարձր անձանց և գործազուրկ թոշակառուների մասով մտահոգիչ է իրավական գերոնտոլոգիայի տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրությունը, իրավական գերոնտոլոգիայի սկզբունքները, միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի պահանջներ, օրինակ՝ «Եվրոպական սոցիալական խարտիան», տարեցների՝ հասարակական կյանքին մասնակցության իրավունքի վերաբերյալ նախատեսում են համապատասխան կարգավորումներ:

«Եվրոպական սոցիալական խարտիայի» 23-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավոր է հնարավորություն տալ տարեց մարդկանց հնարավորին չափ երկար մնալու որպես հասարակության լիարժեք անդամ: Երկար մնալու հնարավորությունը կապվում է ֆիզիկական, հոգեկան և մտավոր կարողությունների հետ:

Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովը «Եվրոպական սոցիալական խարտիայի» 23-րդ հոդվածի դրույթները ձևակերպել է որպես պետություններին ուղղված պահանջ՝ ստեղծելու տարիքային խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն:

ՄԱԿ-ի «Տարեցների համար սկզբունքները» /UNPOP/ ներառում են 18 երաշխավորություն՝ հիմնված 5 սկզբունքի վրա, այդ թվում՝ արժանապատվության, մասնակցության, անկախության, ինքնահաստատման և խնամքի:

Այն հանգամանքի հաշվառմամբ, որ ինքնասպանություն կատարածների կազմում գործազուրկներն են գերակշիռ մաս կազմում, առավել կարևորություն ենք տվել մասնակցության սկզբունքին, նաև այն առումով, որ հենց մասնակցության իրավունքը կարող է պայմանավորել անկախության և արժանապատվության, ինքնահաստատման ու խնամքի սկզբունքները, այսինքն՝ այդ սկզբունքի կենսագործումը կարող է երաշխիք հանդիսանալ մյուս 4 սկզբունքի կենսագործման հարցում:

Մասնակցության սկզբունքը ենթադրում է, որ տարեց մարդիկ պետք է լինեն հասարակությանն ինտեգրված, ակտիվ մասնակցեն քաղաքականությունների ձևավորմանն ու իրականացմանը, որոնք ուղղակիորեն ազդում են նրանց բարեկեցության

վրա, և կիսեն իրենց գիտելիքներն ու հմտություններն ավելի երիտասարդ սերունդների հետ: Տարեց մարդիկ պետք է կարողանան աշխատել ու զարգացնել հանրությանը ծառայելու հնարավորությունը և հանդես գալ որպես կամավորներ՝ իրենց հետաքրքրություններին ու ունակություններին համապատասխան պաշտոններում:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է այս սկզբունքների կենսագործմանն ուղղված միջոցների ձեռնարկում, ինչը կարևոր երաշխիք կհանդիսանա տարեցների ինքնասպանության դեպքերը նվազեցնելու հարցում:

Մարդկանց թրաֆիքինգի արձանագրված դեպքերը նվազել են 2-ով կամ 33.3%-ով (8-6), ինչը պետք է դիտարկել որպես բացասական ցուցանիշ:

Միաժամանակ, պետք է փաստել, որ ավելացել է անչափասների և հոգեկան հիվանդների, այսինքն՝ խոցելի խմբերի նկատմամբ կատարված դեպքերի քանակը, որպիսի հանգամանքը կարելի է գնահատել որպես դրական դինամիկա՝ պրոակտիվ քննության դրսևորում, քանի որ նշված անձինք չէին կարող ինքնուրույն իրենց բացահայտել որպես թրաֆիքինգի զոհեր:

Նվազել են արտաքին թրաֆիքինգի դեպքերը: Թրաֆիքինգի դեպքերի ծանրակշիռ մասը ներքին թրաֆիքինգն է և, հատկապես, հարկադիր աշխատանքի դեպքերը, ինչը բնորոշ է Հայաստանի Հանրապետությանը վերջին տարիներին, և այդ առումով նշված հարցերով էական փոփոխություններ չեն եղել:

Մանկական սեքսի նպատակով երկիր ժամանող զբոսաշրջիկների և նրանց ծագման երկրների հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել:

Մարդու դեմ ուղղված այլ հանցագործություններն աճել են 219-ով կամ 7.3%-ով (3209-2290):

Մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների աճը, ի թիվս այլ հանցատեսակների, ապահովվել է նաև սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքերի հաշվին. աճը՝ 51-ով կամ 20%-ով (257-308), այն դեպքում, երբ նախորդ տարի այդ դեպքերը նվազել էին 42-ով կամ 14.0%-ով (299-257):

Հաշվետու ժամանակահատվածում զգալի չափով աճել են հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը:

2020 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 4910 դեպք՝ նախորդ տարվա 3987 դեպքի դիմաց:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործությունների դեպքերը աճել են 923-ով կամ 23.2%-ով աճ (3987-4910):

Նշենք, որ այս բնույթի հանցագործությունների աճի հիմնական պատճառը ՀՀ ԱԺ-ի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածում կատարված փոփոխությունների և լրացումների (ուժի մեջ է մտել 2020թ. հունվարի 1-ին) արդյունքում մի շարք արարքների, մասնավորապես, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի գննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու քրեականացումն է: Այսպես, միայն նշված հանցատեսակներով 2020 թվականի ընթացքում արձանագրվել է 984 դեպք:

Հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 66.5%՝ նախորդ տարվա 71.9%-ի դիմաց:

Ինչպես նախորդ տարի (39.3%-ով), այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում, արձանագրվել է խուլիգանության դեպքերի աճ 12-ով կամ 3.7%-ով: Նշենք, որ աճն ապահովվել է և՛ Երևան քաղաքի հաշվին՝ 3-ով կամ 1.3%-ով (228-231) և՛ մարզերի՝ 9-ով կամ 9.2%-ով:

Վերջին 5 տարվա կտրվածքով՝ 2016-2020թթ., խուլիգանության դեպքերով դրսևորվում է կայուն աճի միտում՝ 195-202-234-326-338. աճը հաջորդաբար կազմել է 7-32-92-12 կամ 3.6%-15.8%-39.3%-3.7%:

Առավել մտահոգիչ է, որ արձանագրված աճն ապահովվել է նաև զենքի գործադրմամբ խուլիգանությունների հաշվին: Նշված դեպքերն աճել են 11-ով կամ 14.7%-ով: Ընդ որում, աճն ապահովվել է և՛ Երևան քաղաքի հաշվին՝ 6-ով կամ 12.2%-ով (50-56) և՛ մարզերի՝ 5-ով կամ 20.0%-ով (25-30):

Վերջին 5 տարվա կտրվածքով՝ 2016-2020թթ., զենքի գործադրմամբ խուլիգանությունների քանակական ցուցանիշները կազմել են՝ 32-41-53-75-86. աճը հաջորդաբար կազմել է 9-12-22-11 կամ 28.1%-29.3%-41.5%-14.7%:

Գտնում ենք, որ խուլիգանության դեպքերի աճը, ի թիվս այլ հանգամանքների, կարող է պայմանավորված լինել նրանով, որ, ըստ էության, առերևույթ խուլիգանություն հանդիսացող դեպքերը, որոնց հանգամանքներում ներառված են ծեծի և սպառնալիքի հատկանիշներ, առավել հաճախ, քան նախորդող տարիներին, գնահատվում են որպես խուլիգանություն:

Նշված փաստարկի օգտին կարող է խոսել հենց առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերի 88-ով կամ 7.9 %-ով նվազումը (1112-1024) (Ինչպես նշել ենք, խուլիգանության թիվը աճել էր 12-ով կամ 3.7%-ով):

Խուլիգանության դեպքերի աճին զուգահեռ՝ այդ դեպքերի բացահայտման ցուցանիշում արձանագրվել է նվազում 1.3%-ով (50.4%-51.7%):

Եթե հաշվի առնենք խուլիգանության դեպքերի աճի՝ վերը նշված պատճառները, միևնույն ժամանակ այն, որ 2019 թվականին դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու բացահայտման ցուցանիշները նվազել էին, իսկ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ աճել, իսկ արդեն 2020 թվականին, նշված դեպքերի աճին զուգահեռ, կրկին ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման բարելավում է արձանագրվել, ապա կարող ենք արձանագրել, որ խուլիգանության բացահայտման ցուցանիշի անկման պատճառները, ի թիվս այլնի, նույնն են, ինչ որ խուլիգանության դեպքերի աճի պատճառները:

Մյուս կողմից, ցուցանիշների վրա էական ազդեցություն են ունեցել հանցագործությունների հաշվառման գործընթացի իրավական բարեփոխումները: Գաղտնիք չէ, որ նախկինում առկա էր ոստիկանության կողմից «վիճակագրությունը բարելավելու» մղումով դեպքեր թաքցնելու արատավոր պրակտիկան, ինչի համար պատասխանատվության են ենթարկվել ոստիկանության բազմաթիվ աշխատակիցներ: Նման դրսևորումները անհամեմատ նվազել են: Բացի դրանից, շարունակական բարելավման են ենթարկվել քրեական հետապնդման մարմինների՝ հանցագործությունների բացահայտման, հայտնաբերման գործառույթների իրականացման

մասնագիտական, տեխնիկական հնարավորությունները, կատարելագործվել են պրոֆիլակտիկ միջոցները և, ամենակարևորը, հատկապես լատենտային հանցագործությունների դեպքում զգալիորեն աճել է քաղաքացիների նախաձեռնողականությունը, իրավապահ մարմինների հետ համագործակցության մակարդակը:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց հաշվետու ժամանակահատվածում նվազել են ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: Եթե 2019 թվականին արձանագրվել էր նման 1523 դեպք, ապա 2020 թվականին՝ 1360, այսինքն՝ դեպքերը նվազել են 163-ով կամ 10.7%-ով:

Սակայն, սրա հետ մեկտեղ, աճել են մահվան ելքով դեպքերը: Եթե 2019 թվականին արձանագրվել էր նման 226 դեպք, ապա 2020 թվականին՝ 229, այսինքն՝ դեպքերը աճել են 3-ով կամ 1.3%-ով:

2020 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների 1360 դեպքից 541-ը կամ 39.8%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 819-ը կամ 61.2%-ը՝ ՀՀ մարզերում:

Մահվան ելքով արձանագրված 229 դեպքից 59-ը կամ 25.8%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 156-ը կամ 74.2%-ը՝ ՀՀ մարզերում:

Պետք է փաստել, որ թեև ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը նվազել են 163 դեպքով, սակայն այդ նվազումը պայմանավորված է բացառապես Երևան քաղաքում արձանագրված դեպքերի նվազմամբ: Այսպես, 2020 թվականին Երևան քաղաքում արձանագրված դեպքերը 2019 թվականի համեմատությամբ նվազել են 162-ով, իսկ մարզերում՝ ընդամենը մեկ դեպքով: Առավել վատ է պատկերը մահվան ելքով դեպքերով, քանի որ, թեև 2020 թվականին մահվան ելքով դեպքերը ՀՀ-ում ավելացել են 3-ով, սակայն միայն Երևան քաղաքում դրանք նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 11-ով, այսինքն՝ մարզերում արձանագրված մահվան ելքով դեպքերը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 14-ով, կամ 9%-ով (170 դեպք՝ նախորդ տարվա 156-ի դիմաց):

Մահվան ելքով ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կանխարգելման նպատակով դատախազները հետևում են, որպեսզի այդօրինակ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ կիրառվի խիստ պատժողական քաղաքականություն և, հատկապես, բացառվեն ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերն այն իրավիճակներում, երբ անզուգույթությամբ մարդու մահ առաջացրած ճանապարհատրանսպորտային հանցագործությունը հետևանք է ճանապարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտումների, ինչպես նաև մնացած բոլոր այն դեպքերում, երբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը հակասում է այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով այդ ինստիտուտի կիրառման չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին:

Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և անզուգույթությամբ անձանց մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը հիմնականում պայմանավորված են վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելու, երթևեկության հանդիպակաց գոտի դուրս գալու, ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու և մի շարք այլ հանգամանքներով: Հարկ է նշել նաև, որ

քիչ չեն այն դեպքերը, երբ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ է հանդիսանում նաև հետիոտների ոչ իրավաչափ վարքագիծը, որոնք, շատ հաճախ, ոչ սահմանված վայրում են հատում ճանապարհները, որի հետևանքով ստեղծված իրավիճակում վարորդները երբեմն տեխնիկական տեսակետից վրաերթը կանխելու հնարավորություն չեն ունենում:

Ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում հետիոտնային անցումների գծանշումների տեսանելի չլինելու, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցների՝ վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու, տեսանկարահանող և արագաչափ սարքերի բացակայության պատճառով:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քննված մի շարք քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաճախ ճանապարհատրանսպորտային պատահարները տեղի են ունենում ճանապարհի այն հատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական կամ այլ աշխատանքներ, ինչպես նաև քիչ չեն դեպքերը, երբ առերևույթ պատահարի պատճառ է հանդիսանում ճանապարհի տվյալ հատվածում շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված չլինելը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով ճանապարհատրանսպորտային պատահարները նախականիսելու, դրանցում մեղավոր բոլոր անձանց բացահայտելու անհրաժեշտությունից, հանձնարարություն է տրվել ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին՝

- Ապահովել, որպեսզի ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերով, որոնցով դեպքը տեղի է ունեցել նաև առերևույթ շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները պահպանված չլինելու հետևանքով, քննության առարկա դարձվի նաև դրանց պահպանման համար պատասխանատու անձանց արարքը և տրվի քրեաիրավական գնահատական:

- Պատշաճ քննությամբ պարզել կոնկրետ դեպքին նպաստող պատճառներն ու պայմանները՝ հատկապես ճանապարհի, դրա ինժեներական կառույցների համապատասխանությունը գործող ստանդարտներին, դրանց համաչափությանը, և պատկան մարմիններին ներկայացնել միջնորդություններ՝ այդպիսիք վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ, դրանց նկատմամբ ցուցաբերել անհրաժեշտ հետևողականություն:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի՝ Երևան քաղաքի և մարզերի դատախազություններում քարտեզագրվում են այս բնույթի բոլոր դեպքերը, այդ պատկերի հիման վրա վերհանվում են կոնկրետ ճանապարհահատվածների երթևեկության կարգավորման, ճանապարհների կահավորման, ինժեներական կառույցներին առնչվող խնդիրները և կոնկրետ առաջարկներով միջնորդագրեր են ներկայացվում պատկան մարմիններին, որոնք վերջիններիս կողմից պատշաճ արձագանքի անհրաժեշտություն ունեն: Այսպես.

2019թ. ընթացքում Երևան քաղաքի վարչական տարածքում արձանագրված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի ուսումնասիրության և ամփոփման հիման վրա Երևան քաղաքի դատախազի կողմից 2020թ. մարտի 16-ին հանցանքի կատարմանը նպաստող

հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր է ներկայացվել ՀՀ ոստիկանություն՝ մատնանշելով կոնկրետ ճանապարհահատվածներում ճանապարհային նշաններ և լուսացույցներ տեղադրելու, գծանշումներ կատարելու, արագաչափ սարքեր տեղադրելու և ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կանխմանն ուղղված այլ գործողություններ կատարելու անհրաժեշտության մասին:

Միջնորդագրի քննարկման արդյունքում ՀՀ ոստիկանության պետի տեղակալի գրությամբ, ի թիվս այլնի, հայտնվել է, որ Երևան համայնքի ճանապարհների պատշաճ ու ամբողջական կահավորումը ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը մեծապես կախված է երթևեկության կազմակերպման սխեմաներից: Միաժամանակ նշվել է, որ ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 23-ի նիստի թիվ 8 արձանագրային որոշմամբ նախատեսված «Ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման» ժամանակացույցի 3.5 կետի համաձայն՝ ՀՀ համայնքների ղեկավարների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից պետք է ճանապարհային երթևեկության ներկայիս փաստացի կազմակերպման հիման վրա կազմվեն և սահմանված կարգով հաստատվեն ՀՀ քաղաքային բնակավայրերի երթևեկության կազմակերպման սխեմաները:

Վերոնշյալ սխեմաների կազմման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքների մասին տեղեկություններ ստանալու նպատակով Երևան քաղաքի դատախազի կողմից 2020թ. մայիսի 21-ին գրություն է հասցեագրվել Երևանի քաղաքապետին:

2020թ. հունիսի 8-ին Երևանի քաղաքապետարանից ստացված գրության համաձայն՝ հիշյալ հարցը կարգավորելու համար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից մշակվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթ՝ 2020թ. ապրիլի 22-ին ներկայացվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Միաժամանակ հայտնվել է, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Քաղաքապետը տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում իրականացնում է պատվիրակված լիազորություն՝ Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կահավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով»: Նշվել է նաև, որ վերոնշյալ լիազորությունն իրականացնելու համար պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից մշակված ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ այն վերաբերում է համայնքային ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատելուն և թույլատրելուն, ինչպես նաև համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպմանը:

Մինչդեռ, Ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգի 79-րդ կետը, որպես Ճանապարհային երթևեկության կազմակերպման ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղություն, նախատեսում է որպես սկզբնական լուծում ներկայիս փաստացի կազմակերպման (տեղադրված լուսացույցներ, ճանապարհային նշաններ, գծանշումներ, հանրային տրանսպորտի առկա երթուղիներ և այլն) հիման վրա կազմել ՀՀ քաղաքային բնակավայրերի երթևեկության կազմակերպման սխեմաներ, որից հետո, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների առաջարկությունների հիման վրա, ըստ անհրաժեշտության, վերանայել տեղադրված լուսացույցների, ճանապարհային նշանների, գծանշումների, հանրային տրանսպորտի առկա երթուղիների և այլ բաղադրիչների նպատակահարմարությունը և սահմանված կարգով հաստատել սխեմաները:

Այլ կերպ ասած՝ Ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգի 79-րդ կետից բխում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ճանապարհների երթևեկության նշանների տեղակայման ու հանման հարցերի, ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպման բնագավառում իրավասությունների իրացման նախադրյալ պետք է հանդիսանա Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան համայնքում ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության կազմակերպման սխեմաների կազմումը և հաստատումը, առանց որոնց առարկայագուրկ է երթևեկության նշանների տեղակայման ու հանման և երթևեկության կազմակերպման իրականացման բնագավառում Երևանի քաղաքապետարանի լիազորությունների հստակեցումը:

Ընդ որում, ըստ «Ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման» ժամանակացույցի 3.5 կետի՝ սխեմաների կազմման և հաստատման համար վերջնաժամկետ է սահմանված 2018թ. 2-րդ եռամսյակը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով ճանապարհատրանսպորտային հանցագործությունների շարունակական աճի խիստ մտահոգիչ տեմպերը, ճանապարհատրանսպորտային իրավախախտումների նախականիման նշանակությունը և այդ առումով իրավախախտումների պատճառ հանդիսացող հանգամանքները վերացնելու ուղղությամբ առարկայական միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որին մեծապես կարող է նպաստել Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության պատշաճ կահավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների ու լուսացույցների տեղադրման միջոցով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին և Երևանի քաղաքապետին: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին առաջարկվել է հանձնարարել նախարարության լիազորությունների շրջանակներում համապատասխան իրավասու մարմինների հետ քննարկել Երևանի քաղաքապետարանին պետական բյուջեից ֆինանսական միջոցներ հատկացնելու հարցը՝ նշված աշխատանքներն իրականացնելու նպատակով, ինչը կնպաստի Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բարձրացմանը և ճանապարհատրանսպորտային հանցագործությունների նախականիմանը: Երևանի քաղաքապետին առաջարկվել է հանձնարարել հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 23-ի նիստի թիվ 8 արձանագրային որոշմամբ նախատեսված՝ «Ճանապարհային ոստիկանության համակարգի

բարեփոխումների հայեցակարգից բխող միջոցառումների իրականացմանը ժամանակացույցի 3.5 կետով սահմանված՝ Երևան համայնքում երթևեկության կազմակերպման սխեմաների կազմման և սահմանված կարգով հաստատման աշխատանքները, որոնց իրականացումը Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության կազմակերպման ոլորտում առկա խնդիրների լուծման կարևոր միջոց կարող է հանդիսանալ:

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել անտառային ֆոնդի կամ դրանցից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով:

Այսպես, եթե 2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով հարուցվել է 282 գործ, ապա 2020 թվականին՝ 369 գործ, այսինքն՝ դեպքերը աճել են 87-ով կամ 31%-ով:

Ապօրինի ծառահատումների դեպքերի շարունակական բնույթ կրող աճման միտումը պայմանավորված է դրանց լատենտայնության էական նվազմամբ, որն էլ հետևանք է այդ դեպքերի հայտնաբերման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների դրսևորած որոշակի հետևողականության:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ ապօրինի ծառահատումների դեպքերի քանակական աճն անշուշտ պայմանավորված է 2019 թվականին այդ ոլորտում կատարված օրենսդրական համակարգային փոփոխություններով: Մասնավորապես՝ 2019 թվականի հուլիսի 10-ին «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-120-Ն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի դիսպոզիցիան ենթարկվել է խմբագրության, որի արդյունքում քրեական պատասխանատվություն է սահմանվել անտառային հողերում, ինչպես նաև անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում ծառերը, թփերը ապօրինի հատելու կամ ոչնչացնելու, կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելու կամ ոչնչացնելու, ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելու, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելու կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելու համար, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել կամ կատարվել են նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, օրենսդրական փոփոխության արդյունքում նախատեսվել են ավելի խիստ պատիժներ և պատժաչափեր՝ խնդրո հոդվածի (ՀՀ քր. օր.-ի 296-րդ և 297-րդ հոդվածներ) մասերի սանկցիան համահունչ դարձնելով դիսպոզիցիայում նկարագրված գործողությունների բնույթին և ծանրության աստիճանին, որի արդյունքում կստեղծվեն շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ պատժիչ քաղաքականության նախադրյալներ՝ ապահովելով էկոլոգիական բացասական հետևանքների առաջացումը, որը հնարավորություն կտա պետությանը ապահովելու մարդու իրավունքների պաշտպանության՝ իր պոզիտիվ պարտականությունը: Դրա արդյունքում նախկինում որպես ոչ մեծ ծանրության հանցագործություններ որակվող նշված դեպքերը այլևս որակվում և հաշվառվում են որպես միջին ծանրության հանցագործություններ, իսկ միջին ծանրության դեպքերը՝ որակվում և հաշվառվում են որպես ծանր հանցագործություններ:

Մեջբերված օրենսդրական փոփոխության արդյունքում զգալիորեն ընդլայնվել են տվյալ հանցակազմի ինչպես օբյեկտիվ կողմի գործողությունների դրսևորման եղանակները, այնպես էլ՝ հանցագործության առարկաների ցանկը: Ընդ որում, ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորումների, ՀՀ քրեական օրենսգրքի 296-

րդ հողվածի 1-ին մասով արդեն քրեական պատասխանատվություն է նախատեսվել նաև մեկ տարվա ընթացքում նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո ապօրինի ծառահատում կատարելու համար: Բացի այդ, օրենսդրական փոփոխության արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հողվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերում նախատեսվել են նաև քննարկվող հանցակազմը որակյալ դարձնող ծանրացնող այլ հանգամանքներ՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով նաև հանցանքը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելու կամ շահույթ ստանալու նպատակով կատարված լինելու համար:

Եվ վերջապես, նույն օրենսդրական փոփոխության արդյունքում հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքի՝ զգալի վնասի չափ է սահմանվել հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), ինչն էլ ուղղակիորեն ազդել է ապօրինի ծառահատումների վերաբերյալ դեպքերի քանակական աճին:

Ղատախազությունում պարբերաբար ուսումնասիրվել են ապօրինի ծառահատումների դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում ծագած հիմնախնդիրները, որոնք առավելապես վերաբերել են այս բնույթի հանցագործությունների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներին:

Ստահոգիչ է հատկապես այն, որ արձանագրված որոշ դեպքերով հաստատվել է տևական ժամանակ մեծ քանակությամբ ծառահատումներ կատարելու և դրանք անտառտնտեսության տարածքից դուրս բերելու փաստը, որպիսի հանգամանքը դուրս է մնացել ինչպես անմիջական պատասխանատու պատկան մարմինների, այնպես էլ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ծառայությունների տեսադաշտից: Այս ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել Լոռու մարզի դատախազության կողմից, ինչի վկայությունն են նաև պետությանը պատճառված առանձնապես խոշոր չափերի վնասի հայտնաբերման դեպքերը, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է այդ բնույթի դեպքերի հայտնաբերման և բացահայտման ուղղությամբ մարզի դատախազության հետևողականությամբ, որի ընթացքում կոնկրետ քրեական գործերով բացահայտված հիմնախնդիրներով հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմնին՝ այդ բնույթի հանցագործությունների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներն էապես բարելավելու ուղղությամբ գործուն միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Ընդ որում, հանձնարարությունների գերակշիռ մասն ուղղված է եղել նաև բնապահպանական հանցագործությունները բացահայտելուն, այդ ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ արդյունավետ պայքար մղելուն, ապօրինի անտառահատումները և, ըստ այդմ, պետությանը էական վնաս պատճառող դեպքերը կանխելուն, որի արդյունքներով հանձնարարվել է յուրաքանչյուր շաբաթ գրավոր հաղորդում ներկայացնել մարզի դատախազություն՝ ապօրինի ծառահատումների դեմ պայքարում հետաքննության մարմնի կատարած աշխատանքի մասին:

2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի որոշակի աճ է արձանագրվել նաև համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով: Եթե 2019 թվականին արձանագրվել է 46 դեպք, ապա 2020 թվականին՝ 55 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 9-ով կամ 19.6%-ով:

Հաշվետու տարում զգալիորեն աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերը: Եթե 2019 թվականին արձանագրվել է նման բնույթի 586 դեպք, ապա 2020 թվականի ընթացքում՝ 641 դեպք, այսինքն՝ դեպքերը աճել են 55-ով կամ 9.4%-ով:

Այս բնույթի հանցագործությունների դեպքերի աճին առերևույթ նպաստել է Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում պաշտպանության համար ռազմական գործողություններին մասնակցության նպատակով մեծ թվով անձանց տարբեր զինատեսակների և ռազմամթերքի տրամադրումը, ինչը լուրջ վտանգներ է ստեղծել ռազմական գործողությունների ավարտից հետո դրանց ապօրինի շրջանառության համար: Վերջինիս վկայությունն են Արցախից դեպի Հայաստան ապօրինաբար զենք և ռազմամթերք տեղափոխելու բազմաթիվ դեպքերը, դրանցով հարուցված մի քանի տասնյակ քրեական գործերը:

Նաև վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ գտնում ենք, որ իրավապահ մարմինները պետք է էլ ավելի ակտիվացնեն օպերատիվ-հետախուզական աշխատանքները՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ուղղությամբ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նմանատիպ դեպքերի բացահայտումը կարևոր նշանակություն ունի այլ՝ առավել ծանր հանցագործությունների նախականխման առումով:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ ՀՀ գլխավոր դատախազը գրություններ է հասցեագրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին և ՀՀ ոստիկանության պետին՝ անհապաղ ձեռնարկելու անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ զենքի ապօրինի շրջանառության դեպքերը, դրանց գործադրմամբ, ինչպես նաև հնարավոր նախապատրաստվող՝ բռնությամբ զուգորդված հանցագործությունները նախականխելու, կանխելու և բացահայտելու, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ակտիվացնելու ուղղությամբ:

Այդուհանդերձ, այդ աշխատանքներում պետք է բացառվեն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից քրեական վարույթ իրականացնող մարմիններին չճշտված տեղեկություններ փոխանցելու դեպքերը, որը կհանգեցնի ժամանակի և ռեսուրսների անհարկի վատնման: Իսկ քրեական վարույթ իրականացնող մարմիններն էլ ապօրինի կերպով զենք և ռազմամթերք պահելու վերաբերյալ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների տրամադրած տեղեկության հիման վրա անձանց բնակարաններում խուզարկություն նախաձեռնելու հարցը քննարկելիս պետք է խստագույնս պահպանեն Սեպուհ Թադևոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0073/07/15 գործով 2015թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված չափանիշները:

2020թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 1226 դեպք՝ նախորդ տարվա 1088 դեպքի դիմաց: Դեպքերը աճել են 138-ով, կամ 12,7 %-ով) ինչը դրական ցուցանիշ է՝ հաշվի առնելով այդ հանցատեսակների մեծամասնության լատենտային բնույթը:

2020թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 872 դեպք՝ նախորդ տարվա 847 դեպքի դիմաց: Դեպքերը աճել են 25-ով, կամ 3 %-ով:

2020թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների իրացման 532 դեպք՝ նախորդ տարվա 508 դեպքի փոխարեն: Դեպքերը աճել են 24-ով, կամ 4,7 %-ով:

2020թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների մաքսանենգության հետ կապված հանցագործության 222 դեպք՝ նախորդ տարվա 163 դեպքի փոխարեն: Դեպքերը աճել են 59-ով, կամ 36,2 %-ով: Թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի աճին գուցա հեն էական նվազել է նման դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 23.1%՝ նախորդ տարվա 39.0%-ի դիմաց:

Թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտման նման բացասական վիճակագրությունն ունի և՛ օբյեկտիվ և՛ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ կարող է համարվել այն հանգամանքը, որ տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի որոշ գործողություններ կատարվում են ՀՀ սահմաններից դուրս և քրեական հետապնդման մարմինները զրկված են արագ ու նպատակային գործողություններ ձեռնարկելու հնարավորությունից, միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացվող քննչական պահանջները ոչ միշտ են պատշաճ կատարվում, իսկ ստացված արդյունքները լինում են ժամանակավրեպ: Միևնույն ժամանակ, այս հանցատեսակի քննության մեթոդիկան ևս ունի վերանայման կարիք, որի ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է օպերատիվ խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության և ՀՀ ՊԵԿ-ի ղեկավար անձնակազմը, արդյունքում մշակվել են այս հանցատեսակի դեմ պայքարի քաղաքականություն, օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների հաջորդականությունն ու ծավալը, որը, կարծում ենք, հետագայում կտա իր արդյունքները:

Չնայած արձանագրված դեպքերի աճին, 2020թ. ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ նվազել է առգրավված հոգեմետ նյութերի և թմրամիջոցների քանակը:

Ի հակադրություն դրան՝ 2020թ. ընթացքում ավելացել է ավելի բարձր վտանգավորություն ներկայացնող այնպիսի թմրամիջոցների առգրավումը, ինչպիսիք են՝ կոկաինը (2019թ.՝ 45.83գ.-2020թ.՝ 91.251գ.), հերոինը (2019թ.՝ 1268.181գ.-2020թ.՝ 13067.834գ.), ամֆետամինը (2019թ.՝ 0.0158գ.-2020թ.՝ 8.57գ.) և մեթադոնը (2019թ.՝ 40.57819գ.-2020թ.՝ 119.197664գ.):

2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զգալի աճ է արձանագրվել նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով: Եթե 2019 թվականին արձանագրվել է 418 դեպք, ապա 2020 թվականին արձանագրվել է այդպիսի 1290 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 872-ով կամ 208.6%-ով:

Ինչպես վերն արդեն իսկ նշվել է, հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորված է 2020թ. հունվարի 1-ից տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի գննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու արարքների քրեականացմամբ: Այսպես, 2020 թվականի ընթացքում արձանագրվել է նման 984 դեպք, որոնցով հարուցվել է 974 քրեական գործ:

Նման վիճակագրությունը վկայում է, որ նշված արարքների քրեականացումը, պատասխանատվության խստացումը և այդպիսի դեպքերի հայտնաբերումն ու օբյեկտիվ քրեաիրավական գնահատական տալը

էականորեն մեծացնում են քրեական հետապնդման մարմինների՝ առանց այն էլ զգալի ծանրաբեռնվածությունը, որը, սակայն, այն «գինն» է, որ վճարվում է պետության կողմից մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության՝ իր պոզիտիվ պարտականությունն ապահովելու համար:

Պետության կողմից այս ուղղությամբ իրականացվող քրեական քաղաքականությունն ուղղված է ճանապարհատրանսպորտային պատահարների նվազմանը, տրանսպորտային երթևեկության անվտանգության ապահովմանը, որը, կարծես թե, տվել է իր դրական արդյունքը: Մասնավորապես՝ եթե 2019 թվականին ճանապարհատրանսպորտային պատահարների քանակն ավելացել էր 225 դեպքով, ապա 2020 թվականին այն՝ տրանսպորտային միջոցների քանակի աճին զուգահեռ՝ նվազել է 163 դեպքով:

Տվյալ դեպքում, առաջնայինը հենց նման նվազման շարունակականության ապահովումն է, անշեղ միտումների վերածելը, իսկ քրեական պատասխանատվության ապահովումն առավելապես զսպող, կանխարգելիչ նշանակություն կարող է ունենալ:

Ուսումնասիրությունը վկայում է, որ հանցավորության մակարդակի, հանրային համերաշխության ու անվտանգության վրա էական բացասական ազդեցություն են ունենում անհանդուրժողականության, ագրեսիայի և ատելության խոսքի դրսևորումների աճի տեմպերը: Ավելին, այդպիսի դինամիկան լուրջ վտանգներ է ստեղծել մեր երկրում ներքին կայունության, անվտանգության ապահովման համար: Հատկապես 2020 թվականի նոյեմբերի 9-ին հաջորդող ժամանակահատվածում այդ վտանգներն ավելի ակնառու դարձան:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմը, ինչպես օրինաչափորեն բնորոշ է նմանատիպ իրավիճակներին, էականորեն ավելացրել է ՀՀ տարածք ապօրինի զենք-զինամթերքի տեղափոխման, ապօրինի պահման, շրջանառման, հանցավոր նպատակներով դրանց օգտագործման ռիսկերը: Դրա մասին են վկայում արդեն իսկ բացահայտված հանցավոր դեպքերը, հարուցված բազմաթիվ քրեական գործերը: Այդ ռիսկերն էլ ավելի են մեծանում հատկապես ներքին հասարակական անկայունության պայմաններում: Իսկ ռազմական դրության պայմաններում զանգվածային անկարգությունները, օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքների կազմակերպումը՝ հաճախ միաժամանակ հակընդդեմ տարբեր շրջանակների կողմից անցկացվելով, դրանց ընթացքում արվող առանձին հայտարարություններում դրսևորվող ագրեսիան, ատելության խոսքը լուրջ նախադրյալներ են ստեղծել նման ապակայունացման համար:

Վերոնշյալ իրողություններն իրենց ընդհանրության մեջ հանրապետությունում զգալիորեն ավելացրել են հանցածին ռիսկերի, հասարակական անվտանգության և իրավակարգի սպառնալիքները՝ բազմապատկելով հանցագործությունների կանխարգելմանը, հանցավոր դրսևորումների բացահայտմանը և իրավական ներգործության միջոցների կիրառմանն ուղղված իրավապահ մարմինների ջանքերը: Վերջիններս այս օրերին գործում են ուժերի գերլարումով՝ խնդիր ունենալով՝ մի կողմից՝ ապահովելու քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հասարակական կյանքի բնականոն կենսագործունեությունը, մյուս կողմից՝ վերահսկելու օպերատիվ իրավիճակը՝ պետական անվտանգության համատեքստում:

Վերը նշվածի հաշվառմամբ մեր կողմից անհրաժեշտություն է դիտարկվում հիշատակված բացասական գործոնների չեզոքացման, կանխարգելման պատշաճ գործիքակազմի ապահովումը:

Կարծիքի ազատ արտահայտման հիմնարար իրավունքը ժողովրդավարական պետության անկյունաքարային արժեքներից է և ժամանակակից քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման կարևոր միջոց, որին համարժեք սահմանադրական մակարդակով Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է այդ իրավունքի իրացումը, և պետության պոզիտիվ պարտականությունն է սահմանել անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր այդ իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման համար: Միաժամանակ, կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել միայն օրենքով և Սահմանադրությամբ կանխորոշված պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ինչպես այլ հիմնական իրավունքների սահմանափակման, այնպես էլ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի սահմանափակման դեպքում պետք է առաջնորդվել համաչափության ընդհանուր իրավական սկզբունքով՝ ապահովելով նաև այդ իրավունքի էության անխախտելիությունը: Խոսքի ազատությունը կարող է պաշտպանվել պետության կողմից միայն այն դեպքում, երբ այն իր ձևով և բովանդակությամբ պահպանում է համաչափության սկզբունքը՝ ապահովելով ողջամիտ հավասարակշռություն մի կողմից՝ խոսքի ազատության իրավունքից օգտվողի՝ այդ իրավունքից օգտվելու իրավունքի, և մյուս կողմից՝ հանրային և (կամ) մասնավոր շահի միջև:

Այս հարցում յուրաքանչյուր պետության առաջնային խնդիրն է գտնել այդ ողջամիտ հավասարակշռությունը և այն ամրագրել սահմանադրական ու օրենսդրական մակարդակում և հուսալի ու արդյունավետ իրացնել նաև իրավակիրառ պրակտիկայում: Ընդ որում, այդ ողջամիտ հավասարակշռությունն ինքնին կաղապարված և քարացած երևույթ չէ: Վերջինիս լիարժեք ճանաչողությունն ու ամբողջական պատկերի բացահայտումն է այն միջոցը, որը հնարավորություն կտա ապահովելու հասարակական ներդաշնակությունը՝ խոսքի ազատության իրավունքի և անխախտելի ու անօտարելի արժանապատվության՝ որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքի համատեղ գոյակցման, միջոցով: Այս առումով պետության քաղաքականությունը չի կարող անմաս մնալ հասարակության իրավագիտակցության մակարդակից, հանրային և մասնավոր հարաբերությունների բնույթից: Որքան հանրային իշխանություն կրողների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների հանրային-քաղաքական վարքագիծը, ինչպես նաև անձի սոցիալական վարքագիծը, սահմանադրականացված է, այնքան խոսքի ազատության իրավունքի իրական ուժն առավել տեսանելի է և պիտանի: Հակառակ դեպքում, փորձ է արվում խոսքի ազատության իրավունքի ներքո պաշտպանության արժանացնել վիրավորանքը, զրպարտությունը, ատելության խոսքը: Խնդիրն առավել քան արդիական է դառնում տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի հնարավորությունների ընդլայնման պայմաններում, երբ դրանք, ինքնին կարևորվելով որպես խոսքի ազատության իրացման ժամանակակից միջոց և հարթակ, օգտագործվում են այլոց վիրավորելու և զրպարտելու, ատելության խոսք տարածելու, քարոզելու համար: Ընդ որում, հաճախ այն անցնում է նաև ողջամիտ բանականության և բանականության սահմանները, խաթարում է հասարակության մեջ պատմականորեն արմատացած և կարևորված գաղափարները, ինստիտուտները: Նման իրավիճակի ծայրահեղ դրսևորումն այն է, որ ոչ միայն հրապարակային վիրավորանքը և զրպարտությունը դառնում են առօրյա և կենսակերպ, այլ երբ դրանք զուգակցված են

բռնության կոչերով, ուղղված են խտրականության կամ թշնամանքի հարուցմանը: Ավելին, անհանդուրժողական խոսքը, վիրավորանքը հաճախ վերաճում են հանցագործության, հետևաբար, իրենց ազդեցությունն են ունենում հանցավորության ընդհանուր մակարդակի վրա: Այդ մասին են վկայում նաև վիճակագրական տվյալները: Այսպես.

2020 թվականի ընթացքում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքերը շեշտակի ավելացել են. 2019 թվականին՝ 210 դեպք, 2020 թվականին՝ 302 (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված): Բացի այդ, եթե 2018 թվականի ընթացքում գրանցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) 1-ին մասով նախատեսված արարքի 42, 2019 թվականին՝ 41 դեպք, ապա 2020 թվականին՝ 55 դեպք: Նույն պատկերն է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի վիճակագրության մասով: Այսպես. 2019 թվականին արձանագրվել է այդպիսի 4 դեպք, իսկ 2020 թվականին՝ կրկնակի ավելի՝ 8 դեպք: Պատկերը նույն է նաև խնդրո առարկային վերաբերող այլ հանցանքների մասով: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասով (Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով) նախատեսված արարքներով 2019 թվականին որևէ դեպք չի արձանագրվել, մինչդեռ 2020 թվականին արձանագրվել է այդպիսի 5 դեպք:

Պատկերը մտահոգիչ է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածի վիճակագրության մասով: 2020 թվականի ընթացքում արձանագրվել է 17 դեպք: Իրավիճակի իրական լրջությունն ավելի է հստակեցվում, երբ փաստում ենք, որ նշյալ հոդվածը ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է 2020 թվականի ապրիլի 15-ին և ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 16-ին:

Միաժամանակ, ժամանակակից աշխարհը բախվել է նոր մարտահրավերի, այսպես կոչված, ֆեյքերի (fake, deepfake), որն իրական սպառնալիք է ամբողջ մարդկության համար, ինչից անմասն չի մնում նաև Հայաստանը, որտեղ ֆեյք էջերը և դրանցով տարածվող ապատեղեկատվությունը հեղեղել են հայկական տեղեկատվական դաշտը: Նման երևույթների դեմ պայքարն առավել քան կենսական է, քանզի ֆեյք էջեր վարողները, առավել ևս՝ դրանք կառավարողները, ֆինանսավորողները, դժվար բացահայտվելու հանգամանքից օգտվելով, ոչ միայն տարածում են ապատեղեկատվություն, այլև վիրավորանք, գրպարտություն, խտրականություն, ատելության խոսք: Այս առնչությամբ գտնում ենք, որ ժամանակն է խորքային առումով ձեռնամուխ լինելու տեղեկատվական անվտանգության հայեցակարգի մշակմանը և իրացմանը՝ որպես իրավական անվտանգության բաղկացուցիչ մաս, որում պետք է տեսանելի լինի պետության կողմից ձեռնարկվելիք քայլերը տեղեկատվական անվտանգության ոլորտում, այդ թվում՝ ֆեյքերի դեմ պայքար, օրենսդիր, գործադիր իշխանություն-իրավապահ համակարգ սերտ փոխգործակցություն՝ ուղղված իրավապահ համակարգի աշխատակիցների հմտությունների բարձրացմանը, տեխնոլոգիական նոր լուծումների ներդրմանը և այլն: Դեռևս որևէ երկրի կամ համաշխարհային կազմակերպության չի հաջողվել ֆեյքերի դեմ իրավական պայքարի լիարժեք գործիքակազմ ներդնել: Գաղափարները բազմազան են՝ ընդհուպ մինչև արհեստական բանականության միջոցով դրանց բացահայտումը, գնահատումը, դասակարգումը, արգելափակումը, սոցիալական կայքերի դեպքում որոշակի թվով օգտատերերի քանակից ավելի օգտատերեր տվյալ երկրից գրանցված ունենալու

դեպքում որոշակի հավելյալ պահանջներ՝ ուղղված այդ սոցիալական կայքերին և այլն: Այսքանով հանդերձ, որքան էլ լուծումները բարդ լինեն, իսկ բացահայտելը և պայքարելը՝ օբյեկտիվորեն դժվար, ընդհանրապես միջոցներ չձեռնարկելը կամ պատրաստի դեղատոմսի սպասումը կարող է անդառնալի հետևանքների հանգեցնել՝ խաթարելով իշխանության հանդեպ հանրային վստահությունը և հասարակական համերաշխ գոյը:

Նման իրականությունը քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման ճանապարհ ընտրած յուրաքանչյուր ժողովրդավարական պետության համար բացարձակ անընդունելի է և հարկավոր է օրինական ու պիտանի միջոցներով վերականգնել խախտված ներդաշնակությունը: Այս առումով առավել խրախուսելի և կայուն է գաղափարական-դաստիարակչական միջոցների գործադրումը, ուստի պետությունը պետք է համոզման մեթոդի ողջ հնարավորություններն օգտագործի երկարաժամկետ առումով խնդիրը կարգավորելու համար: Միաժամանակ, բռնության կոչերի, վիրավորանքի, զրպարտության, ինչպես նաև անհանդուրժողականության դեմ հնարավոր չէ պայքարել միայն գիտակցական մակարդակում ներագդման միջոցներով: Այն անհրաժեշտ, բայց ոչ բավարար միջոց է՝ հատկապես, երբ նշված բացասական երևույթների դրսևորման բնույթը և մասշտաբը, զարգացման տեմպը բավական ընդարձակվել և արագացել է: Ըստ այդմ, պետության պարտականությունն է իրավական համարժեք գործիքակազմով պաշտպանել բարեխիղճ և իրավահպատակ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է հանրային ծառայության մեջ գտնվող անձին:

Ատելության խոսքի՝ խոսքի ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինելու մասին բազմիցս արձանագրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), որի նախադեպային իրավունքի համաձայն՝ «ատելության խոսքը» դուրս է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական պաշտպանության շրջանակներից, քանի որ դրսևորվում է 17-րդ հոդվածի (իրավունքների չարաշահման արգելումը) խախտմամբ և հակասում է Կոնվենցիայի հիմքում դրված հիմնարար սկզբունքներին: Եվրոպական դատարանը նշել է, որ զրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը, կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 10-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի:

Ավելին, միջազգային բազմաթիվ փաստաթղթերում շեշտադրվում է իրական միջոցներով ատելության խոսքի դեմ պայքարելու կարևորության և պետությունների դրական պատասխանատվության մասին (*մասնավորապես, Եվրոպայի Խորհրդի թիվ R (97) 20 հանձնարարական, Ռասիզմի և այլատյացության որոշ ձևերի և արտահայտությունների դեմ պայքարի մասին ԵՄ շրջանակային որոշում, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Եվրոպական հանձնաժողովի «ատելության*

խոսքի» դեմ պայքարի թիվ 15 հանձնարարական, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 19-րդ և 20-րդ հոդվածներ):

Այսինքն, միջազգային-իրավական առումով ընդունելի ընդհանուր մոտեցումն այն է, որ վիրավորական, գրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա խախտված անձնական իրավունքների վերականգնման արդյունավետ միջոց, որը կարող է դրսևորվել նաև քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Այս մոտեցմանը համահունչ՝ ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված որոշ հանցագործություններ կատարելու հրապարակային կոչերի համար: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի, 385-րդ հոդվածը՝ ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերի համար: ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասում և 225.1 հոդվածի 2-րդ մասում քրեական պատասխանատվություն է նախատեսված զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերի և հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերի համար, իսկ 226.1 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ահաբեկչությունը, միջազգային ահաբեկչությունը, ահաբեկչության ֆինանսավորումը հրապարակայնորեն արդարացնելու, քարոզելու կամ քրեական օրենսգրքի հոդվածներ 217-ով, 217.1-ով կամ 389-ով նախատեսված հանցանք կատարելու հրապարակային կոչերի համար:

Այս առումով կարևորվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքում 2020 թվականին կատարված այն լրացումը, որով քրեական պատասխանատվություն նախատեսվեց բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար (226.2 հոդված):

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ ՀՀ դատախազության կողմից մշակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է հասարակական վայրերում, զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային կայքերով (այդ թվում՝ սոցիալական ցանցերով) խոսքի, պատկերի, նշանի կամ այլ միջոցով հրապարակային հայհոյանքը կամ ցանկացած ձևով անպարկեշտ վիրավորանքը, եթե չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, նախատեսել որպես վարչական իրավախախտում և սահմանել տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսունապատիկի չափով:

Նախագծի ընդունման հիմնավորումը այն է, որ զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային կայքերով (այդ թվում՝ սոցիալական ցանցերով) կարելի է ականատեսը լինել հայհոյանքի, որն իր բնույթով հրապարակային է: Հաշվի առնելով հայհոյանքի դրսևորման բնույթը, այն է՝ հրապարակայնությունը, առկա է այդպիսի վարքագիծը պետության կողմից համարժեք իրավական գնահատականի արժանացնելու խնդիր, քանզի հրապարակային հայհոյանքով խաթարվում են սոցիալական բնական հարաբերությունը, հասարակական համերաշխությունը: Հրապարակային հայհոյանքը

կարող է ուղղված լինել ինչպես անհատի կամ անհատների հստակ որոշելի խմբի, այնպես էլ անորոշ թվով անձանց: Բացի այդ, այն կարող է դրսևորվել նաև առանց անհատականացման, ընդհանրացված ձևով: Անկախ նրանից, թե նշված դրսևորումներից որն է տեղի ունենում, արդյունքում, վնաս է հասցվում ոչ միայն կոնկրետ հասցեատիրոջը, այլև՝ ողջ հանրությանը, քանզի այն դրսևորվել է հրապարակային եղանակով, ինչը, ինքնին, վկայում է արարքի հանրային որոշակի վտանգավորության, հանրային բարքերի և բարոյական նորմերի, համակեցության ողջամիտ կանոնների նկատմամբ անտարբեր, ընդհուպ մինչև անհարգալից վերաբերմունքի մասին: Այսինքն, նման դեպքում անձի արարքը ոչ միայն մասնավոր, այլև հանրային իրավունքի կողմից կարգավորման առարկա պետք է դառնա: Առավել ևս, երբ դրա դրսևորումներից մեկը՝ առանց անհատականացման, ընդհանրացված ձևով հայտնանքը, չի կարող պաշտպանության արժանանալ քաղաքացիաիրավական դաշտում, քանզի առկա չէ հայտնանքի կոնկրետ հասցեատերը, անձը, որի քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավունքը խախտվել է:

Նշյալ նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարին՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

Հարկ է նկատի ունենալ, որ վիրավորանքը, զրպարտությունը կարող են դրսևորվել ոչ միայն մասնավոր հարաբերությունների դաշտում, այլև ուղղված լինել հանրային ծառայության մեջ գտնվող անձին և ուղղակիորեն կապված լինել նրա կարգավիճակի հետ: Այսպիսի դեպքերի հաշվառմամբ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսել մի շարք արարքների կատարման համար: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 344-րդ հոդվածը՝ դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ հարկադիր կատարողին զրպարտելու, 347-րդ հոդվածը՝ նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքի կամ բռնի գործողությունների համար:

Քրեորեն պատժելի այս արարքները, անշուշտ, ի ցույց են դնում պետության վերաբերմունքը պետական իշխանության կողմների մի մասի նկատմամբ, սակայն գտնում ենք, որ առկա իրականության պայմաններում, երբ հանրային հարաբերությունների որակը դեռևս ցանկալի մակարդակի վրա չէ և հանրային աշխատողները հաճախ են թիրախավորվում, անհրաժեշտ են քրեաիրավական պաշտպանության հավելյալ միջոցներ՝ ապահովելու ոչ թե միայն մի խումբ պաշտոնատար անձանց, այլ նաև հանրային ծառայության մեջ գտնվող ցանկացած անձի պաշտպանություն: Այսպես.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքում իշխանության ներկայացուցիչ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայող այն անձը, որը ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված է կարգադրիչ լիազորություններով:

Օրենսդրական այս ձևակերպումից բխում է, որ իշխանության ներկայացուցչի պարտադիր տարր է հանդիսանում, ի թիվս այլնի, կարգադրիչ լիազորություններով

օժտված լինելու հանգամանքը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձանց կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրվել կամ բռնություն գործադրելու սպառնալիք է եղել, մինչդեռ հնարավոր չի եղել արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, քանի որ վերը նշված կարգադրիչ լիազորությունը բացակայել է:

Նման իրավիճակները բացառելու և անձանց արարքին պատշաճ, հանրային վտանգավորությանը համարժեք քրեաիրավական գնահատական տալու նպատակից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել կատարելու համապատասխան փոփոխություն ՀՀ քրեական օրենսգրքում, որի միջոցով որպես տուժող հանդես կգան ոչ միայն իշխանության ներկայացուցիչը կամ նրա մերձավոր ազգականը, այլև «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք:

Գործող կարգավորումներով «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, քրեական պատասխանատվություն նախատեսված չէ (որոշակի բառացություն է կազմում ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածը), ինչը հաճախ արարքի որակման առումով խնդիրներ է ստեղծում և հանգեցնում ոչ արդարացի քրեաիրավական գնահատականի:

2) Հանրային կյանքում մարդկային հարաբերությունների որակի նվազումն իր ազդեցությունն է թողել նաև հանրային իշխանության նկատմամբ հարգանքի վրա, ինչի վկայությունն այն է, որ հաճախակիացել են դեպքերը (հաճախ նաև համացանցի միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով), երբ հանրային ծառայության մեջ գտնվող անձին, այդ թվում՝ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձին, վիրավորում կամ զրպարտում են: Ընդ որում, դա դրսևորվում է հրապարակայնորեն և ամենակարևորը՝ ուղղակիորեն փոխկապակցված է լինում տվյալ անձի կարգավիճակի հետ: Այսինքն, անձին վիրավորում կամ զրպարտում են ոչ թե նրան դիտարկելով որպես իրավահարաբերությունների մասնավոր սուբյեկտ, այլ որպես հանրային ծառայության մեջ գտնվող անձի, որը կատարում է իր ծառայողական պարտականությունները: Նման դեպքում, երբ անձին իր ծառայողական պարտականությունները կատարելու համար հասցվում է վիրավորանք կամ զրպարտություն, համարժեք իրավական արձագանք է անհրաժեշտ: Անշուշտ, այս խնդրի ամբողջական և երկարաժամկետ լուծումը պահանջում է գաղափարական-տեղեկատվական մեծ աշխատանք, սակայն խնդիրն իր բնույթով, ծավալով այնքան տարածված է և նաև միտումներ ունի ավելի ընդլայնվելու, որ իրավական պատասխանատվության միջոցով կանխարգելման մեխանիզմներ ներդնելն անհրաժեշտություն է դարձել: Ավելին, հաճախ այդպիսի արարքներն այնքան մեծ հանրային վտանգավորություն են ներկայացնում, որ արարքի համար հարկ է նախատեսել հենց քրեական պատասխանատվություն՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով:

Վերոնշյալ խնդրին իրավական լուծում տալու նպատակով ՀՀ դատախազության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն

և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ և ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն:

Վերոնշյալ երկու խնդիրների կարգավորման նպատակով Նախագծով առաջարկվում է՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասը փոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ նախատեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքում իշխանության ներկայացուցիչ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայող այն անձը, որը ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված է կարգադրիչ լիազորություններով, իսկ 316-րդ հոդվածում՝ իշխանության ներկայացուցիչ է համարվում նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի լրացնել նոր՝ 317¹ հոդվածով, որի 1-ին մասով նախատեսվում է սահմանել, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձին վիրավորելը կամ զրպարտելը, կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Միաժամանակ, Նախագծի նշյալ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է սահմանել, որ այդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցներով կամ հրապարակային այլ եղանակով, կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Այս առումով հարկ է հատուկ շեշտադրել մի քանի հանգամանք.

- այս գաղափարը չի նույնանում ՀՀ քրեական օրենսգրքից ապաքրեականացված՝ իշխանության ներկայացուցչին վիրավորելու ինստիտուտի հետ (նախկին 318-րդ հոդված), քանի որ նշյալ նախագծով իրավական պաշտպանության ենթակա անձանց ավելի լայն շրջանակ է ներառված,

- այս գաղափարը նպատակ չունի և չի կարող փոխարինել քաղաքացիաիրավական հարաբերություններով կարգավորվող վիրավորանքի և զրպարտության ինստիտուտին, քանի որ, ինչպես նշվեց, այն մասնավոր իրավական բնույթ ունի և չի փոխկապակցվում անձի կողմից իր ծառայողական լիազորությունները կատարելու հետ:

Ակնհայտ է և իրավական պետության հրամակայանն է, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձը, առավել ևս՝ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձը, վիրավորանքի կամ զրպարտության երևույթների նպատմամբ առավել հանդուրժող պետք է լինի և քաղաքացիական հասարակությունը կարող է քննադատաբար արտահայտվել նրանց նկատմամբ, առավել ևս, երբ խոսքը գնահատողական դատողության մասին է: Այս մասին բազմիցս փաստել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Միաժամանակ, քննադատական խոսքը չի կարող կարծիքն ազատ արտահայտելու սահմանադրական իրավունքի պաշտպանությանն արժանանալ, եթե այն անցնում է նույնիսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում ընդունելու՝ որոշ չափով խիստ, կոշտ քննադատությունը, որն իր մեջ ոչ միայն վիրավորանք կամ զրպարտություն է պարունակում, այլև կապված է անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, թիրախավորվում են նաև

հանրային ծառայության մեջ գտնվող անձի ընտանիքի անդամները: Նման դեպքում պետության պոզիտիվ պարտականությունն է իրավական մեխանիզմներով պաշտպանել հանրային ծառայության մեջ գտնվող անձանց՝ ի ցույց դնելով պետության պատրաստակամությունը՝ օրինական և թույլատրելի միջոցներով ապահովելու վերջիններիս կողմից իրենց ծառայողական լիազորությունների բնականոն, անշեղ և արդյունավետ իրականացումը: Ընդ որում, կարևոր է շեշտադրել, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձին ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված վիրավորելու կամ զրպարտելու համար քրեական պատասխանատվության նախատեսումը, առաջին հերթին, նպատակ է հետապնդում պաշտպանելու կառավարման կարգը և որպես հարակից նպատակ՝ անձի պատիվն ու արժանապատվությունը: Այսպիսի մոտեցումն անհրաժեշտ է ոչ միայն վերոնշյալ հիմնավորումների առումով, այլև հանրային կառավարման համակարգում աշխատողների՝ պետության հանդեպ վստահության մակարդակը բարձր պահելու և պաշտպանվածության բավարար մակարդակ ապահովելու ու պատշաճ հոգածություն զգալու տեսանկյունից:

Միաժամանակ, արարքների քրեաիրավական դրակման հետ կապված մտահոգությունները փարատելու համար հարկ է նշել, որ, Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս (տվյալ դեպքում՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի), հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2020 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների էական՝ 1070 դեպքով կամ 7.5%-ով նվազում (14.199-13.129), իսկ Երևան քաղաքում դեպքերը նվազել են 1107-ով կամ 12.1%-ով (9176-8069):

Հատկանշական է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ունեին դինամիկ աճի միտում: Համեմատության համար նշենք, որ 2009 թվականին հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 5578 դեպք, իսկ 2019թ.՝ 14.199 դեպք, այսինքն՝ վերջին 10 տարվա ընթացքում սեփականության դեմ ուղղված հանցագործություններն աճել էին գրեթե 3 անգամ:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումն արձանագրվել է հիմնականում անձնական գույքի հափշտակությունների, մասնավորապես՝ գողությունների, այդ թվում՝ բնակարանային գողությունների, յուրացումների և վատնումների հաշվին: Այսպես, գողության դեպքերը նվազել են 1209-ով կամ 11,3%-ով (10.732-9523), բնակարանային գողությունների դեպքերը՝ 437-ով կամ 25.8%-ով /1695-1258/, իսկ յուրացման կամ վատնման դեպքերը՝ 101-ով կամ 16.1%-ով /626-525/:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 46.0%՝ նախորդ տարվա 47.4%-ի դիմաց:

Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է որոշ հանցատեսակների բացահայտման նվազում, մասնավորապես՝ ավազակության դեպքերից բացահայտվել է 75.0%-ը՝ 2019 թվականի 78.8%-ի համեմատ, կողոպուտի դեպքերով՝

52.0%-ը՝ 2019 թվականի 53.9%-ի համեմատ, խարդախության դեպքերով՝ 55.0%-ը՝ 2019 թվականի 60.8%-ի համեմատ:

Դրան զուգահեռ նկատվել է նաև դրական տեղաշարժ բնակարանային գողության բացահայտման ցուցանիշում՝ չնայած այն հեռու է թեկուզև բավարար լինելուց: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում բացահայտումը կազմել է 26.7%՝ 2019 թվականի 21.1%-ի համեմատ:

Պետք է արձանագրել, որ բնակարանային գողությունների դեպքերի նվազումը հիմնականում ապահովվել է Երևան քաղաքում արձանագրված նման դեպքերի էական նվազմամբ: Եթե 2019թ. Երևան քաղաքում արձանագրվել էր բնակարանային գողության 859 դեպք, ապա այս տարի՝ ընդամենը 590 դեպք: Այսինքն՝ Երևան քաղաքում բնակարանային գողությունների դեպքերը նվազել են 269-ով կամ 31.3%-ով: Դրան զուգահեռ աճել է նաև մայրաքաղաքում բնակարանային գողությունների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 22.5%՝ նախորդ տարվա 13.0%-ի դիմաց:

Անհրաժեշտ է փաստել, որ բնակարանային գողությունների թվի նվազումը պայմանավորված է ինչպես 2020թ. մարտ ամսից Covid 19 հիվանդության համավարակով պայմանավորված սահմանափակումներով, այնպես էլ վերջին տարիներին դատախազության նախաձեռնությամբ, ոստիկանության և համայնքների համագործակցությամբ բնակարանային գողությունների նախականխմանն ուղղված միջոցառումներով:

Ինչպես 2019թ., այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության դատախազության տարածքային ստորաբաժանումներն ուսումնասիրել են նախորդ տարի արձանագրված բնակարանային գողությունների դեպքերը, որի արդյունքում առանձնացվել են բնակարանային գողությունների թիվային հատվածները և այդ հատվածներում հերթապահությունը ուժեղացնելու հանձնարարություններ են տրվել ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև միջնորդագրեր են ներկայացվել պատկան մարմիններին՝ այդ հատվածների բազմաբնակարան շենքերի մուտքերը անհրաժեշտ անվտանգության տեխնիկական միջոցներով կահավորելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մասնավորապես, դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի քննարկման արդյունքում միայն Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում 2020թ. ընթացքում տեղադրվել են թվով 210 մուտքի դռներ և 130 կողավորված փականներ /դոմոֆոն/:

Ընդ որում, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևան քաղաքի վարչական շրջաններում, բազմաբնակարան շենքերի փականներով կահավորված մուտքերի թվի աճին զուգահեռ, բնակարանային գողությունների թիվը համաչափորեն նվազում է:

Ավազակության դեպքերի շարժընթացում 2020 թվականի ընթացքում արձանագրվել է որոշակի դրական տեղաշարժ՝ գրանցվել է ավազակության 39 դեպք՝ նախորդ տարվա 62-ի դիմաց, այսինքն՝ դեպքերը նվազել են 23-ով կամ 37.1%-ով:

N	Տարեթիվը	Ավազակություն	Բնակարանային գողություններ
1,	2010թ.	107	1156
2,	2011թ.	106	901

3.	2012թ.	63	1054
4.	2013թ.	73	1323
5.	2014թ.	69	1442
6.	2015թ.	54	1369
7.	2016թ.	53	1250
8..	2017թ.	46	889
9.	2018թ.	47	1438
10.	2019թ.	62	1695
11.	2020թ.	39	1258

Նախորդ տարվա համեմատությամբ, 2020 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված կողոպուտի դեպքերը նվազել են 23-ով կամ 12.4%-ով (186-163), նվազել է նաև դրանց բացահայտումը 52. 0%-ով՝ նախորդ տարվա 53. 9%-ի դիմաց:

2020 թվականի ընթացքում որոշակի բացասական փոփոխություններ են տեղի ունեցել խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի շարժընթացում՝ արձանագրվել է նման հանցագործությունների աճ 80 դեպքով կամ 4.9%-ով (1636-1716):

Որպես նշված հանցատեսակի դեպքերի պատճառ կարելի է նշել այն, որ վերջին ժամանակներում զգալիորեն տարածվել են սոցիալական ցանցերով, մասնավորապես՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցով, օտարերկրյա բանկերից բավականին ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու պատրվակով որոշակի ծախսերի դիմաց անձանցից գումարներ խաբեությամբ հափշտակելու դեպքերը:

Բացի այդ, շատացել են նաև հեռախոսազանգերի եղանակով «Լիստ.ամ.» կայքում քաղաքացիների կողմից վաճառվող տարբեր տեսակի ապրանքներին խարդախությամբ տիրանալու դեպքերը: Ընդ որում, որպես կանոն, հանցանք կատարած անձանց հեռախոսահամարները կրկնվում են, սակայն վերջիններիս բացահայտման աշխատանքներն արդյունք չեն տալիս, քանզի նշված հեռախոսահամարները հիմնականում գրանցված են լինում օտարերկրյա քաղաքացիների անունով և տվյալ հեռախոսահամարները, բացի հափշտակություն կատարելուց, այլ նպատակների համար չեն օգտագործվում: Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս զգալի թիվ են կազմում հատկապես քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կողմից նման հանցանքներ կատարելու դեպքերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2020 թվականի ընթացքում փոփոխություն է տեղի ունեցել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների դեպքերի շարժընթացում՝ նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են 74-ով կամ 92.5%-ով, բացահայտման ցուցանիշը կազմել է 19.3%՝ նախորդ տարվա 16.7%-ի դիմաց:

Հանրապետությունում գրանցվել է այդպիսի հանցագործության 154 դեպք՝ նախորդ տարվա 80-ի դիմաց:

Նշված դեպքերից 109-ը կատարվել է Երևան քաղաքում, որտեղ դեպքերը նույնպես աճել են 59-ով կամ 118%-ով:

Նշված հանցատեսակի աճը էապես պայմանավորված է հատկապես վերջին ժամանակահատվածում տեխնիկական միջոցների զարգացմամբ, դրանց անձանց կողմից

յուրացմամբ, ինչպես նաև համացանցի և «օնլայն» գնումների լայն տարածմամբ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցավորների համար՝ նման եղանակով հափշտակություններ կատարելու համար:

Խիստ մտահոգիչ է նաև այս բնույթի գործերի բացահայտման վիճակը, ընդ որում նման վիճակը կրկնվում է տարիներ շարունակ:

Բանն այն է, որ նշված հանցատեսակի քննության մեթոդիկան ունի որոշակի բարդություններ, ավելին, ցանկալի տեղեկատվությունը, որպես կանոն, գտնվում է ՀՀ տարածքից դուրս գործող կազմակերպություններում՝ «Ֆեյսբուք», «Օդնոկլասնիկի» և այլն, ու, գործնականում, թեև վարույթն իրականացնող մարմինների կողմից հասցեագրվում են համապատասխան հարցումներ, սակայն դրանց պատասխանները կամ չեն ստացվում կամ ստացվում են թերի և ուշացումներով, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նշված դեպքերով հարուցված քրեական գործերի արդյունավետության վրա:

2020 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 141 դեպքով կամ 15.3%-ով նվազում (924-783, ինչը դրական ցուցանիշ չի կարող համարվել՝ հաշվի առնելով այդ հանցատեսակների մեծամասնության լատենտային բնույթը:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ աճել է այդ դեպքերի բացահայտման հանրապետական ցուցանիշը՝ կազմելով 25.5%, նախորդ տարվա 23.3%-ի դիմաց:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումն արձանագրվել է հիմնականում կեղծ փող, արժեթղթեր, պատրաստելու, պահելու իրացնելու, ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության դեպքերի և տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների հաշվին: Այսպես, կեղծ փող, արժեթղթեր, պատրաստելու, պահելու իրացնելու դեպքերը նվազել են 108-ով կամ 24.5%-ով /440-332/, ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության դեպքերը՝ 10-ով կամ 66.7%-ով (15-5), իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 31-ով կամ 13.0%-ով (238-207):

Միաժամանակ, 2020թ. ընթացքում 18 դեպքով կամ 200.0%-ով աճել են հանցավոր ձանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեպքերը: Այսպես, եթե 2019թ. արձանագրվել էր նման 9 դեպք, ապա 2020թ. ընթացքում՝ 27 դեպք:

Քրեական գործերի նյութերի ընթացիկ վերլուծությունները վկայում են, որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին առնչվող քրեական գործերով շատ դեպքերում քննության առարկա են միևնույն սխեմայով կատարված նույնաբնույթ հանրորեն վտանգավոր արարքներ: Ելնելով դրանից՝ համապատասխան մարմինների ուշադրությունը հրավիրվել է այդ հանգամանքի վրա, շեշտվել է նման դեպքերում համապատասխան պաշտոնատար անձանց հնարավոր ներգրավվածությունը քննության առարկա դարձնելու անհրաժեշտությունը:

2020թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախաքննության, դատաքննության ընթացքում ավարտված վարույթներով, ինչպես նաև տարվա ընթացիկ քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է ավելի քան 20 մլրդ ՀՀ դրամ, որից վերականգնվել է շուրջ 2,5 մլրդ ՀՀ դրամը: Պետությանը պատճառված վնասը վերականգնելու նպատակով 2020թ.

ընթացքում տարբեր գործերով ընդհանուր 13,5 մլրդ ՀՀ դրամի չափով արգելանքներ են դրվել մեղադրյալների գույքի և դրամական միջոցների վրա:

Այդուհանդերձ, ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից ՀՀ ՊԵԿ քննչական վարչությանը հանձնարարվել է քրեական գործերով որպես կալանադրման ենթակա գույք դիտարկել նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից արտահանվող կամ ներմուծվող ապրանքները՝ խստիվ հետևելով տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հնարավոր դրսևորումներին՝ թույլ չտալով որևէ անհարկի միջամտություն այդ գործընթացին:

Միաժամանակ, հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ որպես կասկածյալ կամ մեղադրյալ դատավարական կարգավիճակ ունեցող անձինք ունեն այլ անշարժ կամ շարժական գույք, ձեռնպահ մնալ տնտեսական գործունեության առարկա հանդիսացող ապրանքների վրա կալանք դնելուց:

Բացի այդ, հարուցված քրեական գործերով, որոնցով հիմնավոր կասկած է եղել փողերի լվացման մասով, նախաքննական մարմինների առջև խնդիր է դրվել հարցումներ ուղարկել համապատասխան պատկան մարմիններին, ուսումնասիրության առարկա դարձնել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց հրապարակային հայտարարագրերը և, ձեռք բերված բավարար փաստական հանգամանքների առկայության պայմաններում, վերջիններիս ապօրինի հարստացման հնարավորությունը դարձնել քննության առարկա:

Բոլոր այն դեպքերով, երբ նախաքննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք առերևույթ վկայել են տնտեսվարողներին հովանավորելու, իրենց պաշտոնեական դիրքի օգտագործմամբ վերջիններիս օգտին գործողություններ կատարելու հետ կապված ՊԵԿ աշխատակիցների կողմից դրսևորած առերևույթ կոռուպցիոն վարքագծի մասին, հանձնարարվել է հարուցել քրեական գործեր՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հատկանիշներով:

Միայն 2020թ. ընթացքում նշված բնույթի հանցավոր արարքների համար մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ ՊԵԿ-ի 10 պաշտոնատար անձանց:

Ամփոփելով պետք է նշել, որ հանցագործությունների շարժընթացում հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա համեմատ որոշակի փոփոխություններ են արձանագրվել: Հանցագործությունների թվի նվազումը հիմնականում պայմանավորված է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվի նվազմամբ, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է նաև համավարակի և ռազմական դրությամբ պայմանավորված սահմանափակումներով:

Սակայն նվազումը միայն պաշտոնական վիճակագրության ամփոփ թվով (26.850-26.468) գնահատելը լիարժեք չի լինի, քանի որ 2020 թվականից քրեականացված այնպիսի արարքները, ինչպիսիք են՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը, բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, որոնցով 2020թ. ընթացքում արձանագրվել է համապատասխանաբար՝ 984 և 17 դեպք, հետևաբար նաև այդ քանակը պետք է գումարել 2019-2020թթ. հանցագործությունների դեպքերի նվազման ցուցանիշին: Այլ խոսքով,

հանցավորության ընդհանուր պատկերում կարելի է նշել, որ հանցագործությունների թիվը նվազել է ոչ թե 382-ով, այլ 1383-ով:

Հանցավորության վիճակի վերահսկելիության ցուցիչն իրական գնահատելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում մշտապես կատարվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնց արդյունքում հետաքննության մարմիններին տրվում են համապատասխան հանձնարարություններ:

Ինչ վերաբերում է հանցագործությունների դեպքերի բացահայտմանը, ապա պետք է նշել, որ դրա կարևորությունը հանցագործությունների նախականխման առումով միշտ է ընդգծվել ՀՀ դատախազության կողմից:

Գաղտնիք չէ, որ բացահայտման առավել բարձր ցուցիչի և դրա արդյունքում պատասխանատվության անխուսափելիության ապահովումը լավագույնս կարող են չեզոքացնել անպատժելիության մթնոլորտը, ինչն էլ, իր հերթին, կարևոր հանգամանք է հանցագործությունների նախականխման համար:

Հենց այդ նպատակով էլ 2020 թվականին հերթական վերլուծության առարկա են դարձել նախորդող տասը տարիներին՝ 2010-2019 թվականներին արձանագրված հասարակական բարձր վտանգավորություն ներկայացնող այնպիսի հանցատեսակների, ինչպիսին են՝ սպանությունը, սպանության փորձը, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելը, ինչպես նաև հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները, որոնց առթիվ հարուցված քրեական գործերով հանցագործության դեպքերը մինչ օրս մնացել են չբացահայտված, իսկ քրեական գործերով վարույթները կասեցվել են՝ որպես մեղադրյալ ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տրամադրած տվյալների հիման վրա պարզվել է, որ՝

- սպանության դեպքերի առթիվ հարուցված նշված քրեական գործերի թիվը 108 է,
- սպանության փորձի դեպքերի առթիվ հարուցվածների թիվը՝ 30,
- առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու դեպքերի առթիվ հարուցվածների թիվը՝ 327,
- իսկ առհասարակ հրազենի գործադրմամբ դեպքերի առթիվ հարուցված նման քրեական գործերի թիվը՝ 114:

Փաստորեն՝ նախորդող տասը տարիներին արձանագրված հանրային վտանգավորության բարձր աստիճան ունեցող հիշյալ դեպքերը մնացել են չբացահայտված, իսկ դրանցից 108-ը եղել է անձի կյանքի դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավոր տեսակի՝ սպանության վերաբերյալ:

Վերլուծության արդյունքներով՝ ՀՀ գլխավոր դատախազը 2020 թվականի օգոստոսի 17-ին հանձնարարել է ՀՀ ոստիկանության պետին՝

- Ձեռնարկել անհետաձգելի համալիր միջոցառումներ՝ հանցավորության վիճակն ուսումնասիրելու, առկա բացասական ցուցանիշների պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, գնահատելու, բացահայտման ցուցանիշները բարելավելու, հանցավորության վիճակն առավել վերահսկելի դարձնելու նպատակով:
- Ձեռնարկել գործուն միջոցներ՝ վերլուծության առարկան կազմած քրեական գործերով դեպքերը բացահայտելու ուղղությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ակտիվացնելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության պետի՝ 2020 թվականի հոկտեմբերի 29-ի գրությամբ հայտնվել է, որ իրականացվում են համապատասխան միջոցառումներ, ՀՀ ոստիկանության Երևան

քաղաքի և մարզային վարչություններին կոնկրետ քրեական գործերով տրվել են կոնկրետ հանձնարարականներ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առանձին դեպքերում նշված հանցագործությունների չբացահայտման պատճառ է քրեական հետապնդման մարմինների ոչ արդյունավետ համագործակցությունը, քննության տակտիկայի, մեթոդիկայի ոչ ճիշտ գործադրումը, իրականացվող դատավարական գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անհրաժեշտ օպերատիվության բացակայությունը և այլն: Նմանատիպ դեպքերը դատախազական հսկողության ու վերահսկողության արդյունքում բացահայտվում և ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Դատախազի կողմից նախաքննական մարմին տրվող ցուցումներով, հետաքննության մարմիններին տրվող հանձնարարություններով, ըստ էության, առաջադրվում է համապատասխան գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

2020թ. ընթացքում դատախազների կողմից տրվել է 2740 ցուցում, 1354 հանձնարարություն:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վերհանվում է խախտում կամ բացթողում թույլ տված պաշտոնատար անձանց մեղավորությունը, նախաձեռնվում է վերջիններիս պատասխանատվությունը:

2020թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 268 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 72 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 3 անձ՝ քրեական պատասխանատվության:

Վարույթ իրականացնող մարմինների կողմից ոչ պատշաճ քննության արդյունքում անհիմն կամ ապօրինի որոշումները դատախազների կողմից վերացվել են:

2020թ. ընթացքում դատախազների կողմից վերացվել է 309 քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, 269 վարույթ կարճելու, 196 վարույթ կասեցնելու մասին որոշումներ: Ընդ որում, ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել է 128 որոշում:

Մեծ ուշադրության է արժանանում քննությամբ հանցագործություններին նպաստող պատճառները, պայմանները վերհանելու և դրանց վերացման նպատակով միջնորդություններ ներկայացնելու գործիքակազմին:

2020թ. ընթացքում միայն դատախազների կողմից նշված բնույթի 618 միջնորդագիր է ներկայացվել պատկան մարմիններին, դրանց մեծ մասի քննարկմանը մասնակցել է միջնորդած դատախազը:

2. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

2020թ. ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 58.703 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 58.290-ի դիմաց: Փաստորեն՝ նախապատրաստված նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 413-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված՝ 58.703 ավարտված նյութից 34.700-ով կամ 59.1%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 28.086-ը կամ 80.9%-ը՝ արդարացման, 6614-ը կամ 19.1%-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

Համեմատության համար նշենք, որ 2019թ. Նախապատրաստված՝ 58.290 ավարտված նյութից 35.647-ով կամ 61.1%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից 28.043-ը կամ 78.7%-ը՝ արդարացման, 7604-ը կամ 21.3%-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2020թ. ընթացքում նախապատրաստված 58.703 նյութից 22.747-ով կամ 38.7%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 309-ը կամ 1.4%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 309 քրեական գործից 16-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

2019թ. համեմատ, 2020թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը աճել է 1820-ով (20.927-22.747) կամ 8.7%-ով: 26-ով կամ 7.8%-ով նվազել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (335-309), 947-ով կամ 2.7%-ով (35.647-34.700)՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը:

2020թ. ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 34.737 քրեական գործ (2019թ.՝ 35.168): Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական գործերի թիվը նվազել է 434-ով կամ 1.2%-ով:

2020թ. ՀՀ նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 65.0 քրեական գործ՝ նախորդ տարվա 63.3 քրեական գործի դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 112.4 քրեական գործ՝ նախորդ տարվա 130.7 քրեական գործի դիմաց:

2020թ. քննված 34.734 քրեական գործից 4811-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2019թ.՝ 5294), որը 483-ով կամ 9.1%-ով պակաս է, քան 2019 թվականին, իսկ 29.923-ը վարույթ է ընդունվել 2020թ. ընթացքում (2019թ.՝ 29.874), որը 49-ով կամ 0.2%-ով ավելի է, քան 2019 թվականին:

2020թ. վարույթ ընդունված 29.923 քրեական գործից 22.430-ը հարուցվել է հաշվետու ժամանակաշրջանում (2019թ.՝ 20.685). այդ թվում՝ 5873-ը հարուցվել է նախաքննության մարմինների (2019թ.՝ 6153), 15.207-ը՝ հետաքննության մարմինների (2019թ.՝ 13.508), իսկ 1350-ը՝ դատախազների կողմից (2019թ.՝ 1024):

2020թ. ավարտվել է 11.559 քրեական գործի վարույթ (2019թ.՝ 13.453), այդ թվում՝ 3664-ը՝ 4671 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2019թ.՝

3291-ը՝ 4321 անձի վերաբերյալ)³, 38-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2019թ.՝ 58), 7857-ը կարճվել է (2019թ.՝ 10.104), որոնցից 3380-ը՝ արդարացման (2019թ.՝ 3952), 4477-ը՝ ոչ արդարացման հիմքեր (2019թ.՝ 6152) :

Հաշվետու ժամանակաշրջանում 9499 քրեական գործով վարույթները կասեցվել են (2019թ.՝ 11.163), որոնցից 8036-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2019թ.՝ 9172), 1397-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2019թ.՝ 1926), իսկ 66-ը՝ այլ հիմքերով (2019թ.՝ 65):

2020թ. 1726 քրեական գործ ուղարկվել է ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնող այլ նարմիններ (2019թ.՝ 1999), 3711 քրեական գործ միացվել է (2019թ.՝ 3408), քրեական գործ հարուցելու մասին 2 որոշում վերացվել է դատախազի կողմից (2019թ.՝ 9):

2020թ. վերջին անավարտ է մնացել 8237 քրեական գործ (2019թ.՝ 5136), ինչը 3101-ով կամ 60.4%-ով ավելի է, քան 2019 թվականին:

2020թ. ընթացքում դատախազների կողմից ստուգվել է վարույթը կարճելու մասին 12.130 որոշման օրինականություն: 2020 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 269 որոշում կամ ստուգված որոշումների 2.2%-ը, որոնցից 82-ը կամ 30.5%-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 38 որոշում՝ 47 անձի նկատմամբ, որոնցից 4-ը կամ 10.5%-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 21 որոշում՝ 22 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 2-ը կամ 9.5%-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2019 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 14.957 որոշման օրինականությունը: 2019 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 328 որոշում կամ ստուգված որոշումների 2.2%-ը, որոնցից 25-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 52 որոշում, 77 անձանց նկատմամբ, որոնցից 2-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 31 որոշում, 29 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 5-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 216 բողոք (2019թ.՝ 408)⁴, որոնցից բավարարվել է 17-ը (2019թ.՝ 44) կամ 7.9%-ը (2019թ.՝ 10.8%):

³ Մեղադրյալի գլխավոր ակնացող դրսև ստամբատն ու ար կզվարծծ եւրպին ծանկքի րաբե վի ի ճախկ ագր սովկ ցանալ նվեբրըբ ե ի նււ առ անկցր կ ն աե խրարար սաե ու ար կվկխճճակ ագր սովկ ցանալ ն, եր ի ի նաքր տաց ո լե ռեբ մ ն չ ա կաք նիսատան մքսիս ի (Ձ Ա Մ) հ աշ վ ե տվ ո վ (սթյ սառնւ հ իե սոշ վ ե տվ ո) թի նոբ սոժ ն իի ն աղյ ու ս իկնիկ 2-ր դ սյ ու ն ա կ 5ս 2ի ր փ ող ո ն ջ վ ած վ ի ճ ա կ ա գ ր սովկ ցանալ ն ի փ սո ն ան շ վոս ծղ ո աթ տաց ո լ թ վս ի ռենն հ աշ վ ար կի վսե լվ ե տ ոսամ ան ա կ աշ ր ջվանրոոււ մյ թ ը ն դ ու ն բովկ սե ծր, ի ն ո ն ք ամ ապատաս իս ան եե ն լ վ ի ի րւ յ յթնուն վ մքս թ ե ա կ գառն ծ եր թալ ի ս մ թս ն ան ած կի մն շ վ վե ոու թ յ ան 1-ի ն բ ա ժ ն իր դաղյ ու ն ս փո կրի ո ղ -ի 1 ն 2-ր դո ող ե ք իւ մ փ թալ ի ս իւ մ

⁴ 2019թ. հաղորդման սեքստու մ թույլ է սրվել սպագրական վրիպակ և Նշվել է 438, իսկ իրական թիվը 408 է:

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 61 բողոք (2019թ.՝ 27): Նշված բողոքներից բավարարվել է 5-ը (2019թ.՝ 5):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 14 բողոք (2019թ.՝ 14), որոնցից 3-ը բավարարվել է (2019թ.՝ 1):

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2020թ. պակաս է 158-ով կամ 35.2%-ով՝ կազմելով 291 բողոք՝ նախորդ տարվա 449-ի դիմաց: Բերված բողոքներից բավարարվել է 25-ը կամ 8.6%-ը (2019թ.՝ 50 կամ 11.1%):

Փաստորեն, 2020թ. ստուգվել է վարույթը կարճելու մասին 2827 որոշում պակաս, քան 2019թ., իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը նվազել է 59-ով:

2020թ. ստուգվել է վարույթը կասեցնելու մասին 16.925 որոշման օրինականություն, ինչը 1842-ով կամ 9.8%-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2019թ.՝ 18.767):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 58 բողոք, որոնցից 3-ը բավարարվել է: Նախորդ տարի բերվել է նման 132 բողոք, որոնցից բավարարվել է 23-ը: Նախորդ տարվա համեմատ բողոքների թիվը պակասել է 74-ով կամ 56.1%-ով:

2020 թվականին վարույթը կասեցնելու մասին ստուգված 16.925 որոշումից 196-ը կամ 1.2%-ը վերացվել է (2019թ.՝ 18.767-ից վերացվել է 386-ը կամ 2.0%-ը), որից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

2020թ. ընթացքում դատախազների կողմից քրեական գործերով տրվել է 2740 ցուցում՝ նախորդ տարվա 2182 ցուցումի դիմաց, այսինքն՝ ցուցումների թիվը աճել է 558-ով կամ 25.6%-ով:

2020թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 268 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 72 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 3 անձ՝ քրեական պատասխանատվության:

Համեմատության համար նշենք, որ 2019թ. ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 399 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 91 անձ:

2020թ. ընթացքում ձերբակալվել է 1140 անձ՝ նախորդ տարվա 935-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը աճել է 205-ով կամ 21.9%-ով: Ձերբակալումից ազատվել է 589 անձ՝ 2019թ. 325-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալումից ազատված անձանց թիվը աճել է 264-ով կամ 81.2%-ով:

2020թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1223 միջնորդություն (այս ցուցանիշը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները), որոնցից բավարարվել է 961-ը կամ

78.6%-ը, մերժվել՝ 262-ը կամ 21.4%-ը: Ներկայացված միջնորդություններից 117-ի կամ 9.6%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Համեմատության համար նշենք, որ 2019թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1092 միջնորդություն, որոնցից բավարարվել է 968-ը կամ 88.6%-ը, մերժվել՝ 124-ը կամ 11.3%-ը: Ներկայացված միջնորդություններից 180-ի կամ 16.4%-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2019 թ. համեմատ, 2020 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 131-ով կամ 12.0%-ով:

2020թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերը նվազել են 63-ով կամ 35.0%-ով: Այս հանգամանքը կարող է բացատրվել նրանով, որ 2020թ. ապրիլի 24-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով գրավը որպես խափանման միջոց կարող է կիրառվել նաև վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, ինչը քրեական հետապնդման մարմիններին օժտել է առավել լայն իրավական գործիքակազմով՝ կիրառելու նշված խափանման միջոցը: Ընդ որում, 2020 թվականի ընթացքում [գրավ] խափանման միջոցը վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ կիրառվել է 70 դեպքում, իսկ հսկող դատախազի որոշմամբ՝ 5 դեպքում:

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ 2020 թվականին, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հետ համեմատած, առկա է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների թվի որոշակի աճ:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների թվի աճը, ինչպես նախորդ տարի, նախ և առաջ պայմանավորված է քրեական գործերով վարույթների ընթացքում որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի աճով, ինչն էլ անխուսափելիորեն հանգեցրել է կիրառված դատավարական հարկադրանքի տվյալ միջոցի թվի աճին:

Այսպես, 2020թ. որպես մեղադրյալ է ներգրավվել 6756 անձ՝ նախորդ տարվա 6014 մեղադրյալի դիմաց: Այսինքն՝ մեղադրյալների թիվն ավելացել է 742-ով կամ 12.3%-ով:

Բացի այդ, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների թվի աճը պայմանավորված է նաև առանձնապես ծանր հանցագործությունների թվի ավելացմամբ, ինչն օբյեկտիվորեն հանգեցրել է նրան, որ, նախնական քննության շահերից ելնելով, նման հանցագործություններ կատարած անձանց պատշաճ վարքագիծը, օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում, քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր է համարվել բացառապես կալանավորում խափանման միջոցի կիրառմամբ:

Ամփոփելով պետք է փաստել, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների թվի աճը պայմանավորված է հիմնականում օբյեկտիվ հանգամանքներով, մասնավորապես հանցագործության շարժընթացում առկա փոփոխություններով և, դրանով պայմանավորված, քրեական գործերով քննության պատշաճ ընթացքն ապահովելու նկատառումներով:

Անդրադառնալով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննարկման պրակտիկային՝ պետք է փաստել, որ երբեմն դատարանները, պատշաճ կերպով չքննարկելով կալանավորումը որպես խափանման

միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունները, մերժում են դրանք և կիրառում են անազատության մեջ չգտնվելու հետ կապված խափանման միջոցներ, ինչը որոշ դեպքերում հանգեցնում է այլ, երբեմն նաև առանձնապես ծանր հանցագործությունների կատարման: Օրինակ.

Լոռու մարզային քննչական վարչությունում քննվող քրեական գործով 2018 թվականի օգոստոսի 19-ին վարույթն իրականացնող քննիչը միջնորդություն է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ, որը նույն օրը բավարարվել է և նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2 ամիս ժամկետով:

Հիշյալ որոշումը մեղադրյալի շահերի պաշտպանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը մերժվել է:

Այնուհետև, 2018 թվականի հոկտեմբերի 5-ին վարույթն իրականացնող քննիչը միջնորդություն է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը 2 ամիս ժամկետով երկարացնելու մասին, որը կրկին բավարարվել է:

Հիշյալ որոշումը կրկին բողոքարկվել է պաշտպանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը բավարարվել է և բեկանվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 9-ի մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումը:

Հատկանշական է այն, որ վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ, որպես հիմնավորում, ի թիվս այլնի, արձանագրել է, որ մեղադրյալը նախկինում անձի դեմ ուղղված հանցագործություններ կատարելու համար մի քանի անգամ դատապարտվել է ազատազրկման, սակայն, հետևություններ չկատարելով, կատարել է նույնանման հանցագործություն, ինչը, ի դեպ, հիմնավոր է համարել նաև Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը և բավարարել քննիչի միջնորդությունը: Մինչդեռ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ըստ էության հաշվի չառնելով միջնորդության մեջ նշված նոր հանցագործություն կատարելու հիմնավոր ռիսկը՝ բավարարել է պաշտպանի միջնորդությունը, որի արդյունքում, մեղադրյալը, հայտնվելով ազատության մեջ, 2020թ. կատարել է ավելի ծանր հանցագործություն՝ մասնավորապես՝ հրազենի գործադրմամբ երկու և ավելի անձանց սպանություն:

Գործնականում առկա են նաև դեպքեր, երբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննարկման ժամանակ դատարանները, բավարար ապացույցների առկայության պայմաններում, անհիմն կերպով հաստատված չեն համարում հանցանք կատարելու մեջ հիմնավոր կասկածը, ինչի հիման վրա անհիմն մերժում են ներկայացված միջնորդությունները: Այսպես.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող քրեական գործով անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով երկու դրվագ խուլիգանություն կատարելու համար: Ընդ որում, մեղադրյալը ևս ընդունել է իր մեղքը, իսկ վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության մեջ որպես հանցանք կատարելու հիմնավոր կասկածի մասին վկայող ապացույցներ են ներկայացվել, մասնավորապես, բանավոր

հայտարարություն ընդունելու մասին արձանագրությունները, քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշումը, տուժողներ ճանաչելու մասին որոշումները և վերջիններիս հարցաքննությունների արձանագրությունները, վկաների հարցաքննությունների արձանագրությունները, դեպքի վայրի զննության արձանագրությունները, մեղադրյալին բերման ենթարկելու և ձերբակալելու մասին արձանագրությունները, որպես կասկածյալ և մեղադրյալ հարցաքննությունների արձանագրությունները:

Դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը և մերժման հիմքում դրել է այն եզրահանգումը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը բավարար չեն արձանագրելու, որ առկա է մեղադրյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածը, քանի որ դատարանը գտնում է, որ մեղադրյալի արարքներին տրված իրավական որակումն ակնհայտորեն չի համապատասխանում նրան վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին: Դատարանը արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերում բացակայում է խուլիգանության (հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության անդամների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու եղանակը) դրսևորումը, չեն ներկայացվել դրա վերաբերյալ փաստական տվյալները: Դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը դատարանին չի ներկայացրել փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեին դատարանին, որ մեղադրյալը հիմնավոր կերպով մեղադրվում է երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման մեջ և հնարավորություն կտային հիմնավոր կասկածի չափանիշով փաստելու մեղադրյալի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործություններին:

Նշված հիմնավորումների համատեքստում դատարանը եկել է այն եզրահանգման, որ ներկայացված որոշակի նյութերում բացակայում է ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարմանը մեղադրյալի առնչությունը (հիմնավոր կասկածը):

Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում, կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա չի դարձրել:

Դատարանի նշված որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը մասնակի բավարարվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից: Նշված որոշման հիմքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դրել է հետևյալ փաստարկը, որ գործի փաստական տվյալներն ինքնին հաստատում են իրեն մեղսագրված հանցանքը մեղադրյալի կողմից կատարած լինելու հիմնավոր կասկածը, ինչը առերևույթ համապատասխանում է քրեական օրենսգրքով չթույլատրվող համապատասխան հանցակազմի, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի հանցակազմի հատկանիշներին, ինչի պայմաններում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները, առ այն, թե վարույթն իրականացնող մարմինը դատարանին չի ներկայացրել փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեին դատարանին, որ մեղադրյալը հիմնավոր կերպով մեղադրվում է երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցագործությունների կատարման մեջ և հնարավորություն կտային հիմնավոր կասկածի չափանիշով փաստելու մեղադրյալի առնչությունն իրեն

վերագրվող ենթադրյալ հանցագործությունների կատարմանը՝ վերացական է և չպատճառաբանված:

Նշված քրեական գործը հետազայում մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և 2020թ. հոկտեմբերի 7-ին կայացվել է մեղադրական դատավճիռ:

Վերոգրյալի համատեքստում ակնհայտ է, որ դատարանը, մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը մերժելով և նրան արգելանքից ազատելով, պատշաճ իրավական գնատականի չի արժանացրել վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդությանը կից դատարանին ներկայացված նյութերը, որոնցով ակնհայտորեն հիմնավորված է եղել մեղադրյալի ենթադրյալ առնչությունը՝ իրեն մեղսագրվող հանցանքների կատարմանը, ինչի արդյունքում դատավորը կատարել է վերացական և չպատճառաբանված դատողություններ այն մասին, որ դատարան ներկայացված որոշակի նյութերում բացակայում է ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարմանը մեղադրյալի առնչությունը (հիմնավոր կասկածը):

Նշվածի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարին, ինչի հիման վրա դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Մեկ այլ գործով, դատարանը, 2020թ. սեպտեմբերի 3-ին քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 1-ին մասով և 38-205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր ենթադրյալ արարքները կատարելու համար մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, որոշում է կայացրել այն մերժելու մասին:

Հիշյալ որոշմամբ առաջին ատյանի դատարանը գտել է, որ ներկայացված փաստական տվյալները բավարար չեն համարելու, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող արարքներին, այսինքն՝ ներկայացված նյութերում բացակայում է հիմնավոր կասկածը:

Վերոհիշյալ որոշման դեմ քրեական գործի մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

2020 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով ներկայացրած բողոքը, գտել է, որ վարույթն իրականացնող մարմինն առաջին ատյանի դատարանին է ներկայացրել մինչդատական վարույթի տվյալ փուլին բնորոշ բավարար տեղեկություններ, փաստեր և ապացույցներ, որոնք գործի ներկայիս դատավարական փուլի իմաստով ընդհանուր առմամբ մատնանշում են մեղադրյալի առնչությունը նկարագրված ենթադրյալ հանցագործությունների կատարմանը, ինչպես նաև ողջամտորեն հիմնավորում են, որ դեպքերը, որոնց կատարման մեջ անձը մեղադրվում է, համընկնում է իրեն վերագրվող ենթադրյալ արարքներին: Առաջին ատյանի դատարանը վերաբերելի չափանիշով բովանդակային առումով չի անդրադարձել քննիչի միջնորդության մեջ նշված և միջնորդությանը կից ներկայացված բոլոր փաստական տվյալներին և ներկայացված բոլոր փաստական տվյալները համակցության մեջ չի գնահատել, ինչի արդյունքում համապատասխան հիմնավոր կասկածի բացակայության մասով դատարանը հանգել է սխալ հետևության: Նկատի ունենալով վերոգրյալը՝ ՀՀ վերաքննիչ դատարանը բերված վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի, առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2020 թվականի նոյեմբերի 23-ին վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և լրացնելու մասին, ապա վերջինիս մեղադրանք առաջադրել վեց դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, հինգ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և մեկ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-205-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն օրը դատարան է ներկայացվել է միջնորդություն՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

Դատարանը 2020 թվականի նոյեմբերի 24-ին քննության առնելով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը՝ որոշում է կայացրել այն մերժելու մասին:

Դատարանը որոշման պատճառաբանական մասում արձանագրել է, որ ներկայացված նյութերում առկա չէ հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալը հնարավոր է առնչություն ունի իրեն վերագրվող հանցավոր արարքների կատարմանը: Մասնավորապես, դատարանը փաստել է, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերում մեղադրանքին վերաբերելի գործողությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակում են միայն գործով մեկ այլ մեղադրյալի լրացուցիչ հարցաքննությունների արձանագրությունները:

Այնուհետև, դատարանը վերլուծել է մեղադրյալի ցուցմունքները, դրանք համադրել է քրեական գործով ձեռք բերված այլ փաստական հանգամանքների հետ, արձանագրել, որ մեղադրյալի ցուցմունքներում առկա են հակասություններ, որի արդյունքում, ըստ էության, գտել է, որ մեղադրյալի ցուցմունքներն արժանահավատ չեն:

Վերոնշյալ դատական ակտը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2020 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մասնակի բավարարել է վերաքննիչ բողոքը, բեկանել առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 24-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Մասնավորապես, վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ մեղսագրվող ենթադրյալ հանցանքներին մեղադրյալի առնչությունը հիմնավորված չլինելու մասին իր հետևությունն առաջին ատյանի դատարանն էության մեջ պայմանավորել է տվյալ գործով մյուս մեղադրյալի ցուցմունքներով, որոնցով վերջինս ուղղակիորեն մատնանշել է մեղադրյալի առնչությունը նրան վերագրվող ենթադրյալ հանցագործություններին, անարժանահավատ համարելու հանգամանքով, ինչը, իր հերթին, հանգեցնում է նրան, որ մինչդեռ վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում առաջին ատյանի դատարանն ըստ էության իրականացրել է ապացուցողական գործունեություն՝ փաստացի ստուգման ու գնահատման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը փաստացի քննության առարկա է դարձրել և մեղսագրվող ենթադրյալ հանցանքներին մեղադրյալի առնչությունը հիմնավորված չլինելու մասին իր հետևությունը պատճառաբանել է այնպիսի հարցերի վերաբերյալ գնահատականներ տալով, որոնք բուն արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր են և դուրս են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից:

Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ ներկայացված փաստական տվյալները հիմք են տալիս ողջամիտ ենթադրություն անելու առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությունների դեպքերին:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ առաջին ատյանի դատարանը միջնորդությունը մերժելիս կալանավորման հիմքերին չի անդրադարձել, ուստի մասնակի բավարարել է վերաքննիչ բողոքը, բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

Նշված դեպքի կապակցությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման հիման վրա, ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ:

Կալանավորում խափանման միջոցի կիրառման հիմքերի առկայության վերաբերյալ՝ դատական պրակտիկայում կիրառվող անհիմն մոտեցման մեկ այլ ակնառու դեպք է հետևյալը.

Դատաքննության փուլում գտնվող գործով 2019թ. սեպտեմբերի 10-ի դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ գրավը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ վերջինիս պաշտպանի միջնորդությունը, դատարանը որոշում է կայացրել այն բավարարել՝ գրավի չափ սահմանելով 1 միլիոն ՀՀ դրամ:

Վերոնշյալ դատական ակտը մեղադրողի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2019թ. նոյեմբերի 7-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ ամբաստանյալի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի:

Այնուհետև, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմանն անմիջապես հաջորդած դատական նիստում՝ 2019թ. դեկտեմբերի 18-ին, դատարանը պաշտպանի նախորդ նույնաբովանդակ միջնորդության հիման վրա, ամբաստանյալի նկատմամբ կրկին թույլատրելի է ճանաչել գրավի կիրառումը՝ դրա չափ սահմանելով 1 միլիոն ՀՀ դրամ: Ընդ որում, նշվածը տեղի է ունեցել այն պայմաններում, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վկայակոչված որոշումից հետո, մինչև դատարանի կողմից կրկին գրավը թույլատրելի ճանաչելու մասին 2019թ. դեկտեմբերի 18-ի որոշումը, նշված գործով դատական նիստեր տեղի չեն ունեցել, դատավարական գործողություններ չեն կատարվել և որևէ նոր փաստական տվյալներ չեն հետազոտվել:

Հիշյալ դատական ակտը մեղադրողի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որի արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. փետրվարի 19-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, դատարանի 2019թ. դեկտեմբերի 18-ի որոշումը բեկանվել է և նյութերը վերադարձվել են ստորադաս դատարան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նշել է, որ դատարանն անտեսել և որևէ կերպ չի անդրադարձել վերաքննիչ դատարանի կողմից 2019թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրված՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով դատարանում գործի քննությանը խոչընդոտելու ռիսկերին:

2020թ. ապրիլի 14-ի դատական նիստում մեղադրողի կողմից դատավորին ներկայացվել է ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդություն, որը դատարանի կողմից ակնհայտ չպատճառաբանված որոշմամբ մերժվել է, ընդ որում՝ կայացված

որոշմամբ պարզաբանվել է այն ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքարկելու հնարավորությունն այն դեպքում, երբ այդպիսի կարգ նախատեսված չէ օրենքով:

Այնուհետև, 2020թ. ապրիլի 16-ի դատական նիստում, ամբաստանյալի պաշտպանի նոր միջնորդության հիման վրա, դատավորը կրկին որոշում է կայացրել այն բավարարելու և գրավը թույլատրելի ճանաչելու մասին:

Այսինքն, առաջին ատյանի դատարանի դատավորը, մի կողմից չանդադառնալով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի երկու դատական ակտերով նշված պահանջներին և երկու անգամ իր դատական ակտի բեկանման պայմաններում նույն որոշման կայացմամբ, մյուս կողմից ըստ էության քննության առարկա դարձնելով պաշտպանի ոչ թե նախորդ, այլ՝ նոր միջնորդությունը, թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտումներ, ինչից ելնելով՝ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման հիման նշված դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, որի արդյունքում վերջինիս նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Նմանատիպ բազմաթիվ իրավիճակների վերլուծությունը վկայում է, որ հատկապես ստորադաս դատարանների կողմից մեղադրյալին կալանավորելու վերաբերյալ սկզբնական միջնորդությունները պատշաճ գնահատման չենթարկելը էական բացասական ազդեցություն է ունենում քրեական գործերի արդյունավետ նախաքննության, դրանց օբյեկտիվ ելքի վրա:

Ընդ որում, այդպիսի ակտերը թեև հետագայում բեկանվում են, այդուհանդերձ, անձի կալանավորումը դառնում է ժամանակավրեպ, նախաքննության բնականոն ընթացքին, արդյունավետությանը խոչընդոտած հանգամանքները արդեն իսկ դրսևորած են լինում իրենց բացասական հետևանքները, անդառնալի ազդեցություն են ունենում ապացուցողական գործընթացի վրա:

Խնդիրն առավել մտահոգիչ է դառնում, երբ խոսքը վերաբերում է բարդ, բազմաթիվ անձանց ներգրավմամբ հանրային բարձր վտանգավորություն և հնչեղություն ունեցող գործերով, քրեական ենթամշակույթի ակնհայտ դրսևորումների, զանգվածային անկարգությունների համար մեղադրվող անձանց: Այսպես.

ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում 2020թ. օգոստոսի 10-ին հարուցված քրեական գործի շրջանակներում ձեռնարկված ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական անհետաձգելի գործողությունների արդյունքում բացահայտվել էր «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի և, այսպես կոչված, «զոն նայող» հանդիսացող «քրեական հեղինակության»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու, տարբեր անձանց կողմից այդ խմբավորումներին մասնակցելու և «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին՝ իր անօրինական ազդեցությունն օգտագործելով, մասնավոր խնդրին վերաբերող վեճը լուծելու համար քաղաքացու կողմից դիմելու դեպքեր:

2020թ. օգոստոսի 13-ին վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել նույն օրը ձերբակալված՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, քրեական աշխարհում «Ալո» մականունով հայտնի «օրենքով գող» Ա.Մ.-ին, իսկ նրա կողմից ղեկավարվող խմբավորման մասնակից, քրեական

հեղինակություն համարվող, «Տիգ» մականվամբ հայտնի Ա.Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 223.3-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննություն կատարող մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար:

Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, սակայն, քննության արդյունքում մերժել էր միջնորդությունները՝ իրենց մեղսագրվող արարքների կատարմանը նշված անձանց հնարավոր մասնակից լինելու հիմնավոր կասկածի բացակայության պատճառաբանությամբ՝ այդպիսով նաև չանդրադառնալով միջնորդված խափանման միջոցի հիմքերին:

2020թ. օգոստոսի 25-ին ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից վերաքննիչ բողոքներ են ներկայացվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ խնդրելով բեկանել Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումները և կայացնել նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դատական ակտեր:

Քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ դատարանը, սեպտեմբերի 8-ի որոշմամբ մասնակի բավարարել է մեղադրյալ Ա.Ս.-ի նկատմամբ խափանման միջոցի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության բողոքը՝ բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վերաքննիչ դատարանը, ըստ էության, հիմնավոր է համարել ներկայացված բողոքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հիմնավորումները՝ մեղսագրվող արարքների կատարմանը նշված անձանց հնարավոր առնչություն ունենալու հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված լինելու և Առաջին ատյանի դատարանի կողմից անհիմն, չպատճառաբանված որոշում կայացրած լինելու վերաբերյալ:

Մասնավորապես, ՀՀ վերաքննիչ դատարանը գտել է, որ միջնորդության քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ փաստական տվյալները բավարար չափով բովանդակային գնահատման չի ենթարկել, առկա մյուս փաստական տվյալները գնահատման է ենթարկել առանձին-առանձին՝ չդիտարկելով դրանք համակցության մեջ, և հաշվի չի առել միջնորդությանը կից ներկայացված բոլոր փաստական տվյալները, ինչի արդյունքում հանգել է գործի նյութերից չբխող հետևությունների: Իսկ խափանման միջոցի հարցի լուծման ակտ չկայացնելու փոխարեն գործը նոր քննության վերադարձնելու որոշումը ՀՀ վերաքննիչ դատարանը պայմանավորել է նախաքննական մարմնի ներկայացրած՝ խափանման միջոց կալանավորման հիմքերին Առաջին ատյանի դատարանի կողմից անդրադառնալու անհրաժեշտությամբ:

ՀՀ վերաքննիչ դատարանը, դատավորների այլ կազմով, մասնակի բավարարել է նաև մյուս մեղադրյալի՝ Ա.Ս.-ի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված ՀՀ գլխավոր դատախազության բողոքը՝ բեկանելով այն և ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության:

Մեկ այլ օրինակ.

ՀՀ գլխավոր դատախազությունը դեռևս 2019թ. դեկտեմբերի 6-ին վճռաբեկ բողոք էր ներկայացրել 2018թ. ապրիլյան դեպքերի ընթացքում Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում տեղի ունեցած անկարգությունների, ինչպես նաև՝ Արարատի մարզի Հայանիստ-

Հովտաշատ գյուղերի խաչմերուկի մոտ արձանագրված՝ գենքի գործադրմամբ խուլիգանության դեպքերի առթիվ քննվող քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված Մասիսի քաղաքապետ Ռ.Հ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018թ. սեպտեմբերի 17-ի որոշման և այդ որոշման դեմ դատախազության վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018թ. նոյեմբերի 3-ի որոշման դեմ:

Վերոնշյալ քրեական գործով Ռ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով: Հետագայում նրան մեղսագրվող արարքները վերաորակվել են, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և քրեական գործը, ըստ մեղադրանքի 8 անձի, 2019թ. հունիսի 14-ին ուղարկվել էր դատարան:

Նշված վճռաբեկ բողոքի կապակցությամբ, այն վարույթ ընդունելուց շուրջ մեկուկես տարի անց, ՀՀ վճռաբեկ դատարանը դատախազությանն է ուղարկել դատախազության բողոքի վերաբերյալ 2019թ. նոյեմբերի 7-ին ընդունած որոշումը:

Որոշմամբ Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ հիմնավորված է համարել դատախազության դիրքորոշումը՝ Ռ.Հ.-ի դեպքում գրավը որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց կիրառելն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ ուղղակի ամրագրել է, որ ստորադաս դատարանները վերոնշյալ որոշումները կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջների այնպիսի էական խախտումներ, որոնք հիմք են նրանց կայացրած դատական ակտերը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանն իր հիմնավորումներում, մասնավորապես, նշել է, որ ստորադաս դատարանները մեղադրյալ Ռ.Հ.-ի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս չեն պահպանել Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները, անտեսել են քրեական գործի՝ տվյալ պահին առկա փատական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք, ի դեպ, ինչպես Առաջին ատյանի դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում, հարցի քննարկման ժամանակ վկայակոչում էր դատախազությունը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել Ռ. Հ.-ին քննության այդ փուլում մեղսագրված արարքների կատարման եղանակին, ընդգծել, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել ենթադրյալ հանցանքը կատարելիս նրա՝ զինված լինելու, պաշտոնատար անձ լինելու հանգամանքները: Վերջինս նաև ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համատեքստում դիտարկվում է որպես էական հանգամանք անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս՝ հաշվի առնելով իր պաշտոնի և հասարակական դիրքի օգտագործմամբ վարույթի մասնակիցների նկատմամբ ազդեցություն գործադրելու և դրանով իսկ գործի քննությանը խոչընդոտելու առումով ունեցած առավել մեծ հնարավորությունները, առավելա այն պայմաններում, երբ գործով որպես մեղադրյալ ներգրավվածների մեջ կան անձինք, որոնք աշխատել են նրա ենթակայության ներքո, գտնվել են նրանից ծառայողական կախվածության մեջ, կամ որոնք նրա հետ գտնվել են մերձավոր, ազգակցական հարաբերությունների մեջ:

Վճռաբեկ դատարանը, ըստ այդմ, հանգել է չափազանց կարևոր հետևության առ այն, որ նման փաստական հանգամանքների դեպքում անձի զբաղեցրած պաշտոնի, ունեցած իշխանության, գործով անցնող դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր

ազդեցություն գործադրելու բարձր հավանականության պայմաններում, գրավը չի կարող լինել արդյունավետ իրավական ներգործության միջոց:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն այս որոշումը կայացրել, առավել ևս այն դատախազությանն է ուղարկել մի իրավիճակում և ժամանակահատվածում, երբ քրեական գործը վաղուց արդեն դատարանում էր, Դ.Հ.-ի նկատմամբ խափանման միջոցի վերաբերյալ ընդունվել էր այլ որոշում և, հետևաբար, կայացվելու պահին արդեն այն, հետևանքների առումով, որևէ իրավական նշանակություն չէր կարող ունենալ:

Ցավոք, գործող իրավական ընթացակարգերն այնպիսին են, որ իրավական զարգացման տեսանկյունից նման խիստ կարևոր որոշումները, իրավական մեկնաբանությունները հնարավոր են դառնում նման ուշացումներով՝ ըստ էության, իմաստազրկելով կոնկրետ գործընթացը և անուղակի կերպով անհիմն անվստահություն սերմանելով վարույթն իրականացնող մարմնի, դատախազության գործողությունների և դրանց որակի նկատմամբ:

Պետք է փաստել, որ նմանատիպ յուրաքանչյուր դեպքում, անհիմն դատական ակտեր կայացրած դատավորների գործողություններում առերևույթ կարգապահական խախտման հիմքերի առկայության պարագայում, պարտադիր նախաձեռնվում է վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ, որի արդյունքում արդեն իսկ արձանագրվել է դեպք, երբ նման դատական ակտ կայացրած դատավորի վերաբերելի գործողությունները, ի թիվս այլնի, հիմք են հանդիսացել ԲԴԽ-ի կողմից վերջինիս լիազորությունները դադարեցնելու համար:

2020 թվականի ընթացքում հետախուզվել է 14.954 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1769-ը կամ 11.8%-ը:

2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին հետախուզվողների թիվը պակասել է 396-ով կամ 2.6%-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը նվազել է 585-ով, իսկ տոկոսայինը՝ 24.8%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

2020 թվականին հետախուզվել է 3850 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1127-ը կամ 31.0%-ը:

2019 թվականին հետախուզվել է 3639 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1109-ը կամ 30.5%-ը:

Փաստորեն՝ 2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 18-ով կամ 1.6%-ով:

2020 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 11.104 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 624-ը կամ 5.8%-ը:

2019 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 11.711 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1245-ը կամ 10.6%-ը:

Փաստորեն՝ 2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվը պակասել է 607-ով կամ 5.1%-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը պակասել է 621-ով, իսկ տոկոսային ցուցանիշը պակասել է 4.8%-ով:

Տարի	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. այլ հոդ.	Ընդ. տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդ.	Ընդ.	Հայտ. Ը-ը
2018թ.	12.191	3733	15.924	1251	1159	2410	15.1
2019թ.	11.711	3639	15.350	1245	1109	2354	15.3
2020թ.	11.104	3850	14.954	642	1127	1769	11.8

Հետախուզական աշխատանքների մասին խոսելիս հարկ է նշել, որ մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության լիազորության իրականացման ընթացքում պարզվել են փաստացի հետախուզում չիրականացնելու դեպքեր: Նշված դեպքերից մեկով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, մեկով հետախուզման պարտականություն կրող անձն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Բացի այդ, մինչդաստական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության լիազորությունն իրացնելու ընթացքում հայտնաբերվել են դեպքեր, երբ մեղադրյալին հետախուզում հայտարարելու և քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները պատճառաբանվել են մեղադրյալի և՛ թաքնվելու, և՛ գտնվելու վայրը հայտնի չլինելու հիմքով՝ անտեսելով այդ հիմքերի տարանջատման կարևորությունը: Նման դեպքերը քննարկման առարկա դարձնելու, վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ մինչդաստական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ուշադրությունը հրավիրելու և դրանք բացառելու նպատակով, դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին հասցեագրվել են համապատասխան գրություններ:

2020թ. ընթացքում ավարտված քրեական գործերի 53.3%-ը (2019թ.՝ 57.8%) քննվել է մինչև 2 ամիս, 17.4%-ը (2019թ.՝ 17.4%)՝ մինչև 4 ամիս, 10.6%-ը (2019թ.՝ 9.8%)՝ մինչև 6 ամիս, 12.8%-ը (2019թ.՝ 11.5%)՝ մինչև 1 տարի, 5.9%-ը (2019թ.՝ 3.5%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

Նշվածից հետևում է, որ 2020թ. ընթացքում քննված քրեական գործերի 18.7% -ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի, այդ թվում՝ 3.5%-ը՝ մեկ տարուց ավելի:

Կարևորելով անձանց՝ ողջամիտ ժամկետում իրենց գործի քննության իրավունքի ապահովումը, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի համաձայն, ՀՀ գլխավոր դատախազությունում 2020թ. քննարկվել են 6 ամսից ավելի քննվող քրեական գործերը՝ նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները պարզելու, դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ կառուցակարգեր սահմանելու, քրեական գործերի ընթացքը լուծելու համար հստակ ժամկետներով կոնկրետ հանձնարարություններ տալու նպատակով:

Քրեական գործերի քննարկումը ցույց է տվել, որ նախաքննության ժամկետների ձգձգումները հիմնականում պայմանավորված են օբյեկտիվ պատճառներով,

մասնավորապես, քննիչների գերծանրաբերոնվածությամբ, համավարակով և ռազմական դրությամբ:

Որպես քրեական գործերի նախաքննության ժամկետների ձգձգման հիմնական պատճառ շարունակում է մնալ քրեական վարույթի ընթացքում նշանակվող փորձաքննությունների կատարման տևական ժամանակահատվածը:

Նշված հարցի լուծման կապակցությամբ ՀՀ դատախազության կողմից, ՀՀ բոլոր նախաքննական մարմինների, փորձագիտական հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ, 2019թ. ընթացքում կատարվել են մեծածավալ աշխատանքներ, որոնց արդյունքները ներկայացվել են դեռևս նախորդ տարվա հաղորդման մեջ:

Այդուհանդերձ, առկա խնդիրները դեռևս համակարգային լուծում չեն ստացել: Որպես խնդրի լուծման խոչընդոտներից հիմնականը շարունակում է մնալ դատական-փորձագիտական ոլորտը կարգավորող համալիր օրենքի բացակայությունը, որը, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 1441-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության համաձայն, ներկայումս մշակման փուլում է:

2020թ. ընթացքում դատարան ուղարկված 1060 քրեական գործով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 6.663.259.641 ՀՀ դրամի գույքային վնաս (2019թ.՝ 28.753.010.172), որից պետությանը՝ 4.181.808.755 ՀՀ դրամի (2019թ.՝ 5.121.345.746), իրավաբանական անձանց՝ 960.473.971 ՀՀ դրամի (2019թ.՝ 21.949.284.932), ֆիզիկական անձանց՝ 1.520.976.915 ՀՀ դրամի (2019թ.՝ 1.682.379.494):

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 2.257.933.288 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2019թ.՝ 2.721.661.682), որից պետությանը՝ 1.806.580.940 ՀՀ դրամի (2019թ.՝ 1.461.863.845), իրավաբանական անձանց՝ 54.518.260 ՀՀ դրամի (2019թ.՝ 938.715.709), ֆիզիկական անձանց՝ 396.834.088 ՀՀ դրամի չափով (2019թ.՝ 321.082.128):

2020թ. ընթացքում ոչ արդարացման հիմքով կարճված քրեական գործերով և նույն հիմքով մերժված նյութերով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 7.289.300.006 ՀՀ դրամի գույքային վնաս (2019թ.՝ 2.728.669.389), որից պետությանը՝ 6.910.553.769 ՀՀ դրամի (2019թ.՝ 2.439.751.904), իրավաբանական անձանց՝ 37.376.453 ՀՀ դրամի (2019թ.՝ 83.273.830), ֆիզիկական անձանց՝ 341.369.784 ՀՀ դրամի (2019թ.՝ 205.643.655):

Նյութերի նախապատրաստման և նախաքննության ընթացքում վերականգնվել է 6.406.668.967 ՀՀ դրամի չափով գույքային վնաս (2019թ.՝ 2.945.477.087), որից պետությանը՝ 6.144.115.011 ՀՀ դրամի (2019թ.՝ 2.820.985.512), իրավաբանական անձանց՝ 25.104.720 ՀՀ դրամի (2019թ.՝ 29.496.155), ֆիզիկական անձանց՝ 237.449.236 ՀՀ դրամի (2019թ.՝ 94.995.420) չափով:

2020թ. ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 4482 խուզարկության միջնորդություն (2019թ.՝ 4321), որոնցից 4285-ը՝ բնակարանի խուզարկություն կատարելու, իսկ 197-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար: Ներկայացված 4482 միջնորդությունից բավարարվել է 4264-ը կամ 95.1%-ը (2019թ.՝ 4117-ը կամ 95.3%-ը), մերժվել է 218-ը կամ 4.9%-ը (2019թ.՝ 204-ը կամ 4.7%-ը), որոնցից 211-ը՝ բնակարանի խուզարկության, իսկ 7-ը՝ բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման:

ՀՀ գլխավոր դատախազությունում ամփոփվել են **2020թ. ընթացքում խոշտանգումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքները**:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել խոշտանգումների վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված 47 նյութերի նկատմամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 40 նյութերի դիմաց: Նախապատրաստված նյութերից 10-ով կայացվել են որոշումներ հանցակազմի կամ հանցագործության դեպքի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին [նախորդ տարվա 7 նյութի դիմաց], 37 նյութերով հարուցվել են քրեական գործեր [նախորդ տարվա 33 հարուցված քրեական գործերի դիմաց]:

2020 թվականի ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ ենթադրյալ խախտումների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով, 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 341-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 143 քրեական գործ՝ նախորդ տարվա 146 քրեական գործերի դիմաց:

Ընդ որում, այս բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերից 19-ը փոխանցվել է 2019 թվականից, 97-ը հարուցվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից, 1-ը հարուցվել է դատախազի կողմից, 2-ի վարույթը վերսկսվել է, 4-ը անջատվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված քրեական գործերից, 20-ը ստացվել է քրեական հետապնդում իրականացնող այլ մարմիններից:

Քննված քրեական գործերից 6-ը՝ 11 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան⁵ [2019թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 5 քրեական գործ 8 անձի վերաբերյալ], 80 քրեական գործի վարույթը կարճվել է [2019թ.՝ 83], 26-ի վարույթը կասեցվել է որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով [2019թ.՝ 18], 6 քրեական գործ միացվել է այլ քրեական գործի, [2019թ.՝ 16], 14-ն ուղարկվել է նախաքննական այլ մարմին, այն բանից հետո, երբ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում [2019թ.՝ 7], 10 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է 2021թ.:

Պետք է փաստել, որ խոշտանգումների վերաբերյալ դեպքերը հաշվառելու, դրանք անհապաղ անկախ մարմնի քննարկմանը փոխանցելու, ինչպես նաև այդ դեպքերով մանրամասն քննություն իրականացնելու առումով հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել են իրավասու մարմինների աշխատանքում տեղ գտած մի շարք թերություններ:

Այսպես՝

Ուսումնասիրությունները վկայում են, որ առանձին դեպքերում անձանց՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները, պնդումները համապատասխան մարմինների կողմից անհապաղ չեն ուղարկվում անկախ մարմնի՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննարկմանը, ինչով պայմանավորված՝ հետագայում

⁵ Դատարանի որոշումով քրեական գործերից 2-ի ցանկի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

նման բնույթի գործերի քննության ընթացքում խոչընդոտներ են ստեղծվում քննության օպերատիվությունը, բազմակողմանիությունը և արդյունավետությունը ապահովելու առումով, քանի որ հաճախ ենթադրյալ խոշտանգում կատարած անձինք համաձայնեցնում են իրենց ցուցմունքները, որպիսի պայմաններում այլևս հնարավոր չի լինում նրանց անջատ և օպերատիվ հարցաքննել, բացի այդ, խոշտանգման ենթարկված անձի հայտնած տվյալները հնարավոր չի լինում ստուգել՝ դեպքից տևական ժամանակ անցած լինելու պատճառով:

Արդյունքում՝ հարցականի տակ է դրվում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու՝ վարույթն իրականացնող մարմնի կարողությունը, վտանգվում է արագ և մանրամասն քննության չափանիշի իրագործումը, ինչն էլ, իր հերթին, վերջին հաշվով նպաստում է այն հանգամանքին, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող քննությունը չի համապատասխանում խոշտանգման վերաբերյալ գործերով քննության արդյունավետության չափանիշներին:

Մինչդեռ, ինչպես Եվրոպական դատարանը, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանը, իրենց կայացրած բազմաթիվ որոշումներում արձանագրել են, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով քննությունը կհամապատասխանի արդյունավետության չափանիշին, եթե՝

- ա) քննությունն իրականացվել է անկախ և անաչառ մարմնի կողմից,
- բ) իրավասու մարմինները գործեն պատշաճ արագությամբ,
- գ) քննությունն իրականացնող մարմինները օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ,
- դ) կատարվի մանրամասն քննություն՝ գործով ապացույցներն ապահովելու համար,
- ե) ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ անձանց բողոքների և պնդումների մասին քննությունը օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և արդյունավետ կատարելու, դրա պատշաճ արագությունը ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազներին հանձնարարվել է, որպեսզի խոշտանգման ենթարկված անձանց բողոքները և պնդումները Ոսրինակ՝ դատարանում ենթադրյալ խոշտանգման վերաբերյալ արված հայտարարությունները, ցուցմունքով, վարույթն իրականացնող մարմնին հասցեագրված դիմումներով, բողոքներով արված պնդումները՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ուղարկվի ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հարցը քննարկելու համար:

Բացի այդ, համապատասխան գրություն է հասցեագրվել նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահին և Քրեակատարողական բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենին:

Խոշտանգման դեպքերով մանրամասն քննության իրականացման առումով հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել են քննչական մարմնի աշխատանքում տեղ գտած մի շարք ընդհանուր բնույթի թերություններ, որոնք արտացոլվել են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/0172/11/17 գործով կայացված որոշման մեջ Որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 2020 թվականի հունիսի 1-ին:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ խոշտանգման դեպքերով քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է, որ քննությունը պետք է լինի արագ և մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է գործադրեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա: Նրանք պետք է կատարեն իրենց հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաշվի առնելով քննության մանրամասն լինելու չափանիշին համապատասխանելու համար անհրաժեշտ դատավարական գործողությունների սպառիչ սահմանման անհնարինությունը, որպես այդպիսի քննության չափանիշներ են «լուրջ ջանքեր գործադրելը» կամ «բոլոր ողջամիտ քայլերն իրականացնելը»:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ արդյունավետ քննություն կատարելու անհրաժեշտությանն անդրադարձ է կատարել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը՝ ազգային կանխարգելման մեխանիզմի գործունեության վերաբերյալ վերջին տարիներին հրապարակվող տարեկան զեկույցներում: Մասնավորապես, ՄԻՊ-ը նշել է, որ հաշվի առնելով Հայաստանի դեմ մի շարք գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռները, ինչպես նաև խոշտանգման դեպքերի քննության վիճակագրական տվյալները, խոշտանգման դեպքերում պետության պոզիտիվ պարտականության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի խոշտանգման դեպքերի արդյունավետ քննությունը: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չափահավման ռիսկն ավելի մեծ է հենց գործի քննության սկզբնական փուլում: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրականացված ուսումնասիրության արդյունքում կատարված դիտարկման համաձայն՝ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չափահավման ռիսկի գործոնը մեծ է հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին արգելանքի վերցնելու ժամանակահատվածում: Նշվածն արձանագրել է նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն՝ Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում և իր մտահոգությունը հայտնել անձին արգելանքի վերցնելիս խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու պնդումների առնչությամբ:

Միևնույն ժամանակ, Խոշտանգումների դեմ կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում հայտնել է, որ Հայաստանում խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկվելու դեպքերի քննության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

ա) ապահովել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ գոհերի օպերատիվ բժշկական զննումը, որպեսզի ճշգրիտ արձանագրվեն նրանց վնասվածքները և ստացվեն կարևոր ապացույցներ՝ հետագա քննության համար,

բ) ենթադրյալ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի քննության նպատակահարմարությունը որոշելիս ապահովել ապացուցման վերաբերելի և ողջամիտ չափորոշիչներ,

գ) ամրապնդել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարին ուղղված միջոցառումները, որոնք կարող են խոչընդոտել արդյունավետ քննությանը, հետապնդմանը և պատժմանը՝ կապված խոշտանգման ու վատ վերաբերմունքի գործողությունների հետ,

դ) ամրապնդել հատուկ քննչական ծառայության քննչական կարողություններն ու անկախությունը՝ ապահովելու համար, որ անհապաղ իրեն տրամադրվեն խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր բողոքները, ներառյալ ազատությունից զրկված անձանց նման պնդումները, և որ բոլոր պնդումները խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և արդյունավետ քննվեն, իսկ դրանց կատարման մեջ կասկածվողները պատշաճ կերպով ներկայացվեն դատարան, և նրանց մեղավորությունը հաստատվելու դեպքում պատժվեն իրենց գործողությունների ծանրությանը համաչափ ձևով, և որ հատուկ քննչական ծառայությունը հրապարակավ տեղեկություններ հաղորդի ոչ միայն հարուցված քրեական գործերի, այլև հետապնդման արդյունքի մասին,

ե) առանց վտանգելու անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ապահովել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման համար քննության ներքո գտնվող բոլոր անձանց պարտականությունների կատարումը քննության ընթացքում անմիջապես կասեցվի:

Անդրադառնալով խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքի բացարձակ բնույթին՝ վկայակոչված միջազգային չափանիշների հաշվառմամբ, ևս մեկ անգամ պետք է կարևորել խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին «վստահելի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում իրականացվող քննության արդյունավետությունը: Այդ դեպքերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը մեծապես պայմանավորված են վարույթն իրականացնող մարմնի օպերատիվությամբ: Մասնավորապես, «տաք հետքերով» տարվող քննության մեթոդիկայի կիրառմամբ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում «լուրջ միջոցներ» ձեռնարկել կազմակերպելու՝

ա) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկված գոհի անկախ բժշկական զննությունը և վերաբերելի ժամանակահատվածի բժշկական անամնեզի հավաքագրումը, քրեակատարողական հիմնարկում կամ ՁՊՎ-ում և դրանից դուրս նրա վերաբերյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից կազմված զննության արձանագրությունների և բժշկական այլ փաստաթղթերի ձեռքբերումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դատաբժշկական փորձաքննության նշանակումը,

բ) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքի մասին ուղղակի կամ անուղղակի տեղեկություններ ունեցող՝ դեպքի վայրում գտնված, բժշկական օգնություն կամ իրավաբանական օգնություն ցույց տված անձանց կամ վերաբերելի

Ժամանակահատվածում ենթադրյալ զոհի հետ շփում ունեցած, արգելանքի տակ պահելու վայր նրան ուղեկցած անձանց հնարավորինս սեղմ ժամկետում հարցաքննությունը: Այս համատեքստում հատկապես կարևոր է ընդգծել ականատես վկաների հարցաքննության ապահովումը և անհրաժեշտ տվյալների ձեռքբերումը: Այդ վկաների հաղորդած տվյալները գործի ելքի համար կարող են ունենալ վճռորոշ նշանակություն և հնարավորություն տալ ստուգելու ինչպես ենթադրյալ զոհի, այնպես էլ ենթադրյալ ոտնձգություն կատարած անձի հայտնած տվյալները: Վերոգրյալի շրջանակներում կարևոր է նշել, որ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերով քննության արդյունավետության ցուցիչ է նաև այն, որ այդ գործերով վերջնական որոշումները չհիմնվեն բացառապես ենթադրյալ ոտնձգություն կատարած անձանց ցուցմունքների վրա և վերջիններս անվերապահ հիմք չընդունվեն ենթադրյալ զոհի հայտնած տվյալները հերքելու համար: Նշված գործերով յուրաքանչյուր ողջամիտ հնարավորության օգտագործմամբ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի իրադարձություններում ներգրավված անձանց ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու համար,

գ) ըստ ենթադրյալ զոհի՝ խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը՝ նվազագույնի հասցնելով նրանց կողմից իրենց ցուցմունքները միմյանց հետ համաձայնեցնելու հնարավորությունը: Նշվածի համատեքստում, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ինչպես ենթադրաբար խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը, այնպես էլ խոշտանգում կատարելու կամ վատ վերաբերմունք դրսևորելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց նկատմամբ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը՝ բացառելով նրանց կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը,

դ) այլ ապացույցների հավաքումը, որոնք հնարավորություն կտան լիարժեք պատկերացում կազմել ու ենթադրյալ զոհի՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ փաստարկված հայտարարությունների կապակցությամբ: Այս առումով հատկանշական կարող է լինել անձին բերման ենթարկելու կամ նրան արգելանքի տակ պահելու վայրերի տեսաձայնագրությունների առգրավումը:

Արդյունքում, ՀՀ վճռաբեկ դատարանը, վերը նշված որոշման շրջանակներում արձանագրել է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու գործերով քննություն իրականացնող մարմինները պետք է գործեն արդյունավետ, կատարեն մանրամասն քննություն՝ ձեռնպահ մնալով ենթադրյալ զոհի հայտնած տվյալները հապճեպ կամ չհիմնավորված վերջնական գնահատականի արժանացնելուց:

Խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի գործերով առանցքային նշանակություն ունի ոչ թե ենթադրյալ զոհի կողմից ներկայացված տեղեկության հաստատումը, այլ այդ տեղեկության մանրամասն պարզման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների համալիրը, որն օբյեկտիվ դիտորդի մոտ համոզիչ կերպով հնարավորություն կընձեռի լիարժեք պատկերացում կազմել դեպքի հանգամանքների վերաբերյալ: Միաժամանակ, կարևոր է ընդգծել, որ իրականացված քննության նկատմամբ վստահության առկայության հիմնական պայմաններից է նաև քննությունն իրականացնող մարմինների ինստիտուցիոնալ և գործառությանին անկախությունն ու անաչառությունը՝ գործնական իմաստով: Այսինքն՝ անհրաժեշտ է նաև պատշաճ ուշադրության արժանացնել գործի

քննության մեջ ներգրավված մարմինների անկախության և անաչառության ապահովումը՝ միջոցներ ձեռնարկելով բացառելու գերատեսչական շահերի հնարավոր բախումները:

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերով վերը նշված պահանջներին համապատասխանող քննությունը միայն կարող է համարվել արդյունավետ և համահունչ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներին բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների հիմնավորվածությունը գնահատելուն ուղղված միջոցների հապաղումը, իսկ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության՝ ընդհուպ դրանց նվազագույն հիմնավորվածության պայմաններում վարույթն իրականացնող մարմինների կողմից նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու դեպքում, մերժել այն՝ գրավոր ցուցում տալով քրեական գործ հարուցելու մասին:

2020 թվականի հունվարի 22-ին ընդունվեց և նույն թվականի փետրվարի 22-ին ուժի մեջ մտավ քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք):

Հիշյալ Օրենքի ընդունմամբ քրեականացվեցին կազմակերպված հանցավորության առավել վտանգավոր դրսևորումներ հանդիսացող, քրեական ենթամշակույթի հետ կապված առավել վտանգավոր դրսևորումներ ունեցող արարքները, մասնավորապես՝

- քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը (ՀՀ քրեական օրենսգրքի 223.1 հոդված),

- քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 223.2 հոդված),

- քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը (ՀՀ քրեական օրենսգրքի 223.3 հոդված),

- քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը (ՀՀ քրեական օրենսգրքի 223.4 հոդված):

Մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը, դրա արդյունավետ և միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, դեռևս 2020 թվականի փետրվարի 19-ին ՀՀ գլխավոր դատախազն աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող օրենքի կիրառման հիմնահարցերի վերաբերյալ:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը, ՀՀ ոստիկանապետի ժամանակավոր պաշտոնակատարը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետը, ՀՀ դատախազության և իրավապահ մյուս մարմինների այլ ներկայացուցիչներ:

ՀՀ-ում առկա՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու, պահպանելու դրսևորումների, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների, դրանց տեղակայումների, գործունեության հայտնի մեխանիզմների, ինչպես նաև համանման օրենսդրական կարգավորումներ ունեցող երկրների իրավակիրառ լավագույն փորձի վերաբերյալ կատարված ուսումնասիրության և վերլուծությունների հիման վրա քննարկվել

են քրեական ենթամշակույթին առնչվող՝ քրեականացված արարքների քրեաիրավական բնութագրին, այդ արարքների նախականխման, բացահայտման, քննության և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցների կիրառման իրավական մեխանիզմներին առնչվող հարցեր:

Հաշվի առնելով այս արարքների նոր քրեականացման պայմաններում համապատասխան քրեադատավարական պրակտիկայի բացակայությունը՝ հնարավորինս դետալային անդրադարձ է կատարվել նման դեպքերով անհրաժեշտ միջոցառումների շրջանակին, քննության տարբեր փուլերում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող և նախաքննության մարմինների արդյունավետ համագործակցության եղանակներին, դատավարության մասնակիցների նկատմամբ արդյունավետ պաշտպանության միջոցների շրջանակին առնչվող խնդիրներին:

Ուշադրություն է դարձվել քրեական ենթամշակույթի դեմ համակողմանի և հետևողական պայքարին այդ ենթամշակույթը կրող խմբավորումների հնարավոր հակազդեցության փորձերի կանխարգելման, չեզոքացման կառուցակարգերին:

Կարևորվել է բոլոր հնարավոր մեխանիզմներն ու իրավաչափ ռեսուրսների օգտագործումը հասարակական հարաբերություններում, մասնավորապես, քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթն իր բոլոր դրսևորումներով արմատախիլ անելու համար՝ այդ ճանապարհին ապահովելով հնարավորինս արագ, շոշափելի և առարկայական արդյունքներ:

Քննարկման ընթացքում խնդիր է դրվել հանրային միջավայրերում, հատկապես երիտասարդության ու դեռահասների շրջանում, քրեական ենթամշակույթի ազդեցությունն ու նշանակությունը նվազեցնելու, դրա դեմ պայքարին միտված օրենսդրական և քրեաիրավական նոր կարգավորումների, վերջիններիս նպատակների, խնդիրների պարզաբանման նպատակով իրականացնել հանրային իրազեկման համալիր միջոցառումներ:

Հատուկ ուշադրություն է հրավիրել նաև քրեական հետապնդման արդյունավետության, իրավական որոշակիության սկզբունքի ապահովման համատեքստում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների, «քրեական հեղինակություն» հասկացության, ինչպես նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացման ապացուցողական բազայի, միասնական չափանիշների ապահովման խնդրի վրա:

Խորհրդակցության ընթացքում որոշվել է ապահովել մասնագիտացում, առանձնացնել այս գործերով զբաղվող կոնկրետ դատախազների և քննիչների՝ աշխատանքների պատշաճ արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորել է նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից հանցավոր նման խմբավորումների հետ հնարավոր կապերի, համագործակցության դրսևորումներն արմատախիլ անելու, նման դեպքերի հայտնաբերման դեպքում խիստ պատժողական քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Խորհրդակցության ընթացքում որոշվել է նաև Օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և այլ երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա, պատրաստել քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագրի վերաբերյալ գիտագործական մեկնաբանություններ:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով՝ գործնական կիրառություն և փորձարկում անցած իրավակիրառական գործիքակազմերը վերհանելու և մեր իրավակիրառ պրակտիկա ներդնելու, այդ հանցագործությունների դեմ պայքարում հնարավոր թերացումներից և բացթողումներից խուսափելու համար, նախաձեռնվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցագործությունների դեմ պայքարի՝ Վրաստանի Հանրապետության փորձի ուսումնասիրություն, հաշվի առնելով, որ հետխորհրդային պետություններից առաջինը Վրաստանի Հանրապետությունում են քրեականացվել քրեական ենթամշակույթին առնչվող արարքները:

Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը և ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետը 2020թ. փետրվարի 24-26-ը թփիլիսիում մասնակցել են քրեական ենթամշակույթին առնչվող հանցագործությունների դեմ պայքարի՝ Վրաստանի Հանրապետության փորձն ուսումնասիրելուն:

ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի կողմից պատրաստվել է «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ գիտագործնական մեկնաբանությունների ձեռնարկը, որը երաշխավորվել է տպագրության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից և հրատարակումից հետո ուղարկվել շահառու բոլոր քրեական հետապնդման և արդարադատության մարմիններին:

Վրաստանի Հանրապետության փորձի ուսումնասիրումից և ձեռնարկի հրատարակումից հետո, ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի կողմից անցկացվել է միջգերատեսչական խորհրդակցություն՝ քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագրի և քննության մեթոդիկայի հարցերով: Մասնակցել են ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՔԿ և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ:

Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, 2020 թվականի ընթացքում նշված հանցատեսակներով արձանագրվել է 16 դեպք:

Քննված 16 քրեական գործից 3 գործ 20 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3 քրեական գործ միացվել է այլ գործի, 2 գործով վարույթը կասեցվել է, 1 գործով՝ կարճվել, 7 քրեական գործ ընթացքի մեջ է:

Դատարան ուղարկված գործերով 20 անձից 4-ն ունեցել են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, որոնցից 3-ը՝ «օրենքով գողի»:

Հանցագործությունների դեպքերի գերակշիռ մասը բացահայտվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 3 քրեական գործով քրեական ենթամշակույթ կրող խմբավորումներ ղեկավարող, դրանց մասնակցող և դրանց հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված 20 անձ բացահատվել է ՀՀ ԱԱԾ և ոստիկանության համապատասխան օպերատիվ ստորաբաժանումների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ:

Չնայած այս երևույթի՝ հատկապես քրեակատարողական հիմնարկներում տարածվածությանը և այն կրող անձանց՝ այդ հիմնարկներում գտնվելուն, 2020 թվականի

ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված դեպքերով հարուցվել է 5 քրեական գործ, որոնցից 1-ի վարույթը հանցակազմի բացակայության հիմքով կարճվել է, իսկ 4-ը ընթացքի մեջ է:

Հարուցված քրեական գործերով որպես մեղադրյալ է ներգրավվել 5 անձ:

Հարկ է նկատել, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների վերաբերյալ քրեական գործերով քննության ընթացքում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են նման արարքների ապացուցմամբ հետ: Մասնավորապես, սովորաբար նման գործերով վկաները խուսափում են քրեական ենթամշակույթին առնչվող անձանց մերկացնող ցուցմունքներ տալուց, ինչի արդյունքում ապացուցման գրեթե ողջ բազան կառուցվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալների վրա:

Այս առումով էլ երբեմն առաջ են գալիս օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների կողմից թույլ տրված թերացումներ: Օրինակ, 2020 թվականի ընթացքում վերաքննիչ քրեական դատարանի կողմից 1 գործով բեկանվել է «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումը և մերժվել է ներկայացված միջնորդությունը: Արդյունքում՝ քրեական գործի հարուցման հիմք հանդիսացած օպերատիվ-հետախուզական միջոցառման շնորհիվ ձեռք բերված ապացույցների թույլատրելիության խնդիր է առաջացել և վտանգվել է քրեական գործի հետագա դատական հեռանկարը: Պետք է նշել, որ միայն տվյալ գործով նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել 9 անձ, որոնցից 7-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նշված 7 անձից 2-ն ունեցել են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, որոնցից մեկը «օրենքով գողի», մեկը՝ «քրեական հեղինակության»: «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ- հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումը բեկանելու համար հիմք են հանդիսացել նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող մարմնի թույլ տված թերացումները, ինչի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով թույլ տրված թերացումների վերաբերյալ օպերատիվ խորհրդակցություններում քննարկում անցկացնելու համար:

Բնապահպանական իրավախախտումների, այդ թվում՝ ապօրինի ծառահատումների դեպքերի, կապակցությամբ հարուցված քրեական գործերի նախաքննության օրինականության, ինչպես նաև այդ բնույթի հանցագործությունների նախականիսման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքները շարունակել են մնալ ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաշվետու ժամանակահատվածում աճել է ապօրինի անտառահատման դեպքերի առթիվ ոչ միայն հարուցված, այլ նաև դատարան ուղարկված քրեական գործերի թիվը, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է այդ բնույթի դեպքերի հայտնաբերման և բացահայտման հարցում իրավապահ մարմինների կատարած մեծ ծավալի և անզիջում աշխատանքով, քննությունների լիարժեքության և օրինականության ապահովման գործընթացում դատախազության հետևողականության հանգամանքով:

Հանրապետությունում ամենամեծ անտառային ֆոնդ ունեցող 2 մարզում էապես ակտիվացել է անտառահատումների դեմ տարվող պայքարը:

Այսպես, Լոռու մարզի դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել է 2020թ. ընթացքում նույն մարզի վարչական տարածքում արձանագրված ապօրինի ծառահատումների, ինչպես նաև դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների իրականացման գործընթացում օրինականության պահպանման վիճակը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2020թ. ընթացքում արձանագրվել է ապօրինի ծառահատման 263 դեպք, որոնցից 138 դեպքով հարուցվել են քրեական գործեր: Ապօրինի անտառահատումներին առնչվող 7 քրեական գործ հարուցվել է անտառների պահպանության համար պատասխանատու պաշտնատար անձանց կողմից տարաբնույթ առերևույթ կոռուպցիոն հանցավոր արարքների կապակցությամբ:

Քրեական այդ գործերով պատճառված վնասի ընդհանուր չափը կազմել է 453 մլն ՀՀ դրամ: Դրանից վերականգնվել է 1.387.780 ՀՀ դրամը, մնացած մասի վերականգնման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Հարուցված քրեական գործերից 26-ով նախաքննությունը շարունակվում է, իսկ 29 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ուսումնասիրությունը վկայում է, որ 2019թ. համեմատ ապօրինի անտառահատումների դեպքերն ավելացել են 45%-ով: Չնայած վերջինս վկայում է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային ստորաբաժանումների և «Հայաստա» ՊՈԱԿ-ի կողմից ծառերի ապօրինի հատումների արձանագրման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին, սակայն, ինքնին, հատումների քանակական աճը վկայում է նաև անտառագոտիների նկատմամբ իրականացվող վերահսկողության, կանխարգելիչ միջոցառումների և հանցավոր հատումներ կատարողների բացահայտման գործընթացում թերությունների առկայությունը, որը մասամբ, հատկապես կապված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հետ, կարող է պայմանավորված լինել նաև արցախյան պատերազմում ռազմական գործողություններին մարզի ոստիկանության մեծ թվով ծառայողների մասնակցությամբ և այդ ընթացքում իրենց աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես կատարելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքով:

Խնդիրների առկայության մասին է վկայում հատկապես ապօրինի հանցավոր հատումները կատարած անձանց ի հայտ չբերելու պատճառով վարույթը կասեցված գործերի համեմատաբար մեծ քանակը, որը կազմում է տարվա ընթացքում հարուցված քրեական գործերի ավելի քան 45 %-ը: Ընդ որում՝ միայն վարույթը կասեցված չբացահայտված քրեական գործերով արձանագրվել է ապօրինի հատված 3890 ծառ, իսկ պատճառված վնասը կազմել է 250.443.270 ՀՀ դրամ:

Այս բնույթի քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունը փաստում է, որ որոշ դեպքեր տեղի են ունեցել ակներևության պայմաններում և կրել են տևական ու շարունակական բնույթ և, չնայած դրան, ակնհայտորեն դուրս են մնացել անտառների պահպանության համար պատասխանատու պետական մարմինների տեսադաշտից:

Ելնելով ուսումնասիրությամբ պարզված վերոնշյալ հանգամանքներից և հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման բացասական միտումները դրսևորվել են ապօրինի ծառահատումների դեմ արդյունավետ պայքար մղելու ուղղությամբ արդյունավետ, գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով մարզի դատախազության կողմից նախընթաց շրջանում իրավասու օղակներին հղված բազմաթիվ միջնորդագրերի

պայմաններում՝ Լոռու մարզի դատախազը դիմել է ՀՀ ոստիկանության պետի տեղակալին՝ ոստիկանության իրավասություններից բխող գործառնությունների կտրուկ ակտիվացման հարցով:

Մասնավորապես, գրությամբ հրատապ անհրաժեշտություն է համարվել Լոռու մարզի վարչական տարածքի անտառամերձ ճանապարհահատվածներում ամենօրյա հսկողության սահմանումը, անտառամերձ բնակավայրերի ամենագնաց և թափքի առկայությամբ ավտոմեքենաների շարժի, նշված բնակավայրերում և հարակից տարածքներում գործող փայտանշակման արտադրամասերի, փայտագործությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերերի արհեստանոցների գործունեության նկատմամբ հսկողության, ստուգումների ավելացումը, անտառային տարածքներ ունեցող բնակավայրերից, Լոռվա մարզի վարչական տարածքներից ելք կատարվող ճանապարհներին ամենօրյա և 24-ժամյա ուժեղացված ծառայության սահմանումը: Հատուկ կարևորություն է տրվել ապօրինի ծառահատումների դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի վարչական տարածքը սպասարկող մասնաճյուղերի և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի աշխատակիցների հետ Ոստիկանության համապատասխան ծառայությունների ակտիվ համագործակցությանը և հատկապես օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումների ձեռնարկմանը՝ անտառահատման չբացահայտված հանցավոր դեպքերը, դրանք կատարող անձանց, ինչպես նաև դրանց նպաստող՝ պաշտոնատար անձանց ներգրավմամբ հնարավոր կոռուպցիոն գործարքները բացահայտելու համար:

2020թ. ընթացքում Տավուշի մարզի տարածքում հայտնաբերվել և արձանագրվել է ապօրինի ծառահատման 502 դեպք: Դրանցից 138-ով հարուցվել են քրեական գործեր, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է շուրջ 8,6%-ով:

Աճը պայմանավորված է լատենտային բնույթ կրող նման հանցագործությունները Ոստիկանության Տավուշի մարզային վարչության ստորաբաժանումների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների գործունեության արդյունքում նման դեպքերի բացահայտման, անտառային տնտեսության պահպանման, փայտանյութի տեղափոխման ուղիների նկատմամբ հսկողության աշխատանքի ակտիվացմամբ:

Տավուշի մարզի դատախազության դատախազների դատավարական ղեկավարման կամ հսկողության ներքո ապօրինի ծառահատման դեպքերի առթիվ հարուցված և քննվող, ինչպես նաև դատարանում քննված և ավարտված 20 քրեական գործերով արձանագրված պետությանը պատճառված վնասը կազմել է շուրջ 170 մլն ՀՀ դրամ: Դատախազության կողմից մի շարք քաղաքացիների 24 առաջարկություններ են ուղարկվել ընդհանուր 17մլն ՀՀ դրամի չափով վնասը կամովին վերականգնելու համար: Դատարանում քննված և ավարտված գործով պատճառված վնասի չվերականգնված գումարը բռնագանձելու նպատակով դատախազների կողմից պետական իրավասու մարմնին գրություններ են ուղղվել՝ ողջամիտ ժամկետներում ներկայացնելու համապատասխան հայցադիմումներ:

2020թ. ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել ապօրինի ծառահատումների վերաբերյալ 25 քրեական գործ՝ 28 անձի վերաբերյալ:

Ապօրինի անտառահատումների դեպքերի բացահայտման դրական ցուցանիշը պայմանավորված է նաև ՀՀ դատախազության որդեգրած քրեական քաղաքականությամբ, ըստ որի՝ յուրաքանչյուր հանցավոր դեպքի քննության ընթացքում պարտադիր քննության առարկա է դարձվում նաև դրանցում անտառների պահպանության համար

պատասխանատու պաշտոնատար անձանց կոռուպցիոն ներգրավվածության հնարավորությունը: Այս մոտեցումը նպաստում է իրենց սպասարկման գոտու հանդեպ վերոնշյալ կատեգորիայի պաշտոնատար անձանց զգոնության և պատասխանատվության մեծացմանը:

2020թ. ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասու պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստերի առթիվ Տավուշի մարզի դատախազության դատախազների դատավարական ղեկավարման կամ հսկողության ներքո հարուցվել է 10 քրեական գործ, որոնցով նախաքննությունը շարունակվում է: Երկու անտառապահի մեղադրանքներ են առաջադրվել հատված փայտանյութն ապօրինի կերպով անտառներից դուրս բերելու դիմաց կաշառք ստանալու համար:

Նշված քրեական գործերով իրավասու պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված հանցավոր թերացումների հետևանքով պետությանը պատճառվել է ընդհանուր առմամբ 96 մլն ՀՀ դրամի վնաս:

Մարզի դատախազության կողմից ապօրինի անտառահատումների դեմ պայքարի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասու պաշտոնատար անձանց և մի շարք պետական մարմինների ուղարկվել է 14 հաղորդում, ծառայողական քննություն անցկացնելու 2 միջնորդություն, նշված բնույթի հանցագործություններին նպաստող պատճառներն ու պայմանները վերացնելու կոնկրետ միջոցներ ձեռնարկելուն ուղղված 3 միջնորդագիր: Արդյունքում իրենց աշխատանքում թերացած պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվել են կարգապահական պատասխանատվության տարբեր միջոցներ, այդ թվում նաև աշխատանքից ազատման տեսքով:

Մասնավորապես, առանձին նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ անտառապահները, անտառներին հարակից բնակավայրերի բնակիչների հետ նախապես պայմանավորվելով, նրանց կողմից ներկայացված տոմսակների հիման վրա, անտառներից հավաքում, մթերում, ապա իրենց անձնական օգտագործման մեքենայով տեղափոխում և նրանց են հանձնում թափուկ փայտանյութ՝ այդ ամենի դիմաց ստանալով նախապես պայմանավորված գումարը: Այսինքն՝ պարզվել է, որ փաստացի անտառից ապօրինի փայտանյութ չի մթերվել, սակայն հաստատվել է անտառապահների կողմից աշխատանքային պարտականությունները կատարելու փոխարեն, իրենց աշխատաժամանակի ընթացքում ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու՝ գումարի դիմաց թափուկ փայտանյութ պատրաստելու, մթերելու և տեղափոխելու հանգամանքը: Ընդ որում՝ դա տեղի է ունենում նրանց աշխատանքի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց՝ անտառապետների, անտառտնտեսության տնօրենների թողտվության կամ անուշադրության պայմաններում: Մարզի դատախազի կողմից խնդիրը բարձրացվելուց հետո, «Հայանտառ» ՊՈԱԿ-ում ձեռնարկված միջոցների արդյունքում, պաշտոնատար անձինք ենթարկվել են կարգապահական տույժերի, ընդհուպ՝ աշխատանքից ազատման:

2021թ. ևս ապօրինի անտառահատումների դեմ քրեաիրավական պայքարը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության դատախազության առաջնահերթություններից:

2020 թվականի ընթացքում, նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, արտակարգ դրության և կարանտինի ժամանակահատվածում կառավարության և

պարետատան կողմից սահմանված սահմանափակումները, պահանջները կամ կարանտինային կանոնները չպահպանելու դեպքերով՝

ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 2 քրեական գործ, որոնք միացվել են մեկ վարույթում և նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է 1 քրեական գործ, նախաքննությունը շարունակվում է,

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 8 քրեական գործ, որոնցից 5-ի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով, 2 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, մեկ քրեական գործ ուղարկվել է դատարան:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է 2 քրեական գործ, որոնցից մեկով նախաքննությունը շարունակվում է, մյուսն ուղարկվել է դատարան:

Նշված քրեական գործերով մեղադրանք է առաջադրվել ընդհանուր առմամբ 9 անձի:

Բացի այդ, 2020 թվականի ընթացքում արտակարգ դրության և կարանտինի ժամանակահատվածում կառավարության և պարետատան կողմից սահմանված սահմանափակումները, պահանջները կամ կարանտինային կանոնները պահպանելու նկատմամբ հսկողություն իրականացնելիս, ՀՀ ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 3 քրեական գործ: Նշված քրեական գործերից 2-ով որևէ անձ որպես մեղադրյալ չի ներգրավվել, իսկ 1 քրեական գործով որպես մեղադրյալ է ներգրավվել 1 անձ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված 5 քրեական գործ և ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով հարուցված մեկ քրեական գործ, որոնցով վարույթները կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով:

2020 թվականի ընթացքում նոր կորոնավիրուսային վարակով վարակելու, հիվանդին օգնություն ցույց չտալու, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստերի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է 17 քրեական գործ, որոնց 2 քրեական գործ միացվել է քննչական նույն ստորաբաժանումում քննվող մեկ այլ քրեական գործի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել: Նույն հիմքով կասեցվել է այլ երկու քննչական ստորաբաժանումներում քննվող 4 քրեական գործ վարույթ, իսկ 10 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է: Վերը նշված բոլոր գործերով նշանակվել են դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռևս չեն ստացվել:

2020թ. ընթացքում ՀՀ քննչական մարմինների կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել նաև հասարակական հնչեղություն ունեցող մի շարք քրեական գործերով:

Այսպես.

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների փաստի առթիվ քննվող թիվ 62202608 քրեական գործով:

Նշված իրադարձությունների կապակցությամբ 2020 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 3 քրեական գործ:

Հաշվի առնելով, որ հիշյալ քրեական գործերի և թիվ 62202608 քրեական գործի՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունները կապակցված են միմյանց հետ, դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ հիշյալ քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Ներկայումս քրեական գործով մեղադրյալի կարգավիճակ ունի 12 անձ:

2020 թվականի ընթացքում նշված քրեական գործով, այդ թվում նաև 10 անձի մահվան հանգամանքները բացահայտելու ուղղությամբ, ձեռնարկվել են մեծածավալ քննչական և դատավարական գործողություններ, մասնավորապես՝ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, կատարվել են առգրավումներ, զննություններ և հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գրավոր հանձնարարություններ:

- որպես վկա հարցաքննվել են 200-ից ավելի անձինք,
- քաղաքացիներից և պետական տարբեր հիմնարկներից կատարվել են 10-ից ավելի առգրավումներ,
- կատարվել են 15-ից ավելի խուզարկություններ,
- նշանակվել է 50-ից ավելի փորձաքննություններ,
- փորձաքննության է ներկայացվել ավելի քան 2000 միավոր հրազեն և մեծ քանակությամբ զինամթերք:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած դեպքի կազմակերպիչների վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող թիվ 62207199/1 քրեական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովվելու նպատակով, նախաքննական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում կատարվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ:

Այսպես.

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի և մյուսների կողմից տեռորիստական ակտ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով հանցավոր գործողություններին հնարավոր այլ մասնակիցների, դրանք կանխելու հնարավորություն ու պարտականություն ունեցած այլ պաշտոնատար անձանց, օգտագործված զենքերի ու ռազմամթերքի հետ առնչություն ունեցած անձանց պարզելու նպատակով, հարցաքննվել են մեկ տասնյակից ավելի անձինք, այդ թվում՝ Նաիրի Հունանյանը, Կարեն Հունանյանը, Ղերենիկ Բեջանյանը, Աշոտ Կնյազյանը, Անահիտ Բախշյանը և Արամ Սարգսյանը:

Նշված ժամանակահատվածում վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումների հիման վրա կատարվել են բազմաթիվ առգրավումներ:

Մասնավորապես.

ՀՀ դատական դեպարտամենտի արխիվից առգրավվել են 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի և մյուսների կողմից տեռորիստական ակտ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի դատաքննության հատորները, քրեական գործին կցված ձայնագրությունները, նույն գործի գաղտնի մասը, Սամվել

Առաքելյանի սպանության դեպքի առթիվ հարուցված, քննված, այնուհետև մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված և դատավճիռ կայացված քրեական գործի նախաքննության և դատաքննության նյութերը, իսկ ՀՀ գլխավոր դատախազության արխիվից՝ թիվ 62207199/1 քրեական գործին կցված փաթեթը:

ՀՀ ՔԿԾ-ից առգրավվել են Վռամ Գալստյանի և Համլետ Ստեփանյանի վերաբերյալ կազմված անձնական գործերը:

ՀՀ ԱԱԾ համապատասխան ստորաբաժանումից առգրավվել են սույն քրեական գործով հետաքրքրություն ներկայացնող՝ ԱԱԾ աշխատակիցների վերաբերյալ կազմված անձնական գործերը:

Ստացվել են բազմաթիվ դիմումներ և դրանց կից փաստաթղթեր, որոնց շուրջ հարցաքննվել են դիմումատուները, զննվել ներկայացված փաստաթղթերը, իսկ դիմումատուների հայտնած տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից հետաքննության մարմնին տրվել են համապատասխան հանձնարարություններ:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ սահմանադրական կարգի հիմունքների, հասարակական և պետության անվտանգության, պետական իշխանության դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստման և կատարման հանգամանքները, հանցագործությունների կատարմանը մասնակցած և առնչություն ունեցած անձանց ամբողջական շրջանակը, համապատասխան մարմինների կողմից հանցագործությունները չկանխելու և չխափանելու իրական պատճառները համակողմանիորեն բացահայտելու նպատակով, համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար հանձնարարություն է տրվել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը:

Նախաքննության ընթացքում կատարված դատավարական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով առաջ են քաշվել մի շարք քննչական վարկածներ և դրանք ստուգելու նպատակով կազմվել է քննության պլան:

Ներկայումս 1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու, ինչպես նաև գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով կատարվում են համապատասխան դատավարական գործողություններ:

Բացի այդ, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի և դրանով պայմանավորված՝ նույն օրը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում, 2020 թվականի նոյեմբերի 10-ին պատերազմը դադարեցնելու և Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող մի շարք տարածքներ Ադրբեջանի Հանրապետության վերահսկողությանը հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելուց հետո, Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում, հատկապես մայրաքաղաք Երևանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում և պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում կազմակերպվել և իրականացվել են բռնություն գործադրելով, ջարդ իրականացնելով,

գույք ոչնչացնելով, վնասելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելով արտահայտված զանգվածային անկարգություններ, որոնց ժամանակ մասնակիցների կողմից հնչել են ինչպես իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչեր, այնպես էլ իշխանությունը զավթելուն, սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր, ինչի հետևանքով վտանգվել է հասարակական անվտանգությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունը:

Դեպքի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2020 թվականի նոյեմբերի 10-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով, 301-րդ հոդվածով և 301.1 հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 58231520 քրեական գործի նախաքննության կատարումը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտին:

Հիշյալ դեպքերի ժամանակ Երևան քաղաքում ՀՀ վարչապետի՝ Ջորափի փողոցի 74 հասցեում գտնվող կեցավայր ապօրինի մուտք գործելով ուրիշի գույքի բացահայտ հափշտակության և 2 դրվագ փաստաթղթերի հափշտակության դեպքերի, ՀՀ Ազգային ժողովի կայանատեղիից կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով տրանսպորտային միջոցների առանձնապես խոշոր չափերով գույքի բացահայտ հափշտակության, մի խումբ անձանց կողմից ՀՀ կառավարական թիվ 1 շենք և դրանում գտնվող տարբեր աշխատասենյակներ, ՀՀ Ազգային ժողով և այնտեղ գտնվող աշխատասենյակներ ապօրինի մուտք գործելով առանձնապես խոշոր չափերով գույքի բացահայտ հափշտակություններ կատարելու, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ կարևոր և պաշտոնական փաստաթղթեր հափշտակելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 1.1-ին կետերով, 324-րդ հոդվածի 1-ին մասով, 324-րդ հոդվածի 2-րդ մասով, օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքը դիտավորությամբ կազմակերպելու և անցկացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 225¹-րդ հոդվածի 1-ին մասով, բռնություն գործադրելու միջոցով իշխանությունը յուրացնելու, Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով իշխանությունը զավթելու փորձ կատարելու և նշված հանցափորձը կազմակերպելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 34-300-րդ հոդվածի 1-ին մասով, 38-34-300-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործով մեղադրյալներից մեկի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության առնելիս՝ արդարադատության իրականացմանն ու քննությանը խոչընդոտելու և դրան օժանդակելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով, 38-332-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև՝ նույն մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության քննարկման արդյունքում դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով գործն ըստ էության չլուծող ակնհայտ անարդար դատական այլ ակտ՝ խափանման միջոցի ընտրության մասին որոշում կայացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել են ընդհանուր 11 քրեական գործեր, որոնց նախաքննությունը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչներին:

Նշված 11 քրեական գործերը միացվել են ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով, 301-րդ հոդվածով և 301.1 հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործին:

Բացի այդ, նշված քրեական գործին են միացվել նաև ռազմամթերք ապօրինի ձեռք բերելու, պահելու, փոխադրելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված երկու քրեական գործ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում կատարվել են մեծածավալ քննչական և այլ դատավարական գործողություններ, մասնավորապես՝ տարբեր դատավարական կարգավիճակներով հարցաքննվել է շուրջ 300 անձ, կատարվել է շուրջ 200 զննություն, 40-ից ավելի առգրավում, բնակարանի շուրջ 70 խուզարկություն:

49 անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, 47-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, 2-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում և նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ընդհանուր առմամբ՝ 39 մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 5-ի վերաբերյալ մեղադրանքները փոփոխելու ու լրացնելու արդյունքում դատարան է ներկայացվել կրկնակի միջնորդություն: Ղատարանի կողմից մերժվել է 19 միջնորդություն: 1 միջնորդություն հետ է վերցվել՝ մեղադրյալի մահվան հիմքով: 9 մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումները, պաշտպանների վերաքննիչ բողոքների հիման վրա, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանվել են: 1 մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է այլ խափանման միջոցով՝ գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից: 8 մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, իսկ 1 անչափահաս մեղադրյալի նկատմամբ՝ ծնողի հսկողությանը հանձնելը:

Միջնորդությունները մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի անհիմն դատական ակտերի դեմ բերվել է 15 վերաքննիչ բողոք, որոնցից մասնակի բավարարվել է 1-ը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի անհիմն որոշումների դեմ ներկայացվել է 7 վճռաբեկ բողոք:

Նշված քրեական գործից 5 քրեական գործ՝ 15 անձի վերաբերյալ, անջատվել է և հաստատված մեղադրական եզրակացություններով ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Կալանավորված 9 անձ 8-ի վերաբերյալ գործերը ներկայումս քննվում են դատարանում:

Ներկայումս գործով մեղադրյալների թիվը 33-ն է, 1 մեղադրյալ մահացել է, կալանքի տակ գտնվում է 1 անձ:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ՀՀ կառավարության վարչական շենքի պահպանությունն իրականացնող՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայությունից 2020 թվականի նոյեմբերի 10-ին տրամադրվել և քրեական գործին են կցվել կառավարական թիվ 1 շենքի անվտանգության արտաքին և ներքին բազմաթիվ տեսախցիկների տեսագրությունները, որոնք ուսումնասիրվել են ՀՀ գլխավոր դատախազությունում: Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել և լուսանկարներով առանձնացվել է հիշյալ դեպքերի ժամանակ

կոնկրետ ջարդեր, գույքի վնասումներ, բռնարարքներ, կողոպուտներ և այլ հակաօրինական գործողություններ կատարած 144 անձ:

Ուսումնասիրության արդյունքներով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ազգային անվտանգության տնօրենին 2020 թվականի նոյեմբերի 27-ին և դեկտեմբերի 25-ին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարություններ՝ ուսումնասիրված տեսանյութերում առկա լուսանկարներով առանձնացված՝ զանգվածային անկարգություններին մասնակցած բոլոր անձանց ինքնությունները, Նալբանդյան փողոցի կողմից կառավարական թիվ 1 շենքի բակ ավտոմեքենաների մուտքի համար նախատեսված մետաղական դարպասները վնասած և բացած գինվորական երանգավորմամբ ամենագնաց թափքով ավտոմեքենայի մակնիշը և հաշվառման համարանիշը, դրա սեփականատիրոջն ու դեպքի ժամանակ ավտոմեքենան վարած անձի ինքնությունը, կառավարական թիվ 1 շենքից հափշտակված իրերի ու փաստաթղթերի գտնվելու վայրերը պարզելու համար:

Նույն գործի շրջանակներում քննություն է կատարվում նաև ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու դրվագով:

Նշված դրվագով 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 301.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալվել է Գ.Ի-ն:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի 2020 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ Գ.Ի-ն որպես մեղադրյալ է ներգրավվել և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ և 301.1 հոդվածի 1-ին մասերով՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին մասնակցելու, ինչպես նաև՝ Երևան քաղաքի Դեմիրճյան փողոցում Ժ.Ս-ի և մյուսների հետ, ՀՀ Ազգային ժողովի լիազորություններից բխող որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելու պարտադրելու նպատակով, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու համար:

Գ.Ի-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննական մարմնի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է:

Գ.Ի-ին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշման դեմ վերջինիս պաշտպանի բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ բավարարվել է, և Գ.Ի-ն ազատվել է կալանքից:

Վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ արդարադատության նախարարին:

Նույն դրվագով 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 301.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալվել է նաև Ժ.Ս-ն: 2020 թվականի նոյեմբերի 12-ին վերջինիս նույնպես մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 301.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Ժ.Ս-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի 2020 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ բավարարվել է:

Դատարանի որոշման դեմ մեղադրյալի պաշտպանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է, և Ժ.Ս-ն ազատվել է կալանքից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 2021 թվականի մարտի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ արդարադատության նախարարին:

Ա.Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու դրվագով 2020 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով և 301.1-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ է ներգրավվել նաև Հ.Ծ-ն:

Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարանի 2020 թվականի նոյեմբերի 14-ի ԵԴ/0981/06/20 որոշմամբ մերժվել է:

Դատարանի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Հ.Ծ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության առնելիս՝ արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու և դրան օժանդակելու դեպքերի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով, 38-332-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցվել է քրեական գործ, որը միացվել է թիվ 58231520 քրեական գործին՝ մեկ վարույթում:

2020 թվականի դեկտեմբերի 14-ին Գ.Թ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-332-րդ հոդվածի 1-ին մասով՝ թիվ 58231520 քրեական գործով մեղադրյալի նկատմամբ 2020 թվականի նոյեմբերի 14-ին կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննելու վերաբերյալ ԵԴ/0981/06/20 գործով վերջինիս համար բարենպաստ դատական ակտ կայացնելու, այն է՝ կալանքի միջնորդությունը մերժելու և անազատության մեջ չհայտնվելու համար արդարադատությանը խոչընդոտելու նպատակով Հ.Ծ.-ի կողմից գործի քննությանը միջամտելուն օժանդակելու համար:

Գ.Թ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ մերժվել է: Նշված որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը նույնպես մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2021 թվականի մարտի 9-ին բերվել է վճռաբեկ բողոք:

2020 թվականի դեկտեմբերի 12-ին Հ.Ծ.-ին 2020 թվականի նոյեմբերի 12-ին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-300-րդ հոդվածի 1-ին մասով ու 332-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրը կրկին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը նույնպես մերժվել է:

Դատարանի նշված որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի հունվարի 26-ի որոշմամբ մերժվել է:

Վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2021 թվականի փետրվարի 24-ին բերվել է վճռաբեկ բողոք:

Միաժամանակ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, ինչպես նաև՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ արդարադատության նախարարին:

Հ.Ծ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին՝ նախաքննական մարմնի 2020 թվականի նոյեմբերի 12-ի միջնորդության քննարկման արդյունքում, դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով գործն ըստ էության չլուծող ակնհայտ անարդար դատական այլ ակտ՝ խափանման միջոցի ընտրության մասին որոշում կայացնելու դեպքի առթիվ, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում, 2021 թվականի հունվարի 12-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործը, որը միացվել է թիվ 58231520 քրեական գործին՝ մեկ վարույթում:

2020 թվականի նոյեմբերի 21-ի նույն դրվագով նաև Գ.Վ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, 38-301.1-րդ հոդվածի 1-ին մասով և 225¹ հոդվածի 1-ին մասով:

Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժվել է:

Առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ դատախազի վերաքննիչ բողոքը 2020 թվականի դեկտեմբերի 14-ին մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 29-ին բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 2021 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ վարույթ չի ընդունվել:

Բացի այդ, իշխանությունը յուրացնելու՝ բռնություն գործադրելու միջոցով, Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով իշխանությունը զավթելու փորձ կատարելու և նշված հանցափորձը կազմակերպելու դեպքերի առթիվ, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում, ՀՀ քրեական օրենսգրքի 34-300-րդ հոդվածի 1-ին մասով, 38-34-300-րդ հոդվածի 1-ին մասով 2020 թվականի դեկտեմբերի 11-ին հարուցվել է քրեական գործ, որի նախաքննության կատարումը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից հանձնարարվել է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի քննիչներին, որը միացվել է թիվ 58231520 քրեական գործին՝ մեկ վարույթում:

2020 թվականի դեկտեմբերի 12-ին Վ.Ա.-ն ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-300-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալվել է:

2020 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Վ.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, 38-34-300-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է:

Դատարանի որոշման դեմ մեղադրյալի պաշտպանի և քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի վերաքննիչ բողոքները մերժվել են:

Որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2021 թվականի փետրվարի 18-ին բերվել է վճռաբեկ բողոք:

Միաժամանակ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի, ինչպես նաև՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ ՀՀ գլխավոր դատախազը դիմել է ՀՀ արդարադատության նախարարին:

Նախաքննությունը շարունակվում է, կատարվում են մեծածավալ քննչական և դատավարական այլ գործողություններ՝ սույն դրվագով մյուս հանցակիցներին պարզելու և մեղադրյալների արարքներին վերջնական քրեաիրավական գնահատական տալու համար:

Արձանագրված դրական ցուցանիշների հետ մեկտեղ պետք է փաստել, որ հանրապետությունում մինչդատական վարույթը դեռևս որոշ ուղղություններով բարելավվելու անհրաժեշտություն ունի, դեռևս առկա են խնդիրներ և բացթողումներ, որոնք բացասաբար են անդրադառնում քրեադատավարական խնդիրների արդյունավետ լուծման վրա:

Այսպես.

1. **ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս,** որ առկա է ձերբակալման իրավաչափության վիճարկման արդյունքում ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու դեպքերի աճ, ինչը նախ և առաջ պայմանավորված է ձերբակալման ինստիտուտի թերկարգավորումներով, հատկապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ձերբակալման նպատակների սահմանափակ շրջանակի նախատեսմամբ, ինչը թույլ չի տալիս դատավարական հարկադրանքի այս միջոցը կիրառել այն անձանց նկատմամբ, որոնց կողմից նոր հանցանք կատարելու կամ դեպքի վայրից փախուստի դիմելու տվյալներ առկա չեն: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազությունում վարույթն իրականացնող մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածով նախատեսված հարկադրանքի միջոցի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաճախակի նախաքննության մարմինները չեն պահպանում հիշյալ հարկադրանքի միջոցի կենսագործման համար նախատեսված օրենսդրական կարգավորումները կամ այն կիրառում են ոչ նպատակային, ինչն էլ հիմք է հետագայում դատարանների կողմից կասկածյալի ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու համար:

Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝

1. Ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար:

2. Ձերբակալել կարելի է միայն՝

1) անձին, որը հիմնավոր կերպով կասկածվում է այնպիսի հանցագործության մեջ, որի կատարման համար կարող է նշանակվել պատիժ՝ կարգապահական զուցարտակում

պահելու, կալանքի, որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով.

2) կիրառված խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալին:

3. Ձերբակալու՞մը կատարվում է՝

1) հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա.

2) քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը կարող է ձերբակալվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի կողմից հետևյալ հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում, եթե՝

1) նա բռնվել է քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ակնատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի վրա, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) կան այլ հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, որը դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում, կամ որի անձնավորությունը պարզված չէ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի համաձայն՝

1. Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը այն կազմելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին:

2. Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

3. Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում, հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածում տեղ գտած ձերբակալման բնորոշումից ակնհայտ է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝

- անձին ազատությունից փաստացի զրկելը,
- նրան իրավասու մարմին բերելը,
- ձերբակալման արձանագրություն կազմելը,

- այդ մասին նրան հայտարարելը:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարական օրենսդրությամբ ձերբակալման նպատակների վերաբերյալ առանձին դրույթներ սահմանված չեն, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի վերլուծությամբ ակնհայտ է, որ բացի վերը հիշատակված միմյանց հաջորդող գործողություններից, օրենսդիրը վկայակոչել է այդ հարկադրանքի միջոցի կիրառման նպատակները, դրանք են՝

- անձի կողմից հանցագործության կատարումը կանխելը,
- հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելը որպես ինքնուրույն նպատակ կարող է կիրառվել, երբ անձը արգելանքի է վերցվում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց անմիջապես հետո՝ դեպքի վայրում կամ դրան հարակից տարածքներում, մինչդեռ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հաճախակի են դեպքերը, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձինք, մինչ ձերբակալվելը, համապատասխան ծանուցագրերով հրավիրվել են վարույթն իրականացնող մարմին, որից հետո ձերբակալվել են և որպես հիշյալ հարկադրանքի միջոցի նպատակ մատնանշվել է նրանց փախուստը կանխելը:

Փաստորեն, կոնկրետ հանցագործության դեպքով, նախաքննության պայմաններում, երբ այդ դեպքին առնչություն ունեցող ենթադրյալ հանցանք կատարած անձը եղել է հայտնի և ծանուցագրով ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, այնուամենայնիվ, ձերբակալվել է՝ նրա փախուստը կանխելու պատճառաբանությամբ:

Բացի այդ, մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինները որպես ձերբակալման նպատակ վկայակոչել են անձի փախուստը կանխելը, մինչդեռ այդ քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ անձին արգելանքի վերցնելու պահին ձեռք բերված փաստական տվյալները վկայել են օրենքով նախատեսված այլ նպատակի մասին, այն է՝ առկա է եղել հիշյալ անձի կողմից նոր արարք կատարելու ռիսկը:

Վերոհիշյալ թերությունները հետազայում հիմք են հանդիսացել դատարանների կողմից ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու համար:

Թեև պետք է նշել նաև, որ առանձին դեպքերում, ձերբակալման հիմքերի և նպատակի հստակ առկայության պայմաններում, դատարանները կրկին կասկածյալի ձերբակալումը անհիմն ճանաչել են ոչ իրավաչափ, որոնց դեմ դատախազների կողմից ներկայացվել են բողոքներ:

Բացի այդ, մտահոգության տեղիք է տալիս նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի ոչ ճիշտ մեկնաբանումը և կիրառումը, որն էլ անմիջականորեն հանգեցնում է ձերբակալվածի իրավունքների և ազատությունների անհարկի սահմանափակմանը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը կարող է ձերբակալվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի կողմից հետևյալ հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում, եթե նա բռնվել է քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո:

Հիշյալ նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ անձին ձերբակալելու՝ փաստացի ազատությունից զրկելու հիմքն առկա է այն պայմաններում, երբ այդպիսի իրավասություն ունեցող պաշտոնատար անձն անմիջապես ակնատես է եղել հանցագործության

կատարմանը, որից հետո անձին վերցրել է արգելանքի: Թեև օրենսդիրը հանցագործությունը կատարելուց «անմիջապես հետո» եզրույթի կապակցությամբ որևէ կանխորոշիչներ չի սահմանել, այնուամենայնիվ, հիշյալ հիմքն իր բնույթով վկայում է ձերբակալման անհետաձգելի և անհապաղ կիրառման անհրաժեշտության մասին: Նշվածը բխում է նաև այն հանգամանքից, որ անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալումը անհետաձգելի գործողություն է, մինչդեռ մի շարք քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կասկածյալը ձերբակալվել է արարքը կատարելուց հետո ժամեր, նույնիսկ օրեր անց՝ այլ տեղանքում կամ վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված ծանուցագրով նրա մոտ հրավիրվելուց հետո:

Վերոգրյալից զատ, հարկ է նշել նաև, որ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինները ձերբակալման արձանագրությունները կազմել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131¹-րդ հոդվածով սահմանված պահանջների էական խախտմամբ՝ անձին բերման ենթարկելուց հետո սահմանված ժամկետը լրանալուց մի քանի ժամ անց, մեկ այլ դեպքում էլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131¹-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմամբ ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո 12 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր չի հրազեկվել հսկող դատախազին:

Վերը նշված խնդիրները և թերացումները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան հանձնարարական է տրվել նախաքննական մարմինների ղեկավարներին:

Բացի այդ, «ձերբակալում» դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման ընթացքում քրեադատավարական նորմերի անշեղ իրացումն ապահովելու, ոչ իրավաչափ ձերբակալման դեպքերը բացառելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարական է տրվել ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներին՝ ապահովելու ձերբակալում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելիս վարույթն իրականացնող մարմնի կողմից հետևյալ ուղենիշների անշեղ պահպանումը՝

ա) Բացառել այն դեպքերը երբ ենթադրյալ հանցանք կատարած անձինք մինչ ձերբակալվելը համապատասխան ծանուցագրերով հրավիրվել և պատշաճ ներկայացել են վարույթն իրականացնող մարմին, որից հետո ձերբակալվել են և որպես հիշյալ հարկադրանքի միջոցի կիրառման նպատակ մատնանշվել է նրանց փախուստը կանխելը: Նկատի ունենալ, որ, որպես կանոն, հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով անձը կարող է ձերբակալվել, երբ նա արգելանքի է վերցվում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարելուց անմիջապես հետո, օրինակ՝ դեպքի վայրում կամ դրան հարակից տարածքներում:

բ) Բացառել հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից ձերբակալման հիմքերի կամ նպատակների բացակայության պայմաններում անձին ձերբակալելու պրակտիկան, իսկ ձերբակալման արձանագրությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից ստանալուց հետո, նմանատիպ խախտումներ հայտնաբերելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված կարգով ձերբակալված անձին ազատել արգելանքից:

գ) Բացառել ձերբակալման արձանագրությունների ոչ պատշաճ և չփաստարկված կազմումը, մասնավորապես, այն դեպքերը, երբ վարույթն իրականացնող մարմինները որպես ձերբակալման նպատակ վկայակոչում են անձի փախուստը կանխելը, մինչդեռ անձին արգելանքի վերցնելու պահին ձեռք բերված փաստական տվյալները

փաստարկված վկայում են օրենքով նախատեսված այլ նպատակի մասին, այն է՝ առկա է եղել հիշյալ անձի կողմից նոր արարք կատարելու ռիսկը: Նման յուրաքանչյուր դեպքում նախաձեռնել արձանագրությունը կազմած պաշտոնատար անձի նկատմամբ ծառայողական քննություն: Հատուկ քննարկման առարկա դարձնել դատարանի կողմից ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու յուրաքանչյուր դեպք, խախտում հայտնաբերելու դեպքում մեղավոր պաշտոնատար անձի նկատմամբ նախաձեռնել (հետաքննության կամ նախաքննության մարմնի աշխատակցի, դատավորի, դատախազի) ծառայողական քննություն:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ ձերբակալման հետ կապված գործող կարգավորումները ունեն նաև օրենսդրական հետագա շտկումների անհրաժեշտություն, ինչը, կարծում ենք, կարող է լուծվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ, որում բացակայում են ձերբակալման նպատակների վերաբերյալ գործող օրենսդրության մեջ առկա նորմերը:

2. Գործնականում շարունակում է խնդրահարույց լինել խարդախության դեպքերին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցը: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված և վարույթները հետագայում հանցակազմի բացակայությամբ կարճված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանց մի մասը հարուցվել են այն դեպքում, երբ հայցվող իրավական պաշտպանության առարկան կազմում են բացառապես քաղաքացիական իրավանորմերի գործադրմամբ լուծման ենթակա հարցեր: Օրինակ՝ անձը հաղորդում է տալիս այն մասին, որ փոխառությամբ գումար է տվել այլ անձի, սակայն վերջինը խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել է այն:

Նշված դեպքերի վերաբերյալ գործերով վարույթն իրականացնող մարմիններն իրականացնում են տևական քննություն՝ հիմնավորելու համար խարդախության սուբյեկտիվ կողմը, այսինքն՝ հանցավորը մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալն ի սկզբանե նպատակ է ունեցել հափշտակելու այն կամ ի սկզբանե նպատակադրված է եղել չկատարելու որոշակի քաղաքացիաիրավական պարտավորություն՝ գնահատման չարժանացնելով օբյեկտիվ կողմը, այն է՝ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը (հանցանք կատարած անձն այնպիսի հանցավոր վարքագիծ է դրսևորել, որով ներգործել է տուժողի գիտակցության և կամքի վրա, ինչի արդյունքում ընկնելով մոլորության մեջ՝ իր գույքը հանձնել է կատարողին): Հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունն արդեն իսկ հիմք է եզրահանգելու, որ անձի արարքում հանցագործության հատկանիշները բացակայում են:

Պետք է նշել, որ վարույթն իրականացնող մարմինները հաճախ վերոգրյալ իրավիճակներում հարուցում են քրեական գործեր՝ պայմանավորված նաև մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությամբ: Այսպես. բազմաթիվ են այն դեպքերը, երբ ակնհայտ քաղաքացիաիրավական հարաբերությունների առկայության պայմաններում՝ ձևական խախտման կամ այլ պատճառաբանությամբ, դատարանները վերացրել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները կամ արձանագրել են քաղաքացու իրավունքների խախտում: Նշվածի կապակցությամբ մտահոգիչ է հատկապես այն հանգամանքը, որ վերադաս դատարանները ևս պաշտպանել են տվյալ քաղաքականությունը և բեկանված դատական ակտերն եզակի են: Արդյունքում, հարուցվում են քրեական գործեր, որոնցով տևական ժամանակ նախաքննություն կատարելուց հետո կայացվում են վարույթը կարճելու մասին որոշումներ:

Նշվածի մասին է վկայում նաև այն, որ 2020թ. ընթացքում այս հանցատեսակով հարուցված 1686 քրեական գործերից 326-ը կամ 19.3 տոկոսը կարձվել է արդարացման հիմքով, իսկ 616 քրեական գործով նախաքննությունը դեռևս չի ավարտվել:

3. ՀՀ դատախազությունում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաթիվ են դեպքերը, երբ դատարանը որոշում է կայացնում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին, այն մտնում է օրինական ուժի մեջ, մինչդեռ դատարանի որոշումից հետո դեռևս տևական ժամանակ քրեական գործ չի հարուցվում, ինչը խնդիրներ է ստեղծում հենց տվյալ դատական ակտով նշում պահանջի ժամանակին կատարման համար, ինչն էլ, իր հերթին, հանգեցնել է անձանց իրավունքների ոչ արդյունավետ պաշտպանության ու հանցագործության բացահայտման գործընթացի հապաղման:

Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման իրավիճակը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև նրանով, որ որոշ դեպքերում դատարանների դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործի նյութերն ու դատարանի որոշումն ուղարկվում են ուշացումով: Ընդ որում, գործի նյութերը հիմնականում ուղարկվում են հետաքննության մարմնին և ոչ թե ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանում, որտեղ պետք է հարուցվի քրեական գործը: Մասնավորապես.

Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի թիվ ԵԴ/0944/11/19 դատական գործով 2020 թվականի հունվարի 31-ի որոշումը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն է ուղարկվել 2020 թվականի մարտի 3-ին: Մեկ այլ դեպքում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի մարտի 19-ի թիվ ԵԴ/0059/11/20 որոշումը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազություն է ուղարկվել 2020 թվականի ապրիլի 27-ին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ իրավիճակ է նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումների բողոքարկման արդյունքում կայացված որոշումների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին, որպեսզի ԲԴԽ-ն իր լիազորությունների շրջանակներում ապահովի, որ դատարանի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին որոշում կայացնելուց հետո, այդ որոշումը և գործի նյութերը, օրենսդրական անհրաժեշտ ժամկետների ավարտից հետո, անհապաղ ուղարկվեն ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանում:

Միաժամանակ, ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է քրեական գործ հարուցելը մերժելու կամ վարույթը կարճելու մասին որոշումների դատական բողոքարկման արդյունքում դատարանների կողմից բողոքները բավարարելու դեպքում՝ համապատասխան դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, անհապաղ միջոցներ ձեռնարկել նախապատրաստված նյութերը կամ քրեական գործը ստանալու և քրեական գործ հարուցելու կամ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու ուղղությամբ:

4. Քրեական գործերի քննության պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստուգումներ, վերստուգումներ, գույքագրումներ և այլ ստուգողական գործողություններ կատարելու վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների որոշումները

հաճախ կայացվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված դատավարական պահանջների խախտումներով, քանզի բացակայում են քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ քրեական գործով ապացուցման ենթակա մի շարք հանգամանքներ նշված գործողություններով կարող են հերքվել կամ հաստատվել:

Հարկ է փաստել, որ վերոնշյալ խախտումներն առավելապես վերաբերում են քրեական գործերով նշանակվող համալիր հարկային ստուգումներին: ՀՀ ՊԵԿ ներկայացվող համալիր հարկային ստուգում իրականացնելու մասին որոշումները շատ դեպքերում ստուգում իրականացնելու առումով պատճառաբանված չեն՝ բացակայում են որոշմամբ նշված հարկ վճարողի մոտ համալիր հարկային ստուգում (վերստուգում) կատարելու հիմքերը, հիմնավորումները: Այսինքն՝ նշված որոշումներում ներկայացվում են քրեական գործ հարուցելու հիմքերը, հիմնավորումները, այնուհետև՝ առաջադրվում է հարկային մարմնի կողմից պարզաբանման ենթակա հարցերի շրջանակը՝ առանց անդրադառնալու այն պատճառահետևանքային կապին, որը կարող է առկա լինել հարկային ստուգմամբ պարզաբանման ենթակա հանգամանքների և այդ քրեական գործի բազմակողմանի և օբյեկտիվ հանգուցալուծման միջև, կամ՝ քննիչի որոշմամբ առաջարկվում է ստուգում կատարել նաև այն տնտեսվարող սուբյեկտների մոտ, որոնք որոշակի կապ ունեն տվյալ քրեական գործով անցնող անձանց հետ, սակայն նշված ընկերությունների կողմից հարկային խախտումներ կատարված լինելու մասին որևէ տվյալ առկա չէ գործում: Այս դեպքում ևս պարզ չէ, թե դրանք ինչքանով առնչություն ունեն տվյալ քրեական գործի հետ և առաջարկվող ստուգմամբ բացահայտված հանգամանքներն ինչ էական ազդեցություն կարող են ունենալ տվյալ քրեական գործի համար: Միևնույն ժամանակ, հանդիպում են դեպքեր, երբ քննիչի կողմից ստուգման որոշմամբ պահանջվում է պարզել համալիր հարկային ստուգման շրջանակներից չբխող հարցեր:

Վերոգրյալի համատեքստում գործուն միջոցներ ձեռնարկելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարություն է տրվել քրեական գործերով ստուգումներ, վերստուգումներ, գույքագրումներ և այլ ստուգողական գործողություններ կատարելու մասին հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների նկատմամբ պատշաճ դատախազական հսկողություն սահմանելու վերաբերյալ: Դատախազներին հանձնարարվել է քրեական գործի նյութերից բխող վերաբերելի, արժանահավատ և բավարար տվյալների բացակայության պարագայում, անհապաղ վերացնել վարույթն իրականացնող մարմինների կողմից նշանակված համալիր հարկային ստուգում (վերստուգում) նշանակելու մասին որոշումները՝ իսպառ բացառելով դրանց կատարման ուղարկելը ստուգող մարմիններին:

Միաժամանակ գրություն է ուղարկվել ՀՀ ՊԵԿ, որպեսզի քրեական գործով համալիր հարկային ստուգում (վերստուգում) նշանակելու վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից անհիմն և չպատճառաբանված որոշում ՀՀ պետական եկամուտների կոմիտե կատարման ներկայացվելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկություն տրամադրվի ՀՀ գլխավոր դատախազություն:

5. Քրեական գործերով մինչդատական վարույթի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում որոշակի խնդիրներ են ի հայտ գալիս՝ կապված գույքի վրա կալանք դնելու գործընթացում անձանց սեփականության և իրենց գույքից անարգել օգտվելու իրավունքների երաշխավորման հետ: ՀՀ վճռաբեկ դատարանը 2019թ. դեկտեմբերի 20-ի

թիվ ԵՂ/0587/11/18 դատական գործով իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ անձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը բացառող կարևոր դատավարական երաշխիք է օրենսդրական այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Իսկ դա ենթադրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է կայացվի քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ դրա կիրառման հիմքերի և նպատակների առկայությունը հիմնավորող՝ քրեական գործի նյութերից բխող փաստական տվյալների հիման վրա: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով գործում առկա նյութերի վրա, պարտավոր է հիմնավորել դրա իրավական հիմքերի և նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ չսահմանափակվելով միայն գույքի վրա կալանք դնելը կարգավորող օրենսդրական ձևակերպումների շարադրանքով: Միայն վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը:

Հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է քրեական գործերով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց պատկանող գույքի վրա կալանք դնելու մասին որոշումները կայացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխով նախատեսված պահանջների խախտումները բացառելու նպատակով ապահովել հետևյալը.

ա) քրեական գործերով կասկածյալի կամ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու անհրաժեշտության դեպքում պարզել վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող գույքերի շրջանակը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի առկայության դեպքում կալանք դնել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի բաժնեմասի վրա,

բ) գույքի վրա կալանք դնելու մասին որոշումներում հստակ տարանջատել որոշման կայացման դատավարական հիմքն ու նպատակը, ինչպես նաև փաստարկված դատողություններ ներկայացնել գույքը տիրապետողի կողմից թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական ռիսկերը գնահատելու վերաբերյալ,

գ) միջոցներ ձեռնարկել կալանադրվող գույքի շուկայական արժեքը պարզելու ուղղությամբ (ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 749-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կադաստրի կոմիտեի կանոնադրության 3-րդ բաժնի 7-րդ կետի համաձայն՝ Կադաստրի կոմիտեի գործառույթներից է անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների (մոնիթորինգ) կազմակերպումն ու իրականացումը, անշարժ գույքի շուկայի վերլուծությունը և տեղեկության հրապարակումը: Նշված գործառույթի՝ անշարժ գույքի շուկայի վերլուծության իրականացումն ապահովվում է՝ հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները, որի արդյունքում մշակվում և հասանելի աղբյուրներում հրապարակվում են ՀՀ ամբողջ տարածքում՝ ըստ գոտիականության, անշարժ գույքի

միջինացված շուկայական արժեքները) եռամսյակային, կիսամսյակային և տարեկան կտրվածքով/,

դ) գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելիս պարտադիր նշել կալանադրվող գույքը՝ անհատականացնող տվյալներով (անշարժ գույքի դեպքում՝ կադաստրային ծածկագիր, սեփականատեր, սեփականության իրավունքի տեսակ, հասցե, չափաբանական և այլ տվյալներ, շարժական գույքի դեպքում՝ մակնիշ, հաշվառման համարանիշ, նույնականացման համարանիշ և այլն), ինչպես նաև գույքի այն արժեքը, որի վրա բավական է կալանք դնել՝ քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար,

ե) գույքը կալանքից ազատելու անհրաժեշտության դեպքում այդ մասին կայացնել համապատասխան որոշում,

զ) որպես կալանադրման ենթակա գույք դիտարկել նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից հանցագործության առարկա հանդիսացող արտահանվող կամ ներմուծվող ապրանքները՝ խստիվ հետևելով տնտեսական գործունեությանը խոչընդոտելու հնարավոր դրսևորումներին՝ թույլ չտալով որևէ անհարկի միջամտություն այդ գործընթացին:

Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ որպես կասկածյալ կամ մեղադրյալ դատավարական կարգավիճակ ունեցող անձինք ունեն այլ անշարժ կամ շարժական գույք, ձեռնպահ մնալ տնտեսական գործունեության առարկա հանդիսացող ապրանքների վրա կալանք դնելուց:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ

2020թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1810 նյութ (2019թ.՝ 2083 նյութ), որոնցից 1232-ով (2019թ.՝ 1399) հարուցվել են քրեական գործեր, 561-ով՝ (2019թ.՝ 655) քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 516-ը (2019թ.՝ 603)՝ արդարացման, իսկ 45-ը (2019թ.՝ 52)՝ ոչ արդարացման հիմքերով:

Այսպիսով, 2019թ. համեմատ 2020թ. 273-ով կամ 13.1%-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված նյութերի քանակը, իսկ հարուցված քրեական գործերի քանակը նվազել է 11.9%-ով կամ 167-ով՝ կազմելով 1232:

Թեև 2019 և 2020 թվականների վիճակագրական տվյալների համադրված վերլուծությունն առաջին հայացքից կարող է վկայել հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նվազման մասին, սակայն իրականում նշված հանցատեսակի ցուցանիշներում էական նվազումներ չեն եղել: Մասնավորապես, այս համատեքստում պետք է նշել, որ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում 2020 թվականի մարտի 25-ի փոփոխությունը, կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 82 հրամանով, որը ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով ուժը կորցրած է ճանաչվել և հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, ըստ որի կոռուպցիոն բնույթի հանցագործություն է համարվել 67 /վաթսույոթ/ հանցակազմ: ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 56 հրամանով այդ ցանկը լրացվել է ևս 3 /երեք/ հանցակազմով, այդպիսով՝ ընդհանուր կարգավորման արդյունքում կոռուպցիոն բնույթի հանցագործություն է համարվել 70 /յոթանասուն/ հանցակազմ: Հարկ է նկատել, որ 2019թ. հաշվետու տարին ամփոփվել է հենց նշված թվաքանակի հանցակազմերի վերաբերյալ վիճակագրական տվյալներով:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների տեսակները ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանվել են միայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 25.03.20 N ՀՕ-207-Ն ՀՀ օրենքով, որով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» վերտառությամբ 6-րդ հավելվածով /Այսուհետ՝ նաև Հավելված/, որում ընդգրկված է 28 /քսանութ/ հանցակազմ, ընդ որում՝ 2020 թվականի հաշվետու ժամանակաշրջանն ամփոփվել է հենց այդ հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա:

Հետևաբար, 2019 և 2020 թվականների ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շարժընթացի վերաբերյալ առավել օբյեկտիվ դատողություններ հնարավոր է կատարել բացառապես նոր իրավակարգավորումները հաշվի առնելով: Այսպես, 2020թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1810 նյութ, իսկ 2019թ.՝ 2083 նյութ, ընդ որում՝ 2019 թվականի ընթացքում հաշվառված և Հավելվածում չընդգրկված 13/ տասներեք/ հանցակազմին վերաբերող ընդհանուր 113 նյութ է նախապատրաստվել, ուստի, այդ ցուցանիշը հաշվի չառնելով, 2020 թվականի ընթացքում 2019 թվականի համեմատ պակաս է նախապատրաստվել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով 160 նյութ:

2020 թվականի ընթացքում հարուցվել է կոռուպցիոն բնույթի 1232 քրեական գործ (2019թ.՝ 1399), ընդ որում՝ 2019 թվականի ընթացքում հաշվառված և Հավելվածում չընդգրկված 12 հանցակազմին վերաբերող ընդհանուր 64 քրեական գործ է հարուցվել: Ուստի այդ ցուցանիշը հաշվի չառնելով՝ 2020 թվականի ընթացքում 2019 թվականի համեմատ պակաս է հարուցվել կոռուպցիոն բնույթի 103 քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննվել է 2535 քրեական գործ (2019թ.՝ 2625), ընդ որում՝ 2019 թվականի ընթացքում հաշվառված և Հավելվածում չընդգրկված 14 հանցակազմին վերաբերող քննվել է ընդհանուր 95 քրեական գործ: Այդ ցուցանիշը հաշվի չառնելով՝ 2020 թվականի ընթացքում 2019 թվականի համեմատ ՀՀ նախաքննական մարմինների վարույթում ավել է քննվել 5 քրեական գործ:

Բացի հարուցված 1232 (2019թ.՝ 1399) քրեական գործերից՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 515 (2019թ.- 535) քրեական գործ, որոնցից 76-ը (2019թ.՝ 116)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 359-ը (2019թ.՝ 354)՝ այլ մարմնից ստացված, 3-ը (2019թ.՝ 1)՝ այլ պետության քրեական հետապնդման մարմնից ստացված, 10-ը (2019թ.՝ 15)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 67-ը (2019թ.՝ 49)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում է գտնվել նախորդ տարվանից փոխանցված 788 (2019թ.՝ 691) քրեական գործ:

Արձանագրված ցուցանիշների համադրված վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ կոռուպցիոն հանցագործությունների շարժընթացում 2020 թվականի ընթացքում արձանագրված որոշակի բացասական ցուցանիշներն առավելապես կապված են եղել Covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների, ինչպես նաև Ադրբեյջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմի հետ:

Ընդ որում՝ նման առանձնահատուկ պայմանների առկայության և քրեական հետապնդման մարմինների ծանրաբեռնվածության պայմաններում հաջողվել է 2020թ. ավարտել կոռուպցիոն բնույթի 716 քրեական գործի վարույթ, որը նախորդ տարվա արդյունքին զիջում է շուրջ 28,8%-ով:

Ավարտված քրեական գործերից 419-ի (2019թ.՝ 576) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 114-ը՝ (2019թ.՝ 190)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթն ավարտված մյուս 183 քրեական գործերը՝ 410 անձի վերաբերյալ (2019թ.՝ 240-ը՝ 447 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, ընդ որում՝ 410 անձից 16-ը (2019թ.՝ 27) գտնվել է կալանքի տակ:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2535 (2019թ.՝ 2625) քրեական գործից 156-ի (2019թ.՝ 138) վարույթը կասեցվել է, որոնցից 136-ը (2019թ.՝ 102)՝ անձը հայտնի չլինելու, 17-ը (2019թ.՝ 31)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 3-ը (2019թ.՝ 5)՝ այլ հիմքերով: 308 (2019թ.՝ 319) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 321 (2019թ.՝ 343) գործ միացվել է, 1034 (2019թ.՝ 819) գործի նախաքննություն (նշված գործերով՝ 27 (2019թ.՝ 29) անձ գտնվել է կալանքի տակ) փոխանցվել է հաջորդ տարի:

2020 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի 2535 (2019թ.՝ 2625) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 1356 (2019թ.՝ 1264) անձ: Այսինքն՝ 2020թ. ընթացքում քրեական հետապնդման է ենթարկվել 7. 3 -ով ավելի անձ, քան նախորդ տարվա ընթացքում:

Քրեական հետապնդման ենթարկված 1356 (2019թ.՝ 1264) անձից 107-ը (2019թ.՝ 95) ձերբակալվել է, որոնցից 28-ը (2019թ.՝ 41) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 1144-ի (2019թ.՝ 1073) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 1137 (2019թ.՝ 1018) անձի մեղադրանք է առաջադրվել: 113 (2019թ.՝ 98) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 24-ը (2019թ.՝ 13) մերժվել է, 89-ը (2019թ.՝ 85) բավարարվել, 53 (2019թ.՝ 46) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 9 (2019թ.՝ 9) մեղադրյալ ազատվել է կալանքից, որոնցից 4-ը՝ դատախազի (2019թ.՝ 6), 5-ը՝ դատարանի կողմից (2019թ.՝ 3):

204 (2019թ.՝ 375) անձի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 79-ը (2019թ.՝ 109)՝ արդարացման, 125-ը (2019թ.՝ 266)՝ ոչ արդարացման հիմքերով: Ղատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 1 (2019թ. -1) որոշում: Քրեական հետապնդման ենթարկված 712 (2019թ.՝ 500) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Հատուկ ուշադրության են արժանի նաև կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շարժընթացի՝ թվարկված օբյեկտիվ գործոններով պայմանավորված բացասական միտումների պայմաններում հանցագործությանը պետությանը պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքները: Մասնավորապես, թեև 2019թ. համեմատ 2020թ. ընթացքում ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասը նվազել է 21. 216. 466. 711 ՀՀ դրամով կամ շուրջ 77%-ով, միևնույն ժամանակ 2020թ. ընթացքում շուրջ 223%-ով կամ 2. 491. 837. 986 ՀՀ դրամով ավելի գումար է վերականգնվել, քան 2019թ. ընթացքում (2019թ.՝ 2.026.457.711 ՀՀ դրամ, 2020թ. ընթացքում՝ 4. 518. 295. 697 ՀՀ դրամ գումար):

ՀՀ դատախազության կողմից իրականացված ամփոփումների արդյունքում պարզվել է, որ որոշակի խնդիրներ են առկա ենթադրյալ հանցագործությանը պետությանը պատճառված վնասի վերականգնման մեխանիզմներում: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազի 04. 03. 2020թ. հանձնարարականի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում յուրաքանչյուր ամիս ամփոփվել է ՀՀ նախաքննական մարմիններում 2020թ. ընթացքում քննվող կամ նույն թվականի ընթացքում քննված քրեական գործերով պետությանը և համայնքներին պատճառված, ինչպես նաև վերականգնված վնասի չափը:

Ամփոփումների ընթացքում պարզվել է, որ պետության և համայնքին պատճառված վնասի վերականգնման գործընթացում առաջանում են որոշակի խնդիրներ, որոնք հետագայում կարող են խոչընդոտ ստեղծել վերականգնված գումարները տնօրինելու, ինչպես նաև այն հաշվառելու գործընթացում: Մասնավորապես, ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ՀՀ իրավասու մարմիններում քննվող քրեական գործերով պետության կամ համայնքին պատճառված վնասը վերականգնվում է ՀՀ քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, դատախազության դեպոզիտային, պետությանը պատճառված վնասի վերականգնման և ՊԵԿ միասնական հաշվեհամարներին: Որոշ դեպքերում պատճառված վնասը վերականգնվում է այն կազմակերպության հաշվեհամարին, որին հանցագործությանը պատճառվել է վնասը (օրինակ՝ տարբեր ՊՈԱԿ-ներ՝ դպրոցներ, բժշկական կենտրոններ և այլն), իսկ հաճախ մի նախաքննական մարմնում քննվող քրեական գործով պատճառված վնասը վերականգնվում է մեկ այլ նախաքննական մարմնի դեպոզիտային հաշվեհամարին:

Պարզվել է նաև, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործերով պատճառված վնասների գումարները մուտքագրվում են տարբեր հաշվեհամարներին, որոշ դեպքերում՝ հանձնվում կանխիկ եղանակով, քանի որ նշված նախաքննական մարմինը չունի դեպոզիտային հաշվեհամար:

Բացի այդ, ՊԵԿ միասնական հաշվեհամարին (900008000490) քրեական գործերով պատճառված վնասները վերականգնելիս այն դիտվում է որպես հարկային

պարտավորությունների կատարում, իսկ տարբեր կազմակերպությունների հաշվեհամարներին վերականգնված գումարները դուրս են մնում համապատասխան իրավասու մարմինների վերահսկողությունից:

Որոշ դեպքերում նախաքննական մարմինների կամ դատախազության դեպոզիտային հաշվեհամարներին վերականգնված գումարները հնարավոր չի լինում տնօրինել՝ մինչև քրեական գործով վերջնական որոշում կայացնելը, իսկ նման որոշում կայացնելուց հետո գումարը տնօրինելու համար վարույթն իրականացնող մարմինն այդ մասին պետք է իրազեկի համապատասխան մարմնի ֆինանսական վարչությանը: Սակայն, վարույթն իրականացնող մարմնի համար որևէ իրավական ակտով նման պարտավորություն նախատեսված չէ:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ նախաքննության փուլում գտնվող քրեական գործերով այդ գումարները վճարվում են դատարանների դեպոզիտային հաշվեհամարներին, որոնց տնօրինումը գործնականում ևս բարդություն է առաջացնում:

Բացի այդ, տարբեր հաշվեհամարներին նման բնույթի վճարումները դժվարացնում են նաև կառավարության լիազոր մարմնի աշխատանքը, քանի որ վերջինս, ըստ էության, հնարավորություն չունի դիտարկելու այդ գումարների գոյացման աղբյուրը:

Նկատի ունենալով, որ առկա կարգավորումները թույլ չեն տալիս հավուր պատշաճի իրականացնել պետությանը և համայնքին պատճառված վնասի վերականգնված գումարի արդյունավետ հաշվառումը, դրա տնօրինումը, ինչպես նաև հսկողական կամ վերահսկողական գործառույթներ նշված ոլորտում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ, ուստի ՀՀ գլխավոր դատախազի կողմից առաջարկ է ներկայացվել ՀՀ Վարչապետին՝ քննարկել նման վնասները վերականգնելու համար մեկ հաշվեհամար ստեղծելու, նշված մյուս խնդիրները քննարկելու, դրանք ենթաօրենսդրական կամ այլ ակտերով կանոնակարգելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու հարցը:

Այնուհետև, ընդունվել է «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ:

Բացի այդ, քրեական գործերով՝ պետությանը կամ համայնքին պատճառված վնասների վերականգնումը համապատասխան բյուջեներ արդյունավետ հաշվառելու, ինչպես նաև նշված ոլորտում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ պատշաճ հսկողական կամ վերահսկողական գործառույթներ իրականացնելու ընթացքում ծագած խնդիրների լուծման նպատակով ստեղծվելիք աշխատանքային խմբում ՀՀ դատախազության կողմից առաջարկվել է ընդգրկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալին:

Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ հաշվետու տարում նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի շարժը ունեցել է հետևյալ պատկերը.

Ընտրողներին կաշառք տալու, կաշառք ստանալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու (ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում նախապատրաստվել է 9 նյութ, որոնցից 8-ով հարուցվել է քրեական գործ, 1-ն ուղարկվել է ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 13 քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 4 քրեական

գործի վարույթ, այդ թվում՝ 3 գործի վարույթ կարճվել է՝ արդարացման հիմքով, իսկ 1 քրեական գործ՝ 1 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված քրեական գործով կալանքի տակ որևէ մեկը չի գտնվել:

Մեկ գործի վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով: 2 քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 4 քրեական գործ միացվել է, իսկ 2 գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում՝ այդ գործերով կալանքի տակ որևէ անձ չկա, 1 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատարանի, իսկ 1 անձի նկատմամբ՝ դատախազի կողմից փոփոխվել է:

2020թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուր 24 անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 2 անձ ձերբակալվել է: Նշված 24 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջիններին առաջադրվել է մեղադրանք: 2 անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 1 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: Դատի է տրվել 1 անձ: Քրեական հետապնդման ենթարկված 23 անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Այս առումով հիշատակման է արժանի 2020 թվականի ընթացքում բացահայտված աննախադեպ ծավալով դեպքը՝ կազմակերպված հանցավոր ընտրակաշառքի մասով: Այսպես. պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, պաշտոնատար անձին առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու, կաշառք ստանալու, կաշառք ստանալուն օժանդակելու դեպքերի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով, 2020 թվականի փետրվարի 1-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ, արժեքներ և փաստաթղթեր հայտնաբերելու նպատակով, Ֆրևան Շին • ՍՊ ընկերությունում կատարվել է խուզարկություն, ինչի արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են «Հաշվետվություն» վերտառությամբ փաստաթղթեր՝ Գեղարքունիքի մարզի տարբեր ընտրատեղամասերում 2017թ. ԱԺ ընտրությունների ընթացքում ՀՀ-ում գործող կուսակցություններից մեկի կողմից կատարած նախընտրական միջոցառումների, դրանց ծախսերի՝ ներառյալ ընտրողներին ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ:

2020 թվականի հունիսի 10-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել ընտրողներին կաշառք տալու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով նոր քրեական գործը հարուցելու մասին:

Քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին և ՀՀ քննչական կոմիտեի նախագահին տրվել է ցուցում՝ քրեական գործի նախաքննությունը կատարող քննչական խմբի կազմում նշված մարմինների քննիչների ներառելու վերաբերյալ, իսկ տվյալ վարույթով դատախազության լիազորությունների իրականացումը հանձնարարվել է դատախազական խմբի:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք է բերվել բավարար ապացույցների համակցություն, որով հիմնավորվել է, որ հիշյալ կուսակցության նախագահը, ՀՀ ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին իր ղեկավարությամբ գործող կուսակցությունների դաշինքի և ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների օգտին քվեարկելու համար ընտրողներին կաշառք տալու նպատակով, ընտրություններին նախորդող ժամանակահատվածում ստեղծել և ղեկավարել է կազմակերպված խումբ, որի կազմում ընդգրկել է կուսակցությունների դաշինքի ու իր ղեկավարած կուսակցության կենտրոնական և տարածքային մարմինների աշխատակիցների ու այլ անձանց:

Կազմակերպված խմբի համակարգված և արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով գործարկվել է ֆինանսական միջոցների տնօրինման և կազմակերպված խմբի անդամների գործունեության վերահսկման համակարգ, կազմվել են հաշվետվություններ, որոնցում արտացոլվել են տրամադրված ֆինանսական միջոցները, դրանց հաշվին կատարվելիք կամ կատարված ծախսերը, իսկ ընտրողներին տրված կաշառքի վերաբերյալ կազմված ցուցակներում նշվել են նրանց անուն-ազգանունները, անձնագրային տվյալները, ընտանիքի անդամների թիվը և դրան համապատասխան տրամադրվող գումարը՝ յուրաքանչյուր անձին 10. 000 ՀՀ դրամ:

Կազմակերպված խմբի կազմում ընդգրկված անձանց միջոցով ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում, կուսակցության ղեկավարի և կազմակերպված խմբի կազմում ընդգրկված անձանց կողմից տրամադրված միջոցների հաշվին քաղաքական կուսակցությունների դաշինքին և դրա կողմից առաջադրված թեկնածուի օգտին քվեարկելու համար, ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքի ընտրողներին 17194 քվեի համար տրվել է ընդհանուր 171.940.000 ՀՀ դրամ կաշառք:

ՀՀ գլխավոր դատախազը, 2020 թվականի հունիսի 15-ին, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածով, Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, միջնորդել է ՀՀ Ազգային ժողովին՝ համաձայնություն տալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր հանդիսացող հիշյալ կուսակցության նախագահի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն և ազատությունից զրկելուն:

Ներկայացված միջնորդությունները ՀՀ Ազգային ժողովի 2020 թվականի հունիսի 16-ի հերթական նիստում քննարկվել և բավարարվել են:

2020 թվականի հունիսի 16-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-154.2-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության արդյունքում՝ թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ քվեարկելու պայմանով, թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար կաշառք ստանալու, թեկնածուներից, կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), հանրաքվեի քարոզչական նախաձեռնություններից որևէ մեկի օգտին կողմ քվեարկելու համար ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողի կամ այլ անձի համար կաշառք տալու, ինչպես նաև կուսակցությունների դաշինքի և ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների օգտին քվեարկելու համար

ընտրողներին կաշառք տալու նպատակով, ընտրություններին նախորդող ժամանակահատվածում կազմակերպված խումբ ստեղծելու և ղեկավարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 1-ին մասով, 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-154.2-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանքներ են առաջադրվել 22 անձի:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Ընտրակաշառքի միջնորդության (ՀՀ քրեական օրենսգրքի 154.9-րդ հոդված) վերաբերյալ ինչպես 2019թ., այնպես էլ 2020թ. ընթացքում ոչ մի նյութ չի նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել, վարույթում գործ չի քննվել:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված խարդախությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1 կետ և 3-րդ մաս) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստվել է 98 (2019թ.՝ 123) նյութ, որոնցից 93-ով (2019թ.՝ 115) հարուցվել է քրեական գործ, 5-ով (2019թ.՝ 8) քրեական գործ հարուցելը մերժվել է, որոնցից 5-ն էլ (2019թ.՝ 8) արդարացնող հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 179 (2019թ.՝ 236) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 35 (2019թ.՝ 67) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 20 գործի վարույթ (2019թ.՝ 47) կարճվել է, 13-ը (2019թ.՝ 31)՝ արդարացման, 7-ը (2019թ.՝ 16)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 15 (2019թ.՝ 20) քրեական գործ՝ 18 (2019թ.՝ 50) անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատարան ուղարկված քրեական գործերով 1 (2019թ.՝ 3) անձ գտնվել է կալանքի տակ:

9 (2019թ.՝ 23) գործի վարույթ կասեցվել է, որոնցից 7-ը (2019թ.՝ 18)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 2-ը (2019թ.՝ 5)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: 20 (2019թ.՝ 53) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 54 (2019թ.՝ 38) գործ միացվել է, իսկ 61 (2019թ.՝ 55) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում՝ այդ գործերով 1 անձ շարունակել է մնալ կալանքի տակ:

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քննված 179 (2019թ.՝ 236) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 38 (2019թ.՝ 86) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 38 (2019թ.՝ 86) անձից 5-ը (2019թ.՝ 5) ձերբակալվել է, որոնցից 3-ը (2018թ.՝ 5) ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 19-ի (2019թ.՝ 82) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 18 (2019թ.՝ 80) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2019թ.՝ 4) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 2-ը (2019թ.՝ 1) մերժվել է, 2-ը (2019թ.՝ 3)՝ բավարարվել, 2 (2019թ.՝ 1) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 1 (2019թ.՝ 3) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 (2019թ.՝ 0) մեղադրյալ ազատվել է կալանքից՝ դատարանի կողմից: 10 (2019թ.՝ 8) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 2-ը (2019թ.՝ 4)՝ արդարացման, 8-ը (2019թ.՝ 4)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 13 (2019թ.՝ 36) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարված յուրացման կամ վատնման (ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և 3-րդ մաս) վերաբերյալ նախապատրաստվել է 366 (2019թ.՝ 471) նյութ, որոնցից 287-ով (2019թ.՝ 377) հարուցվել է

քրեական գործ, 77-ով (2019թ.՝ 93)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 61-ը (2019թ.՝ 76)՝ արդարացման, իսկ 16-ը (2019թ.՝ 17)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 671 (2019թ.՝ 748) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 184 (2019թ.՝ 277) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 125 գործով վարույթ (2019թ.՝ 189) կարճվել է, որոնցից 76-ը՝ (2019թ.՝ 106) արդարացման, 49-ը (2019թ.՝ 83)՝ ոչ արդարացման հիմքերով, 59 քրեական գործ՝ 107 անձի վերաբերյալ, որոնցից 3-ը՝ կալանքի տակ (2019թ.՝ 88 գործ՝ 155 անձի վերաբերյալ, որոնցից 7-ը՝ կալանքի տակ)՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած 487 քրեական գործից 32 (2019թ.՝ 36) քրեական գործի վարույթ կասեցվել է, որոնցից 29-ը (2019թ.՝ 18)՝ անձը հայտնի չլինելու, իսկ 3-ը (2019թ.՝ 15)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու այլ հիմքով: 51 (2019թ.՝ 77) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 66 (2019թ.՝ 66) գործ միացվել է, իսկ 338 (2019թ.՝ 292) գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում նշված գործերով 1 անձ գտնվել է կալանքի տակ, իսկ 1-ի խափանման միջոցը փոփոխվել է դատարանի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված 671 (2019թ.՝ 748) քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 296 (2019թ.՝ 314) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 296 (2019թ.՝ 314) անձից 1-ը (2019թ.՝ 10) ձերբակալվել է: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 266-ի (2019թ.՝ 271) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 264 (2019թ.՝ 265) անձի մեղադրանք է առաջադրվել: 9 (2019թ.՝ 10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 7-ը բավարարվել է (2019թ.՝ 10), 1-ը՝ մերժվել, 12 (2019թ.՝ 4) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 9 (2016թ.՝ 6) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 0 (2019թ.՝ 1՝ դատախազի կողմից) մեղադրյալ ազատվել է կալանքից: 66 (2019թ.՝ 91) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 20-ը (2019թ.՝ 11)՝ արդարացման, 46-ը (2019թ.՝ 80)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 135 (2019թ.՝ 106) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 189.1-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութ չի նախապատրաստվել (2019թ.՝ 0), քրեական գործ չի հարուցվել (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթ է ընդունվել 1 քրեական գործ (2019թ.՝ 2), 1 քրեական գործ փոխանցվել է 2019թ. -ից, որոնցից 1-ը միացվել է (2019թ.՝ 1), 1-ը մնացել է անավարտ (2019թ.՝ 1):

Փողերի լվացման (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում նախապատրաստվել է 14 (2019թ.՝ 7) նյութ, որոնցից 14-ով (2019թ.՝ 6) հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 23 (2019թ.՝ 15) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 1

(2019թ.՝ 3) քրեական գործի վարույթ, այն է՝ 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ (2019թ.՝ 1 գործ՝ կալանքի տակ գտնվող անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 2 (2019թ.՝ 3) գործի վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով, 3 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 10 քրեական գործ միացվել է (2019թ.՝ 3), 7-ի (2019թ.՝ 6) նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 23 (2019թ.՝ 2) անձ:

2020թ. քրեական հետապնդման ենթարկված 23 (2019թ.՝ 2) անձից 5-ը (2019թ.՝ 2) ձերբակալվել է: 23 (2019թ.՝ 4) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 20 (2019թ.՝ 4) անձի մեղադրանք է առաջադրվել: 9 (2019թ.՝ 2) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 1-ը մերժվել է, իսկ 8-ը՝ բավարարվել, 4 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: Քրեական հետապնդման ենթարկված 9 (2019թ.՝ 1) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման (ՀՀ քրեական օրենսգրքի 190.1-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում նյութեր չեն նախապատրաստվել (2019թ.՝ 2, որոնք մերժվել են արդարացման հիմքով):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ որևէ քրեական գործ չի հարուցվել, վարույթում որևէ գործ չի քննվել (2019թ.՝ 0):

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ գույքային չարաշահման (ՀՀ քրեական օրենսգրքի 190.2-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում ոչ մի նյութ չի նախապատրաստվել, ոչ մի քրեական գործ չի հարուցվել (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քրեական գործի չի քննվել (2019թ.՝ 1):

Պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հակամրցակցային գործունեության (ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում ոչ մի նյութ չի նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել, վարույթում որևէ գործ չի քննվել (2019թ.՝ 0):

Առևտրային կաշառքի (ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 8 (2019թ.՝ 18) նյութ, որոնցից 8-ով (2019թ.՝ 18) հարուցվել է քրեական գործ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 26 (2019թ.՝ 27) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 8 (2019թ.՝ 10) քրեական գործի վարույթ, այն է՝ 8 (2019թ.՝ 10) գործի վարույթ կարճվել է, որոնցից 7-ը՝ (2019թ.՝ 6) արդարացման, 1-ը (2019թ.՝ 4)՝ ոչ արդարացման հիմքերով:

Մնացած քրեական գործերից 4-ը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով (2019թ.՝ 0), 3 քրեական գործ (2019թ.՝ 5) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, իսկ 11 (2019թ.՝ 9) քրեական գործի նախաքննությունը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

2020թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 23 (2019թ.՝ 3) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 23 (2019թ.՝ 3) անձից 19-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 19 (2019թ.՝ 2) անձի մեղադրանք է առաջադրվել, 1 (2019թ.՝ 1) անձի քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով, իսկ 22 (2019թ.՝ 2) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 201-րդ հոդված) վերաբերյալ նյութեր չեն նախապատրաստվել (2019թ.՝ 2 նյութ, որոնցով հարուցվել են քրեական գործեր):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 (2019թ.՝ 2) քրեական գործ, որն ուղարկվել է ըստ քննչական ենթակայության:

Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 70 (2019թ.՝ 154) նյութ, որոնցից 47-ով (2019թ.՝ 78) հարուցվել է քրեական գործ, 23-ով (2019թ.՝ 76)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 136 (2019թ.՝ 149) քրեական գործ, որոնցից ավարտվել է 41 (2019թ.՝ 47) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 38 քրեական գործի վարույթ (2019թ.՝ 45) կարճվել է, որոնցից 32-ը (2019թ.՝ 30)՝ արդարացման, 6-ը (2019թ.՝ 15)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 3 գործ՝ 3 անձի վերաբերյալ (2019թ.՝ 2 գործ՝ 2 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած գործերից 15-ը (2019թ.՝ 12) կասեցվել է, որոնցից 13-ը (2019թ.՝ 10)՝ անձը հայտնի չլինելու, 2-ը (2019թ.՝ 2)՝ անձի հետախուզման մեջ լինելու հիմքով, 16 քրեական գործ (2019թ.՝ 20) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 17 գործ (2019թ.՝ 13) միացվել է, իսկ 47 (2019թ.՝ 57) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ընդհանուրը 29 (2019թ.՝ 39) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 29 (2018թ.՝ 39) անձից 6-ը ձերբակալվել է: 23-ի (2019թ.՝ 35) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 22 (2019թ.՝ 34) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2019թ.՝ 3) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 1 (2019թ.՝ 2) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 12 (2019թ.՝ 10) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման հիմքով: Քրեական հետապնդման ենթարկված 9 (2019թ.՝ 26) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 640 (2019թ.՝ 571) նյութ, որոնցից 370-ով (2019թ.՝ 284) հարուցվել է քրեական գործ, 264-ով (2019թ.՝ 271)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, իսկ 6 (2019թ.՝ 16) նյութ ուղարկվել է ըստ քննչական

ենթակայության: Քրեական գործի հարուցումը մերժված 264 նյութից 253-ը մերժվել է (2019թ.՝ 260) արդարացման, իսկ 11-ը (2019թ.՝ 11)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 696 (2019թ.՝ 496) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 165 (2019թ.՝ 150) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 131 (2019թ.՝ 134) գործի վարույթ կարճվել է, որոնցից 107-ը (2019թ.՝ 119)՝ արդարացման, 24-ը (2019թ.՝ 15)՝ ոչ արդարացման հիմքով, իսկ 34 քրեական գործ՝ 95 անձի վերաբերյալ (2019թ.՝ 16 գործ՝ 25 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 28-ը (2019թ.՝ 16) կասեցվել է, այդ թվում՝ 24-ը (2019թ.՝ 12)՝ անձը հայտնի չլինելու, 3-ը (2019թ.՝ 3)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 1-ը (2019թ.՝ 1)՝ այլ հիմքով, 100 քրեական գործ (2019թ.՝ 84) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 97 քրեական գործ (2019թ.՝ 87) միացվել է, իսկ 306-ով (2019թ.՝ 159) նախաքննությունը 2020թ. ընթացքում չի ավարտվել: Ընդ որում, նշված գործերով 1 անձի (2019թ.՝ 0) նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը դատախազի կողմից փոփոխվել է, իսկ անավարտ քրեական գործերով կալանքի տակ շարունակել է մնալ 1 անձ (2019թ.՝ 3):

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 291 (2019թ.՝ 124) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 291 (2019թ.՝ 124) անձից 24-ը (2019թ.՝ 17) ձերբակալվել է, որոնցից 10-ը (2019թ.՝ 8)՝ ազատվել է ձերբակալումից: Քրեական հետապնդման ենթարկված անձանցից 268-ի (2019թ.՝ 109) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 267 (2019թ.՝ 109) անձի մեղադրանք է առաջադրվել: 20 (2019թ.՝ 10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 10-ը (2019թ.՝ 0)՝ մերժվել է, 10-ը (2019թ.՝ 10)՝ բավարարվել, 5 (2019թ.՝ 3) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 25 (2019թ.՝ 19) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 (2019թ.՝ 2) մեղադրյալ կալանքից ազատվել է դատախազի, 1 մեղադրյալ (2019թ.՝ 0)՝ դատարանի կողմից: 37 (2019թ.՝ 21) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 12-ը (2019թ.՝ 5)՝ արդարացման, 25-ը (2019թ.՝ 6)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 160 (2019թ.՝ 58) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ., նշված անձանցից 1-ը (2019թ.՝ 7) գտնվել է կալանքի տակ:

Պաշտոնեական լիազորություններն անցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 195 (2019թ.՝ 165) նյութ, որոնցից 107-ով (2019թ.՝ 97) հարուցվել է քրեական գործ, 85-ով (2019թ.՝ 61)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, ընդ որում, 82-ը (2019թ.՝ 58)՝ արդարացման, 3-ը (2019թ.՝ 3)՝ ոչ արդարացման հիմքերով, 3 նյութ (2019թ.՝ 9) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 163 (2019թ.՝ 179) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 75 (2019թ.՝ 86) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 70 քրեական գործով վարույթ (2019թ.՝ 80) կարճվել է, որոնցից 68-ը (2019թ.՝ 78)՝ արդարացման, 2-ը (2019թ.՝ 2)՝ ոչ արդարացման

հիմքերով, իսկ 5 քրեական գործ՝ 8 անձի վերաբերյալ (2019թ.՝ 6 գործ՝ 7 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 21-ը (2019թ.՝ 16) կասեցվել է, այդ թվում՝ 21-ն էլ (2019թ.՝ 16) անձի հայտնի չլինելու պատճառաբանությամբ, 27 քրեական գործ (2019թ.՝ 24) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 19 գործ (2019թ.՝ 27) միացվել է, իսկ 21 գործի նախաքննությունը (2019թ.՝ 26) 2020թ. մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 31 (2019թ.՝ 21) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 12 անձ ձերբակալվել է (2019թ.՝ 0): 28 (2019թ.՝ 16) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 28 (2019թ.՝ 13) անձի մեղադրանք է առաջադրվել: 11 (2019թ.՝ 0) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 2-ը մերժվել է, 9-ը՝ բավարարվել, 1 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 4 (2019թ.՝ 0) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 3 (2019թ.՝ 4) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: 10 (2019թ.՝ 11) անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու (ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդված) վերաբերյալ նյութ չի նախապատրաստվել (2019թ.՝ 0), որևէ գործ չի հարուցվել (2019թ.՝ 0), վարույթում քննվել 1 (2019թ.՝ 0) քրեական գործ, որի նախաքննությունը մնացել է անավարտ: Ընդ որում, անավարտ գործով 1 անձ շարունակել է մնալ կալանքի տակ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործով քրեական հետապնդման է ենթարկվել 2 անձ:

2 անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որոնց մեղադրանք է առաջադրվել: 2 մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 2 անձի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Ապօրինի հարստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում նախապատրաստվել է 5 (2019թ.՝ 0) նյութ, որոնցից 3-ով (2019թ.՝ 0) հարուցվել է քրեական գործ, 2-ով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 6 քրեական գործ (2019թ.՝ 4), որոնցից ավարտվել է ընդամենը 1-ը, (2019թ.՝ 1) այն է՝ նշված 1 քրեական գործով վարույթն արդարացնող հիմքով կարճվել է (2019թ.՝ 1):

Մնացած 5 քրեական գործից 2-ը միացվել է, իսկ մյուս 3 քրեական գործով նախաքննությունը 2020թ. ընթացքում չի ավարտվել (2019թ.՝ 2): Ընդ որում, անավարտ քրեական գործերով 2 անձ շարունակել է մնալ կալանքի տակ:

Քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 6 անձ (2019թ.՝ 6), որոնց մեղադրանք է առաջադրվել (2019թ.՝ 6): Նրանցից 1-ի պաշտոնավարումը դադարեցվել է (2019թ.՝ 0): 2-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով (2019թ.՝ 1), իսկ 4-ի (2019թ.՝ 5) վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Կաշառք ստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 94 (2019թ.՝ 162) նյութ, որոնցից 80-ով (2019թ.՝ 133) հարուցվել է քրեական գործ, 14-ով (2019թ.՝ 28)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 13-ը (2019թ.՝ 26)՝ արդարացման, 1-ը (2019թ.՝ 2)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 224 (2019թ.՝ 256) քրեական գործ, որից ընդամենն ավարտվել է 49 (2019թ.՝ 95) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 23 քրեական գործ (2019թ.՝ 58) կարճվել է, որոնցից 23-ը (2019թ.՝ 55)՝ արդարացման հիմքով, իսկ 26 քրեական գործ՝ 82 անձի վերաբերյալ, որոնցից 10-ը գտնվել է կալանքի տակ (2019թ.՝ 37 քրեական գործ՝ 66 անձի վերաբերյալ, որոնցից 13-ը գտնվել է կալանքի տակ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած 175 քրեական գործից 18-ը (2019թ.՝ 13) կասեցվել է, այդ թվում՝ 13-ը (2019թ.՝ 11) անձը հայտնի չլինելու, 4-ը (2019թ.՝ 1)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 1-ը՝ այլ հիմքով, 48 գործ (2019թ.՝ 21) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 24 գործ (2019թ.՝ 56) միացվել է, իսկ 85 գործի նախաքննությունը 2020թ. ընթացքում չի ավարտվել (2019թ.՝ 71): Անավարտ մնացած քրեական գործերով 12 (2019թ.՝ 11) անձ գտնվել է կալանքի տակ: Ընդ որում, նշված գործերով 12 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատարանի կողմից (2019թ.՝ 11), իսկ մեկ անձի նկատմամբ՝ դատախազի կողմից (2019թ.՝ 0) փոփոխվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 132 (2019թ.՝ 136) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 132 (2019թ.՝ 136) անձանցից 25-ը (2019թ.՝ 34) ձերբակալվել է, որոնցից 4-ը (2019թ.՝ 14) ազատվել է ձերբակալումից: 111-ի (2019թ.՝ 119) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 111 (2019թ.՝ 115) անձի մեղադրանք է առաջադրվել: 38 (2019թ.՝ 33) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 3-ը (2019թ.՝ 5) մերժվել է, 35-ը (2019թ.՝ -28) բավարարվել է, 15 (2019թ.՝ 14) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 10 (2019թ.՝ 16) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 մեղադրյալ (2019թ.՝ 1) ազատվել է կալանքից դատախազի կողմից, 2 մեղադրյալ (2019թ.՝ 0)՝ դատարանի կողմից: 5 (2019թ.՝ 11) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: Քրեական հետապնդման ենթարկված 75 (2019թ.՝ 72) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ. :

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու (ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 17 (2019թ.- 30) նյութ, որից 12-ով (2019թ.՝ 24) հարուցվել է քրեական գործ, 5-ով (2019թ.՝ 5) քրեական գործի հարուցումը մերժվել է՝ արդարացման հիմքով (2019թ.՝ 5):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 28 (2019թ.՝ 53) քրեական գործ, որոնցից ավարտվել է 17 (2019թ.՝ 39) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 14 (2019թ.՝ 22) գործի վարույթ կարճվել է, որոնցից 14-ը (2019թ.՝ 19)՝ արդարացման, իսկ 3 քրեական գործ՝ 6 անձի վերաբերյալ (2019թ.՝ 17 քրեական գործ՝ 30 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 2-ը (2019թ.՝ 2) կասեցվել է՝ 2-ն էլ (2019թ.՝ 2) անձը հայտնի չլինելու հիմքով, 4 քրեական գործ (2019թ.՝ 1) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 4 գործի (2019թ.՝ 11) նախաքննությունը 2020թ. ընթացքում չի ավարտվել:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 30 (2019թ.՝ 82) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 30 (2019թ.՝ 82) անձից 12-ը (2019թ.՝ 4) ձերբակալվել է, 2-ը (2019թ.՝ 3) ազատվել է ձերբակալումից: 30-ի (2019թ.՝ 54) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 30 (2019թ.՝ 51) անձի մեղադրանք է առաջադրվել: 4 (2019թ.՝ 7) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնք բավարարվել են, 2 (2019թ.՝ 6) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 1 (2019թ.՝ 14) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման, 2-ը (2019թ.՝ 31)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 4 (2019թ.՝ 11) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելու (ՀՀ քրեական օրենսգրքի 311²-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել (2019թ. ընթացքում նախապատրաստվել է 1 նյութ, հարուցվել է 1 քրեական գործ, վարույթում քննվել է 2 քրեական գործ, որոնցից 1-ը արդարացնող հիմքով կարճվել է, 1-ը՝ միացվել):

Կաշառք տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 25 (2019թ.՝ 18) նյութ, որոնցից 16-ով (2019թ.՝ 14) հարուցվել են քրեական գործեր, 8-ով (2019թ.՝ 4) քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 7-ը (2019թ.՝ 4)՝ արդարացման, 1-ը (2019թ.՝ 0)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 39 (2019թ.՝ 42) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 13 (2019թ.՝ 22) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 3 (2019թ.՝ 8) քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 1-ը (2019թ.՝ 7)՝ արդարացման, 2-ը (2019թ.՝ - 1)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 10 քրեական գործ՝ 25 անձի վերաբերյալ (2019թ.՝ 14 քրեական գործ՝ 57 անձի վերաբերյալ, որոնցից 3-ը՝ կալանքի տակ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 4-ը (2019թ.՝ 3) կասեցվել է, այդ թվում՝ 2-ը (2019թ.՝ 1)՝ անձը հայտնի չլինելու, 1-ը (2019թ.՝ 2)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 1-ը՝ այլ հիմքով, 8 քրեական գործ (2019թ.՝ 5) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 5 քրեական գործ (2019թ.՝ 5) միացվել է, իսկ 9 գործով նախաքննությունը 2020թ. ընթացքում չի ավարտվել (2019թ.՝ 7): Ընդ որում, այդ գործերով 7 անձ (2019թ.՝ 5) գտնվել է կալանքի տակ: Նշված գործերով 3 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատարանի կողմից (2019թ.՝ 0), իսկ մեկ անձի նկատմամբ՝ դատախազի կողմից (2019թ.՝ 0) փոփոխվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 183 (2019թ.՝ 152) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 183 (2019թ.՝ 152) անձից 9-ը (2019թ.՝ 10) ձերբակալվել է, որոնցից 6-ը (2019թ.՝ 4) ազատվել է ձերբակալումից: 119 անձի (2019թ.՝

117) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 118 (2019թ.՝ 89) անձի մեղադրանք է առաջադրվել: 7 (2019թ.՝ 10) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 1-ը (2019թ.՝ 3) մերժվել է, 6-ը (2019թ.՝ 7)՝ բավարարվել, 6 (2019թ.՝ 5) անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 9 (2019թ.՝ 27) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 5-ը (2019թ.՝ 12)՝ արդարացման, 4-ը (2019թ.՝ 15)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 88 (2019թ.՝ 82) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն հարուցվել (2019թ. նախապատրաստվել է 2 նյութ, որոնցից 1-ով հարուցվել է քրեական գործ, իսկ մյուսով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացնող հիմքով):

2019թ. ընթացքում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 (2019թ.՝ 6) քրեական գործ, որն ուղարկվել է ըստ քննչական ենթակայության: (2019թ. ընդամենը ավարտվել է 5 քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 5 գործով վարույթ կարճվել է, որոնցից 4-ը՝ արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 1 քրեական գործով նախաքննությունը 2019թ. ընթացքում չի ավարտվել):

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 39 (2019թ.՝ 93) անձ: 39 (2019թ.՝ 81) անձի մեղադրանք է առաջադրվել: 2 (2019թ.՝ 24) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացման հիմքով: Քրեական հետապնդման ենթարկված 10 (2019թ.՝ 13) անձի վերաբերյալ նախաքննությունը փոխանցվել է 2021թ. :

Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու (ՀՀ քրեական օրենսգրքի 312²-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստվել է 4 նյութ (2019թ.-0), որոնցով քրեական գործ հարուցելը մերժվել է, ընդ որում՝ նախապատրաստված 3 նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է արդարացման, 1-ով՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ քրեական գործեր չեն քննվել (2019թ.՝ 0):

Կաշառքի միջնորդության (ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 2 (2019թ.՝ 1) նյութ, որոնցով (2019թ.՝ 1) հարուցվել են քրեական գործեր:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 5 (2019թ.՝ 2) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 1 գործ (2019թ.՝ 0), այն է՝ 2 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2019թ.՝ 0):

Մնացած քրեական գործերից 2-ով վարույթը կասեցվել է (2019թ.՝ 0)՝ 1-ով՝ անձը հայտնի չլինելու, 1-ով՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով: Անավարտ է մնացել 1 քրեական գործի նախաքննություն (2019թ.՝ 1):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 30 անձ (2019թ.՝ 16):

Քրեական հետապնդման ենթարկված 30 (2019թ.՝ 16) անձից 1-ը ձերբակալվել (2019թ՝ 0) է, որն ազատվել է ձերբակալումից: 20-ի (2019թ.՝ 11) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 20 (2019թ.՝ 9) անձի մեղադրանք է առաջադրվել: 1 անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացման (2019թ.՝ 3), 1-ը՝ արդարացման (2019թ.՝ 0) հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 15 (2019թ.՝ 9) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական կեղծիքի (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 183 (2019թ.՝ 164) նյութ, որոնցից 109-ով (2019թ.՝ 114) հարուցվել է քրեական գործ, 71-ով (2019թ.՝ 48)՝ քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 59-ը (2019թ.՝ 36)՝ արդարացման, իսկ 12-ը (2019թ.՝ 12)՝ ոչ արդարացման հիմքերով, և 3 նյութ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության (2019թ.՝ 2):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 196 (2019թ.- 181) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 77 (2019թ.՝ 87) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 57 (2019թ.՝ 72) գործի վարույթ կարճվել է, որոնցից 37-ը (2019թ.՝ 46)՝ արդարացման, 20-ը (2019թ՝ 26)՝ ոչ արդարացման հիմքերով, իսկ 20 քրեական գործ՝ 52 անձի վերաբերյալ (2019թ.՝ 15 քրեական գործ՝ 21 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած քրեական գործերից 14 քրեական գործի (2019թ.՝ 5) վարույթ կասեցվել է, որոնցից 13-ը՝ անձը հայտնի չլինելու հիմքով (2019թ.՝ 5), 1-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 14 (2019թ.՝ 15) քրեական գործ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 17 (2019թ.՝ 21) քրեական գործ միացվել է, իսկ 74 (2019թ.՝ 53) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, ընդ որում 1 անձ այդ գործերով գտնվել է կալանքի տակ (2019թ.՝ 1):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 120 (2019թ.՝ 71) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 120 (2019թ.՝ 71) անձից 2-ը (2019թ.՝ 1) ձերբակալվել են: 94 անձի (2019թ՝ 62) վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 94 (2019թ.՝ 64) անձի մեղադրանք է առաջադրվել: 3 (2019թ.՝ 3) անձի կալանավորման վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 2-ը (2019թ.՝ 1) մերժվել է, 1-ը (2019թ.՝ 2) բավարարվել: 8 մեղադրյալի (2019թ.՝ 0) պաշտոնավարումը դադարեցվել է: 37 (2019թ.՝ 27) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 11-ը (2019թ.՝ 5)՝ արդարացման, 26-ը (2019թ.՝ 22)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 37 (2019թ.՝ 25) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Հայտարարագրերը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործեր չեն քննվել (2019թ. ընթացքում նախապատրաստվել է 6 նյութ, որոնցից 3-ով հարուցվել է քրեական գործ, 3-ով կայացվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, այդ թվում՝ 2-ը՝ արդարացման, 1-ը՝ ոչ արդարացման հիմքերով, վարույթում քննվել է 3

քրեական գործ, որոնցից 3-ն էլ ավարտվել է, այն է՝ նշված 3 գործով էլ կայացվել է որոշում՝ քրեական գործով վարույթն արդարացման հիմքով կարճելու մասին):

Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդված) վերաբերյալ 2020թ. ընթացքում նախապատրաստվել է 4 նյութ (2019թ.՝ 2), որոնցից 2-ով հարուցվել է քրեական գործ (2019թ.՝ 1), 1-ով կայացվել է արդարացման հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում (2019թ.՝ 1), իսկ 1 նյութ ուղարկվել է ըստ քննչական ենթակայության (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ (2019թ.՝ 1), որոնցից 1-ը միացվել է այլ քրեական գործի (2019թ.՝ 0), 2-ը մնացել են անավարտ (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակաշրջանում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 2 (2019թ.՝ 0) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 2 (2019թ.՝ 0) անձի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որոնց մեղադրանք է առաջադրվել: Քրեական հետապնդման ենթարկված 2 (2019թ.՝ 0) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Պաշտոնեական դիրքն օգտագործելով արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու (ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 1 (2019թ.՝ 2) նյութ, որով հարուցվել է քրեական գործ (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 1 քրեական գործ (2019թ.՝ 0), որի նախաքննությունը մնացել է անավարտ:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդված) վերաբերյալ հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել է 1 նյութ (2019թ.՝ 0), որով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում գործ չի քննվել (2019թ.՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում նշված հոդվածով քրեական հետապնդման ենթարկված անձինք չեն եղել:

Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդված) վերաբերյալ նախապատրաստվել է 74 (2019թ.՝ 68) նյութ, որոնցից 73-ով (2019թ.՝ 65) հարուցվել է քրեական գործ, 1-ով քրեական գործի հարուցումը մերժվել է (2019թ.՝ 2), այդ թվում՝ 1-ը (2019թ.՝ 1)՝ արդարացման հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 121 (2019թ.՝ 123) քրեական գործ, որոնցից ընդամենն ավարտվել է 45 գործ (2019թ.՝ 77), այդ թվում՝ 40 գործ (2019թ.՝ 58) կարճվել է, որոնցից 37-ը (2019թ.՝ 42)՝ արդարացման, 3-ը (2019թ.՝ 16)՝ ոչ արդարացման հիմքով, իսկ 5 գործ՝ 10 անձի վերաբերյալ (2019թ.՝ 19 գործ՝ 25 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մնացած գործերից 4-ի (2019թ.՝ 1) վարույթը կասեցվել է անձը հայտնի չլինելու հիմքով, 10 գործ (2019թ.՝ 4) ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, 3 գործ (2019թ.՝ 10) միացվել է, իսկ 59 (2019թ.՝ 31) քրեական գործի նախաքննություն հաշվետու ժամանակաշրջանում մնացել է անավարտ, որոնցով 1 անձ շարունակել է մնալ կալանքի տակ: Նշված գործերով 1 անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը դատարանի կողմից (2019թ.՝ 0) փոփոխվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննված քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 209 (2019թ.՝ 61) անձ:

Քրեական հետապնդման ենթարկված 209 (2019թ.՝ 61) անձից 24-ը ձերբակալվել է (2019թ.՝ 0), որոնցից 4-ն ազատվել է ձերբակալումից: 209-ի վերաբերյալ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, 209 (2019թ.՝ 46) անձի մեղադրանք է առաջադրվել: 25 մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան (2019թ.՝ 0), որոնցից 9-ը մերժվել է, 16-ը՝ բավարարվել, 3 անձի նկատմամբ կիրառվել է գրավ: 24 (2019թ.՝ 1) մեղադրյալի պաշտոնավարում դադարեցվել է: 1 մեղադրյալ ազատվել է կալանքից դատարանի որոշմամբ (2019թ.՝ 0): 35 (2019թ.՝ 26) անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 14-ը (2019թ.՝ 10)՝ արդարացման, 21-ը (2019թ.՝ 19)՝ ոչ արդարացման հիմքերով: Քրեական հետապնդման ենթարկված 58 (2019թ.՝ 13) անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը փոխանցվել է 2021թ.:

Ամփոփելով նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի ընդհանուր ցուցանիշները՝ հարկ է արձանագրել, որ •

2019թ. համեմատ 2020թ. 273-ով կամ շուրջ 13. 1%-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով նախապատրաստված նյութերի թվաքանակը (2020թ.՝ 1810 նյութ, 2019թ.՝ 2083 նյութ), 167-ով կամ շուրջ 11. 9%-ով նվազել է կոռուպցիոն բնույթի դեպքերով հարուցված քրեական գործերի քանակը (2020թ.՝ 1232 գործ, 2019թ.՝ 1399 գործ):

2020թ. նվազել է վարույթ ընդունված կոռուպցիոն հանցագործությունների թվաքանակը՝ կազմելով 515, այսինքն՝ 20-ով կամ 3.7%-ով պակաս, քան 2019թ., երբ վարույթ է ընդունվել կոռուպցիոն հանցագործության 535 քրեական գործ:

2020թ. վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործության 2535 քրեական գործ, ինչը 90-ով կամ շուրջ 3. 4%-ով պակաս է 2019թ. վարույթում քննված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թվաքանակից՝ 2625 քրեական գործ:

2020թ. ընթացքում բացասական ցուցանիշ է արձանագրվել նաև ավարտված կոռուպցիոն բնույթի քրեական գործերի ցուցանիշում, քանի որ հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 716 քրեական գործ, այսինքն՝ 290-ով կամ 28.8%-ով պակաս 2019թ. համեմատ (1006 գործ):

2020թ. ընթացքում ավարտված վերոհիշյալ 716 գործից 533-ը կամ 74.4%-ը (2019թ.՝ 76.1%-ը) նույն ժամանակահատվածում կարճվել է: 2020թ. ընթացքում կարճված քրեական գործերը 233-ով կամ շուրջ 30.3%-ով պակաս են 2019թ. կարճված քրեական գործերի քանակից (2019թ.՝ 766):

2020թ. ընթացքում ավարտված վերոհիշյալ 716 գործից 183-ը կամ 25.5%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որպիսի ցուցանիշն ավելի բարձր է 2019թ. արձանագրվածից (2019թ.՝ 23.8%): 2020թ. ընթացքում մեղադրական

Եզրակացությամբ դատարան է ուղարկվել 57-ով կամ 23.7%-ով պակաս քրեական գործ, քան 2019թ.՝ 240 գործ:

2020թ. մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով դատի է տրվել 410 անձ, ինչը 37-ով կամ 8.3%-ով պակաս է, քան 2019թ. արձանագրված ցուցանիշից, երբ դատի է տրվել 447 անձ:

2020թ. անավարտ է մնացել կոռուպցիոն բնույթի 1041 քրեական գործով նախաքննություն, ինչը 215-ով կամ 26.2%-ով ավելին է, քան 2019թ. արձանագրված ցուցանիշը, երբ չի ավարտվել 819 կոռուպցիոն բնույթի քրեական գործով նախաքննություն:

34-ով կամ 33.3 -ով ավելի (2019թ.՝ 102 գործ, 2020թ.՝ 136 գործ) քրեական գործի վարույթ է կասեցվել անձը հայտնի չլինելու հիմքով: Անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով հաշվետու ժամանակահատվածում 14-ով կամ 45.1 -ով պակաս (2019թ.՝ 31 գործ, 2020թ.՝ 17 գործ), այլ հիմքով՝ 2-ով կամ 40 -ով պակաս (2019թ.՝ 5 գործ, 2020թ.՝ 3 գործ) քրեական գործ է կասեցվել:

Ամփոփելով քննված քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանց ընդհանուր ցուցանիշները՝ հարկ է արձանագրել, որ •

2020թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով 92-ով կամ 7.3 -ով ավելի անձ է ենթարկվել քրեական հետապնդման, քան 2019թ. ընթացքում (2020թ.՝ 1356 անձ, 2019թ.՝ 1264 անձ):

Քրեական հետապնդման ենթարկված անձանց ցուցանիշներում թեև 12-ով կամ 12.6 -ով ավելացել է (2020թ.՝ 107 անձ, 2019թ.՝ 95 անձ) ձերբակալվածների թիվը, սակայն դրան զուգահեռ 13-ով կամ 31.7 -ով նվազել է (2020թ.՝ 28 անձ, 2019թ.՝ 41 անձ) նաև ձերբակալումից ազատված անձանց թիվը, ինչը վկայում է այն մասին, որ 2020թ. զգալի նվազել է անհիմն ձերբակալումների և ձերբակալումից ազատման դեպքերը:

Դրական աճ է արձանագրվել մեղադրանք առաջադրված անձանց թվում, մասնավորապես՝ 2020թ. ընթացքում 126-ով կամ 12.3 -ով ավելի (2020թ.՝ 1144 անձ, 2019թ.՝ 1018 անձ) անձի է մեղադրանք առաջադրվել, քան 2019թ.:

Համեմատական աճ է արձանագրվել մեղադրյալների նկատմամբ կալանավորման վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների թվում, այն է՝ 2020թ. 15-ով կամ 15.3 -ով ավելի (2020թ.՝ 113 անձ, 2019թ.՝ 98 անձ) անձի վերաբերյալ է նման միջնորդություն ներկայացվել դատարաններ, քան 2019թ. : Մեղադրյալների ընդհանուր թվաքանակում կալանքի ներկայացվածների տեսակարար կշիռը աննշան աճ է արձանագրել: Այսպես՝ 2019 թվականին 1018 մեղադրյալից 98-ի կամ 9,6 -ի նկատմամբ է կալանավորման միջնորդություն ներկայացվել, իսկ 2020 թվականին՝ 1144 մեղադրյալից 113-ի կամ 9.8 -ի:

2020թ. ընթացքում դատարան ներկայացված միջնորդությունից 11-ով կամ 84.6 -ով ավելի անձի (2020թ.՝ 24 անձ, 2019թ.՝ 13 անձ) վերաբերյալ մերժվել են և 4-ով կամ 4.7 -ով ավելի անձանց (2020թ.՝ 89 անձ, 2019թ.՝ 85 անձ) վերաբերյալ բավարարվել, ինչպես նաև 7-ով կամ 15.2 -ով ավելի անձի (2020թ.՝ 53 անձ, 2019թ.՝ 46 անձ) նկատմամբ կիրառվել է գրավ:

2020 թվականի ընթացքում կալանքից ազատված մեղադրյալների թվաքանակում փոփոխություններ չեն եղել (2020թ.՝ 9 անձ, 2019թ.՝ 9 անձ):

2020 թվականի ընթացքում 171-ով կամ 45-ով պակաս անձի (2020թ.՝ 204 անձ, 2019թ.՝ 375 անձ) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, որոնցից 30-ով կամ 27-ով պակաս (2020թ.՝ 79 անձ, 2019թ.՝ 109 անձ)՝ արդարացման, 141-ով կամ 53-ով պակաս (2020թ.՝ 125 անձ, 2019թ.՝ 266 անձ)՝ ոչ արդարացման հիմքերով:

212-ով կամ 42-ով ավելի (2020թ.՝ 712 անձ, 2019թ.՝ 500 անձ) քրեական հետապնդման ենթարկված անձի վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունը 2020 թվականի ընթացքում մնացել է անավարտ: Նման աճն ինքնին չի կարող դիտվել բացասական, քանի որ այն պայմանավորված է ինչպես վերևում նշված օբյեկտիվ գործոնների առկայությամբ, այնպես էլ քրեական հետապնդման ենթարկված անձանց թվի աճով (2020թ.՝ 1356 անձ, 2019թ.՝ 1264 անձ):

Ամփոփելով վերը նշված հանցագործությունների վերաբերյալ արձանագրված ցուցանիշները՝ հարկ է փաստել, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շարժընթացում արձանագրվել է հիմնականում նվազման միտում, թեև որոշ հանցատեսակներով դիտվել է որոշակի աճ: Ինչպես արդեն նշվեց, բացասական միտումները հիմնականում կապված են եղել Covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմի հետ: Բացի այդ, իրավապահ համակարգի կողմից շարունակվել է իրագործվել նախորդ տարիներից որդեգրած այն քաղաքականությունը, որ ոչ մեծ կամ միջին ծանրության կոռուպցիոն գործերով պետությանը պատճառված վնասը վերականգնելու, ինչպես նաև օրենքի պահանջների լիարժեք առկայության դեպքում կիրառվում է լայն խրախուսական գործիքակազմ և գործուն գոյալու ու այլ ոչ արդարացնող հիմքերով կայացվում են բազմաթիվ որոշումներ քրեական գործով վարույթը կարճելու մասին:

2020թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի 195 նախապատրաստված և ավարտված նյութերով ու քննված և ավարտված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կազմել է 6՝427՝587՝167 (2019թ.՝ 2՝011՝559՝889) ՀՀ դրամ: Պատճառված ընդհանուր վնասից վերականգնվել է 2. 045. 298. 246 (2019թ.՝ 1.003.689.227) ՀՀ դրամը:

Նշված ժամանակահատվածում քննված քրեական գործերով, որոնց ճնշող մեծամասնությունը կոռուպցիոն բնույթի գործեր են, հանցագործությամբ պետությանը կամ համայնքներին պատճառված վնասը նախնական հաշվարկով (նկատի ունենալով, որ քննության ընթացքում գտնվող գործերով կարող է փոփոխվել) կազմել է շուրջ 227 մլրդ ՀՀ դրամ՝ 2019թ. արձանագրված շուրջ 105.7մլրդ ՀՀ դրամի դիմաց (հարկ է նկատել, որ շուրջ 227 մլրդ ՀՀ դրամ վնասը ներկայացվել է աճողական կարգով՝ հաշվետու ժամանակահատվածում քրեական գործերի քննության ընթացքում նշանակված փորձաքննությունների կամ այլ քննչական ու դատավարական գործողությունների արդյունքում հաստատված ցուցանիշից ելնելով): 2020 թվականի ընթացքում քրեական գործերով նախաքննության ընթացքում վերականգնվել է շուրջ 14. 2 մլրդ ՀՀ դրամի վնաս՝ 2019թ.՝ 12.4 մլրդ ՀՀ դրամի դիմաց:

Հիշյալ քրեական գործերի նախաքննության ընթացքում պետությանը, համայնքներին պատճառված նյութական վնասների վերականգնման նպատակով արգելանք է դրվել 84. 502. 200 ՀՀ դրամի, 5. 838. 598. 990 ՀՀ դրամ հաշիվների, 87 անուն շարժական և 149 անշարժ գույքերի ու 22 հողատարածքների վրա, որից գնահատվել է 26. 381. 004. 571 ՀՀ

դրամ արժողությամբ շարժական և անշարժ գույքը (2019 թվականի ընթացքում մեղադրյալների կամ ամբաստանյալների հաշիվների, շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք է դրվել 10.2մլրդ դրամի չափով):

2020թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում 2271 (2019թ.՝ 1982) նախապատրաստված նյութերի և քննված քրեական գործերի համար առիթ են հանդիսացել՝ 784 դեպքում (2019թ.՝ 915) ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները, 23 դեպքում (2019թ.՝ 47)՝ ՋԼՄ-ների հաղորդումները և 1324 դեպքում (2019թ.՝ 1020)՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի կողմից իրենց լիազորությունները իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը:

2020թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանցից 671-ը (2019թ.՝ 530) պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներ են:

Նշված պաշտոնատար անձինք և հանրային ծառայողներն ըստ գործունեության ոլորտների և պաշտոնների դասակարգվում են.

- 1 • ՀՀ պաշտոնաթող նախագահ՝ 1 անձ,
- 2 • ՀՀ Ազգային ժողով՝ 4 անձ,
այդ թվում՝
 - ա) ԱԺ նախկին նախագահ՝ 1 անձ,
 - բ) պատգամավոր՝ 1 անձ,
 - գ) աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ 1 անձ,
 - դ) ԱԺ աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության նախկին պետ-1:
- 3 • ՀՀ ֆինանսների նախարար՝ 1 անձ:
- 4 • ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակիցներ՝ 10 անձ,
այդ թվում՝
 - ա) նախարար՝ 1 անձ,
 - բ) նախարարի տեղակալ՝ 1 անձ,
 - գ) վարչության պետ՝ 1 անձ,
 - դ) ՍԱՊԾ մարզային ստորաբաժանման պետ և տեսուչներ՝ 7 անձ:
- 5 • ՀՀ արդարադատության նախարարության վարչության պետ՝ 1 անձ:
- 6 • ՀՀ Սահմանադրական դատարան՝ 2 անձ,
այդ թվում՝
 - ա) նախագահ՝ 1 անձ,
 - բ) բաժնի պետի պաշտոնակատար՝ 1 անձ:
- 7 • Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ 1 անձ:
- 8 • Սնանկության դատարանի դատավոր՝ 2 անձ:
- 9 • Սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար՝ 1 անձ:
- 10 • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝ 1 անձ:
- 11 • ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ՝ 4 անձ,
այդ թվում՝
 - ա) մարզային վարչության պետ՝ 1 անձ,
 - բ) բաժնի պետ՝ 1 անձ,
 - գ) բաժանմունքի պետ՝ 1 անձ,

դ) օպերլիազոր՝ 1 անձ:

12Ս ՀՀ քննչական կոմիտեի քննիչ՝ 1 անձ:

13Ս Ոստիկանության աշխատակիցներ՝ 50 անձ,
այդ թվում՝

ա) ոստիկանության պետ՝ 1 անձ,

բ) ոստիկանության պետի տեղակալ՝ 1 անձ,

գ) ՏՎ ավտոտնտեսության պետ՝ 1 անձ,

դ) բաժնի պետ՝ 4 անձ,

ե) բաժնի պետի տեղակալ՝ 3 անձ,

զ) օպերատիվ գծով տեղակալ՝ 1 անձ,

է) բաժնի ավագ տեսուչ՝ 1 անձ,

ը) դասակի հրամանատար՝ 1 անձ,

զ) գորքերի հրամանատար՝ 1 անձ,

է) բաժանմունքի պետ՝ 3 անձ,

ը) բաժանմունքի պետի տեղակալ՝ 1 անձ,

թ) օպերլիազոր՝ 6 անձ,

ժ) ՀՈԲ տեսուչ՝ 3 անձ,

ժա) ավագ տեսուչ՝ 5 անձ,

ժբ) ՃՈ տեսուչ՝ 12 անձ,

ժգ) ոստիկան՝ 3 անձ,

ժդ) ԱՎՎ բաժանմունքի պետ՝ 1 անձ,

ժե) ԱՎՎ մասնագետ՝ 1 անձ,

ժզ) գլխավոր ֆինանսիստ՝ 1 անձ:

14Ս ՀՀ ԱՆ ՔԿՀ աշխատակիցներ՝ 9 անձ,

այդ թվում՝

ա) ՔԿՀ պետ՝ 1 անձ,

բ) ՔԿՀ բաժնի պետ՝ 1 անձ,

գ) ՔԿԾ պետի տեղակալ՝ 1 անձ,

դ) ՔԿՀ մասնագետ՝ 6 անձ:

15Ս ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք՝ 10 անձ,

այդ թվում՝

ա) մաքսակետի բաժնի պետի տեղակալ՝ 1 անձ,

բ) մաքսային տեսուչ՝ 4 անձ,

գ) օպերլիազոր՝ 3 անձ,

դ) ՀՏ վարչության տեսուչ՝ 2 անձ:

16Ս Պետական գույքի կառավարման վարչություն՝ 3 անձ,

այդ թվում՝

ա) Պետական գույքի կառավարման վարչության պետ՝ 1 անձ,

բ) վարչության պետի տեղակալ՝ 1 անձ,

գ) Պետգույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար՝ 1:

17Ս ՀՀ ԱԻՆ աշխատակիցներ՝ 1 անձ:

18Ս Հարկադիր ծառայության աշխատակից՝ 1 անձ:

19Ս Մարզպետարանների աշխատակիցներ՝ 4 անձ,

այդ թվում՝

- ա) վարչության պետ՝ 3 անձ,
- բ) վարչության մասնագետ՝ 1 անձ:
- 20՝ ՀՀ նախկին դեսպան՝ 1 անձ:
- 21՝ Նախկին նախարար՝ 1 անձ:
- 22՝ Կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակի պետ՝ 1 անձ:
- 23՝ Նախարարության աշխատակազմի նախկին քարտուղար՝ 1 անձ:

Առողջապահության ոլորտ՝ 48 անձ

- Փոխնախարար՝ 1,
- «Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի տնօրեն՝ 1,
- ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ տնօրեն՝ 1,
- Պոլիկլինիկայի տնօրեն՝ 4,
- Պոլիկլինիկայի նախկին տնօրեն՝ 1,
- Բժշկական կենտրոնի տնօրեն՝ 9,
- Բժշկական կենտրոնի նախկին տնօրեն՝ 2,
- ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ բաժնի վարիչ՝ 1,
- Ամբուլատորիայի տնօրեն՝ 1,
- ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 1,
- ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ 1,
- «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն պետական հիմնադրամի» տնօրեն՝ 1,
- ՀՀ ԱՆ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի տնօրեն՝ 1,
- «Գյումրու պաթոլոգիանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի տնօրեն-1,
- ԲԿ բաժանմունքի վարիչ՝ 2,
- ԲԿ բաժանմունքի բժիշկ՝ 7,
- ԲԿ հաշվապահ՝ 1,
- ԲՍՓՀ բժիշկ-փորձագետ՝ 7,
- ԲՍՓՀ նախագահ՝ 4,
- Վիրաբուժական բաժանմունքի վիրաբույ 1:

Կրթության ոլորտ՝ 90 անձ

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ 1,
- ԲՈՀ-ի նախկին նախագահ՝ 1,
- ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 6,
- ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ 1,
- Հիմնադրամի տնօրեն՝ 1,
- Ռեկտոր՝ 2,
- Պրոռեկտոր՝ 2,
- Ամբիոնի վարիչ՝ 1,
- Մարզպետարանի կրթության վարչության պետ՝ 1,
- Մարզպետարանի կրթության վարչության նախկին պետ՝ 1,
- Դպրոցի տնօրեններ՝ 47,

Դպրոցի նախկին տնօրեն՝ 4,
Դպրոցի փոխտնօրեն՝ 2,
Կոնսերվատորիայի մասնաճյուղի տնօրեն՝ 1,
Քոլեջի տնօրեն՝ 1,
Պատկերասրահի տնօրեն՝ 1,
Գրադարանի տնօրեն՝ 1,
Մանկապարտեզի տնօրեններ՝ 6,
Երաժշտական դպրոցի տնօրեններ՝ 2,
Ուսումնարանի տնօրեն՝ 1,
Մարզադպրոցի տնօրեններ՝ 4,
Դպրոցի հաշվապահ՝ 2,
Դպրոցի տնտեսվար՝ 1:

Սոցիալական ապահովության՝ 39 անձ

ՀՀ ՊՆ ՋՍՊՎ սոցիալական օգնությունների կազմակերպման և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բաժանմունքի պետ՝ 1,
Սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ՝ 1,
Տարածքային բաժնի պետ՝ 9,
Տարածքային բաժնի նախկին պետ՝ 2,
Տարածքային սոց. ծառայության մասնագետ՝ 20,
Տուն-ինտերնատի տնօրեն՝ 1,
Տուն-ինտերնատի փոխտնօրեն՝ 1,
Տուն-ինտերնատի հաշվապահ՝ 1,
ԲՍՓ հանձնաժողովի վիճակագիր՝ 3:

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտ՝ 71 անձ

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ՝ 1,
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի աշխատակազմի «Ընդերքի գործակալության» պետի պաշտոնակատար՝ 1,
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 1,
ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի բաժնի պետ՝ 1,
ՏԿ նախարարության «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն՝ 1,
ՏԿ նախարարության «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ 1,
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաճյուղի ենթակայանի պետ՝ 1,
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ՝ 1,
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաճյուղի տնօրեն՝ 1,
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր ճարտարագետի տեղակալ՝ 1,

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաձյուղի բաժնի առաջատար մասնագետ՝ 1,

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաձյուղի ծառայության պետի տեղակալ՝ 1,

Անտառտնտեսության տնօրեն՝ 1,

ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ 2,

Անտառապահներ՝ 36,

Անտառապետ՝ 14,

Օդերևութաբանական կայանի տնօրեն՝ 1,

Նաիրիտի 2 նախկին տնօրեն՝ 2,

Արփի լիճ ԱՊ ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ 1,

ԲԲԸ-ի տնօրեն՝ 1,

Սևան ԱՊ-ի տնօրեն՝ 1,

ԶՕԸ-ի նախկին տնօրեն՝ 1:

Տեղական ինքնակառավարման ոլորտ՝ 143 անձ

Վարչական շրջանի ղեկավար՝ 1,

Վարչական շրջանի նախկին ղեկավար՝ 1,

Վարչական շրջանի ղեկավարի տեղակալ՝ 1,

Վարչական շրջանի ղեկավարի նախկին տեղակալ՝ 2,

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ 1,

Երևանի քաղաքապետարանի վարչության պետ՝ 2,

Երևանի քաղաքապետարանի վարչության նախկին պետ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի վարչության պետի տեղակալ՝ 1,

Երևանի քաղաքապետարանի բաժնի պետ՝ 1,

Երևանի քաղաքապետի նախկին օգնական, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ՝ 1,

Համայնքապետարանի հաշվապահ՝ 1,

Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ 2,

Փոխքաղաքապետ՝ 1,

Համայնքի ղեկավար՝ 111,

Համայնքի նախկին ղեկավար՝ 7,

Քաղաքապետարանի բաժնի մասնագետ՝ 2,

Բաժնի պետ՝ 2,

ՀՈԱԿ-ի տնօրեն՝ 4,

Համայնքի ներկայացուցիչ՝ 1:

Զինված ուժեր՝ 136 անձ

Զորամասի հրամանատար՝ 12,

Զորամասի նախկին հրամանատար՝ 1,

Հրամանատարի տեղակալ՝ 8,

Դասակի հրամանատար՝ 4,

Զոկի հրամանատար՝ 1,
 Դիվիզիոնի հրամանատար՝ 3,
 Վաշտի հրամանատար՝ 9,
 Մարտկոցի հրամանատար՝ 1,
 Ծառայության պետ՝ 18,
 Շտաբի պետ՝ 3,
 Մարտական հերթապահության գծով տեղակալ՝ 1,
 Գումարտակի հրամանատար՝ 11,
 Գումարտակի հրամանատարի տեղակալ՝ 2,
 Սպառազինության գծով տեղակալ՝ 2,
 Շտաբի պետի տեղակալ՝ 1,
 Կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման գծով տեղակալ՝ 1,
 Կոմունալ շահագործման և զորքերի բնակավորման բաժնի նախկին պետ՝ 2,
 Ռազմաբժշկական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ 1,
 Կադրերի բաժնի պետ՝ 2,
 Պահեստի պետ՝ 8,
 Օպերատիվ բաժնի հերթապահ՝ 1,
 Բարոյահոգեբանական գծով տեղակալ՝ 1,
 ՀՀՍ ծառայության պետ՝ 1,
 Պահեստարանի պետ՝ 1,
 Թիկունքի և ԿՇ գծով տեղակալ՝ 1,
 ԻՍՎ ԻՍԴ հրամանատար՝ 1,
 Նախկին զինկոմիսար՝ 2,
 Բժիշկ՝ 4,
 Օրդինատոր-վիրաբույժ՝ 3,
 Վիրաբուժական կլինիկայի ղեկավար՝ 1,
 Ավտոմոբիլային ծառայության պետ՝ 3,
 Զորամասի ուսումնական կենտրոնի պետի տեղակալ՝ 1,
 Զորահավաքային բաժնի պետ՝ 2,
 Զորակոչի բաժանմունքի տեսուչ՝ 1,
 ՌՌ ՌՌԲ պետ՝ 1,
 ՌՌ ՌՌԲ պետի տեղակալ՝ 1,
 ՀՕՊ զորքերի վարչության նախկին պետ՝ 1,
 ՊՆ տեղակալ-ՆՏԱԴ պետ՝ 1,
 ԶԿ զորահավաքային բաժնի պահեստազորի սպայական կազմի հաշվառման բաժնի
 պետ՝ 1,
 ԶԿ զորահավաքային բաժանմունքի պետ՝ 1,
 Ֆինանսական ծառայության նախկին պետ՝ 1,
 Ավագ հաշվապահ՝ 2,
 ՌՌ բաժանմունքի պետ՝ 1,
 Զորամասի սպա՝ 1,
 Հսկիչ տեխնիկական կետի պետ՝ 2,
 Թիկունքի պետ՝ 1,
 Մարտական պատրաստության բաժնի ավագ սպա՝ 1,

Պլանավորման բաժնի պետ՝ 1,
ԲԿ բաժնի վարիչ՝ 2,
ԶՈւ ՌԲ վարչության նախկին պետ՝ 1,
Զորամասի համալրման բաժնի պետ՝ 1,
ԱԱԾ ֆինանսատնտեսական վարչության պետ՝ 1,
ԶՈՒ ԳՇ օպերատիվ ռազմավարական պլանավորման վարչության պետի տեղակալ՝

1:

Այլ ոլորտ՝ 35 անձ

«Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի նախկին տնօրեն՝ 1,
ՀՈԱԿ-ի տնօրեն՝ 4,
ՍՊԸ-ի տնօրեն՝ 24,
ՊՈԱԿ-ի տնօրեն՝ 2,
Բանկի վարկային բաժնի մասնագետ՝ 1,
ՊՈԱԿ-ի մասնաճյուղի տնօրեն՝ 1,
Գերեզմանատան վարիչ՝ 1,
Լաբորատորիայի նախկին վարիչ՝ 1:

2020թ. ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել են տարբեր ոլորտներում կատարված հանցագործությունների շարժընթացի, արձանագրված ցուցանիշների համեմատական վերլուծության և քրեական հետապնդման մարմինների համագործակցության հետագա ուղիները նախանշելուն ուղղված աշխատանքները: Բացի այդ, շարունակվել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նոր դրսևորումների, դրանց կատարման նոր՝ կատարելագործված եղանակների հայտնաբերման վերաբերյալ համապատասխան ուսումնասիրությունները և ստացված տեղեկության հիման վրա հետագա՝ առավել արդյունավետ քննության պլանավորման և իրականացման վերաբերյալ հիմնական չափորոշիչների սահմանումը:

Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության կողմից իրականացվել են ինչպես ոլորտային, այնպես էլ կոռուպցիոն առանձին հանցատեսակների վերաբերյալ ամփոփումներ և ուսումնասիրություններ:

Մասնավորապես.

Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտ

2020 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ուշադրության կենտրոնում են գտնվել ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններում առկա առերևույթ կոռուպցիոն սխեմաների և դրանցում ներգրավված անձանց շրջանակի բացահայտմանն ուղղված միջոցառումները:

Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում կատարված վերլուծությամբ փաստվել է, որ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում

արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստվել է 589 նյութ, որոնցից 399-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու, իսկ 190-ով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Նախապատրաստված նյութերից 315-ը վերաբերել է կրթության, 21-ը՝ գիտության, 34-ը՝ սպորտի, 29-ը՝ մշակույթի ոլորտներին: Նշված 190 դեպքից 143-ով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման, իսկ 47-ով՝ ոչ արդարացման հիմքերով:

Նախապատրաստված նյութերով ոչ արդարացման հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ են կայացվել 51 անձի նկատմամբ, որոնցից՝ դպրոցի տնօրեն՝ 42, ուսուցիչ՝ 2, մարզային ենթակայության հիվանդանոցի տնօրեն՝ 2, մարզային ենթակայության հիվանդանոցի բժիշկ՝ 1 (վերջիններս կեղծ բժշկական փաստաթղթեր են տրամադրել ուսումնական հաստատությունների աշխատակիցներին, որոնք օգտագործել են դրանք), դպրոցի այլ, այդ թվում նաև ուսումնաօժանդակ աշխատակիցներ՝ 3, մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն՝ 1 անձ:

2018թ. հունվարի 01-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով մեղադրանք է առաջադրվել 237 անձի, որոնցից 1-ը՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, 1-ը՝ բուսաբանական այգու նախկին տնօրեն, 1-ը՝ հիվանդանոցի տնօրեն, 1-ը՝ «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեղամասի պետ, 1-ը՝ մարզպետարանի ֆինանսական վարչության պետ, 2-ը՝ մարզպետարանի կրթության, գիտության, սպորտի, մշակույթի վարչության պետ, 2-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի վարորդ, 1-ը՝ բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ, 4-ը՝ բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտոր կամ տնօրեն, 2-ը՝ համալսարանի պրոռեկտոր, 2-ը՝ համալսարանի աշխատակից, 1-ը՝ համալսարանի ամբիոնի վարիչ, 1-ը՝ դասախոս, 1-ը՝ համալսարանի վարչության պետ, 1-ը՝ «Երգի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն, 1-ը՝ համայնքապետարանի սպորտի բաժնի պետ, 1-ը՝ մարզպետի տեղակալ, 1-ը՝ նախկին թաղապետ, 1-ը՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, 1-ը՝ վարչական շրջանի աշխատակազմի աշխատակից, 2-ը՝ սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ և աշխատակից, 4-ը՝ մշակույթի կենտրոնի տնօրեն, 3-ը՝ մարզադպրոցի տնօրեն, 100-ը՝ դպրոցի տնօրեն, 11-ը՝ դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, 20-ը՝ ուսուցիչ, 12-ը՝ հաշվապահ, 3-ը՝ քոլեջի տնօրեն, 24-ը՝ դպրոցի այլ աշխատակիցներ, 5-ը՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն, 1-ը՝ մանկապարտեզի տնտեսվար, 1-ը՝ հիմնադրամի տնօրեն, 2-ը՝ գրադարանի տնօրեն, 1-ը՝ պրոբացիայի պետական ծառայության բաժնի պետ, 2-ը՝ ՍՊ և ՓԲ ընկերությունների տնօրեններ, 18-ը՝ քաղաքացիներ:

Հիշյալ ժամանակահատվածում նշված դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերով 8 մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, որոնցից 3-ի դեպքում կալանքը փոխարինվել է գրավով: Նշված ժամանակահատվածում գրավը որպես խափանման միջոց կիրառվել է 2 մեղադրյալի նկատմամբ: Կալանքը որպես խափանման միջոց կիրառվել է 1 դպրոցի տնօրենի, 1 կոնսերվատորիայի մասնաճյուղի տնօրենի, 1 համալսարանի պրոռեկտորի, 1 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի, 1 սոցիալական ապահովության բաժնի պետի, 1 համալսարանի ամբիոնի վարիչի, 2 քաղաքացու նկատմամբ:

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինվել է գրավով՝ 1 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի, 1 սոցիալական ապահովության բաժնի պետի, 1 համալսարանի ամբիոնի վարիչի նկատմամբ: ՍՊ և ՓԲ ընկերությունների 1-ական տնօրենի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել գրավը:

2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով 11 մեղադրյալի վերաբերյալ որոշում է կայացվել պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ, որոնցից 1-ը՝ երաժշտական դպրոցի տնօրեն, 1-ը՝ մարզպետարանի ֆինանսական վարչության պետ, 8-ը՝ դպրոցի տնօրեն, 1-ը՝ դպրոցի հաշվապահ:

Հաշվետու ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերից 151-ով որոշում է կայացվել գործով վարույթը կարճելու մասին, որոնցից 79-ը՝ արդարացման, իսկ 72-ը՝ ոչ արդարացման հիմքերով: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով կարճվել է 3, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ 76, նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով՝ 14, նույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հիմքով՝ 1, նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով՝ 6, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով՝ 51 քրեական գործով վարույթ:

Ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդման չեն ենթարկվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է 79 անձի նկատմամբ, որոնցից 1-ը՝ համալսարանի ռեկտոր, 1-ը՝ համալսարանի պրոռեկտոր, 1-ը՝ համալսարանի ավարտական քննական հանձնաժողովի նախագահ, 1-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ քոլեջի տնօրեն, 1-ը՝ ուսումնարանի տնօրեն, 1-ը՝ ռազմամարզական վարժարանի տնօրեն, 1-ը՝ մարզամշակութային կենտրոնի տնօրեն, 2-ը՝ մարզադպրոցի տնօրեն, 2-ը՝ մանկապարտեզի տնօրեն, 40-ը՝ դպրոցի տնօրեն, 4-ը՝ հաշվապահ, 5-ը՝ ուսուցիչ, 12-ը՝ դպրոցի աշխատակիցներ, 1-ը՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, 1-ը՝ վարչական շրջանի աշխատակազմի աշխատակից, 1-ը՝ բուժքույր, 1-ը՝ ֆուտբոլային ակումբի մարզիչ, 2-ը՝ քաղաքացիներ:

2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործերից 52 քրեական գործ 91 անձի նկատմամբ ուղարկվել է դատարան, որոնցից 1-ը՝ համալսարանի ռեկտոր, 2-ը՝ դասախոս, 32-ը՝ դպրոցի տնօրեն, 4-ը՝ փոխտնօրեն, 6-ը՝ ուսուցիչ, 6-ը՝ հաշվապահ, 8-ը՝ դպրոցի այլ աշխատակիցներ, 4-ը՝ մարզադպրոցի տնօրեն, 2-ը՝ նախակրթարանի տնօրեն, 2-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ գրադարանի վարիչ, 1-ը՝ երաժշտական դպրոցի տնօրեն, 2-ը՝ քոլեջի տնօրեն, 1-ը՝ համայնքապետարանի սպորտի բաժնի վարիչ, 1-ը՝ «ՀԵՑ» ՓԲԸ տեղամասի պետ, 2-ը՝ սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ և աշխատակից, 1-ը՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի վարորդ, 6-ը՝ քաղաքացիներ:

2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ նախապատրաստված և ոչ արդարացման հիմքով քրեական գործ հարուցելը մերժված նյութերով, ոչ արդարացման հիմքով վարույթը կարճված կամ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասը կազմել է 468.037.340 ՀՀ դրամ և 5000 դոլար, որից պետությանը պատճառված վնասը կազմել է 271.834.466 ՀՀ դրամ, համայնքին՝ 136.033.202 ՀՀ դրամ, այլ կազմակերպությանը՝ 60.169.672 ՀՀ դրամ և 5000 ԱՄՆ դոլար: Հանցագործությամբ պատճառված վնասից վերականգնվել է 215.849.449 ՀՀ դրամ, որից պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 149.431.662 ՀՀ դրամ, համայնքին պատճառված վնասից՝ 61.790.842 ՀՀ դրամ, այլ կազմակերպություններին պատճառված վնասից՝ 4.626.945 ՀՀ դրամ: Հանցագործությամբ պետությանը պատճառված և վերականգնված 149.431.662 ՀՀ դրամ վնասից նյութերի նախապատրաստման ընթացքում վերականգնվել է 12.378.743 ՀՀ դրամ, նախաքննության ընթացքում՝ 112.212.448 ՀՀ դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 24.840.471 ՀՀ դրամ: Հանցագործությամբ համայնքին պատճառված և 61.790.842 ՀՀ դրամ վնասից նյութերի նախապատրաստման ընթացքում վերականգնվել է 1.965.475 ՀՀ դրամ, նախաքննության ընթացքում՝ 42.698.129 ՀՀ դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 17.127.238 ՀՀ դրամ: Հանցագործությամբ այլ կազմակերպություններին պատճառված 4.626.945 ՀՀ դրամ վնասը վերականգնվել է նախաքննության ընթացքում:

Նշված ժամանակահատվածում հիշյալ դեպքերի վերաբերյալ նյութերի նախապատրաստման կամ քրեական գործերի հարուցման առիթներ են հանդիսացել հետևյալ սուբյեկտների կողմից ներկայացված հաղորդումները/տվյալները/. ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ 346 դեպքով, ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ 10 դեպքով, նախաքննության մարմինների աշխատակիցների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ 1 դեպքով, դատախազների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ 40 դեպքով, ֆիզիկական անձանց հաղորդումները՝ 114 դեպքով, իրավաբանական անձանց հաղորդումները՝ 1 դեպքով, մարզպետարաններից ստացված գրությունները՝ 10 դեպքով, ԶԼՄ-ների հաղորդումները՝ 7 դեպքով, պետական վերահսկողության ծառայության կողմից ներկայացված տվյալները՝ 2 դեպքով, հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված տվյալները՝ 1 դեպքով, համայնքապետարանների կողմից ներկայացված տվյալները՝ 10 դեպքով, կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտների լիազոր մարմինների/նախարարություններ, տեսչական մարմիններ և այլն/ և դրանց աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները՝ 71 դեպքով:

Նշված ժամանակահատվածում հիշյալ հանցագործությունների վերաբերյալ հարուցված և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական

գործերով կայացվել է 13 մեղադրական դատավճիռ՝ 19 անձի նկատմամբ, որոնցից 7-ը՝ դպրոցի տնօրեն, 2-ը՝ դպրոցի փոխտնօրեն, 1-ը՝ ուսուցիչ, 1-ը՝ մարզադպրոցի տնօրեն, 2-ը՝ քոլեջի տնօրեն, 2-ը՝ հաշվապահ, 1-ը՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի վարորդ, 2-ը՝ սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ և աշխատակից, 1-ը՝ համայնքի ղեկավար: Դատարան ուղարկված քրեական գործերով արդարացման դատավճիռներ չեն կայացվել:

Դատարան ուղարկված քրեական գործերից 5-ով որոշումներ են կայացվել ոչ արդարացման հիմքով վարույթը կարճելու և 5 անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, որոնցից 3 քրեական գործով վարույթ 3 անձի նկատմամբ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, իսկ 2 քրեական գործ 2 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 13-րդ կետերի հիմքերով:

2018թ. հունվարի 01-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ հարուցված, մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված և մեղադրական դատավճիռ կայացված քրեական գործերով 14 անձի նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ նշանակվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, որոնցից 7-ը՝ դպրոցի տնօրեն, 1-ը՝ մարզադպրոցի տնօրեն, 2-ը՝ քոլեջի տնօրեն, 2-ը՝ սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ և աշխատակից, 1-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ դպրոցի հաշվապահ:

2018թ. հունվարի 01-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ոլորտներում արձանագրված չարաշահումների և այլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հիմնականում ուսումնական հաստատությունների, հիմնարկների տնօրենները տևական ժամանակ Հայաստանի Հանրապետությունից բացակայած և աշխատանքի չհաճախած աշխատակիցներին ոչ միայն սահմանված կարգով չեն ազատել աշխատանքից, այլև իրենք ստորագրությամբ և կնիքով պարբերաբար հաստատել են բովանդակությամբ կեղծ աշխատավարձի հաշվարկային ու վճարային տեղեկագրեր և այդ կերպ նրանց անվամբ դուրս գրել աշխատավարձի գումարներ, իսկ փոխտնօրենները կամ հաշվապահները հիմնականում հանցակցել են տնօրենների հանցավոր գործողություններին: Որոշ դեպքերում պարզվել է, որ այդ աշխատակիցները հանդիսացել են ոլորտի հաստատությունների ղեկավարների ընտանիքների անդամներ կամ նրանց հետ այլ կերպ փոխկապակցված անձինք:

Բացի այդ, շատ դեպքերում բացակայած աշխատակիցների աշխատանքային պարտականությունները փաստացի կատարվել են այլ անձանց կողմից, սակայն գրանցված աշխատողի անվամբ շարունակվել է ելքագրվել աշխատավարձ, ինչի արդյունքում, ըստ էության, փաստացի աշխատանքի չհաճախած անձի անվամբ հաշվարկվել է աշխատանքային ստաժ:

Պետական և համայնքային գույքի կառավարման ոլորտ

2020 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում իրականացվել է 2019 թվականի 1-ին և

2-րդ կիսամյակներում, 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների դեպքերով քննված քրեական գործերի վերաբերյալ ուսումնասիրություն, որի ընթացքում պարզվել են միևնույն հանցավոր սխեմայով առերևույթ թույլ տրված հանցավոր չարաշահումներ:

Մասնավորապես, 2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ նախապատրաստվել է 43 նյութ, որոնցից 29-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու, իսկ 14-ով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Դրանցից 11-ը վերաբերել է պետական անշարժ գույքին, իսկ 32-ը՝ համայնքային: Նշված 14 դեպքում էլ նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է արդարացման հիմքով:

Իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում վերը նշված գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ նախապատրաստվել է 57 նյութ, որոնցից 46-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու, իսկ 11-ով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Դրանցից 11-ը վերաբերել է պետական անշարժ գույքին, իսկ 46-ը՝ համայնքային: Նշված 11 դեպքից 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է ոչ արդարացման, այն է՝ վաղեմության ժամկետն անցած լինելու, իսկ 10 դեպքում՝ արդարացման հիմքերով:

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ նախապատրաստվել է 118 նյութ, որոնցից 108-ով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու, իսկ 10-ով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Դրանցից 19-ը վերաբերել է պետական անշարժ գույքին, 99-ը՝ համայնքային: Նշված 10 դեպքից 1-ով քրեական գործ հարուցելը մերժվել է ոչ արդարացման, այն է՝ վաղեմության ժամկետն անցած լինելու, իսկ 9 դեպքում՝ արդարացման հիմքերով:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում հարուցված 29 քրեական գործից 25-ը վերաբերել է անշարժ գույքի օտարման գործընթացում արձանագրված չարաշահումներին, իսկ 4-ը՝ վարձակալության կամ ենթավարձակալության:

Իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում հարուցված 46 քրեական գործից 38-ը վերաբերել է անշարժ գույքի օտարման գործընթացում արձանագրված չարաշահումներին, իսկ 8-ը՝ վարձակալության կամ ենթավարձակալության:

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում հարուցված 108 քրեական գործից 42-ը վերաբերել է անշարժ գույքի օտարման գործընթացում արձանագրված չարաշահումներին, իսկ 66-ը՝ վարձակալության կամ ենթավարձակալության:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանք է առաջադրվել 23 անձի, որոնցից 1-ը՝ պետական ՓԲԸ տնօրեն, 1-ը՝ ՊՈԱԿ-ի տնօրեն, 1-ը՝

պաշտպանության նախկին նախարար, 1-ը՝ նախկին մարզպետ, 4-ը՝ համայնքի նախկին ղեկավար, 1-ը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, 14-ը՝ քաղաքացի:

Իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանք է առաջադրվել 14 անձի, որոնցից 1-ը՝ Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի տեղակալ, 1-ը՝ Երևանի քաղաքապետարանի վարչության պետ, 1-ը՝ Երևանի նախկին քաղաքապետ, 1-ը՝ Աբովյանի քաղաքապետ, 1-ը՝ ՀՀ ԿԱ կադաստրի ստորաբաժանման ղեկավար, 1-ը՝ գնահատող փորձագետ, 1-ը՝ համայնքի ղեկավարի օգնական, 2-ը՝ համայնքի նախկին ղեկավար, 2-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ մարզպետարանի վարչության պետ, 1-ը՝ ՊԵԿ-ի նախկին նախագահ, 1-ը՝ քաղաքացի:

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրանք է առաջադրվել 49 անձի, որոնցից 1-ը՝ ՀՖՖ նախկին նախագահ, 1-ը՝ Երևանի նախկին քաղաքապետ, 26-ը՝ համայնքի նախկին ղեկավար, 12-ը՝ համայնքի ղեկավար, 3-ը՝ համայնքապետարանի աշխատակից, 1-ը՝ ՊԵԿ-ի նախագահի նախկին տեղակալ, 1-ը՝ ԱԱԾ-ի մարզային վարչության պետ, 1-ը՝ մարզպետարանի բաժնի պետ, 3-ը՝ քաղաքացի:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված առերևույթ չարաշահումների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով 1 անձի (նախկին մարզպետ) նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, նույն տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում ևս 1 անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Մինչդեռ 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով 4 անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, (1-ը՝ պետական ՓԲԸ տնօրեն, 1-ը՝ համայնքի ղեկավար), իսկ 3 անձի նկատմամբ՝ գրավ (2-ը՝ համայնքի նախկին ղեկավար, 1-ը՝ գործող):

2019 թվականի ընթացքում պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ որոշում չի կայացվել, իսկ 2020թ. 1-ին կիսամյակում կայացվել է նման երկու որոշում (ֆինանսական բաժնի պետ և գլխավոր աուդիտոր):

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող 3 քրեական գործով որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին, որոնցից 2-ը՝ հանցակազմի բացակայության, 1-ը՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքերով:

Իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում գտնվող 7 քրեական գործով որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին, որոնցից 5-ը՝ հանցակազմի բացակայության, 1-ը՝ վաղեմության ժամկետն անցած լինելու,

1-ը՝ գործուն գոյալու հիմքերով: Նույն ժամանակահատվածում քննվող քրեական գործերով 3 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող 4 քրեական գործով որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին, որոնցից 3-ը՝ հանցակազմի բացակայության, 1-ը՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքերով:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ վարույթում գտնվող քրեական գործերից 5 անձի վերաբերյալ 2 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (1-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, 3-ը՝ քաղաքացի):

Իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 3 անձի վերաբերյալ 2 քրեական գործ (2-ը՝ համայնքի ղեկավար, 1-ը՝ քաղաքացի):

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերը նշված հանցագործությունների վերաբերյալ վարույթում գտնվող քրեական գործերից 1 անձի վերաբերյալ 1 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (պետական ՊՓԲ-ի տնօրեն):

Եթե 2019 թվականի ընթացքում դատարան ուղարկված քրեական գործերով դատախազության կողմից քաղաքացիական հայցեր չեն ներկայացվել, ապա 2020 թվականի 1-ին կիսամյակում դատարան ուղարկված քրեական գործով 39.258.286 ՀՀ դրամի չափով ներկայացվել է 1 քաղաքացիական հայց:

Բացի այդ, 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ոչ արդարացնող հիմքով վարույթը կարճված 1 քրեական գործով դատախազության կողմից դատարան է ներկայացվել 22.149.789 ՀՀ դրամի չափով քաղաքացիական հայց:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում քննվող քրեական գործերով վարձակալության կամ ենթավարձակալության պայմանագրեր չեն լուծվել, իսկ 2019 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում լուծվել է 1 վարձակալության պայմանագիր:

2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթներում քննվող քրեական գործերով քրեական գործերի քննության ընթացքում լուծվել է 3 վարձակալության և 29 ենթավարձակալության պայմանագրեր:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված վերոգրյալ քրեական գործերից 1-ով 4 անձի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ (հաստատվել է շուրջ 32 հա հողատարածք ձևական աճուրդով և կեղծիքներով օտարելու փաստը), որից հետո ՀՀ գլխավոր դատախազը առաջարկություն է ներկայացրել ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարին՝ այդ հողատարածքները համայնքին վերադարձնելու գործընթաց սկսելու համար:

Բացի այդ, 2019թ. 1-ին կիսամյակում արձանագրված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով վարույթը կարճված 1 քրեական գործով, վարչության պետի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված զեկուցագրի հիման վրա, ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայց է ներկայացվել դատարան՝ պետական սեփականություն

հանդիսացող և ձևական աճուրդներով օտարված 55,88 հա հողատարածքների օտարման գործընթացը առոչինչ համարելու պահանջով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական և համայնքային անշարժ գույքերի օտարման գործընթացում առավել տարածված է եղել այդ գույքերը ձևական աճուրդներով և կեղծիքներով իրականացնելու սխեման, մի շարք դեպքերում՝ կոնկրետ հողի աճուրդի պարագայում, աճուրդի կայացման համար պարտադիր համարվող 2-րդ մասնակիցը նույնիսկ տեղյակ չի եղել, որ ինքը որևէ աճուրդի է մասնակցել: Հողատեսքերը աճուրդով օտարվել են շարքային քաղաքացիների, մինչդեռ քրեական գործերի նախաքննությամբ պարզվել է, որ այդ անձինք կա՛մ մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվել այդ տարածաշրջանում ղեկավար դիրք զբաղեցնող պաշտոնատար անձանց, այդ թվում նաև՝ աճուրդի կազմակերպչի հետ (համայնքի ղեկավար, մարզպետ և այլն), կա՛մ այդ հողատեսքերը թեև գնվել են այդ քաղաքացիների տվյալներով, սակայն դրանց իրական սեփականատերը պետական բարձր պաշտոն զբաղեցնող անձինք են:

Անշարժ գույքի օտարման գործընթացում տեղ են գտել, մասնավորապես հետևյալ խախտումները՝

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասը համարվել է համայնքային սեփականություն և օտարվել աճուրդով,

2) համայնքային սեփականություն հանդիսացող վերանորոգված կենցաղի տան շենքը ներկայացվել է որպես կիսաքանդ շինություն և աճուրդով օտարվել համայնքի ղեկավարի աներոջը,

3) աճուրդում մասնակցել և հաղթող է ճանաչվել աճուրդավարի որդին, վաճառվել է ցածր գնով,

4) մեկ դեպքում աճուրդին մասնակցել և հաղթել է դրա կազմակերպչի անչափահաս որդին,

5) մյուս դեպքում աճուրդով օտարվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք,

6) չունենալով շենքի վթարայնության աստիճանի և ապամոնտաժման ենթակա լինելու վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կամ որևէ այլ փաստաթուղթ, գնահատման մեջ ոչ միայն չի ներառել 341.656.650 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող վարչական շենքը, այլև անհիմն այն դիտարկելով որպես ապամոնտաժման ենթակա կառույց, հողամասի արժեքից նվազեցրել է ապամոնտաժման ծախսերի համար հաշվարկված 80.000.000 ՀՀ դրամ արժեքը և 30.01.2018թ. կազմել է ՀՀ-ում գործող ստանդարտների՝ ՀՍ 252-2012 կետերի պահանջների էական խախտումներով շուկայական արժեքի գնահատման հաշվետվություն՝ գնահատելով գույքն իրականից անհամեմատ ցածր՝ 259.304.000 ՀՀ դրամ,

7) աճուրդով իրացված դեպքերից 1-ով Երևանի քաղաքապետի որոշմամբ, առանց որևէ հիմնավորման, շուրջ 3000 քմ չափով պակասեցվել է Երևանի թիվ 16 հատուկ դպրոցին նախկինում հատկացված տարածքը և աճուրդով օտարվել քաղաքացու, որն էլ կարճ ժամանակ անց, հողամասը երկու մասի բաժանելով, վաճառել է դպրոցի տնօրենի որդուն և Երևանի քաղաքապետի բարեկամին: Մյուս դեպքում աճուրդին միայնակ մասնակցել և հողամասը ձեռք է բերել վարչական շրջանի ղեկավարի բարեկամը:

Հանցավոր սեխմայում տեղ են գտել նաև այնպիսի ապօրինություններ, երբ, համայնքապետի (քաղաքապետի) անձնական շահագրգռվածությամբ, համայնքին պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողատեսքերը, ՀՀ ԿԱ

կադաստրի ստորաբաժանման ղեկավար աշխատակցի անմիջական մասնակցությամբ առանց իրավական որևէ հիմքի, փոխվել է գյուղատնտեսականի, ինչի արդյունքում այդ հողատեսքն աճուրդի միջոցով օտարվել է անհամեմատ ցածր գնով:

Քրեական գործերով ձեռք բերված տվյալները վկայում են այն մասին, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը վարձակալությամբ տրամադրվել են պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց, այնուհետև առերևույթ չարաշահումներ կատարելու եղանակով ուղղակի վաճառքի միջոցով օտարվել են նշված անձանց, այնինչ դրանց օտարումը ենթադրաբար պետք է իրականացվեր հրապարակային սակարկությունների միջոցով:

Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության, ենթավարձակալության, օտարման գործընթացում արձանագրված չարաշահումների գործընթացում առավել տարածված հանցավոր սխեմա է այն, որ մի շարք դեպքերում մրցույթները և աճուրդները կրել են ձևական բնույթ, մասնավորապես, մրցույթի կամ աճուրդի երկրորդ մասնակիցը ձևական է մասնակցել մրցույթին՝ ապահովելու նախապես որոշված մասնակցի հաղթանակը, կամ եղել են դեպքեր, երբ որպես երկրորդ մասնակից հայտ ներկայացրած անձը չի մասնակցել մրցույթին կամ աճուրդին, որոշ դեպքերում նույնիսկ երկրորդ մասնակիցը տեղեկություն չի ունեցել աճուրդին կամ մրցույթին իր մասնակցության մասին, և շահագրգիռ անձ հանդիսացող մյուս մասնակցի կողմից ներկայացվել են իր ծանոթ կամ հարազատ անձանց վերաբերյալ փաստաթղթեր՝ նրանց գրանցելով որպես երկրորդ հայտատու, իրենց հաղթանակն ապահովելու համար:

Անշարժ գույքի վարձակալության և ենթավարձակալության գործընթացում տեղ են գտել, մասնավորապես, հետևյալ խախտումները՝

1)պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող տարածքի հետ միաժամանակ փաստացի վարձակալության է տրվել համայնքային սեփականություն հանդիսացող տարածքը, օտարվել են օտարման ոչ ենթակա հողեր,

2)անշարժ գույքի վարձակալությունը և ենթավարձակալությունը կատարվել են առանց աճուրդի կամ մրցույթի, այն տնտեսվարողին վարձակալությամբ հանձնվել է պայմանագրով, իսկ վերջինի կողմից, առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության, տրվել է ենթավարձակալության՝ առանց պայմանագրերի,

3)անշարժ գույքի վարձակալությունը տեղի է ունեցել մրցույթով, այդ գործընթացում կազմված փաստաթղթերում համայնքի ավագանիներից մեկի ստորագրությունը, ըստ իր հայտնած տվյալների, կեղծվել է:

Այս համատեքստում պետք է առանձնացնել նաև համայնքներում բջջային կապի ծածկույթ ապահովող ալեհավաք կայանների տեղադրման համար հողամասերի հատկացման գործընթացների իրավաչափության կապակցությամբ հարուցված քրեական գործերի ընթացքն ու արդյունքները, ինչը ևս գտնվել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության ուշադրության կենտրոնում: ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ յուրաքանչյուր ամիս ամփոփվել են նշված ոլորտում արձանագրված ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ հարուցված քրեական գործերը:

Պետք է նշել, որ բջջային կապի ծածկույթ ապահովող ալեհավաք կայանների տեղադրման համար հողամասերի հատկացման գործընթացների իրավաչափության կապակցությամբ հարուցված քրեական գործերի շարժընթացը 2020 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը.

Հայաստանի Հանրապետության 9 մարզի 53 համայնքում (այդ թվում՝ խոշորացված համայնքների մաս կազմող բնակավայրերում) կատարված նույնատիպ սխեմատիկ չարաչափումների դեպքերով 2020թ. ընթացքում նախաքննական մարմիններում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի տարբեր մասերի, առանձին դեպքերում նաև 38-308-րդ հոդվածի 2-րդ մասի, 315.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել և քննվել է 77 քրեական գործ:

Ըստ քրեական գործերի նյութերի՝ 2004թ.-ից սկսած պետական կամ համայնքապատկան գյուղատնտեսական նշանակության հողամասերը, համայնքի ղեկավարի որոշմամբ, երբեմն ձևական մրցույթների միջոցով, շուկայականից էականորեն ցածր՝ սիմվոլիկ վարձավճարներով վարձակալության են տրվել ֆիզիկական անձանց, այդ թվում նաև հենց համայնքների ղեկավարներին, նրանց ընտանիքի անդամներին, մերձավորներին, ենթականերին: Ապա վարձակալների կողմից այդ հողամասերի փոքր մասերը բազմապատիկ, որոշ դեպքերում մինչև 200-300 անգամ ավելի բարձր վարձավճարներով, ենթավարձակալության են հանձնվել կապի օպերատոր ընկերություններին, որոնք այն օգտագործել են որպես կապի օբյեկտի հող՝ դրանցում տեղակայելով և շահագործելով բջջային կայաններ:

Այսինքն՝ օրենսդրությամբ ունենալով սահմանված դեպքերում և կարգով ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու լիազորություն և շատ դեպքերում նախապես իմանալով, որ նշված հողատարածքներն ամսական անհամեմատ բարձր վարձավճարով ենթավարձակալության է տրամադրվելու ընկերություններին և օգտագործվելու է ապօրինի՝ ոչ իրենց գործառնական նշանակությամբ, այդ ապօրինությունները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, կանխարգելելու փոխարեն, համայնքների ղեկավարները չեն առարկել ենթավարձակալության պայմանագրի կնքման դեմ: Արդյունքում՝ հողամասերի վարձակալները երկարատև՝ 15-25 տարի ժամկետներով, պայմանագրերի հիման վրա, համայնքային սեփականության հողամասերի օգտագործումից վարձավճարների տեսքով ստացել են խոշոր չափերով շահույթներ, իսկ համայնքները զրկվել են ֆինանսական այդ աղբյուրից օգտվելու հնարավորությունից:

Քրեական գործերով համայնքների գործող կամ նախկին 34 ղեկավարի առաջադրվել են մեղադրանքներ:

Վերոնշյալ քրեական գործերից 5-ը 5 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 1-ով կայացվել է մեղադրական դատավճիռ, մյուսներով դատական քննությունը շարունակվում է:

Հարուցված քրեական գործերով համայնքներին պատճառված ընդհանուր վնասը կազմել է 472.549.800 ՀՀ դրամ, որից շուրջ 126.879.705 ՀՀ դրամն արդեն իսկ վերականգնվել է: Միջոցներ են ձեռնարկվում վնասի մնացած մասը ևս վերականգնելու ուղղությամբ:

Համայնքների խախտված իրավունքները վերականգնելու և ֆինանսական միջոցները համայնքային բյուջե ուղղելու խնդիրը լուծելու նպատակով, մարզերի դատախազությունների հետևողականությամբ և նախաձեռնողականությամբ, 27 համայնքում (բնակավայրում) վարձակալության պայմանագրերը լուծվել են, որոնց զգալի դեպքերում համայնքների և կապի օպերատոր նույն ընկերությունների միջև կնքվել են նոր պայմանագրեր: Միջոցներ են ձեռնարկվում մյուս դեպքերով ևս ապօրինի պայմանագրերը

լուծելու ուղղությամբ, ինչի նպատակով մարզերի դատախազների կողմից միջնորդագրեր են ներկայացվել մարզպետներին:

Բազմաթիվ դեպքերով նախնական քննությունը շարունակվում է:

«Վ գլխավոր դատախազությունում պարբերաբար կատարվող ուսումնասիրությունների արդյունքում վերահանվում և գույքագրվում են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության ընթացքում առավել հաճախ հանդիպող խնդիրները և իրավիճակները, որոնց լուծմանն ուղղված ամենօրյա աշխատանքներ են իրականացվում «Վ դատախազության ստորաբաժանումների կողմից:

Այս համատեքստում տեղին է անդրադառնալ նաև 2020 թվականի ընթացքում «Վ գլխավոր դատախազության կողմից մշակված «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունները» վերտառությամբ մեթոդական ուղեցույցին: Հարկ է նշել, որ այն մշակվել է ի կատարումն «Վ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված «Վ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի 34-րդ կետի:

Մեթոդական ուղեցույցը մշակվել է նախ և առաջ հաշվի առնելով այն հիմնական խնդիրներն ու մտահոգիչ դրսևորումները, որոնք հայտնաբերվել են «Վ դատախազության կողմից իրականացված տարբեր ուսումնասիրությունների արդյունքում:

Մեթոդական ուղեցույցի մշակման ընթացքում փորձ է արվել սահմանելու կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության առավել ընդգրկուն և արդյունավետ ուղիները, նախանշելու առանձին հանցատեսակների քննության ընթացքում հանդիպող իրավիճակներով պայմանավորված քննության տակտիկական առանձնահատկությունները, քննչական և դատավարական գործողությունների կատարման առաջնահերթությունները և դրանց արդյունքում պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակը: Ուղեցույցը հիմնված է ինչպես միջազգային փորձի, այնպես էլ «Վ դատախազության ստորաբաժանումների կողմից վերահսկողական լիազորություններն իրականացնելիս «Վ քննչական տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող քննության լավագույն փորձի մեկտեղման, համադրված վերլուծության և դրա արդյունքում առավել արդյունավետ միջոցների սահմանման վրա:

Բացի կոռուպցիայի և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների միջազգային և ներպետական իրավական ակտերով նախատեսված սահմանումների թվարկումից ու դրանց համակցված վերլուծությունից, մեթոդական ուղեցույցի հեղինակները կատարել են նաև կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի մանրակրկիտ վերլուծություն, առանձնացրել են նշված հանցատեսակներով հարուցված քրեական գործերի քննության առաջնային և հետագա փուլերում պարզաբանման ենթակա հանգամանքները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել առանձին քննչական և դատավարական գործողությունների կատարման առանձնահատկություններին:

Պետք է նշել, որ մեթոդական ուղեցույցը ներկայացվել է նաև «Վ ԱԱԾ-ի, «Վ ՄԻՊ-ի, Արդարադատության ակադեմիայի, «Վ դատախազության տարբեր ստորաբաժանումների կարծիքին, ապա լրամշակվել է ստացված նկատառումների շրջանակներում:

Այս առումով տեղին է նշել նաև, որ «Վ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրով նախատեսված է կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության

մեթոդիկան ներառել քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում:

Շարունակելով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության տակտիկական առանձնահատկությունների վերաբերյալ դիտարկումները՝ անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության իրականացրած ուսումնասիրություններին: Մասնավորապես, պարզվել է, որ կոռուպցիոն բնույթի քրեական գործերի նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմիններն առանձին դեպքերում տակտիկապես ճիշտ, օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելուն ուղղված քննության պլանավորում չեն իրականացրել, անհրաժեշտաբար օպերատիվ չեն գործել, ինչը թույլ է տվել առերևույթ հանցանք կատարած անձանց դատավարության մասնակիցների հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու, նաև փաստաբանական խմբի ներգրավմամբ «պաշտպանական» տակտիկա պլանավորված, համակարգված իրականացնելու արդյունքում խուսափել քրեական պատասխանատվությունից:

Նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2020 թվականի ապրիլի 17-ին տրվել է թիվ 20/2(5)-32-20 հանձնարարականը, ըստ որի ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է՝

ա) ապահովել, որ հետաքննության մարմնի կողմից քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշում կայացնելուց հետո այն անհապաղ փոխանցվի նախաքննական մարմնին և վարույթ ընդունվի վերջինիս կողմից,

բ) ապահովել, որ քրեական գործ հարուցելու առիթներում հարուցման հիմքերի առկայության դեպքում անհապաղ, առանց ձգձգումների հարուցվի քրեական գործ և անմիջապես իրականացվեն անհետաձգելի քննչական, դատավարական գործողություններ (մասնավորապես՝ հաղորդում տված անձանց հարցաքննություններ, խուզարկություններ, զննություններ և այլն՝ այդ թվում հետաքննության մարմնի կողմից, ըստ կոնկրետ պահի անհրաժեշտության),

գ) ապահովել հանցագործության մասին հաղորդում տված և (կամ) նյութերի նախապատրաստման ընթացքում էական նշանակություն ունեցող տեղեկություններ հայտնած անձանց անհապաղ հարցաքննությունը՝ մինչև քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշման կայացումը կամ նախաքննական մարմնի կողմից գործը վարույթ ընդունելուց անմիջապես հետո,

/.../

ը) այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործությունների մասին հաղորդումներում նշված տվյալները հաստատվում են նաև ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկություններով, ապահովել, որ քննության առարկա դառնա նաև համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև դրանց կազմակերպություններում կոռուպցիոն համասեռ այլ չարաշահումների առկայության հնարավոր հանգամանքը:

Վերը նշված թերացումների, խախտումների բոլոր դեպքերում ձեռնարկվել են դատախազական ներգործության համապատասխան միջոցներ: Մասնավորապես, վերացվել են անհիմն և ապօրինի որոշումները, անհրաժեշտ միջոցների ձեռնարկման վերաբերյալ ցուցումներ ու հանձնարարություններ են տրվել նախաքննության, հետաքննության մարմիններին, անհրաժեշտաբար նախատեսվել է խախտում թույլ տված

համապատասխան աշխատակիցների, դատախազների կարգապահական պատասխանատվության հարցի լուծումը:

Հարկ ենք համարում անդրադարձ կատարել նաև կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության առաջնահերթություններին և նպատակներին: Դրանցից առաջնայինը կարելի է համարել «Կոռուպցիա» երևույթի բացառմանն ուղղված նպատակադրված աշխատանքների իրականացումը, որպիսի արդյունքն անհնար է առանց քաղաքացիական հասարակության անդամների և կազմակերպությունների ակտիվ մասնակցության: Իրավագիտակցության բարձր մակարդակով և քաղաքացիական պատասխանատվություն ունեցող հասարակության անդամների դերակատարությունը շոշափելի է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կանխման և բացահայտման գործընթացում՝ հատկապես հաշվի առնելով նշված հանցատեսակի լատենտայնության բարձր մակարդակը, երբեմն ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հետ «փոխշահավետ համագործակցության» առկայությունը և էական նշանակություն ունեցող այլ գործոններ: Ուստի, այս պայմաններում կոռուպցիոն հանցագործությունների կանխման և լիարժեք բացահայտման միջոցով կոռուպցիայի դեմ տարվող պայքարի արդյունավետությունն ապահովելու համար խիստ կարևոր է գիտակից հասարակության առկայությունը, որի կողմից անհանդուրժողականություն կցուցաբերվի կոռուպցիոն ցանկացած դրսևորման հանդեպ: Հետևապես, կոռուպցիայի կանխարգելման իմաստով կարևոր նշանակություն ունի քաղաքացիական հասարակության շրջանում երևույթի նկատմամբ բացասական վերաբերմունք սերմանելուն ուղղված միջոցառումների բաղադրիչը, ինչին պետք է հասնել ոչ միայն պետական, այլև հասարակական տարբեր կազմակերպությունների և պարզապես քաղաքացիների ակտիվ ներգրավմամբ:

Այս առումով պետք է նշել, որ ՀՀ դատախազությունը մշտական աշխատանք է իրականացրել, այդ թվում նաև 2020 թվականի ընթացքում, քաղաքացիական հասարակության շրջանում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ բացասական վերաբերմունք ձևավորելու, երևույթի դեմ գիտակցված և մեկտեղված ջանքերով պայքար մղելու ուղղությամբ: Նշվածի օրինակ է ՀՀ դատախազության և Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) հակակոռուպցիոն կոալիցիայի միջև դեռևս 2017թ. դեկտեմբերի 9-ին ստորագրված հուշագիրը, որով սկիզբ է դրվել կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համատեքստում տեղեկատվության փոխանակման, աշխատանքային քննարկումների և համատեղ այլ նախաձեռնությունների միջոցով հանրային մասնակցայնության բարձրացման, հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը նպաստելու, ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի ու իրավունքների պաշտպանության ապահովման, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթության ոլորտներում ակտիվ համագործակցությանը:

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարում ՀՀ դատախազության առանցքային դերն ու նշանակությունը՝ վերոնշյալ համագործակցության շրջանակներում ՀՀ դատախազությունը մասնակցության հրավեր է ստացել Շվեդիայի կառավարության աջակցությամբ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի մաս կազմող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից կազմակերպվող «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրին: Վերջինիս նպատակն է խթանել երիտասարդության մասնակցությունն ու դերը կոռուպցիայի դեմ պայքարում, ամրապնդել հայ աշակերտների և ուսանողների գիտելիքներն ու կարողությունները

հակակոռուպցիոն ոլորտում և բարձրացնել երիտասարդության հակակոռուպցիոն ընկալման ու գիտակցության մակարդակը: Ծրագրի շրջանակում ձևավորված «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց»-ում հակակոռուպցիոն կրթություն է ստանում ավելի քան 120 ուսանող, երիտասարդ մասնագետ՝ ՀՀ բոլոր մարզերից:

Այս ծրագրի շրջանակում նույնպես անսվա ընթացքում հակակոռուպցիոն ակումբի ունկնդիրներն առցանց հարթակում առանձին հանդիպումներ են ունեցել Լոռու մարզի դատախազի տեղակալ Վահե Դոլմազյանի, Սյունիքի մարզի դատախազության ավագ դատախազ Գարիկ Աբելյանի, Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Արթուր Մնոյանի հետ:

Դատախազները ներկայացրել են կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարում դատախազության դերն ու գործառույթները, առանձնահատկությունները, առաջնայնությունները, մարզային կտրվածքով արձանագրված արդյունքները, կոռուպցիոն դեպքերի դեմ պայքարի իրավական մեխանիզմները:

Դատախազներն անդրադարձել են նաև ՀՀ-ում գործարկված ազդարարման համակարգի, ազդարարման էլեկտրոնային հարթակի գործունեությանը, ինչպես նաև՝ ձևավորվելիք Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթներին: Նրանք կարևորել են կոռուպցիայի դեմ պայքարում բոլորի, հատկապես՝ երիտասարդության ակտիվ մասնակցությունը՝ հանրության իրավագիտակցության և իրավապահ մարմինների հետ գործակցության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի խորացված փուլի ունկնդիրներն առցանց հարթակում հանդիպել են նաև ՀՀ գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազ Անի Սարգսյանի հետ: Անի Սարգսյանը ներկայացրել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի առանձնահատկությունները, նշանակությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության, սոցիալական արդարության, պետության խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից: Դատախազն ունկնդիրներին ներկայացրել է նաև դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության գործառույթները, ձևավորման յուրահատկությունները:

Վերոնշյալ հանդիպումների շրջանակներում ծավալվել են երկուստեք շահագրգիռ և բովանդակալից քննարկումներ:

ՀՀ դատախազությունը հետևողական է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության խորացման հարցում, որի համատեքստում նմանատիպ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերի քննության կարևոր նպատակներից պետք է համարել պետությանը պատճառված վնասի հայտնաբերման և վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքները: Ինչպես նախորդ տարիներին, 2020 թվականին ևս ՀՀ դատախազության կողմից հետևողականություն է ցուցաբերվել ենթադրյալ հանցագործություններով պետությանը պատճառված վնասի հաշվարկման, դրա վերականգնման և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2020 թվականի մարտի 04-ի թիվ 20/2(5)-17-20 հանձնարարականի համաձայն՝ ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր ամիս ամփոփվել և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների

գործերով վարչություն են ներկայացվել քրեական գործերով պետությանը պատճառված վնասի, դրա վերականգնման, ենթադրյալ հանցանք կատարած անձանց և մեղադրյալների վերաբերյալ տվյալներ, որոնք նշված վարչության կողմից մշակվել և ամփոփվել են:

Բացի այդ, ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից հանձնարարվել է ապահովել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ պետությանը պատճառված վնասի ամբողջական ծավալների բացահայտման և մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քրեական գործով վարույթի ընթացքում ենթադրյալ հանցագործություն կատարած անձի կողմից ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներ կամ այլ գույք ունենալու և դրանք քողարկելու ենթադրյալ դեպքերին, որպիսի փաստական տվյալների առկայության պարագայում մինչդատական քրեական վարույթի ընթացքում հանձնարարվել է նաև քրեադատավարական գործիքակազմի լիարժեք կիրառմամբ միջոցներ ձեռնարկել ենթադրյալ հանցանք կատարած անձանց կողմից ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներ կամ այլ գույք ունենալու, դրանց գտնվելու վայրը, չափը և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2020 թվականի ընթացքում էապես ակտիվացել են փողերի լվացման դեմ քրեաիրավական պայքարի մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցատեսակով 23 անձի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել, ինչը 21-ով կամ 1050%-ով գերազանցում է 2019 թվականի, 17-ով կամ 350%-ով՝ 2018 թվականի ընթացքում արձանագրված ցուցանիշները:

Մեր հետևողականության արդյունքում արմատավորվել է քննության պրակտիկայում կոռուպցիոն, ինչպես նաև հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելուն առնչվող այլ քրեական գործերով փողերի լվացման հանգամանքների խոր և համապարփակ ստուգումը: Այս նպատակով ակտիվացվել է նաև միջազգային համագործակցությունը:

Այդուհանդերձ, այս հանցատեսակին առնչվող բազում իրավական խնդիրներ շարունակում են մնալ վիճելի հայրենական իրավագիտության մեջ ու իրավակիրառ պրակտիկայում:

Թեև կարևոր ձեռքբերում կարելի է համարել ՀՀ դատախազության բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2019 թվականի նոյեմբերի 7-ին կայացված (ՀՀ դատախազություն ստացվել է 2020 թվականին) որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես, որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք ընկած են եղել նաև ՀՀ դատախազության ներկայացրած բողոքի հիմքում, նախադեպային են և ուղղորդող նշանակություն կարող են ունենալ փողերի լվացման դեմ ինչպես անդրազգային և ներպետական մակարդակում իրականացվող պայքարի արդյունավետության բարձրացման, այնպես էլ ներկայումս քննվող և լայն հանրային հնչեղություն ունեցող գործերով քրեաիրավական ճիշտ որակումներ տալու և պատժի անխուսափելիության ապահովման միասնական պրակտիկայի ձևավորման տեսանկյունից:

Մասնավորապես, 2013թ. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական գործով Հ. Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի (կեղծ ձեռնարկատիրությանը հանցակցության) 3-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման) և 205-րդ հոդվածի 2-րդ մասով (հարկերից

խուսափելու), իսկ Հ.Չանախչյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Առաջին ատյանի դատարանի 2017թ. դեկտեմբերի 25-ի դատավճռով Հ.Գևորգյանը՝ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման, իսկ Հ.Չանախչյանը՝ դրան հանցակցության համար առաջադրված մեղադրանքներում ճանաչվել են անմեղ և արդարացվել: Նույն դատավճռով իրենց մեղսագրվող մյուս հանցավոր արարքների կատարման համար նրանք դատապարտվել են ազատազրկման:

Արդարացման մասով մեղադրող դատախազի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը, սակայն, մերժվել է: Ըստ Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների՝ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները չեն հիմնավորել և ապացուցել, որ ամբաստանյալների կողմից օրինականացվել են հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գումարները:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է վճռաբեկ բողոք՝ արդարացման մասով մասնակի բեկանելու ստորադաս դատարանների որոշումները և գործն ուղարկելու Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Բողոքում դատախազությունը դիրքորոշում է հայտնել, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը, իսկ գործով ձեռք բերված ապացույցներից ակնհայտ է, որ ծավալված հանցավոր գործունեության՝ կեղծ ձեռնարկատիրության և հարկերից խուսափելու արդյունքում առաջացել են ապօրինի դրամական միջոցներ, որոնք, մի ընկերության ակտիվներում ներառելով, այլ միջոցների հետ միախառնելով և օրինական ձեռնարկատիրական գործունեության պատրանք ստեղծելով, փոխանցվել են հանցավոր նպատակով ստեղծված այլ՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող առևտրային կազմակերպության, որից հետո կանխիկացվել և վերադարձվել են փոխանցողին: Այս հանցավոր սխեման այլ կերպ, քան հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի օրինականացում, հնարավոր չէ որակել:

Քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը, ըստ էության համաձայնելով դատախազության այս դիրքորոշմանը, ամբողջությամբ բավարարել է բողոքը՝ զարգացրել դեռևս 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշմամբ արտահայտած իր դիրքորոշումները և ընդարձակել «փողերի լվացման» հասկացության իմաստն ու հանցակազմի էությունը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների մեկնաբանության արդյունքում փաստել է, որ նշված հանցագործության կատարմամբ, հանցավորն օրինական գործունեության շղարշի ներքո նպատակ է հետապնդում լեգիտիմացնելու ստացված անօրինական գույքն ու եկամուտները, թաքցնելու դրանց ծագման հանցավոր աղբյուրը, վերացնելու դրանց հանցավոր հետքերը: Այսինքն՝ տվյալ հանցագործության կատարմամբ՝ փողերի լվացմանն ուղղված գործողություններ կատարելու, անօրինական գույքն ու եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու միջոցով հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում դրանց օրինական տեսք հաղորդելուն և քրեական պատասխանատվությունից ազատվելուն: Հետևաբար, անձի արարքը որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում որակելիս պետք է

համակողմանի ուշադրության արժանացնել այն գործողությունների շղթան, անօրինական գույքի և եկամուտների քաղաքացիական շրջանառությունը՝ իր շրջափոխվելով հանդերձ, որոնք ընդհանուր առմամբ կարող են վկայել հանցավորի՝ փողերի լվացմանն ուղղված դիտավորության առկայության մասին: Ընդ որում, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե կոնկրետ ո՞ր օրինական քաղաքացիաիրավական գործարքի կատարման արդյունքում են օրինականացվել ձեռքբերված նյութական միջոցները, և երկրորդ՝ գույքի ու եկամուտների օրինականացումը որքանով է փոխկապակցված ենթադրյալ հանցանքը կատարած անձի՝ «փողերի լվացման» դիտավորության հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից զգալի աշխատանքներ են իրականացվել նաև կոռուպցիոն տարբեր սխեմաների կիրառմամբ, կատարման բարդեցված եղանակով աչքի ընկնող տարբեր հանցագործությունների բացահայտման և իրականացվող քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու ուղղությամբ:

Այս առումով թեև հիշատակման են արժանի 2020 թվականի ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում քննված, հասարակական հնչեղություն ստացած բազմաթիվ քրեական գործեր, սակայն դրանցից կարելի է առանձնացնել քննության առարկայի առանձնահատկություններով, կատարման եղանակով պայմանավորված կամ կոռուպցիոն հստակ մշակված սխեմաների գործադրմամբ իրականացված որոշ հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործեր:

Այսպես, տևական ժամանակ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում ՀՀ ՊԵԿ նախկին նախագահի վերաբերյալ քննվող քրեական գործով իրականացված լայնածավալ քննչական, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա քրեական հետապնդում է հարուցվել վերջինիս, նրա մերձավոր 4 անձի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեում բարձր պաշտոններ զբաղեցրած 3 անձի նկատմամբ:

Աննախադեպ ծավալներ ունեցող քրեական գործով բացահայտվել են պաշտոնեական ու տնտեսական հանցագործությունների բազմաթիվ դրվագներ, այդ թվում՝ առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու և ստանալու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված՝ առանձնապես խոշոր չափերի գույքն օրինականացնելու վերաբերյալ:

Մասնավորապես, նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՍՊ ընկերություններից մեկի գլխավոր տնօրենը 2008-2014թթ. ընթացքում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի, այնուհետև՝ 2014-2016թթ. ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցրած և նշված ժամանակահատվածում իշխանության ներկայացուցչի գործառույթներ մշտապես իրականացրած, գործադիր իշխանության ղեկավար պաշտոնատար անձին որդիների միջոցով տվել է առանձնապես խոշոր չափերի՝ 8.142.315.480 ՀՀ դրամին համարժեք 22.401.000 ԱՄՆ դոլարի կաշառք՝ նշված բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից ծառայության գծով ընդհանուր հովանավորչության, վերջինիս ղեկավարման ներքո գտնվող հարկային և մաքսային մարմինների կողմից իր ներկայացրած առևտրային կազմակերպությունների գործունեության համար խոչընդոտներ չստեղծելու, վարչական մարմինների միջամտությունից նշված ընկերությունների տնտեսական գործունեությունը հնարավորինս զերծ պահելու, պետական մարմինների վերահսկողական գործառույթները

մեղմելու և համապատասխան հիմքերի առկայության դեպքում առավել բարենպաստ վարչական ակտեր կայացնելու համար:

Հիշյալ պաշտոնատար անձի որդիների նախաձեռնությամբ նշված գումարի հանցավոր ծագումը թաքցնելու, դրա իրական բնույթը, ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը խեղաթյուրելու, իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով, ՍՊ ընկերության տնօրենը 2011թ. ընթացքում կաշառքի առարկա հանդիսացող՝ 8.142.315.480 ՀՀ դրամին համարժեք 22.401.000 ԱՄՆ դոլարը փոխանցել է պաշտոնատար անձի որդիների մատնանշած և նրանց հետ փոխկապակցված օտարերկրյա, ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հաշվեհամարներին: Ավելին, նշված գործարքի հանցավոր բնույթը թաքցնելու և քողարկելու համար վերջիններիս և ՍՊ ընկերության տնօրենի միջև կնքվել են փոխառության պայմանագրեր՝ համապատասխանաբար՝ 7.000.000 և 13.400.000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ, մինչդեռ ՍՊ ընկերության տնօրենին որևէ գումար տարիներ շարունակ և առ այսօր չի վերադարձվել:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա առանձնապես խոշոր չափերի՝ 8.142.315.480 ՀՀ դրամին համարժեք 22.401.000 ԱՄՆ դոլար կաշառք տալու և հանցավոր ճանապարհով ստացված նշված առանձնապես խոշոր չափերով գումարը օրինականացնելուն օժանդակելու համար ՍՊ ընկերության տնօրենին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նշված դրվագներով քրեական հետապնդում է հարուցվել նաև հանցագործությանը մասնակցած մյուս անձանց նկատմամբ, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար կալանք է դրվել մեղադրյալներին պատկանող գույքի վրա:

2020 թվականի օգոստոսին քրեական գործից նշված պաշտոնատար անձին վերաբերող մասն առանձնացվել և ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ կոռուպցիոն հանցագործությունները համակողմանիորեն բացահայտելու, դրանց կատարմանն առնչված անձանց ամբողջական շրջանակը, կոռուպցիոն սխեմայում ներգրավված անձանց կողմից այլ հանցագործությունների կատարմանը մասնակցելու հանգամանքը պարզելու ուղղությամբ: Միջոցներ են ձեռնարկվում նաև կաշառքի առարկա հանդիսացած գումարի ծագման օրինականությունը ստուգելու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ մեղադրյալ՝ ՍՊ ընկերության տնօրենը 2011թ. 22.401.000 ԱՄՆ դոլար ունենալու հանգամանքը պայմանավորել է նրա մայրական պապի կողմից «Իրանի պատերազմի» ընթացքում սովետական բանակում ծառայելու, մեծ քանակությամբ ոսկի՝ «Շահի ոսկիները» բերելու և 1987թ. տատի կողմից իրեն փոխանցելու հանգամանքներով:

Բացի այդ, «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման գործընթացում արձանագրված չարաշահումների դեպքերով իրականացված նախաքննության ընթացքում ևս բացահայտվել են կոռուպցիոն տարբեր սխեմաներ, որոնց վերաբերյալ ՀՀ դատախազությունը 2020 թվականի ընթացքում պարբերաբար հասարակությանը տրամադրել է անհրաժեշտ ծավալով տեղեկություն:

Մասնավորապես, քրեական գործով ձեռք բերված տվյալներն առերևույթ վկայում են, որ իրավասու պաշտոնատար և ծրագրի հետ առնչություն ունեցող անձանց կողմից մրցույթների իրականացման գործընթացում խախտումներ թույլ տալու, Ծրագրի անարդյունավետ դեկավարման, աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության

բացակայության, պայմանագրերի գնի և բովանդակության, նախագծերի մեջ անհարկի ու անհիմն փոփոխություններ կատարելու արդյունքում նախատեսված ժամկետների խախտմամբ, շուրջ 10 տարվա ընթացքում չեն ավարտվել «Հյուսիս-հարավ» ճանապարհի կառուցման աշխատանքները, չեն իրականացվել Ծրագրով քաղաքացիների, հասարակության և պետության համար ակնկալվող նպատակներն ու արդյունքները՝ երթևեկության ժամկետի կրճատումը, Հայաստանի հարավը անվտանգ, որակյալ և արագընթաց ճանապարհով հյուսիսի հետ կապելը, տնտեսության ու բիզնես կապերի զարգացմանը խթանելը և այլն:

Աննախադեպ ծավալներ ունեցող քրեական գործով մի քանի ուղղություններով (Ծրագրի համար պատասխանատու պաշտոնատար անձանց, Ծրագրում ընդգրկված արտասահմանյան կապալառու ու տեղական ենթակապալառու կազմակերպությունների հանցավոր չարաշահումների, դրանցում ներգրավված բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանցավոր գործունեության) բացահայտվել են պաշտոնեական ու տնտեսական հանցագործությունների բազմաթիվ դրվագներ:

Քննության ներկա պահին արդեն իսկ քրեական հետապնդում է հարուցվել 32 անձի նկատմամբ, որոնցից չորսը գործող և նախկին պաշտոնատար անձինք են, իսկ մյուսները՝ ծրագրում ընդգրկված կազմակերպությունների ղեկավարներ և աշխատակիցներ:

Անդրադառնալով հատկապես տարբեր դրվագներով կապալառու և ենթակապալառու մի շարք ընկերությունների աշխատակիցների, նրանց գործունեությունը փաստացի ղեկավարող անձանց կողմից հարկման հիմք հանդիսացող առերևույթ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու եղանակով առանձնապես խոշոր չափերի հարկերից խուսափելու, նաև փողերի լվացման նպատակով առանց աշխատանքների փաստացի կատարման կամ ծառայությունների մատուցման կեղծ հաշվապահական փաստաթղթեր կազմելու վերաբերյալ քննության ուղղությանը, նշենք, որ քննության ներկա փուլում բացահայտվել է պետությանը պատճառված ընդհանուր առմամբ 4.211.416.057 ՀՀ դրամ գումարի առանձնապես խոշոր չափերի վնաս:

Այսպես. «M1 Թալինից Գյումրի ճանապարհի վերակառուցում և բարելավում» ծրագրի շրջանակներում Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչների և նույն աշխատանքներում որպես ենթակապալառու ներգրավված «Սթոնս» ՍՊ ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարող անձանց միջև՝ «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի հարկային պարտավորությունները նվազեցնելու նպատակով, պայմանավորվածություն է ձեռք բերվել առանց ծառայությունների մատուցման կեղծ պայմանագրեր կնքելու, վճարային փաստաթղթեր ներկայացնելու և հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու վերաբերյալ: Վերը նշված պայմանագրերի շրջանակներում ծառայությունների ձեռքբերման անվան տակ, պայմանագրերի կնքումից հետո մինչև 04.04.2017թ. ներառյալ, 7 փոխանցման միջոցով «Սթոնս» ՍՊ ընկերությանն է փոխանցվել ընդհանուր 1.162.260.574,5 ՀՀ դրամ: Նախապես մշակված հանցավոր սխեմայի իրագործմամբ՝ «Սթոնս» ՍՊ ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարող «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊ ընկերության տնօրեն Ս.Ա.-ն, ընկերության երկու աշխատակցի ներգրավմամբ հիմնադրել են երկու ՍՊ ընկերություն առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակի: Ընկերության գլխավոր հաշվապահ Ս.Մ.-ն, գործելով «Սթոնս» ՍՊ ընկերության վերը նշված ղեկավար

անձանց հանձնարարությամբ՝ ընկերությունում ստացված դրամական միջոցների հանցավոր ծագումը քողարկելու, դրանց ծագման աղբյուրը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերությունից ստացված դրամական միջոցները նշված երկու ՍՊ ընկերություններին փոխանցելու, «Սթոնս» ՍՊ ընկերությունում դիվիդենտ-շահաբաժին ձևակերպելու միջոցով, կանխիկացրել է ստացված գումարի մի մասը և այն առձեռն փոխանցել է Ս.Ա-ին: Առանց պայմանագրերով նախատեսված ծառայությունները մատուցելու, «Սթոնս» ՍՊ ընկերության կողմից «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղին է ներկայացվել 1.167.409.328,31 ՀՀ դրամի 7 կեղծ հարկային հաշիվ, որոնք ընդունվել են ընկերության տնօրենի ու հաշվապահի կողմից և, առաջացող հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու նպատակով, այդ տվյալները ներառվել են ընկերության կողմից 2016 և 2017թթ. գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացվող ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվետվությունում և ԱԱՀ-ի հաշվարկներում:

Սիայն նկարագրված առերևույթ ապօրինի գործարքների արդյունքում, քննության ներկա փուլում բացահայտվել է պետությանը պատճառված ընդհանուր առմամբ 2.729.457.229 ՀՀ դրամ գումարի առանձնապես խոշոր չափերի վնաս:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ «Սթոնս» ՍՊ ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարած անձին, վերջինիս հետ հանցակցած չորս աշխատակցի և չինական կապալառու կազմակերպության երեք աշխատակցի մեղադրանքներ են առաջադրվել առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց խուսափելու, կեղծ ձեռնարկատիրության և փողերի լվացման համար:

«Սթոնս» ՍՊ ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարած անձի նկատմամբ դատարանի կողմից ընտրվել է խափանման միջոց կալանավորումը և նույն որոշմամբ այն փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Վերջինիս ներկայացուցչի կողմից ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշվին է վերականգնվել 1 մլրդ ՀՀ դրամ որպես վնասի վերականգնման երաշխիք:

Գործով նախաքննությունը շարունակվում է:

Կոռուպցիոն սխեմաների գործադրմամբ կատարված ուշագրավ հանցագործություններից է նաև Շիրակի մարզի դատախազությունում իրականացված՝ մարզի վարչական տարածքում արձանագրված կոռուպցիոն բնույթի դեպքերի, դրանց առթիվ հարուցված քրեական գործերի նյութերի ուսումնասիրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող սոցիալական աջակցության և բժշկասոցիալական փորձաքննության գործակալության ոլորտներում հայտնաբերված ենթադրյալ խախտումների կապակցությամբ հարուցված քրեական գործը: Նշված ոլորտում կատարվող հանցագործությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ հանցավոր ոտնձգությունները կատարվում են առավել խոցելի խմբերի՝ ընտանեկան անապահովության համակարգում ընդգրկված և նյութական ծանր պայմաններում գտնվող, ինչպես նաև տարբեր հիվանդություններով տառապող և սոցիալապես անապահով անձանց նկատմամբ:

Մասնավորապես, քրեական գործով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Գյումրի քաղաքի շուրջ 4100 նպաստառու ընտանիքների սպասարկող սոցիալական աջակցության տարածքային թիվ 1 բաժնի 5 մասնագետ, 2020թ. մարտ-հունիս ամիսներին, յուրաքանչյուր փաստագրման ժամանակ, իրենց տարածքային

բաժնու մի հաշվառված մի շարք նպաստառու ընտանիքներից պահանջել և յուրաքանչյուրից ստացել են 30.000-60.000-ական ՀՀ դրամ ապօրինի վարձատրություններ, որոնց մի մասը պահել են իրենց, իսկ մյուս մասը հանձնել են բաժնի պետին:

Բացի այդ, սոցիալապես անապահով քաղաքացիներին սոցիալական աջակցության ծրագրում ընդգրկելու համար նույն բաժնի աշխատակիցները քաղաքացիներից ստացել են հատկացվելիք 3 ամսվա համար նախատեսված գումարից մեկ ամսվա գումարը՝ 18.000 ՀՀ դրամը, որից 10.000 ՀՀ դրամը փոխանցել են բաժնի պետին, իսկ 8000 ՀՀ դրամը պահել են իրենց:

Ինքը՝ բաժնի պետը ևս, 2020թ. մայիս-հունիս ամիսներին, մի շարք դեպքերում նպաստառուներին նպաստի համակարգում ընդգրկելու համար, անձամբ կամ միջնորդների միջոցով նրանցից ստացել է 10.000-30.000-ական ՀՀ դրամ ապօրինի վարձատրություն: Նշված ենթադրյալ հանցավոր արարքները կատարելու համար բաժնի պետին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, իսկ 5 աշխատակցի՝ նույն հոդվածի 3-րդ մասի տարբեր կետերի հատկանիշներով:

Նմանատիպ առերևույթ հանցավոր դրսևորումներ բացահայտվել են նաև Գյումրու սոցիալական աջակցության տարածքային թիվ 2 բաժնում, որի կապակցությամբ ևս քննվում է քրեական գործ և մեղադրանքներ են առաջադրվել նշված բաժնի պետին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311.1-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, և մեկ աշխատակցի՝ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով:

Մեկ այլ քրեական գործի քննության շրջանակներում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Շիրակի մարզի թիվ 1 բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի նախագահը, փորձաքննություններ կատարելիս, նույն հանձնաժողովի անդամների հետ նախնական համաձայնությամբ, բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելիս անձին հաշմանդամ ճանաչելու, հաշմանդամության խումբը որոշելու, հաշմանդամության պատճառական կապի, տևողության ժամկետների սահմանման լիազորություններ իրականացնելու ընթացքում, քաղաքացիների օգտին ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու համար, փորձաքննության դիմած անձանցից 2019թ.-ից մինչև 2020թ. մարտը ներառյալ պահանջել և ստացել է կաշառք գումարներ, որոնք աշխատանքային օրվա վերջում բաշխել է իր ու հանձնաժողովի անդամների միջև:

Հանձնաժողովի նախագահին և երկու անդամին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով: Հանձնաժողովի նախագահի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել գրավը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ոլորտներում տևական ժամանակ գործել է հստակ մշակված կոռուպցիոն սխեմա, որում ներգրավված են եղել գործակալության կազմում և բժշկասոցիալական հանձնաժողովում համապատասխան գործառույթներով օժտված հանրային ծառայողներ, նպաստառուներ, պաշտոնատար անձինք, հանձնաժողովի անդամներ և բժշկասոցիալական փորձաքննության շահառուներ:

Սակայն, նույնիսկ նշված հանցավոր արարքները ներգրավված անձանց մեծ քանակի և ակներևության պայմաններում կատարված լինելու դեպքում, կոռուպցիոն սխեմայում ներգրավված անձինք տևական ժամանակ հնարավորություն են ունեցել անարգել զբաղվելու հանցավոր գործունեությամբ, իսկ այդ հանգամանքը դուրս է մնացել

նախարարության ներքին վերահսկողական գործառնություններով օժտված իրավասու անձանց տեսադաշտից: Այս հանգամանքը հիմք է տալիս ողջամտորեն ենթադրելու, որ հիշյալ պաշտոնատար անձանց կողմից դրսևորվել է անհետևողականություն, ընդհուպ՝ անգործություն, ինչն իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր և նպաստում հանցանքի կատարմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Շիրակի մարզի դատախազը միջնորդագիր է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին: Մարզի դատախազն առաջարկել է ձեռնարկել գործուն միջոցներ՝ նմանատիպ արատավոր և հանցածին երևույթները բացառելու ուղղությամբ, պարզել նշված խախտումների պատճառները, քննարկել սոցիալական ծառայության տարածքային բաժինների, բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված՝ իրենց պարտականությունների կատարման մեջ թերացած անձանց կարգապահական ներգործության և պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հիշատակման է արժանի նաև բարեվարքության ինստիտուտի ներդրման շրջանակներում ՀՀ դատախազության և ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցության արդյունքում արձանագրված ենթադրյալ հանցագործության մասին ևս: Մասնավորապես,

2020թ. հունիսի 29-ից հուլիսի 1-ին տեղի է ունեցել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառնությունը իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթը:

Վերջինիս մասնակցելու համար դիմած անձանց փաստաթղթերը ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմում ուսումնասիրելու ընթացքում պարզվել է, որ հայտատուներից մեկը, ի թիվս դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, որպես աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ, ներկայացրել է 2017թ. մայիսի 1-ից մինչև 2019թ. մայիսի 1-ը ՍՊԸ-ում որպես իրավաբան աշխատած լինելու մասին տեղեկանք: Պարզվել է, որ տվյալ անձը 2016-2020թթ. ընթացքում պարբերաբար դիմել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու նպատակով անցկացվող բաց մրցույթներին մասնակցելու համար, սակայն երբևէ մասնագիտական աշխատանքային գործունեությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ հայտերի ընդունման ընթացքում նրանից պահանջվել են իր աշխատանքային գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր: Քաղաքացին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանք նրա՝ 2017-2019թթ. ընթացքում աշխատանքային գործունեություն իրականացրած լինելու մասին: Արդյունքում՝ որակավորման հանձնաժողովը բավարարել է վերջինիս հայտը և նրան թույլատրել է մասնակցել մրցույթին:

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38.1 հոդվածի՝ Դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառնությունով օժտված ստորաբաժանման դատախազների թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթին մասնակցելու համար դիմող անձինք այլ փաստաթղթերի հետ ներկայացնում են նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ: Մրցույթն անցկացնող Որակավորման հանձնաժողովի

նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը մեկօրյա ժամկետում ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ երկշաբաթյա ժամկետում անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալու նպատակով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության համաձայն՝ իրենց ուսումնասիրության արդյունքում նշած ՍՊԸ-ում տվյալ անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները չեն հաստատվել: Ավելին, Հանձնաժողովը նշել է, որ 2019 թվականից նա զբաղեցնում է իր իսկ հիմնադրած ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնը՝ միաժամանակ արձանագրելով, որ աշխատանքային փորձառության և մասնագիտական գործունեության վերաբերյալ այլ արժանահավատ տեղեկություններ առկա չեն:

2020թ. հուլիսի 1-ին տվյալ դիմորդը չի մասնակցել բաց մրցույթին, և ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերի վերաբերյալ հարցմամբ նրանից ստանալու պարզաբանումներ:

Ելնելով նրանից, որ վերոնշյալ հանգամանքները ողջամիտ կասկած են առաջացրել ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանի գրությամբ դրանք ուղարկվել են ոստիկանություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու հիմքերը պարզելու հանձնարարությամբ:

ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ քաղաքացին հայտարարված վերոնշյալ բաց մրցույթին մասնակցելու համար, պարտադիր պայման հանդիսացող՝ առնվազն 2 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու համար դրդել է ՍՊ ընկերության տնօրենին կազմելու և իրեն տրամադրելու բովանդակությամբ կեղծ, պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող տեղեկանք այն մասին, թե իբր, վերջինս 2017թ. մայիսի 1-ից մինչև 2019թ. մայիսի 1-ը հանդիսացել է այդ ընկերության իրավաբանը: Ստանալով կեղծ տեղեկանքը՝ քաղաքացին այն ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովին: Պարզվել է նաև, որ ՍՊԸ-ի կողմից տվյալ անձի երկամյա աշխատանքային գործունեության մասին համապատասխան տվյալները ՀՀ ՊԵԿ-ին են տրամադրվել օրենսդրության պահանջների խախտմամբ:

Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առկա են իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ կեղծելու և օգտագործելու, ինչպես նաև իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ կեղծելուն դրդելու առերևույթ հանցագործությունների հատկանիշներ պարունակող տվյալներ՝ ՀՀ ոստիկանության ՔՈ ԳՎ կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում նշված դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և 38-325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում դեռևս ցանկալի արդյունավետություն չի ապահովում ազդարարման համակարգը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացվել է 140 (2019թ.՝ 188) ազդարարում, որոնք բոլորը վերաբերել են առերևույթ կոռուպցիոն բնույթի դեպքերին: Նշված 140 ազդարարումից 119-ը (2019թ.՝ 153) եղել է անանուն: 91-ով (2019թ՝ 97) հարուցվել է ազդարարման վարույթ, 33-ով (2019թ.՝ 91) մերժվել է վարույթի հարուցումը: Հարուցված ազդարարման վարույթներից 24-ով (2019թ. -21) վարույթը կարճվել է, 86-ը (2019թ. -59) ուղարկվել է օպերատիվ-հետախուզական մարմին՝ ազդարարումը ստուգելու համար, 15-ը (2019թ.՝ 17) ուղարկվել է ըստ ենթակայության: 1 (2019թ.՝ 5) ազդարարման դեպքով հարուցվել է քրեական գործ:

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտ

2020 թվականը նշանավորվեց Հայաստանի Հանրապետությունում Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի պահանջներին համահունչ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրմամբ:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունմամբ գլխավոր դատախազությունը պետական շահերի պաշտպանության ոլորտում ստանձնեց կարևոր գործառույթ, որը միտված է տնտեսական շրջանառությունից ապօրինի գույքը դուրս բերելուն, այն օրինական տնտեսական շրջանառություն վերադարձնելուն:

Ընդ որում, նշված մեխանիզմի ներդրումը պայմանավորված էր ոչ միայն ստանձնած միջազգային հանձնառությունների ներպետական իմպլեմենտացման անհրաժեշտությամբ, այլ նաև սոցիալական արդարության վերականգնման հանրային ակնկալիքների և սպասումների իրացման ապահովմամբ:

Այս գործընթացի սկիզբը նախանշվեց դեռևս 2019 թվականին, երբ ՀՀ վարչապետի 01.03.2019թ. թիվ 195-Ա որոշմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ Հայաստանի Հանրապետությունում ծանր հանցագործությունների դեպքում գույքի բռնագանձման, հարուցված քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացման, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի նիստում հավանության արժանացած՝ «Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում մեղադրյալի կողմից գույքի օրինականության ապացուցման վերաբերյալ» և «Առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման վերաբերյալ» հայեցակարգերով նախատեսված ինստիտուտների ներդրման հետ կապված քննարկումները կազմակերպելու և մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման փաթեթ ներկայացնելու նպատակով: Աշխատանքային խմբի կողմից կատարված լայնածավալ աշխատանքների արդյունքում, հաշվի առնելով ակտիվների վերադարձման միջազգային լավագույն փորձը, մշակվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նախագիծը, որը դարձավ հանրային լայն քննարկումների առարկա, ներկայացվեց նաև միջազգային փորձագետներին, որի արդյունքում կարծիքներ ստացվեցին ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի, ԵԽ, ԱՄՆ դեսպանատան կողմից ներգրավված փորձագետների կողմից:

Օրենքի նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց 2020 թվականի ապրիլի 16-ին և 2020 թվականի մայիսի 23-ին դրա որոշ դրույթներ մտան ուժի մեջ՝ ազդարարելով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության (այսուհետ՝ Վարչություն) ձևավորման գործընթացի սկիզբը:

Վարչության դատախազների ընտրությունն իրականացվեց բաց մրցույթով, որի շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ, գործարկվել է

թեկնածուների բարեվարքության ստուգման ինստիտուտը: Հարկ է արձանագրել, որ մրցույթին մասնակցած բոլոր թեկնածուների վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներկայացրեց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ, որոնք էական նշանակություն են ունեցել թեկնածուների ընտրության հարցում: Անկախ փորձագետների ներգրավմամբ անցկացված մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված յոթ թեկնածուները հատուկ մասնագիտացման առարկայական ծրագրով ուսումնառություն են անցել ՀՀ արդարադատության ակադեմիայում, որն ավարտելուց հետո նրանցից հինգը 2020 թվականի սեպտեմբերի 3-ին նշանակվել են Վարչության համապատասխան հաստիքներին, ինչով պայմանավորված՝ Օրենքն ամբողջ ծավալով մտել է ուժի մեջ: Այսպիսով, 2020 թվականի սեպտեմբերի 3-ին տրվել է Օրենքով սահմանված գործիքակազմի գործնականում կիրառման գործընթացի մեկնարկը:

2020 թվականի նոյեմբերի 3-ին անցկացվել է Վարչության դատախազների ընտրության երկրորդ բաց մրցույթը, որի արդյունքներով հաղթող ճանաչված երեք թեկնածուները, ՀՀ արդարադատության ակադեմիայում ուսումնառության գործընթացը հաջողությամբ ավարտելուց հետո, 2020 թվականի դեկտեմբերի 7-ին համալրել են Վարչության դատախազների շարքերը:

Պատասխանատու ստորաբաժանման աշխատանքի արդյունավետ կազմակերպման և իրականացման նպատակով նախատեսվել է նաև այդ աշխատանքներին տնտեսագետների ներգրավման հնարավորություն: Տնտեսագետների ընտրության համար պատասխանատու ստորաբաժանման ձևավորումից հետո հայտարարվել է բաց մրցույթ, որի արդյունքներով հաղթող են ճանաչվել 4 տնտեսագետ:

Վարչության աշխատանքները հնարավոր ամենասեղմ ժամկետում կազմակերպելու և դրանց անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, մինչև Վարչության կազմավորումը, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առանձնացվել են այն քրեական գործերը, որոնց շրջանակներում կարող էր լինել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ կասկած:

Առանձնացված բոլոր գործերի վերաբերելի նյութերն ուղարկվել են պատասխանատու ստորաբաժանում՝ դրա կազմավորումից անմիջապես հետո:

2020 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վարչությունում ստացվել են 201 քրեական գործերի վերաբերյալ նյութեր՝ 430 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 214 որոշում, իսկ 216 անձի դեպքում կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 83 որոշում: Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին որոշումները կայացվել են ինչպես Օրենքով նախատեսված՝ 50.000.000 ՀՀ դրամը գերազանցող ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալների բացակայությամբ պայմանավորված, այնպես էլ այլ հիմքերով, օրինակ՝ մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը կայացված՝ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման (չվերացված) առկայությամբ նյութեր ուղարկելու արդյունքում կամ Օրենքով նախատեսված հանցագործությունների ցանկում չներառված ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով մեղադրանք առաջադրված լինելու արդյունքում: Սկսված 214

ուսումնասիրությունների շրջանակներում իրականացվել են բազմաթիվ գործողություններ՝ միտված ուսումնասիրությունների պատշաճ, համապարփակ և արդյունավետ իրականացմանը, այդ թվում՝

ա) կազմվել են հարցումներ՝ ուղղված իրավասու մարմիններին, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությանը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ կադաստրի կոմիտեին, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի գործակալությանը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններին:

բ) Ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի իրական շահառուների, նրանց փոխկապակցված անձանց շրջանակը, գույքի ծավալը, ինչպես նաև ուսումնասիրության համար անհրաժեշտ այլ հանգամանքներ պարզելու նպատակով Օրենքով սահմանված կարգով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար, համապատասխան միջոցառումներ իրականացնող մարմինն տրվել են օպերատիվ հանձնարարականներ:

Նշված ժամանակահատվածում կատարվել են նաև վարչության գործառույթներից բխող այլ աշխատանքներ, մասնավորապես՝

ա) ՀՀ տարածքում գտնվող գույքի և (կամ) անձանց վերաբերյալ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել են միջազգային հարցումներ, որոնցում ներկայացված խնդրանքների կատարման ուղղությամբ Վարչության կողմից ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այսպես, նման խնդրանքներ պարունակող միջազգային հարցումներ են ստացվել Ռուսաստանից և Ռումինիայից, որոնց շրջանակներում անհրաժեշտ գործողությունների կատարման հարցումների ուղարկման և գրությունների ստացման արդյունքներով պատասխաններ են ուղարկվել հայցող պետությունների իրավասու մարմիններին:

բ) Ինչպես ՀՀ գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումներից, այնպես էլ պետական այլ կառույցներից ստացվել են գրություններ, որոնց տրվել են պատասխաններ:

գ) Վարչությունում ստացվել է 10 քաղաքացու դիմում (այդ թվում՝ փաստաբանական հարցումներ): Նշված դիմումներն այս կամ այն չափով վերաբերել են կոռուպցիոն բնույթի հարցերին, և դիմումատուները այդ հարցերը վերագրել են Վարչության գործառույթներին: Դիմումներն ըստ էության քննարկվել են և դրանց արդյունքներով համապատասխան անձանց ուղարկվել են անհրաժեշտ պատասխաններ: Ստացված դիմումներից մեկը վերաբերել է ՀՀ գլխավոր դատախազության այլ ստորաբաժանման գործառույթներին և ուղարկվել է վերջինիս՝ դիմումի հետագա ընթացքը լուծելու նպատակով:

Ներկայումս ստեղծված են պատասխանատու ստորաբաժանման աշխատանքի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները: Վարչությունն այսօր աշխատում է ուժերի գերլարումով: Նախաձեռնված յուրաքանչյուր ուսումնասիրության շրջանակներում իրականացվում է համապարփակ, մանրակրկիտ, արդյունքին միտված վերլուծություն՝ նպատակ ունենալով հնարավորինս արագ և արդյունավետ իրականացնելու «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի նպատակը՝ պաշտպանել պետական շահը՝ տնտեսական շրջանառությունից դուրս բերելով ապօրինի ծագում ունեցող գույքը:

ՀՀ դատախազությունը ստանձնել է պետության և հասարակության համար առանցքային նշանակություն ունեցող և մեր երկրում նախադեպը չունեցող բնույթի և ծավալների՝ ապօրինի ծագում ունեցող գույքը, ակտիվները վերադարձնելու, իր օրինական տիրոջը՝ պետությանը վերադարձնելու, այդպիսով սոցիալական արդարության վերականգնմանը նպաստելու հանձնառություն: Հետևաբար, խիստ կարևորվում է օրենքի պահանջներին համապատասխան, մարդկանց սեփականության իրավունքը երաշխավորելով, այդ ակնկալիքներն արդարացնելու անհրաժեշտությունը:

Չնայած Վարչության հսկայական ծանրաբեռնվածությանը՝ ՀՀ գլխավոր դատախազը Վարչության դատախազներին հանձնարարել է էլ ավելի մեծ հետևողականությամբ և ակտիվությամբ իրականացնել իրենց գործառույթները՝ բավարար ապացուցողական բազայի հիման վրա հնարավորինս շուտ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցեր ունենալու և դատարան ուղարկելու համար:

Այդուհանդերձ, նշված ոլորտում գործառույթների իրականացման ընթացքում ի հայտ են գալիս որոշակի կազմակերպական և օրենսդրական խնդիրներ, որոնք լուծելու ուղղությամբ գործադրվում են բոլոր ջանքերը:

4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2020թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 3352 գործ՝ 4166 անձի վերաբերյալ (2019թ.՝ 2845 գործ՝ 3926 անձի վերաբերյալ), որոնցից 3314-ը՝ 4128 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 38-ը՝ 38 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Համեմատության համար նշենք, որ 2019թ. ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 2845 գործ՝ 3926 անձի վերաբերյալ: Նշվածից հետևում է, որ 2020թ. դատարան ուղարկված գործերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 507-ով կամ 17.8%-ով, ինչը անշուշտ, պետք է դրական ցուցանիշ համարել, մանավանդ այն պայմաններում, երբ 2020թ. ՀՀ նախաքննական մարմինների կողմից քննվել է ավելի քիչ քրեական գործ, քան նախորդ տարի:

Դատարաններում քննվել և ավարտվել է 2121 քրեական գործ՝ 2427 անձի վերաբերյալ (2019թ.՝ 2004 գործ՝ 2483 անձի վերաբերյալ, 2018թ.՝ 2336 քրեական գործ՝ 2876 անձի վերաբերյալ):

Նշված քրեական գործերից 1808-ով դատապարտվել է 2038 անձ (2019թ.՝ 1511 գործով՝ 1838 անձ, 2018թ.՝ 1663 գործով՝ 2069 անձ): 35 քրեական գործով՝ 35 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2019թ.՝ 59 քրեական գործով՝ 60 անձի նկատմամբ, 2018թ.՝ 61 քրեական գործով՝ 62 անձի նկատմամբ):

2020թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2427 անձի վերաբերյալ 2121 քրեական գործից 1100-ը կամ 51.9%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 1168 անձի նկատմամբ (48.1%), 621-ը՝ միջին ծանրության (29.3%)՝ 758 անձի նկատմամբ (31.2%), 356-ը՝ ծանր (16.8%)՝ 446 անձի նկատմամբ (18.4%) և 44-ը՝ առանձնապես ծանր (2.0%)՝ 55 անձի նկատմամբ (2.3%):

2020թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 63.4%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը նվազել է 24.6%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 35.6%-ով, առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 21.4%-ով:

Դատապարտված անձանցից 43-ը եղել են անչափահասներ (2019թ.՝ 53 անձ, 2018թ.՝ 75 անձ), 142-ը՝ կին (2019թ.՝ 149 կին, 2018թ.՝ 165 կին), 217-ը՝ նախկինում դատված (2019թ.՝ 222 անձ, 2018թ.՝ 249 անձ), 28-ը՝ օտարերկրացի (2019թ.՝ 47 անձ, 2018թ.՝ 53 անձ): 5 գործով 6 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2019թ.՝ 8 գործ՝ 8 անչափահաս, 2018թ.՝ 20 գործ՝ 22 անչափահաս):

2020թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 18.9%-ով, դատապարտված կանանց թիվը՝ 4.7%-ով, իսկ նախկինում հանցանք կատարած անձանց թիվը՝ 2.3%-ով:

2020թ. ընթացքում 61 գործով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացվել է 85 անձ (2019թ. 53 գործով 85 անձ), իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 3 գործով 3 անձ (2019թ.՝ 13 գործով 13 անձ):

2020թ. ՀՀ դատարանների կողմից մասնակի արդարացվել է 1 անձ (2019թ.՝ 3 անձ), իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 5 անձ (2019թ.՝ 8 անձ):

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 31 անձ (36.5%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 26 անձ (30.6%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 23 անձ (27.0%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 5 անձ (5.9%):

ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը. մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 18 գործով արդարացվել է 25 անձ, սեփականության դեմ ուղղված հանցագործություններով՝ 10 գործով՝ 13 անձ, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ 17 գործով՝ 28 անձ, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններով՝ 9 գործով՝ 9 անձ, կոռուպցիոն հանցագործություններով՝ 7 գործով՝ 10 անձ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը. մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 1 գործով արդարացվել է 1 անձ, սեփականության դեմ ուղղված հանցագործություններով՝ 2 գործով՝ 2 անձ: Մասնավորապես, 5 գործով 6 անձի մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը),

5 գործով 7 անձի՝ 118-րդ հոդվածով (Ծեծը), 4 գործով 6 անձի՝ 177-րդ հոդվածով (Գողությունը):

2020թ. 212 քրեական գործ՝ 263 անձի վերաբերյալ կարճվել է (2019թ.՝ 375 քրեական գործ՝ 492 անձի վերաբերյալ), որոնցից 118-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 50-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 4-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 61-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 30-ը՝ այլ հիմքով:

2020թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 2.292.355.796 ՀՀ դրամ (2019թ.՝ 5.182.828.550 ՀՀ դրամ), որից 589.725.846 ՀՀ դրամ վնասը (2019թ.՝ 2.195.136.716 ՀՀ դրամ) պատճառվել է պետությանը, 16.550.507 ՀՀ դրամ վնասը՝ համայնքներին, իսկ 1.686.079.443 ՀՀ դրամ վնասը (2019թ.՝ 2.987.691.834 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 279.825.703 ՀՀ դրամ (2019թ.՝ 672.901.633 ՀՀ դրամ), որից 168.493.403 ՀՀ դրամը (2019թ.՝ 260.728.226 ՀՀ դրամ)՝ պետությանը, 13.337.907 ՀՀ դրամը՝ համայնքներին պատճառված, 97.994.393 ՀՀ դրամը (2019թ.՝ 412.173.407 ՀՀ դրամ)՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2020թ. դատարաններում քննված քրեական գործերից 1087 գործով 1202 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 51.2%-ը (2019թ.՝ 850 գործով, որը կազմում է քննված գործերի 42.4%-ը):

2020թ. դատապարտված 2038 անձից 525-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 25.8%-ը: 2019թ. 1838 անձից ազատազրկման է դատապարտվել 957-ը կամ 52.0%-ը: Ինչպես 2019 թվականին, այնպես էլ 2020 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 19 անձ (2019թ.՝ 16 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց մեջ 0.9%-ը:

Տուգանքի է դատապարտվել 945 անձ (2019թ.՝ 525 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 46.4%-ը:

548 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 26.9%-ը, նշանակված պատիժը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2019թ.՝ 338 անձի կամ 18.4%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 181-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 198-ը՝ միջին ծանրության, 160-ը՝ ծանր, 9-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

2020թ. դատապարտված 5 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2019թ.՝ 7 անձի, 2018թ.՝ 8 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2020թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 15 անձ (2019թ.՝ 10), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 342 անձ դատապարտվել է ազատազրկման (2019թ.՝ 609):

2020 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 296 վերաքննիչ բողոք, որոնցից 5-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 2-ը վարույթ չի ընդունվել: Բերված բողոքներից 61-ը կամ 20.1%-ը եղել է արդարացման (2019թ.՝ 70 կամ 21.5%), 9-ը կամ 3.0%-ը՝ կարճման (2019թ.՝ 7 կամ 2.1%), 250-ը կամ 84.5%-ը՝ պատժի մեղմության (2019թ.՝ 262 կամ 80.3%), 2-ը կամ 0.7%-ը՝ պատժի խստության (2019թ.՝ 5 կամ 1.5%), 15-ը կամ 5.0%-ը՝ արարքի վերաորակման (2019թ.՝ 19 կամ 5.8%) դեմ, իսկ 67-ը կամ 22.6%-ը (2019թ.՝ 75-ը կամ 23.0%)՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 44-ը կամ 14.9%-ը բավարարվել է, 163-ը կամ 55.1%-ը մերժվել է, 5-ով կամ 1.7%-ով կայացվել է այլ որոշում, 167-ով կամ 56.4%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 423-ն են, որոնցից 2-ը հետ է վերցվել, 1-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 1-ը կամ 0.2%-ը եղել է արդարացման, 7-ը կամ 1.7%-ը՝ պատժի մեղմության դեմ, 338-ը կամ 79.9%-ը պատժի խստության դեմ, 1-ը կամ 0.2%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 73-ը կամ 17.3%-ը՝ այլ հիմքով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 41-ը կամ 9.7%-ը, 29-ը կամ 9.9%-ը բավարարվել է մասնակի, 176-ը կամ 41.6%-ը մերժվել է, 4-ով կամ 0.9%-ով կայացվել է այլ որոշում, 170-ով կամ 40.2%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2020 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 65 (2019թ.՝ 131) վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 12 (2019թ.՝ 15) բողոքից 12-ով (2019թ.՝ 38) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 39-ով (2019թ.՝ 88) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 26-ն (2019թ.՝ 20) ընդունվել է վարույթ, որոնցից 15-ը (2019թ.՝ 7) բավարարվել է, 7-ի (2019թ.՝ 11) քննությունն ընթացքի մեջ է, իսկ 3-ը մերժվել է (2019թ.՝ 2):

Պետք է նշել, որ 2020թ. ընթացքում ևս ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից վճռաբեկ բողոքներով, ըստ էության, բարձրացվել են ոչ միայն կոնկրետ գործերով ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումների հարցերը, այլև առավելապես նպատակ է հետապնդվել ապահովել և զարգացնել նախադեպային իրավունքը՝ հիմնվելով իրավունքի գերակայության, իրավունքի միատեսակ կիրառության, իրավական որոշակիության ու կանխատեսելիության սկզբունքների վրա:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը ոչ բոլոր դեպքերում է, մեր գնահատմամբ, նույն մտահոգությամբ արձագանքել՝ լիարժեք չապահովելով կոնկրետ բողոքների հիման վրա գործնականում առկա իրավական անորոշությունը, իրավական նորմերի տարրնթերցումների վերացումը:

Բազմաթիվ խնդիրներ, որոնք ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ներկայացվել ու մանրամասն վերլուծության են ենթարկվել վճռաբեկ բողոքներում և միտված են եղել հակասական իրավակիրառական պրակտիկայի վերացմանը, օրենքի միատեսակ կիրառման, իրավական որոշակիության և կանխատեսելիության ապահովմանը, իրավունքի զարգացմանը, վճռաբեկ դատարանի կողմից քննարկման առարկա չեն դարձել /բերված բողոքները վարույթ չեն ընդունվել/ և դեռևս շարունակում են մնալ չլուծված: Այսպես.

1. Արձանագրվում են դեպքեր, երբ դատարանները դատախազին չեն դիտարկում որպես հեռախոսային խոսակցությունները լսելու և ծայնագրառելու թույլտվություն ստանալու միջնորդություն ներկայացնելու իրավասու սուբյեկտ: Դատարանները գտնում են, որ դատախազի՝ համապատասխան քննչական գործողություններ կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն ներկայացնելու քրեադատավարական իրավասությունը դուրս է ՀՀ Սահմանադրությամբ դատախազին վերապահված՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթի շրջանակից:

Գտնում ենք, որ նման մեկնաբանություններով դատարանները անհիմն կերպով սահմանափակում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես, այդ օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, դատախազին վերապահված այն լիազորության իրականացումը, համաձայն որի նա իրավունք ունի նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու միջնորդությամբ դիմել դատարան: Բացի այդ, նման եզրահանգում անելով, դատարանները, ըստ էության, իրենց վերապահելով Սահմանադրական դատարանի գործառույթ, որոշում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կոնկրետ նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Նշված հանգամանքը հիմնավոր կերպով ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան ուղարկված վճռաբեկ բողոքում, մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Ընդ որում, գործնականում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ դատախազի ներկայացրած միջնորդության բավարարման արդյունքում, հատկապես հեռախոսային խոսակցությունների վերահսկման շնորհիվ, ձեռք են բերվել գործի համար էական նշանակություն ունեցող, օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը նպաստող, գործի ելքը կանխորոշող փաստական տվյալներ:

2. ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է նաև այն իրավական հարցը, թե հիմնավոր է արդյոք Վերաքննիչ քրեական դատարանի կողմից արված հետևությունն առ այն, որ մեղադրյալի՝ մեկ այլ գործով գրավը որպես խափանման միջոց կիրառված լինելու պայմաններում ենթադրյալ հանցանք կատարելու մեջ մեղադրվելու հանգամանքը, անմեղության կանխավարկածի հաշվառմամբ, մեղադրյալի մոտ հանցավոր հակումների առկայության մասին հետևություն անելու համար իրավաչափ ու ողջամիտ հիմք չի կարող հանդիսանալ:

Քննիչի կողմից առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերում առկա են եղել համապատասխան տեղեկություններ և փաստեր, որոնք թույլ են տվել հիմնավորված ենթադրություն կատարելու առ այն, որ ազատության մեջ մնալով մեղադրյալը կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված նոր արարք: Նման եզրահանգման հիմքում ընկած են հետևյալ փաստերը և տեղեկությունները.

1. Անձին վերագրվում է մեկ այլ քրեական գործով որպես խափանման միջոց գրավ ընտրված լինելու պայմաններում միջին ծանրության հանցագործության կատարում, որպիսի հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի իմաստով էական է մեղադրյալի կողմից նոր հանցանք կատարելու ռիսկը գնահատելու հարցում:

2. Անձին վերագրվող հանցագործության բնույթը, վտանգավորության աստիճանը և ակնկալվող պատժի խստությունը (անձին վերագրվում է արդարադատության դեմ ուղղված միջին ծանրության հանցագործության կատարում, որի համար նախատեսված է նաև ազատազրկման ձևով պատիժ մեկից հինգ տարի ժամկետով):

Վերը նշված առաջին հանգամանքի կապակցությամբ անհիմն և անընդունելի է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի մոտեցումն առ այն, թե իբր այդ հանգամանքի գնահատմամբ քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկն առկա համարելու դեպքում խախտվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Գտնում ենք, որ Վերաքննիչ քրեական դատարանի նման մոտեցումը խիստ ձևական է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործով ամբաստանյալի կողմից (ու՛մ նկատմամբ դատարանի կողմից կիրառված կալանավորումը փոխարինվել է գրավով) քրեական օրենքով չթույլատրված մեկ այլ արարքի կատարումը բավարար փաստ է՝ առկա գնահատելու անձի մոտ հանցավոր հակումները և, ըստ այդմ, հավանականությունը, որ, ազատության մեջ մնալով, նա կկատարի քրեական օրենքով չթույլատրված արարք: Նախկինում կատարած արարքի համար օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի պարտադիր առկայության պահանջ առաջ քաշելով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն անհարկի բարձրացրել է մեղադրյալի կողմից քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկը գնահատելու սանդղակը՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկը գնահատելիս մեկ այլ քրեական գործով մեղադրյալի դատավարական կարգավիճակում գտնվելու պայմաններում քրեական օրենքով չթույլատրված նոր արարքի կատարման փաստը հաշվի առնելն ունի բացառապես քրեադատավարական, այլ ոչ թե քրեաիրավական նշանակություն: Այլ կերպ ասած՝ տվյալ հանգամանքը գնահատվում է բացառապես քրեադատավարական հարկադրանք կիրառելու անհրաժեշտության մասին հարցը գնահատելու շրջանակներում, այլ ոչ թե քրեաիրավական ներգործության միջոց կիրառելու հարցը որոշելիս, և այդ հանգամանքը գնահատվում է բացառապես որպես մեղադրյալի անձը բնութագրող հանգամանք: Ի հիմնավորումն ասվածի՝ բերենք օրինակ այնպիսի իրավիճակի մասին, երբ մեղադրյալին կարող է վերագրվել նաև միևնույն գործով միաժամանակ մի քանի հանցանքների կատարում, որպիսի հանգամանքը քրեական հետապնդման մարմինների և դատարանների կողմից չի կարող հաշվի չառնվել որպես մեղադրյալի կողմից ազատության մեջ մնալու դեպքում քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկի մասին վկայող բավարար փաստ: Մինչդեռ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում, բերված օրինակում, քանի դեռ ժամանակագրական առումով առավել վաղ կատարած արարքների համար մեղադրյալն օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի դատապարտվել, այդ արարքների կատարման մասին հիմնավոր կասկածի շեմը և ընդհուպ մեղադրյալ ներգրավելու շեմը հաղթահարած փաստական տվյալները բավարար չեն մեղադրյալի կողմից քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու ռիսկն առկա գնահատելու համար, որպիսի մոտեցումը, ինչպես արդեն նշել ենք, խիստ ձևական է և չի համապատասխանում դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու հիմնավորվածության ապացուցողական չափանիշին:

Այս դեպքում ևս ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունել:

3. Մեկ այլ գործով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, նշել է, որ «ինչ վերաբերում է մեղադրյալի կողմից քրեական օրենքով արգելված արարքի կատարման հավանականությանը, ապա այդ կանխատեսումը վարույթն իրականացնող մարմինն ըստ էության կապել է մեղադրյալի նախկինում դատապարտված լինելու հանգամանքի հետ, ինչը դատարանի համոզմամբ իրատեսական չէ, քանի որ մեղադրյալը մեղավոր է ճանաչվել ուրիշի գույքի գաղտնի հափշտակության փորձ կատարելու համար, և այդ փաստը բավարար չէ մտավախություն ունենալու համար, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ մեղադրվող անձը կարող է կատարել քրեական օրենքով արգելված արարք, քանզի նրա կատարած արարքը և մեղսագրվողը համասեռ հանցագործություններ չեն»: Համանման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը:

Համամիտ չլինելով այսպիսի դիրքորոշումների հետ և հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի ուղենիշային որոշումների ընդհանուր մոտեցումների վրա, ներկայացվել է վճռաբեկ բողոք, այն պատճառաբանությամբ, որ դատարանների այն դիրքորոշումը, թե նախկին հանցանքը, որի համար անձը դատապարտվել է, նոր մեղսագրվող արարքի հետ համասեռ չէ, ուստի հավանականությունը բարձր չէ, որ նա կարող է կատարել նոր հանցանք, բացարձակ անհիմն է, քանի որ նոր հանցանքի կատարման հավանականությունը գնահատելիս հանցանքների համասեռ լինելու հանգամանքը որևէ նշանակություն ունենալ չի կարող: Նման պայմաններում ենթակա է գնահատման քրեական օրենքով արգելված արարք կատարելու փաստը՝ անկախ հանցանքի բնույթից: Այսինքն, անձի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը պետք է կանխատեսել ոչ թե կատարված հանցանքների միասեռ բնույթով, այլ դրանց փաստով:

Այլ կերպ ասած՝ նախկինում հանցանք կատարած լինելը, դատվածությունը չմարված վիճակում հանցանք կատարելը՝ որպես անձը բնութագրող տվյալ՝ կարևոր ու էական նշանակություն ունի անձի հետագա վարքագիծը և, մասնավորապես, նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս՝ անկախ այդ հանցավոր արարքների համասեռ լինելու կամ չլինելու հանգամանքից, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալ հանգամանքները փաստում են անձի կողմից հանցագործություններ, կատարելու հակվածության մասին, հստակ վկայում են, որ հանցագործություն կատարելը մեղադրյալի համար խորթ չէ և ողջամիտ կասկած են առաջացնում նրա կողմից այլ՝ նոր հանցանքներ կատարելու:

Գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելը և ըստ էության որոշում կայացնելը էական նշանակություն կունենար վերոնշյալ խնդրի լուծման հարցում և կապահովեր օրենքի միատեսակ կիրառման՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթը, մինչդեռ ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվել է:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների բողոքների հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից կայացվել են բազմաթիվ նախադեպային որոշումներ, որոնք լուծել են գործնականում առկա մի շարք իրավական անորոշություններ, վերացրել

են իրավական նորմերի տարընթերցումները՝ ապահովելով իրավական որոշակիությունը: Մասնավորապես,

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԴ1/0002/11/18 քրեական գործով 2020 թվականի մայիսի 25-ին կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն իրավասու՞ է մասնակցելու մինչդատական քրեական վարույթն ավարտող՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության վիճարկման ընթացակարգում, եթե այդ որոշման դեմ բերված բողոքը մերժվել է վերադաս դատախազի կողմից:

Այս իրավական խնդրի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հետևյալն է.

□... դատարանների դատական ակտերը բողոքարկելու իրավասությամբ դատախազության միասնական համակարգում օժտված են դատավարությանը մասնակցած դատախազները, որոնք նաև լիազորված են մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնել, և հետագայում, գործը դատարան ուղարկելու դեպքում, որպես կանոն, հենց իրենք էլ իրականացնում են դատարանում մեղադրանքի պաշտպանությունը և հանդես գալիս որպես մեղադրող: Այսինքն՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի իրավական կարգավիճակը քրեական գործը դատարան ուղարկելու հետ մեկտեղ վերաճում է մեղադրողի իրավական կարգավիճակի: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում «դատախազ» և, «մեղադրող» եզրույթներն ամրագրում է որպես համասեռ հասկացություններ և «մեղադրող» եզրույթը փակագծերի մեջ ներառելով, ըստ էության, այն դիտարկում որպես «դատախազ» եզրույթի այլընտրանք:

Բացի այդ, քրեական դատավարությունում «մեղադրող» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելնել նաև այդ եզրույթի ընդհանուր հասկացությունից (*«generalia verba sunt generaliter intelligenda»* իրավամեկնաբանման հնարք): Այսինքն՝ «մեղադրող» եզրույթը պետք է մեկնաբանել նաև հաշվի առնելով դրա՝ ընդհանուր առմամբ ընկալելի բուն իմաստը: Այդ առումով «մեղադրող» եզրույթը մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մեղադրող ընդհանուր առմամբ նախևառաջ հանդիսանում է դատախազ (ինչպես, օրինակ, յուրաքանչյուր պաշտպան նախևառաջ հանդիսանում է փաստաբան): Այլ կերպ, յուրաքանչյուր մեղադրողի «բազային» կարգավիճակը ներառում է դատախազ լինելու պայմանը: Այդ համատեքստում պետք է հաշվի առնել, որ դատախազի և մեղադրողի դատավարական կարգավիճակները՝ իրենց սահմանադրական գործառնություններով և դատավարական լիազորություններով ըստ էության նույնանում են՝ այն տարբերությամբ, որ, պայմանավորված դատավարական փուլերով, մեղադրողը հանդես է գալիս դատարանում՝ մեղադրանքը պաշտպանելու սահմանադրական գործառնություն իրացնելիս: Սակայն, բոլոր դեպքերում, թե՛ դատախազը, թե՛ մեղադրողն օժտված են դատական ակտերի բողոքարկման անսահմանափակ իրավունքով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում՝ Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող մեղադրողի դատավարական կարգավիճակի ներքո պետք է դիտարկել

նաև այն դատախազին, որը հսկողություն է իրականացրել քրեական գործով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ և, հետագայում, քրեական գործը դատարան ուղարկելիս, որպես կանոն, նշված գործերով հանդես է գալու մեղադրողի դատավարական կարգավիճակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ մեղադրողի դատավարական կարգավիճակի ներքո պետք է դիտարկել նաև այն դատախազին, որը թեև հսկողություն չի իրականացրել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, սակայն վերադաս դատախազի կողմից լիազորված է եղել մասնակցելու դատավարությանը, որպիսի պայմաններում, որպես դատավարությանը մասնակցող դատախազ, օրենքի ուժով (*ex lege*) լիազորված է վերաքննիչ բողոք բերել Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ և արտահայտել իր անհամաձայնությունը՝ իր մասնակցությամբ տեղի ունեցած դատավարության արդյունքում կայացված դատական ակտի հետ:՝

2. ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԱՐԴ1/0077/01/17 գործով որոշմամբ, քննարկման առարկա դարձնելով այն հարցը, թե իրավաչափ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատժաչափ սահմանելու վերաբերյալ ստորադաս դատարանի հետևությունը, նշել է, մասնավորապես, հետևյալը.

՝... չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելիս դատարանը դարձյալ կաշկանդված է օրինականության, արդարության և պատժի անհատականացման ընդհանուր սկզբունքներով, ուստի պատիժ նշանակելու քննարկվող հատուկ կանոնը չի կարող ընդհանուր սկզբունքներից որպես բացառություն դիտարկվել. պատիժ նշանակելու վերոնշյալ ընդհանուր և հատուկ կանոնները հնարավորինս պետք է կիրառվեն համակցված՝ հաշվի առնելով, բնականաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունները: Այսպես՝ չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնով սահմանվել է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայի առավելագույն չափի իմպերատիվ մեղմացման պահանջ, միևնույն ժամանակ, սակայն, հոդվածի սանկցիայի նվազագույն չափի առումով որևէ հատուկ կարգավորում չի նախատեսվել: Նման պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով ամրագրված՝ օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում պատիժ նշանակելու ընդհանուր կանոնը, ինչպես նաև պատիժ նշանակելու գործընթացում օրինականության սկզբունքը երաշխավորելու անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ չավարտված հանցագործությունների դեպքում մեղսագրվող արարքի համար նշանակվող պատժաչափը պետք է որոշվի՝ ելնելով Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն սահմանի և օրենքի ուժով մեղմացված վերին սահմանի հարաբերակցությունից: Հետևաբար, չավարտված հանցագործությունների դեպքում օրենսդրի կողմից հոդվածի սանկցիայի նվազագույն չափի առումով հատուկ կարգավորում չնախատեսելը չի կարող մեկնաբանվել այնպես, որ չավարտված հանցագործության դեպքում դատարանը կարող է նշանակել տվյալ պատժատեսակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով սահմանված նվազագույն չափից մինչև ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի առավելագույն

սահմանի կեսը կամ երեք քառորդը: Վճռաբեկ դատարանի համոզմամբ վերոնշյալ մոտեցումը ճիշտ չի արտացոլում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների և հատուկ կանոնների հարաբերակցությունը, հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով երաշխավորված օրինականության սկզբունքին: Ուստի, չավարտված հանցագործության, մասնավորապես՝ հանցափորձի դեպքում պատիժ նշանակելիս, որպես ելակետ պետք է ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի մի կողմից՝ նվազագույն շեմը, մյուս կողմից՝ երեք քառորդով կրճատված առավելագույն շեմը:

3. ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԳՂ5/0004/01/16 քրեական գործով որոշմամբ անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի տարրերին՝ արտահայտելով ուղղորդիչ նշանակություն ունեցող հետևյալ իրավական դիրքորոշումները.

13.1. Քննարկվող հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը հանրային իշխանության համակարգի որևէ օղակի նորմալ գործունեությունն է: Միաժամանակ, քննարկվող հանցակազմն ունի նաև լրացուցիչ օբյեկտ՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական և այլ շահերը: 13.2. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմն իր մեջ ընդգրկում է երեք պարտադիր հատկանիշ՝

ա) պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը հակառակ ծառայության շահերի օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը,

բ) հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս հասցնելու ձևով,

գ) պատճառական կապն արարքի և հետևանքների միջև:

13.3. Պաշտոնեական դիրքի օգտագործումը, նախ, կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայության շահերի իրականացնելով: Պաշտոնատար անձի լիազորությունները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով: Հետևաբար, որպես պաշտոնեական լիազորությունների օգտագործում պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից: Միևնույն ժամանակ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ այդ լիազորություններն օգտագործվեն հակառակ ծառայության շահերի, այսինքն՝ կատարվող արարքը չպետք է բխի ծառայողական անհրաժեշտությունից: Ընդ որում, որպես ծառայության շահեր պետք է դիտարկել ոչ միայն այն պետական մարմնի, հիմնարկի, կազմակերպության կամ ձեռնարկության շահերը, որտեղ աշխատում է տվյալ պաշտոնատար անձը, այլև առհասարակ հանրային կառավարման համակարգի շահերը:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև պաշտոնից բխող հեղինակությունն օգտագործելով, երբ պաշտոնատար անձը, իր հեղինակությունն օգտագործելով, ներգործում է մեկ ուրիշ անձի վրա՝ դրդելով նրան հանցանքի կատարման: Այս պարագայում նրա արարքը պետք է որակել որպես համապատասխանաբար պաշտոնեական լիազորությունների չարաշահում և այն հանցագործության դրդչություն, որի կատարմանը նա դրդել է:

13.4. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանրորեն վտանգավոր հետևանքները: Քննարկվող հանցակազմի դեպքում այդպիսի հետևանք է համարվում անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասը: Էական վնասը կարող է դրսևորվել ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնասի ձևով:

Այդպիսի վնաս կարող են համարվել մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը, իշխանության մարմինների հեղինակազրկումը, նրանց գործունեության խաթարումը, հասարակական կարգի խախտումը, խոշոր չափերի հափշտակությունների կամ այլ ծանր հանցագործությունների պարտակումը և այլն:

Ոչ գույքային վնասի էական լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել քաղաքացիներին, հասարակությանը և պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած քաղաքացիների քանակը, ոտնահարված իրավունքների ու ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության նորմալ գործունեության խաթարման աստիճանը և այլն:

13.5. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով: Ընդ որում, նշված հանցանքը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում որպես այդպիսին նշված են շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը՝ շահադիտական շարժառիթից ելնելով, որպես կանոն, դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու համար կատարելով:

Անձնական այլ շահագրգռվածությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով: Դրա հիմնական դրսևորումներն են՝ ապօրինի վարքագծի վրա հիմնվող կարիերիզմը, հովանավորչությունը, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, փոխադարձ ծառայություն ստանալու, տեղի ունեցած իրավախախտումներն ու հանցագործությունները թաքցնելու ցանկությունը և այլն: Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև ծառայության շահի կեղծ ընկալումը, երբ պաշտոնատար անձն արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքն աշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Բայց, եթե նման դեպքերում պաշտոնատար անձի արարքը հակասում է առհասարակ հանրային կառավարման համակարգի բնականոն գործունեության շահերին, ապա քննարկվող հանցակազմն առկա է:

Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել անձանց միավորումների շահերը պաշտպանելու ցանկության ձևով:

13.6. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում ծանրացնող հանգամանքներում պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար: Որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացնելը:

Հարկ է նշել, որ «Ծանր հետևանքներ»-ն արժեքավորվող հասկացություն է: Ծանր հետևանքներ կարող են համարվել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, խոշոր արտադրական կամ այլ բնույթի վթարը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի երկարատև խափանումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատանքի կազմալուծումը, առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը, մարդու մահը կամ առողջությանը ծանր վնաս հասցնելը և այլն:

4. Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է սպանության փորձի և սպանության սպառնալիքի հանցակազմերի տարանջատման խնդրին՝ արձանագրելով հետևյալը.

□ ... սպանության փորձի և սպանության սպառնալիքի հանցակազմերի տարանջատման համար առանցքային նշանակություն ունի հանցավորի դիտավորության ուղղվածությունը պարզելը: Այլ կերպ՝ հիշյալ հանցակազմերը սահմանազատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հանցավորի կողմից ձեռնարկված գործողություններն ուղղված են տուժողին կյանքից զրկելուն, թե՞ սահմանափակվում են միայն այս կամ այն կերպ սպառնալիք տալով՝ նպատակ ունենալով վնաս պատճառել տուժողի հոգեկան առողջությանը, նրա մոտ սեփական կյանքի համար տազնապի զգացողություն առաջացնել: Իսկ նշված հարցի լուծումը պահանջում է համակցության մեջ վերլուծել գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ հանցագործության կատարման եղանակը, օգտագործված գործիքները, ենթադրյալ հանցանք կատարած անձի և տուժողի միջև առկա փոխհարաբերությունների բնույթը և այլն (2020 թվականի մայիսի 26 թիվ LՂ2/0056/01/16 որոշում):

5. 2011 թվականին կատարված առերևույթ հանցագործության դեպքի առթիվ 17.08.2018թ. ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործով ևս ՀՀ դատախազության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 2020թ. հոկտեմբերի 28-ին կայացրել է քրեադատավարական պրակտիկայի բարելավման և հստակեցման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող որոշում (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/3085/07/19 որոշում):

Նշված քրեական գործով մեղադրանք էր առաջադրվել մեկ անձի, որը չէր համաձայնել ոչ արդարացնող՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործի վարույթը կարճելուն, քրեական հետապնդումը դադարեցնելուն և չէր ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը: Ընդհանուր կարգով շարունակված քննության ընթացքում նախաքննական մարմնի կողմից միջնորդություններ են ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ գործով մեղադրյալի տանը, կից շինություններում, ինչպես նաև աշխատասենյակում, խուզարկություններ կատարելու թույլտվություն ստանալու մասին, սակայն դատարանը մերժել էր դրանք:

Այդ որոշումների դեմ դատախազության կողմից բերվել էր վերաքննիչ բողոք, որը ՀՀ Վերաքննիչ դատարանի 2020թ. հունվարի 10-ի որոշմամբ մերժվել է:

Դատարաններն իրենց որոշումը հիմնականում պատճառաբանել էին նրանով, որ ենթադրյալ հանցագործության դեպքի կապակցությամբ առկա է քրեական գործով վարույթը բացառող առերևույթ հանգամանք՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը: Իսկ նման պայմաններում բնակարանում/աշխատասենյակում խուզարկություն կատարելը կդիտվի անհամաչափ միջամտություն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու

ազատությունների, մասնավորապես, բնակարանի և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը գտել էր, որ այն դեպքում, երբ առկա է վարույթը բացառող հանգամանք, սակայն առերևույթ հանցանք կատարած անձը համաձայն չէ այդ հիմքով վարույթը կարճելուն և քրեական հետապնդումը դադարեցնելուն, քննությունը պետք է իրականացվի այնպիսի մեթոդների և գործիքակազմի գործադրմամբ, որոնց կիրառումը չի ենթադրում անձի իրավունքների ու օրինական շահերի անհամաչափ միջամտություն:

Չհամաձայնելով ստորադաս դատարանների վերոնշյալ իրավական մոտեցումների հետ՝ ՀՀ գլխավոր դատախազությունը կայացված որոշումների դեմ ներկայացել էր վճռաբեկ բողոք, որն ընդունվել էր վարույթ:

Ղատախազությունը ելել է այն դիրքորոշումից, որ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ միջամտությունը չի կարող անհամաչափ գնահատվել զուտ այն փաստի ուժով, որ առերևույթ անցել են անձին պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Այն պայմաններում, երբ մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչել առաջադրված մեղադրանքում և համաձայնություն չի տվել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով վարույթը կարճելուն, վերջինիս վերագրվող արարքն ապացուցված համարելու, նրա մեղավորությունը կամ անմեղությունը հաստատելու համար պահանջվում է կատարել լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ, այդ թվում՝ խուզարկություն վերջինիս բնակավայրում կամ աշխատավայրում: Մինչդեռ ստորադաս դատարանների կայացրած նման որոշումների արդյունքում վարույթն իրականացնող մարմինը զրկվում է այդ հնարավորությունից: Ղատարանների վերոնշյալ հիմնավորումների ընդունման դեպքում, նմանատիպ իրավիճակներում վարույթն իրականացնող մարմինը պետք է զրկվի մի շարք քննչական ու դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից, օրինակ՝ դատարան ներկայացնել նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունները լսելու վերաբերյալ միջնորդություններ կամ առգրավել բանկային կամ ստանալ նոտարական գաղտնիք պարունակող տեղեկություններ, քանի որ դրանք ևս այս կամ այն կերպ միջամտում են անձի անձնական կյանքի գաղտնիությանը:

Քննության առնելով դատախազության բողոքները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը լիովին համաձայնել է վերջինիս իրավական դիրքորոշումների հետ: Մասնավորապես, դատարանն ընդգծել է, որ այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործության դեպքի կապակցությամբ առկա է քրեական գործով վարույթը բացառող՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքը, սակայն մեղադրյալը համաձայնություն չի տվել այդ հիմքով վարույթը կարճելուն, վարույթը պետք է շարունակվի ընդհանուր կարգով, քրեադատավարական հնարավոր բոլոր միջոցներով պետք է կատարվի օբյեկտիվ, լրիվ և բազակողմանի քննություն՝ վերջնական դատավարական որոշում կայացնելու համար: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ այս պայմաններում մեղադրյալի համար կանխատեսելի է, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված բոլոր քննչական և դատավարական գործողությունները, որոնք ուղղված են անձի մեղքի ապացուցմանը, կարող են կատարվել: Այսինքն՝ վաղեմությունն անցնելու հիմքով վարույթի դադարեցման դեմ առարկելով՝ մեղադրյալն ընդունում է իր որոշ իրավունքների հնարավոր սահմանափակման, իսկ արդյունքում նաև՝ իր մեղավորության հաստատման ռիսկը:

Համաձայնելով նաև մյուս պատճառաբանությունների վերաբերյալ դատախազության դիրքորոշումների հետ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանի հետևությունները իրավաչափ չեն:

Ելնելով դրանից՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ գլխավոր դատախազության բողոքները բավարարել է մասնակիորեն, բեկանել է ստորադաս դատարանների վերոնշյալ որոշումները և գործն ուղարկել է ՀՀ վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

6. 2019թ. մարտի 14-ին հարուցված քրեական գործով Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2020թ. հունվարի 31-ի դատավճռով «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ.Գևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 314-րդ հոդվածի 1-ին մասով: Դատարանը հիմնավորված է համարել, որ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենը, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախկին ղեկավարի դրդմամբ և երկու անձի օժանդակությամբ, վատնման միջոցով ՀՀ պետական բյուջեի՝ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցներից 2011թ. փետրվարից 2016թ. մարտն ընկած ժամանակահատվածում հափշտակել է խոշոր չափերի՝ 2,515,490 ՀՀ դրամ գումար, իսկ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու և կեղծ փաստաթուղթ կազմելու միջոցով կատարել է պաշտոնեական կեղծիք: Դատավճռով Գ. Գևորգյանի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ ընդհանուր 700.000 ՀՀ դրամի չափով, կիրառվել է համաներում, և նա ազատվել է նշանակված պատժից: Նույն դատավճռով դատապարտվել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի վարորդ Ա. Բարսեղյանը:

Դատավճռի դեմ ՀՀ դատախազությունը բերել է բողոք՝ կապված Գ.Գևորգյանի նկատմամբ հիմնական պատժի՝ տուգանքի հետ միաժամանակ լրացուցիչ պատիժ, այն է՝ որոշակի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը չկիրառելու հետ:

Դատախազության իրավական դիրքորոշումը վերոնշյալի կապակցությամբ այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանությունից և պատիժ նշանակելու սկզբունքներից բխում է, որ այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով որպես հիմնական պատիժ նախատեսված է տուգանք և ազատազրկում, իսկ որպես պարտադիր լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, այդ լրացուցիչ պատժատեսակը վերաբերելի է ինչպես տուգանքին, այնպես էլ ազատազրկմանը: Ելնելով դրանից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված Ստուգանք պատժատեսակի հետ պարտադիր պետք է կիրառվի նաև լրացուցիչ պատիժը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը:

ՀՀ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ մերժել էր դատախազության բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը: Վերաքննիչ դատարանն իր այս որոշումը հիմնավորել է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի սանկցիայի ձևակերպմամբ՝ «...պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի

ժամկետով»։ Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի՝ նման լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ հիմնական պատիժ է նշանակվում ազատազրկումը։

Այս որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազը վճռաբեկ բողոք է բերել, որն ընդունվել է վարույթ և քննության առնվել։ Արդյունքում, ըստ էության, համաձայնվելով ՀՀ դատախազության իրավական դիրքորոշումների հետ ՀՀ Վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային և կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի տեսանկյունից կարևոր որոշում։

Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու լրացուցիչ պատժատեսակի նշանակման կարգի առումով առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր։ Հետևաբար, բոլոր դեպքերում անհրաժեշտ է առաջնորդվել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ օրինականություն, արդարություն, պատժի անհատականացում, մարդասիրություն, և պատժի նպատակներին հասնելու օրենսդրական կարգադրանքով։

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ եթե հանցավոր արարքն իր բնույթով կապված է անձի զբաղեցրած պաշտոնի կամ նրա կողմից իրականացվող մասնագիտական կամ այլ գործունեության հետ, ապա վերոնշյալ լրացուցիչ պատժատեսակի նշանակմամբ էականորեն նվազում է հետագայում վերջինիս կողմից նույնաբնույթ հանցանք կատարելու հավանականությունը։ Այսինքն՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ունի կանխարգելիչ նշանակություն։ Իսկ այդ լրացուցիչ պատժատեսակի իրավական կարգավորումներից ակնհայտ է, որ այն կարող է նշանակվել ինչպես ազատությունից զրկելու հետ կապված, այնպես էլ զրկելու հետ չկապված պատիժների հետ զուգակցված։

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ բավարարել է ՀՀ գլխավոր դատախազի բողոքը, լրացուցիչ պատժի մասով բեկանել է ամբաստանյալ Գ.Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ հաշվի առնելով իր կողմից արտահայտված վերոնշյալ նախադեպային իրավական մեկնաբանությունները։

Պետք է նշել, որ առկա են նաև մի շարք խնդրահարույց հարցեր, որոնց վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից 2020թ. ընթացքում բերվել են վճռաբեկ բողոքներ, դրանք դատարանի կողմից ընդունվել են վարույթ, սակայն դրանցով դեռևս վերջնական որոշումներ չկան։

Մասնավորապես, դատական պրակտիկայի առումով կարևոր նշանակություն ունի քրեական գործերով վարույթի ընթացքում այն վկաների իրավունքների շրջանակի ճշգրտումը, որոնք հարցաքննվում են վկայի դատավարական կարգավիճակով, սակայն, ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով պայմանավորված, հարցաքննությունների ընթացքում նրանց պարզաբանվում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված կասկածյալի իրավունքները։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում դատարանների կողմից կասկածի շուրջ հարցաքննված վկաների իրավունքների շրջանակն արհեստականորեն ընդլայնվում է և մեկնաբանվում այնպես, որ նման դեպքերում վկան ոչ միայն կոնկրետ հարցաքննության ընթացքում կարող է օգտվել կասկածյալի՝ իր դեմ չվկայելու իրավունքից, այլ նաև կասկածյալի՝ ամբողջ ծավալով իրավունքներից ողջ քրեական վարույթի

ընթացքում: Մասնավորապես՝ այդպիսի դիրքորոշում հայտնել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը՝ 2020 թվականի ապրիլի 7-ին կայացրած թիվ ԵՂ/0009/11/20 գործով որոշմամբ:

Նշված դատական ակտի դեմ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2020թ. հուլիսի 2-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որով, ի թիվս այլնի, բարձրագույն դատական ատյանի առջև հարց է բարձրացվել, թե արդյոք վկային հարցաքննելիս նրան Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Էկլեն ընդդեմ Գերմանիայի թիվ 8130/78 վճռով և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Նորիկ Պողոսյանի գործով թիվ ՀՅԲՐԴ/0153/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով, կասկածյալի իրավունքների ու պարտականությունների մասին ծանուցելը ինքնին հանգեցնում է տվյալ անձի՝ կասկածյալի դատավարական կարգավիճակ ձեռք բերելուն, դրանից բխող իրավունքների ապահովմանը:

Վճռաբեկ դատարանի 2020թ. հոկտեմբերի 5-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ, սակայն դեռևս վերջնական որոշում չի կայացվել:

Միաժամանակ, հարկ է նշել, որ մեղադրանքի պաշտպանության ոլորտում աշխատանքների ընթացքում շարունակում են արդիական մնալ մի շարք խնդիրներ, որոնք հրատապ քննարկման և համարժեք լուծումների կարիք ունեն:

Մասնավորապես, չափազանց կենսական խնդիր է քրեական գործերով դատական քննության ձգձգումները, ինչը, բացի այն, որ հանգեցնում է դատավարության մասնակիցների իրավունքների խախտման, արդարադատության գործընթացի անարդյունավետության, նաև առաջացնում է հանրային արդարացի դժգոհություն:

ՀՀ դատախազության կողմից պարբերաբար իրականացվում է դատական քննության փուլում գտնվող քրեական գործերի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով, ի թիվս այլնի, ապահովելու նաև գործերի ողջամիտ ժամկետում քննությունը:

Ըստ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով: ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում դատավորների վարույթում գտնվող գործերի քննությունը չի համապատասխանում ողջամիտ ժամկետներում դատաքննության այն չափանիշներին, որոնք սահմանվել են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում (*տե՛ս, մասնավորապես, ԵԱԲԴ/0016/01/14 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշումը*):

Ավելին, ուսումնասիրությունը վկայում է նաև, որ առկա են բազմաթիվ գործեր, որոնք գրեթե մինչև հինգ տարի է, ինչ գտնվում են դատական քննության փուլում:

Մասնավորապես, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող սպանության գործով պարզվել է, որ 2016 թվականի հուլիսի 2-ին դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է նշված դատարան և դատարանում քրեական գործի ձգձգման պատճառ է հանդիսացել գործը քննող երկու տարբեր դատավորների՝ այլ դատարան տեղափոխվելը:

Մեկ այլ գործով 2016 թվականի հունիսի 3-ին դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: 2015 թվականի հոկտեմբերի 21-ից անձը գտնվում է կալանքի տակ: Նշանակված դատական նիստերից չի կայացել 14-ը՝ դատավորի՝ մեկ այլ գործով խորհրդակցական սենյակում լինելու, դատավորի կողմից դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր նշանակվելու, ինչպես նաև ռազմական դրությամբ պայմանավորված:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում տևական ժամանակ դատարանում գործերի քննության պայմաններում լրանում են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, լրացուցիչ պատիժ նշանակելու ժամկետները, ինչն առաջացնում է դատավարության մասնակիցների արդարացի դժգոհությունը: Մասնավորապես, անձը 2015 թվականի հունիսին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ Այաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա անձն ազատվել է հիմնական պատժից: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել է ներկայացված բողոքները, իսկ տուժողի իրավահաջորդի բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի հունիսին լրացուցիչ մասով բեկանել է՝ գործն այդ մասով ուղարկելով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որն էլ միայն 2018 թվականի սեպտեմբերին անձի նկատմամբ նշանակել է լրացուցիչ պատիժ՝ 2 տարի ժամկետով, սակայն ազատվել է վերջինից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Այս հանգամանքը տուժողի իրավահաջորդի կողմից վիճարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, այնուհետև՝ ՀՀ վճռաբեկ դատարանում: ՀՀ վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքը մասնակի բավարարել է՝ արձանագրելով ողջամիտ ժամկետում գործի քննության՝ տուժողի իրավահաջորդի իրավունքի խախտում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ գործով կայացված որոշման համատեքստում ուսումնասիրվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Երևան քաղաքի և մարզերի՝ դատավորների վարույթում տևական ժամանակ քննվող քրեական գործերը:

Պարզվել է, որ առանձին դեպքերում դատավորների վարույթում գտնվող գործերի քննությունը չի համապատասխանում ողջամիտ ժամկետներում գործերի քննության չափանիշներին: Ավելին՝ առանձին դեպքերում գործերի անհիմն ձգձգումները հանգեցնում են վաղեմության ժամկետները լրացած լինելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն:

Նկատի ունենալով, որ նման պրակտիկայի հետևանքով խախտվում է յուրաքանչյուր անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքը, ինչպես նաև հնարավորություն չի ստեղծվում անձանց մեղավորության հաստատման դեպքում իրականացնել պատժի նպատակները, վտանգվում է սոցիալական արդարության վերականգնման սկզբունքի իրագործումը, ՀՀ գլխավոր դատախազը գրություն է հասցեագրել Բարձրագույն դատական խորհրդին՝ առաջարկելով Բարձրագույն դատական

խորհրդի լիազորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել նշված քրեական գործերով դատական նիստերի ձգձգումների պատճառները վերահանելու, դատարանների վարույթներում տարիներով քննվող քրեական գործերով քննության ժամկետների ողջամտությունն ապահովելու ուղղությամբ և ձեռնարկված միջոցների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազություն:

Բացի այդ, ուսումնասիրության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին՝ հետևողականորեն ձեռնարկել միջոցներ՝ բացառելու աշխատանքի արդյունավետ կազմակերպման կամ որևէ այլ պատճառով դատական նիստերից դատախազների անհարգելի բացակայությունները, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում քննարկման առարկա դարձնել բացակայության պատճառները և դատախազի Սայդ թվում՝ վերադաս դատախազի՝ վարքագիծը, անհրաժեշտության դեպքում բարձրացնել դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հարկ է նշել, որ գործնական աշխատանքում առկա է դատարանների հետ կապված մեկ խնդիր ևս: Այսպես.

Դատարանի վարույթում գտնվող գործերով ամբաստանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրված լինելու դեպքում, երբ այն պաշտպանության կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ փոփոխվում է այլ խափանման միջոցով կամ վերացվում է, հետագայում այդ որոշումների դեմ դատախազների ներկայացրած բողոքները վերադաս դատարանի կողմից բավարարելու դեպքում խնդիրներ են առաջանում դատական ակտը կատարման ուղարկելու հետ կապված: Մասնավորապես՝ մի դեպքում դատարանները, ելնելով նշված հարցի վերաբերյալ քրեադատավարական օրենքի հստակ կարգավորումների բացակայությունից, նշում են, որ այն պետք է կատարման ուղարկի վերադաս դատարանը, մեկ այլ դեպքում՝ այն դատարանը, որի վարույթում գտնվում է քրեական գործը:

Ձևավորված նման պրակտիկայի պայմաններում օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության չլուծող կալանավորման վերաբերյալ դատական ակտերը տևական ժամանակ չեն կատարվում, ինչով պայմանավորված՝ հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալներին քննությունից խուսափելու և ՀՀ սահմանը հատելու:

Այսպես՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով 2020թ. ապրիլի 1-ին դատարանը պաշտպանի միջնորդությունը՝ ամբաստանյալ Վ.Ա.-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին բավարարել է, կալանավորումը փոխարինել է գրավով՝ գրավի չափ սահմանելով 15.000.000 ՀՀ դրամ:

Նշված որոշման դեմ մեղադրող դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. մայիսի 21-ի որոշմամբ բավարարվել է և գրավի կիրառումը ձանաչվել է անթույլատրելի:

2020 թվականի հունիսի 3-ին նշանակված հերթական դատական նիստի ընթացքում, մինչև դատաքննությունը սկսելը, մեղադրող դատախազը միջնորդել է դատարանին ապահովել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. մայիսի 21-ի որոշման պահանջների կատարումը, որի կապակցությամբ դատարանը կարծիք է հայտնել, որ այն կատարման ուղարկելու պարտականություն ունի այդ դատական ակտը կայացրած վերադաս դատարանը:

Մեկ այլ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով հերթական դատական նիստի ընթացքում՝ 2020թ. ապրիլի 9-ին, դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Տ.Հ.-ի պաշտպանի միջնորդությունը՝ ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ, որոշում է կայացրել միջնորդությունը բավարարելու մասին և ամբաստանյալի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանելով 10.000.000 ՀՀ դրամ:

Նշված որոշման դեմ մեղադրող դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. հունիսի 15-ի որոշմամբ բավարարվել է և գրավի կիրառումը ճանաչվել է անթույլատրելի:

2020 թվականի հունիսի 17-ին կայացված հերթական դատական նիստի ընթացքում մեղադրող դատախազը դատարանին միջնորդել է ապահովել վերաքննիչ քրեական դատարանի վերը նշված որոշման պահանջների կատարումը և ամբաստանյալին արգելանքի վերցնել դատական նիստերի դահլիճից:

Հիշյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որևէ նորմով նման պարտականություն չունի:

Նշտագայում նման իրավիճակներից զերծ մնալու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ բարձրագույն դատական խորհրդին առաջարկվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածով Բարձրագույն դատական խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում սահմանել դատարանների գործավարության կանոնները՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության չլուծող կալանքի վերաբերյալ դատական ակտերը կատարման ուղարկելու կապակցությամբ և ապահովել հիշատակված դեպքերով կալանավորման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վերադաս դատարանի որոշումների կատարումը:

Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության 2020 թվականի աշխատանքներին անդրադառնալիս հարկ ենք համարում նշել նաև, որ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրությունների հետընտրական շրջանում տեղի ունեցած իրադարձություններին առնչվող քրեական գործերի վերանայման գործընթացի շրջանակներում՝ նշված գործերով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռների դեմ նոր հանգամանքի և արդարադատության բուն էությունը խաթարող հիմնարար իրավունքների խախտման հիմքով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից բերվել է 6 բողոք (2019 թ.՝ 16 բողոք, որոնցից 13-ը ներկայացվել է վճռաբեկ դատարանին, իսկ 3-ը՝ վերաքննիչ դատարանին), որոնցից 4-ը ներկայացվել է վճռաբեկ դատարանին, իսկ 2-ը՝ վերաքննիչ դատարանին: Նշված գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցով քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը: Մասնավորապես՝ խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված՝ գործի արդարացի քննության իրավունքը, անձանց մեղադրանքների հիմքում դրվել են անթույլատրելի ապացույցներ: Բացի այդ, դատաքննության ընթացքում դատարանը անհիմն կերպով մերժել է պաշտպանության

կողմի միջնորդությունները՝ դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու դեպքին ականատես անձանց, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրել է բացառապես վիճարկվող իրադարձություններում ակտիվ դեր ունեցած ոստիկանության աշխատակիցների՝ վարույթի ընթացքում պատշաճ չստուգված ցուցմունքները, կամ մեղադրանքի հիմքում դրվել են վկաների հակասական ցուցմունքները, կամ դատարանի կողմից անարժանահավատ են համարվել վկաների դատաքննական ցուցմունքները՝ չնայած դրանք գործով առկա այլ տվյալներով չեն հերքվել:

Մինչդեռ Եվրոպական դատարանը «Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով, վկայակոչելով նաև Հայաստանին չառնչվող մի շարք այլ գանգատներով կայացված իր որոշումները, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «...ներպետական դատարանները մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, որոնք, ավելին, հիմնված են եղել հակասական ապացույցների վրա, չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն էին և ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում: Կարելի է ասել, որ իրադարձությունների վերաբերյալ ոստիկանության կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներից որևէ մեկին պատշաճ կերպով չանդրադառնալը և պաշտպանության կողմի վկաներին քննելու հարցում մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդար դատաքննության երաշխիքներին (տե՛ս mutatis mutandis, «Կասպարովը և այլք»՝ վերևում հիշատակված, § 66):»:

Բողոքարկումների արդյունքում 5 գործով բողոքների քննության շնորհիվ հռչակվել է անձանց անմեղությունը և կայացվել են արդարացման որոշումներ, իսկ մեկ գործով վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, այն է՝ ստորադաս դատարանների կայացրած ակտերը մասնակիորեն բեկանվել են և ուղարկվել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Ինչպես նախորդ տարիներին 2020թ. նույնպես արձանագրվել են դեպքեր, երբ քաղաքացիների դիմումների հիման վրա դատախազության կողմից վարույթներ են հարուցվել նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վերաբերյալ: Այսպես.

Ս.Նյուտոնի դիմումի հիման վրա Երևան քաղաքի դատախազությունում ուսումնասիրվել էր Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննված՝ 2001թ. սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը «Առագաստ» սրճարանում Պ.Պ.-ի սպանության վերաբերյալ քրեական գործը, Ս.Զ.Ն.-ի ներկայացուցիչների դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը:

Արդյունքում պարզվել էր, որ 25.09.2001թ. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործով ՀՀ ԱԱ նախարարության աշխատակից Ա.Հ.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր անփութությամբ անզգույշ սպանություն կատարելու համար: Դատարանը հաստատված է համարել, որ 25.09.2001թ.՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևանի «Առագաստ» սրճարանի գուգարանում վերջինիս և ոգելից խմիչք օգտագործած վիճակում գտնվող Պ.Պ.-ի միջև

տեղի է ունեցել փոխադարձ քաջքուկ, հասցվել են փոխադարձ հարվածներ, որոնց ընթացքում Պ.Պ.-ն մեջքի ուղղությամբ վայր է ընկել, գլխի հետևի մասով հարվածել զուգարանի սալիկապատ հատակին, որի հետևանքով ստացած գանգուղեղային ծանր մարմնական վնասվածքից մահացել է: Դատարանի 2002թ. փետրվարի 21-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Հ.-ն դատապարտվել է 2 տարի ժամկետով ազատազրկման, միաժամանակ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամանակով:

Դեպքի վերաբերյալ Ս.Զ.Ն.-ի ներկայացուցիչների կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումի և դրան կից՝ վերոնշյալ դեպքի առնչությամբ Ս.Զ.Ն.-ի հայտարարության ուսումնասիրությամբ պարզվել է, որ հայտարարությունն էական նշանակություն ունեցող այնպիսի տեղեկություններ է պարունակում դեպքի մասին, որոնք առերևույթ վկայում են Պ.Պ.-ի՝ կյանքից ոչ թե անզուշությամբ զրկվելու, այլ մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով դիտավորությամբ սպանության մասին:

Այսինքն՝ առերևույթ ի հայտ են եկել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք կարող են ապացուցել, որ գործով դատապարտված անձը առերևույթ կատարել է ավելի ծանր հանցանք՝ սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում, քան այն, որի համար դատապարտվել է: Բացի այդ, դրանք առերևույթ վկայում են հանցանքի կատարմանը նաև այլ անձանց մասնակցության մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Պ.Պ.-ի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով կայացված դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վերանայելու համար Երևան քաղաքի դատախազությունում հարուցվել է համապատասխան վարույթ և քննություն կատարելու հանձնարարությամբ ուղարկվել ՀՀ ՔԿ ԵՔԲԿ ծանր հանցագործությունների քննության բաժին:

Վարույթի ընթացքում կատարվել են մի շարք գործողություններ, հարցաքննվել են վկաներ, որոնք հաստատել են Պ.Պ.-ին մի քանի հոգով ծեծի ենթարկելու հանգամանքը: Հարցաքննվել է նաև Զ.Ս.Ն.-ն, որը տվել է ներկայացված վերոնշյալ վկայությանը նույնաբովանդակ ցուցմունք:

Նշանակվել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որի արդյունքներն էականորեն տարբերվում են նախկինում քրեական գործով տրված եզրակացության տվյալներից:

Նշված հանգամանքը, քրեական գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների, այդ թվում՝ գործով հարցաքննված անձանց՝ մի խումբ անձանց կողմից Պ.Պ.-ի մարմնի տարբեր մասերին, հիմնականում գլխին հարվածներ հասցնելու վերաբերյալ ցուցմունքների հետ համակցությամբ, հաստատում են, որ մի խումբ անձինք ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել Պ.Պ.-ի մարմնի տարբեր մասերին, հատկապես գլխին, և պատճառել փակ բուրբ գանգուղեղային վնասվածք:

Այսինքն՝ հարուցված վարույթի արդյունքում ձեռք են բերվել այնպիսի նոր հանգամանքներ, որոնք, ինչպես ինքնին, այնպես էլ մինչ այդ պարզված հանգամանքների հետ, ապացուցում են, որ մի խումբ անձինք առերևույթ կատարել են ավելի ծանր հանցանք՝ սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում, քան այն, որի համար անձը դատապարտվել է:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու և

ամբողջությամբ բեկանելու 2002թ. փետրվարի 21-ի դատավճիռը՝ գործն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

2020թ. հուլիսի 6-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրած որոշմամբ բավարարել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանի ներկայացրած բողոքը, բեկանել դատարանի 2002թ. փետրվարի 21-ի դատավճիռը և նոր քննություն կատարելու համար գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Բացի այդ, հարկ է նաև նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՍՀայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքով սահմանադրական օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, ներկայացնել համապատասխան զեկուցագրեր՝ վերջիններիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգ նախաձեռնելու համար: Պետք է նշել, որ այս հանձնարարականն արդեն իսկ տվել է իր արդյունքները: Այսպես, եթե 2020 թվականի ընթացքում դատավորների կողմից ՍՀայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքով սահմանադրական օրենքով սահմանված հիմքերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ իրավասու մարմիններին ուղարկվել է 8 հաղորդում, որոնց քննարկման արդյունքում հարուցվել է 4 կարգապահական վարույթ, որոնցից 2-ով դատավորները ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, իսկ 2-ով դեռևս ԲԴԽ-ի կողմից որոշում չի կայացվել, ապա 2021 թվականի միայն առաջին եռամսյակում արդեն ներկայացվել է նման 31 հաղորդում, որոնց քննարկման արդյունքում հարուցվել է 1 կարգապահական վարույթ, մնացածը քննարկման փուլում են:

6. Պետության շահերի պաշտպանության ոլորտ

Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում 2020թ. ընթացքում, չնայած օբյեկտիվ դժվարություններին, ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները լայնածավալ աշխատանքներ են իրականացրել:

Մասնավորապես, ինչպես հանրապետական, այնպես էլ մարզային, ընդգրկման բազմաթիվ ոլորտներում կատարվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ընդհանուր առմամբ 819 ուսումնասիրություն /2019թ.՝ 1136/, որոնց արդյունքներով հայտնաբերվել է 763 իրավախախտում:

Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և հանրային գույքի պահպանության, մասնավորեցման, հողօգտագործման, ճանապարհաշինության, էներգետիկայի, բնապահպանության, ընդերքօգտագործման, ջրային ենթակառուցվածքների պահպանության և կառավարման, առողջապահության, իսկ զինվորական դատախազության իրավասության շրջանակներում՝ թիկունքային ծառայության, սպառազինության, ռազմաբժշկական, կապիտալ շինարարության և գործերի բնակավորման ոլորտները:

Ուսումնասիրությունների արդյունքներով պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, ինչպես նաև պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով պետական մարմիններին ներկայացվել է ընդհանուր 77 հաղորդում և միջնորդագիր:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից դատարաններ է ներկայացվել ընդհանուր **618 մլն 284 հազար դրամի բռնագանձման պահանջով** պետական շահերի պաշտպանության **56 հայց**: Ներկայացված հայցապահանջներով (այդ թվում՝ նախորդ տարիներին հարուցված) բավարարվել է **ավելի քան 4 մլրդ 690 մլն դրամի 36 հայց, ինչը գերազանցում է 2019 թվականի ցուցանիշը շուրջ 64 անգամ** /2019 թվականին՝ 73 մլն 600 հազ. դրամ/: Մոտ 6 մլրդ 917 մլն դրամ պահանջով շուրջ 100 հայցի քննություն ընթացքի մեջ է:

Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստերի առթիվ **հարուցվել է 249 քրեական գործ**, իսկ 574 դեպքով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար:

Քրեական գործերը հարուցվել են, մասնավորապես, բյուջետային միջոցների ծախսման գործընթացներում արձանագրված չարաշահումների, գնահատման և մրցութային ընթացակարգերի հանցավոր խախտումներով պետական սեփականության բազմաթիվ գույքերի մասնավորեցման, պետական կամ համայնքային սեփականության գույքի վարձակալության տրման, պետական միջոցներով իրականացված առանձին նշանակության օբյեկտների շինարարության և վերանորոգման ընթացքում կատարված յուրացումների ու վատնումների, կրթության և գիտության, բնապահպանության ոլորտներում թույլ տրված ապօրինությունների, բնական ռեսուրսների ապօրինի շահագործման և բազմաթիվ այլ փաստերով:

Պետության շահերին հասցված վնասը վերականգնելու համար նախագուշացվել է 153 անձ /2019թ.՝ 167/: Արդյունքում՝ տարվա ընթացքում միայն դատախազական այս ներգործության միջոցի կիրառմամբ կամուվին պետական բյուջե է վերականգնվել շուրջ 512 մլն 131 հազ. ՀՀ դրամ /2019թ.՝ 1 մլրդ 378 մլն ՀՀ դրամ/:

Դատախազության բոլոր ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով հայտնաբերված՝ պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է **ավելի քան 21 մլրդ 431 մլն ՀՀ դրամ /2019թ.՝ շուրջ 45 մլրդ դրամ/**: Հարուցված քրեական գործերի, ինչպես նաև դատարաններ ներկայացված հայցերի, շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում բացահայտված վնասի վերականգնման ուղղությամբ:

Միաժամանակ՝ ուսումնասիրությունների հիման վրա կատարված նախագուշացումների, բավարարված հայցերի, ներկայացված հաղորդումների հիման վրա դատախազության կողմից կատարված աշխատանքի արդյունքում 2020թ. ընթացքում վերականգնվել է **ավելի քան 1 մլրդ 600 մլն ՀՀ դրամի վնաս /2019թ.՝ շուրջ 1 մլրդ 400 մլն դրամ/**: Դատախազությունը, ինչպես քրեական գործերի, այնպես էլ հայցերի հարուցման շրջանակներում, հետամուտ է հայտնաբերված վնասի վերականգնմանը՝ օրենսդրությամբ իրեն վերապահված ներգործության ողջ գործիքակազմի կիրառմամբ:

2020թ. ընթացքում պետական կառավարման տարբեր ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով բազմաթիվ դեպքերում արձանագրվել են պետական շահերի խախտումների հետևանքով պետությանը և համայնքներին պատճառված առանձնապես խոշոր չափերի գույքային վնասներ: Մասնավորապես.

1. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2013-2020թթ. կազմակերպված գնման ընթացակարգերի նկատմամբ իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ստացված փաստաթղթերը: Ուսումնասիրության լիարժեքությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ տեղեկություն է պահանջվել և ստացվել նաև նշված ՊՈԱԿ-ից:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2012-2015թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսին, ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից նախապատրաստվել և ներկայացվել են Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների ձեռքբերման համար գնման հայտերը՝ ծառայությունների ձեռքբերման նախահաշվային գինը յուրաքանչյուր տարվա համար սահմանելով 700 մլն 344 հազար ՀՀ դրամ: Հայտարարված գնումների ընթացակարգերում յուրաքանչյուր տարի հաղթող է ճանաչվել միակ մասնակից «3...» ՍՊԸ-ն, որի հետ էլ կնքվել են հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնման պայմանագրեր՝ համապատասխանաբար՝ շուրջ 716մլն ՀՀ դրամ, 700մլն ՀՀ դրամ, 700մլն ՀՀ դրամ և 703մլն ՀՀ դրամ արժեքներով:

Համաձայն նշված ծառայությունների ձեռքբերման ժամանակահատվածում գործող ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» որոշման՝ մինչև գնումների հրավերների հաստատումը, բացառությամբ շինարարական ծրագրերի, գնահատող հանձնաժողովի անդամները պարտավոր են ուսումնասիրել ՀՀ համապատասխան շուկաները և տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների շուկայական գների մասին կազմել գրավոր երաշխավորություն՝ կցելով մանրամասն

բացատրագիր նախահաշվային գնի ու շուկայական գնի համեմատության վերաբերյալ և ուսումնասիրությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնման գործընթացի շրջանակում ծառայությունների նախահաշվային գինը սահմանելու համար շուկայի ուսումնասիրություն չի կատարվել:

Իսկ նույն Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների նպատակով 2017-2019թթ. նույն ընկերության հետ կնքված պայմանագրերի արժեքը յուրաքանչյուր տարվա համար կազմել է շուրջ 400 մլն ՀՀ դրամ, ինչը 300 մլն դրամով պակաս է 2012-2015թթ. կնքված պայմանագրերից:

Այսինքն՝ ՊՈԱԿ-ի պատասխանատու պաշտոնատար անձինք, առերևույթ խախտելով գնումների գործընթացի կազմակերպման վերաբերյալ իրավանորմերի պահանջները, Հայաստանի հանրակրթական ցանցի սպասարկման ծառայությունների գնումների ընթացակարգերում չեն իրականացրել շուկայի ուսումնասիրություն, ինչի հետևանքով սահմանվել են չհիմնավորված նախահաշվային գներ, որոնց հիման վրա 2012-2015թթ. ընկերության հետ կնքված պայմանագրերի կատարման արդյունքում պետությանը պատճառվել է ընդհանուր շուրջ 1 մլրդ 200 մլն ՀՀ դրամի վնաս:

Ուսումնասիրությունների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. 2020թ. ընթացքում, ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, մարզերի դատախազությունների կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացվել է լայնածավալ ուսումնասիրություն՝ համայնքներում բջջային կապի ծածկույթ ապահովող ավեհավաք կայանների տեղադրման համար հողամասերի հատկացման գործընթացների իրավաչափության կապակցությամբ:

Դատախազությունների կողմից համայնքային իշխանության մարմինների պաշտոնատար անձանց գործողություններում հանցավոր արարքների հատկանիշներ պարունակող տվյալներ ունեցող բազմաթիվ դեպքերով հետաքննության մարմիններին տրվել են նյութեր նախապատրաստելու հանձնարարություններ:

Արդյունքում՝ հանրապետության 9 մարզի 76 համայնքում (այդ թվում՝ խոշորացված համայնքների մաս կազմող բնակավայրերում) կատարված նույնատիպ սխեմատիկ չարաշահումների դեպքերով, 2020թ. ընթացքում, նախաքննական մարմիններում, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի տարբեր մասերի, առանձին դեպքերում՝ նաև 38-308-րդ հոդվածի 2-րդ մասի, 315.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել և քննվել է 77 քրեական գործ:

Ըստ քրեական գործերի նյութերի՝ 2004 թվականից սկսած պետական կամ համայնքապատկան գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքի ղեկավարի որոշմամբ, երբեմն ձևական մրցույթների միջոցով, շուկայականից էականորեն ցածր՝ սիմվոլիկ վարձավճարներով վարձակալության են տրվել ֆիզիկական անձանց, այդ թվում՝ հենց համայնքների ղեկավարներին, նրանց ընտանիքի անդամներին, մերձավորներին, ենթականերին: Ապա վարձակալների կողմից այդ հողամասերի փոքր մասերը բազմապատիկ, որոշ դեպքերում մինչև 200-300 անգամ ավելի բարձր վարձավճարներով, ենթավարձակալության են հանձնվել կապի օպերատոր ընկերություններին, որոնք այն օգտագործել են որպես կապի օբյեկտի հող՝ դրանցում տեղակայելով ու շահագործելով բջջային կայաններ:

Այսինքն՝ օրենսդրությամբ ունենալով սահմանված դեպքերում և կարգով ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու լիազորություն և շատ դեպքերում նախապես իմանալով, որ նշված հողատարածքներն ամսական անհամեմատ բարձր վարձավճարով ենթավարձակալության է տրամադրվելու ընկերություններին և օգտագործվելու է ապօրինի՝ ոչ իրենց գործառնական նշանակությամբ, այդ ապօրինությունները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, կանխարգելելու փոխարեն, համայնքների ղեկավարները չեն առարկել ենթավարձակալության պայմանագրի կնքման դեմ: Արդյունքում՝ հողամասերի վարձակալները երկարատև՝ 15-25 տարի ժամկետներով պայմանագրերի հիման վրա, համայնքային սեփականության հողամասերի օգտագործումից վարձավճարների տեսքով ստացել են խոշոր չափերով շահույթներ, իսկ համայնքները զրկվել են ֆինանսական այդ աղբյուրից օգտվելու հնարավորությունից:

Քրեական գործերով համայնքների գործող կամ նախկին 34 ղեկավարի առաջադրվել են մեղադրանքներ:

Վերոնշյալ քրեական գործերից 5-ը 5 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնցից 1-ով կայացվել է մեղադրական դատավճիռ, մյուսներով դատական քննությունը շարունակվում է:

Հարուցված քրեական գործերով **համայնքներին պատճառված ընդհանուր վնասը կազմել է 472.5 մլն ՀՀ դրամ, որից շուրջ 127 մլն ՀՀ դրամն արդեն իսկ վերականգնվել է:** Միջոցներ են ձեռնարկվում վնասի մնացած մասը ևս վերականգնելու ուղղությամբ:

Համայնքների խախտված իրավունքները վերականգնելու և ֆինանսական միջոցները համայնքային բյուջե ուղղելու խնդիրը լուծելու նպատակով, մարզերի դատախազությունների հետևողականությամբ և նախաձեռնողականությամբ, 27 համայնքում (բնակավայրում) վարձակալության պայմանագրերը լուծվել են, որոնց զգալի դեպքերում համայնքների և կապի օպերատոր նույն ընկերությունների միջև կնքվել են նոր պայմանագրեր: Միջոցներ են ձեռնարկվում մյուս դեպքերով ևս ապօրինի պայմանագրերը լուծելու ուղղությամբ, ինչի նպատակով մարզերի դատախազների կողմից միջնորդագրեր են ներկայացվել մարզպետներին:

Բազմաթիվ դեպքերով նախնական քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

3. 2020թ. ընթացքում ուսումնասիրություններ են կատարվել Արարատի մարզի տարածքում ձկնաբուծության ոլորտում արձանագրված խախտումների վերացման, դրանց քրեաիրավական գնահատականներ տալու, ինքնական կառուցված ձկնաբուծարանների շինությունների, տարածքների օրինականացման ուղղությամբ:

Մասնավորապես, մարզի տարածքում կառուցված և գործող ինքնական ձկնաբուծարանների ոլորտի ուսումնասիրության շրջանակներում հարցումներ են կատարվել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, իրենց համայնքների տարածքներում ձկնաբուծական տնտեսություններ ունեցող 12 ՏԻՄ-եր: Մարզի դատախազությունում կազմակերպվել է ձկնաբուծությամբ զբաղվող 45 տնտեսվարողի ներկայացուցիչների ընդունելություն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Արարատի մարզի 12 համայնքի տարածքում առկա գործող և չգործող 131 ձկնաբուծարանից 41-ը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի իմաստով ինքնական շինություններ են կամ իրենց տարածքներում ունեն այդպիսիք: Խախտումներ են արձանագրվել Արարատի մարզի 4

համայնքի ներկա և նախկին ղեկավարների կողմից հողօգտագործման և հողերի պահպանման բնագավառներում:

Ուսումնասիրության և նյութերի նախապատրաստման արդյունքում պարզվել է, որ Արարատի մարզի Սիս համայնքից վարձակալած 11,32 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի վրա ՍՊԸ-ի կողմից կառուցվել է 5 հա ամբողջությամբ ինքնակամ՝ քարաբետոնե ձկնաբուծարան՝ կազմված լճակներից ու ինքնակամ այլ շինություններից: Ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո Արարատի մարզի դատախազի կողմից նախազգուշացում է ուղարկվել Արարատի մարզի Սիս համայնքի ղեկավարին՝ վարձակալության պայմանագիրը օրենքով սահմանված կարգով լուծելու կամ սահմանված կարգով ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու ուղղությամբ: Դրա հիման վրա Սիսի համայնքապետարանում կազմակերպված հանդիպման արդյունքներով, համայնքի ղեկավարի որոշմամբ, ինքնակամ կառույցներն օրինականացվել են և ճանաչվել համայնքային սեփականություն, ապա իրականացվել է նշված կառույցների և դրանց սպասարկման ու պահպանման համար անհրաժեշտ 10,75876 հա հողատարածքի ուղղակի գնման գործընթաց, որի շրջանակներում համայնքի հաշվեհամարին փոխանցվել է ընդհանուր շուրջ 111 մլն ՀՀ դրամ:

Ուսումնասիրության ընթացքում տարված բացատրական աշխատանքների շնորհիվ նաև Սիս համայնքի տարածքում գտնվող մեկ այլ՝ 25 հա գյուղատնտեսական նշանակությամբ արոտավայրի վրա ամբողջությամբ ինքնակամ կառուցված 2500 քմ մակերեսով քարաբետոնե ձկնաբուծարանն օրինականացնելու ուղղությամբ կազմվել են համապատասխան սխեմաներ, որոնք ներկայացվել են իրավասու մարմիններին՝ ձկնաբուծարանն օրինականացնելու համար: Օրինականացվելու դեպքում Սիս համայնքի բյուջե կարող է վճարվել ավելի քան 15.000.000 ՀՀ դրամ գումար:

Ուսումնասիրության արդյունքներով մարզի մի քանի համայնքների մի քանի տասնյակ ինքնակամ կառուցված ձկնաբուծարանների վերաբերյալ պաշտոնատար համապատասխան անձանց կողմից հողերի վերահսկողության և պահպանման ոլորտում առերևույթ լիազորությունների չարաչափման հանգամանքները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությամբ պարզելու, նրանցից յուրաքանչյուրի արարքին իրավական գնահատական տալու նպատակով, Արարատի մարզի դատախազության դատախազի դատավարական հսկողության ներքո քննվում են մի քանի քրեական գործեր:

Բացի այդ, արձանագրված խախտումների կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, որում, քրեաիրավական գնահատականներից զատ, բարձրացվել են նաև ոլորտում առկա խնդիրները, մասնավորապես, շեշտվել է նշված ոլորտում բազմաթիվ տնտեսվարողների գործունեությունն օրինականացնելու անհրաժեշտության մասին (ՀՀ հողային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և «Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցները հաստատելու մասին» 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470 որոշումներով սահմանված

կարգով՝ ինքնակամ կառույցներն օրինականացնելու, հողի նպատակային նշանակությունը փոփոխելու, հետևաբար օրինականացման վճարները գանձելու), ինչի ուղղությամբ պատկան մարմինները միջոցներ չեն ձեռնարկել, ըստ բերված պատճառաբանությունների՝ նաև օբյեկտիվորեն առաջացող անցանկալի հետևանքների առաջացման վտանգով պայմանավորված (տնտեսվարողների գործունեության դադարեցում, ահռելի ֆինանսական պարտավորություններ և այլն):

Առաջարկվել է ուսումնասիրել վերը նկարագրված խնդիրները, դրանց լուծման օրինաչափ ուղիները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ նկարագրված գործունեության իրավաչափ կարգավորումների ուղղությամբ

4. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ կառավարության 09.06.2016թ. թիվ N գաղտնի որոշման համաձայն՝ Հռոմի Պապ Նորին Սրբություն Ֆրանցիսկոսի այցը պատշաճ կազմակերպելու նպատակով, «Ինվիտորո պրոդակշն» ՍՊ ընկերությանը նվիրաբերություն տրամադրելու համար, ՀՀ մշակույթի նախարարությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 576 մլն դրամ:

Նույն օրը՝ 09.06.2016թ. ՀՀ մշակույթի նախարարի կողմից տրվել է թիվ N գաղտնի հրամանը՝ «Ինվիտորո Պրոդակշն» ՍՊ ընկերությանը 576 մլն դրամ տրամադրելու վերաբերյալ և ՀՀ մշակույթի նախարարության ու «Ինվիտորո Պրոդակշն» ՍՊ ընկերության միջև /նույն օրը/ 09.06.2016թ. կնքվել է նվիրաբերության պայմանագիր, որով ընկերությունը պարտավորություն է ստանձնել ՀՀ կառավարության կողմից հատկացված միջոցներն ուղղելու Հռոմի Պապի այցի պատշաճ կազմակերպման ծախսերին:

ՀՀ մշակույթի նախարարության 10.06.2016թ. վճարման հանձնարարականով 576 մլն դրամը փոխանցվել է «Ինվիտորո պրոդակշն» ՍՊ ընկերությանը:

Թեև 09.06.2016թ. ՀՀ մշակույթի նախարարության և «Ինվիտորո Պրոդակշն» ՍՊ ընկերության միջև կնքված նվիրաբերության պայմանագրի 3.1. կետով սահմանված է եղել, որ նվիրառուին հատկացվող 576 մլն դրամը ներառում է հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, այնուամենայնիվ ՀՀ կառավարության 23.06.2016թ. թիվ N գաղտնի որոշմամբ, դրա հիման վրա ՀՀ մշակույթի նախարարի 23.06.2016թ. թիվ N, 15.07.2016թ. թիվ N գաղտնի հրամաններով և 15.07.2016թ. կնքված թիվ 1 համաձայնագրով «Ինվիտորո Պրոդակշն» ՍՊ ընկերությանը փոխանցվել է ևս 60 մլն 192 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ընկերության տնօրենի՝ ՀՀ մշակույթի նախարարությանը հասցեագրված գրությունները՝ հարկային պարտավորություններ կատարելու համար գումարի պահանջի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից ՀՀ մշակույթի նախարարությունում իրականացված ստուգման արդյունքների՝ 25.05.2017թ. թիվ 14-Ա ակտի համաձայն՝ «Ինվիտորո Պրոդակշն» ՍՊ ընկերության փաստացի ծախսերի փաստաթղթերում ծախսերի նկատմամբ կիրառվել է 10 տոկոս ավելացում, որը որևէ հաշվարկով չի հիմնավորվել, և նվիրաբերության պայմանագրում 576 մլն դրամ պայմանագրային գումարը ներառել է հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, ուստի ընկերության պահանջը հարկային պարտավորությունները կատարելու համար լրացուցիչ 60 մլն 192 հազ. դրամ ավելացնելու մասով հիմնավորված չէ:

Բացի այդ, նույն ստուգման ակտի համաձայն՝ խախտելով ՀՀ մշակույթի նախարարի 10.06.2010թ. «ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային

միջոցառումների անցկացման հետ կապված ՀՀ մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի մասին» թիվ 315-Ա հրամանի պահանջները, Հռոմի Պապի այցի միջոցառման կազմակերպման նպատակով կատարվել է բյուջետային միջոցներից 3 մլն 341 հազ. դրամ ավելի վճարում:

Պարզվել է նաև, որ ՀՀ կառավարության 09.06.2016թ. թիվ N գաղտնի որոշման համաձայն՝ «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերությանը հատկացված գումարի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումները պետք է իրականացվեին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

Մինչդեռ, «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերությունը, նվիրաբերության պայմանագրի շրջանակներում, 636 մլն 192 հազ. դրամի ծախսերի վերաբերյալ 25.10.2016թ. ՀՀ մշակույթի նախարարություն որպես հաշվետվություն ներկայացրել է միայն ընկերության կողմից այլ տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված աշխատանքների և ծառայությունների մատուցման, գույքի վարձակալության պայմանագրեր և այդ ժամանակ գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշմամբ սահմանված բանակցային ընթացակարգի կիրառման, մասնավորապես՝ գնային առաջարկների, որակավորումը հիմնավորող փաստաթղթերի, ապրանքների գնման դեպքում ապրանքի անվանման և տեխնիկական բնութագրերի, հայտերի ապահովման, ներկայացված գների նվազեցման բանակցությունների վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ նախարարությունում տեղեկատվություն չկա Հռոմի Պապի այցի ընթացքում պատվիրակության կազմում ՀՀ այցելած անձանց, նրանց քանակի, ժամկետների, օրերի, անհրաժեշտություն համարվող ծախսերի, ինչպես նաև նորմատիվների հաշվարկների վերաբերյալ, ծրագրի իրականացման բովանդակային որևէ տեղեկություն կամ հաշվետվություն նախարարությունում չի ստացվել և վճարված 636 մլն 192 հազ. դրամի վերաբերյալ ընկերության 25.10.2016թ. ներկայացրած հաշվետվությունը նախարարության կողմից հաշվապահորեն չի ընդունվել (չի ձևակերպվել), իսկ վճարված գումարը թողնվել է որպես դեբիտորական պարտք:

«Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության կողմից որպես հաշվետվություն ներկայացված պայմանագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մի շարք դեպքերում պայմանագրերի գները էականորեն բարձր են շուկայական գներից, ձեռք են բերվել կամ վարձակալվել գույք, աշխատանքներ կամ ծառայություններ, որոնց անհրաժեշտությունը կամ գնագոյացումը որևէ կերպ չի հիմնավորվել, պարզ չէ, թե ինչպես է հետագայում տնօրինվել պետական բյուջեի միջոցներով ձեռք բերված գույքը:

Այսպես, «1+1 Պրոդակշն» ընկերության /Ուկրաինա/ հետ 03.06.2016թ. կնքված պայմանագրով ձեռք են բերվել շարժական հեռուստատեսային կայանների ծառայություններ. Երևանում՝ 113.675 ԱՄՆ դոլար /ընդհանուր՝ շուրջ 64 մլն 922 հազ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ն/ արժեքով, «Գրավիս-Կինո» ՍՊ ընկերության /Ուկրաինա/ հետ 03.06.2016թ. կնքված պայմանագրով նույն ծառայությունները Գյումրի և Վաղարշապատ քաղաքներում՝ 113.675 ԱՄՆ դոլար /ընդհանուր՝ շուրջ 64 մլն 922 հազ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ն/ արժեքով, «Ավտոլայն» ՍՊ ընկերության /Ուկրաինա/ հետ 06.06.2016թ. պայմանագրով, տելեսկոպիկ օպերատորի կռուներների տեխնիկական ծառայություններ՝

71.350 ԱՄՆ դոլար, որից 36.750 ԱՄՆ դոլար՝ Երևան քաղաքում, 34.600 ԱՄՆ դոլար՝ Գյումրի քաղաքում /ընդհանուր՝ շուրջ 40 մլն 783 հազ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ն/ արժեքով:

Այսպիսով՝ Երևան, Գյումրի և Վաղարշապատ քաղաքներում «շարժական հեռուստատեսային կայանների» ծառայությունների համար ծախսվել է ընդհանուր առմամբ շուրջ 170 մլն դրամ:

Մինչդեռ, ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդից ստացված տվյալների համաձայն՝ հանրային հեռուստաընկերությունում առկա է «Մատչ ՏՎ» ընկերության /Ռուսաստանի Ղաշնություն/ 2018թ. գնային առաջարկը, որով նմանատիպ շարժական հեռուստակայանի ծառայություններն առաջարկվել է 1 միավորը 4 մլն 737 հազ. ռուսական ռուբլով /շուրջ 34 մլն դրամ/, ներառյալ ճանապարհածախսը և ԱԱՀ-ն:

Այսինքն, անգամ նմանատիպ 3 հեռուստակայանի ծառայությունների արժեքը կարող էր կազմել ընդհանուր 102 մլն դրամ /34 մլն X 3 = 102 մլն/, շուրջ 60 մլն դրամով պակաս, քան «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության ներկայացրած ծախսերը, չնայած այն հանգամանքին, որ «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության կողմից ձեռք են բերվել 2 «շարժական հեռուստատեսային կայանների» ծառայություններ:

«Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության և Ա/Ձ Արթուր Հարությունյանի միջև 06.06.2016թ. կնքված թիվ 06/16 պայմանագրով, ընկերության կողմից ձեռք է բերվել կարմիր գորգ՝ 200 մետր, շապիկ՝ 2000 հատ, անձրևանոց՝ 1350 հատ և պոլիէթիլենային թաղանթ 4 փաթեթ՝ ընդհանուր 16 մլն 285 հազ. դրամ արժեքով, սակայն որևէ տեղեկություն առկա չէ, թե ինչպես են օգտագործվել կամ ում են հանձնվել ձեռքբերված ապրանքները:

«Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության և «Վելես Գրուպ» ՍՊ ընկերության միջև 03.06.2016թ. կնքված պայմանագրով կատարվել են 1050 հատ արգելապատնեշների պատրաստման աշխատանքներ, ընդհանուր 22 մլն 50 հազ. դրամ արժեքով և պայմանագրում նշված է միայն արգելապատնեշ բառը, առանց որևէ տեխնիկական բնութագրի, չափի, ձևի, կամ նյութի նշման:

«Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության և «Բուքինգ» ՍՊ ընկերության միջև 21.06.2016թ. պայմանագրով «Բուքինգ» ՍՊ ընկերությունը պարտավորություն է ստանձնել Գյումրի քաղաքի «Հոկտեմբեր» կինոթատրոնում իրականացնելու թարգմանչական ծառայությունների կազմակերպման աշխատանքներ՝ ընդհանուր 5 մլն 712 հազ. դրամ արժեքով:

Պարզվել է, որ «Ինվիտրո Պրոդակշն» և «Բուքինգ» ՍՊ ընկերությունները նշված ժամանակ գրանցված են եղել նույն՝ քաղաք Եղեգնաձոր, Նարեկացի 6/4 հասցեում և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ «Բուքինգ» ՍՊ ընկերությունը 2016թ. մայիս ամսից մինչև 2017թ. մարտ ամիսը չի ունեցել ոչ մի գրանցված աշխատակից, իսկ որպես «Բուքինգ» ՍՊ ընկերության տնօրեն հանդես եկած և 21.06.2016թ. պայմանագիրն ու 27.06.2016թ. կատարողական ակտը ստորագրած Հ. Նազարյանը, ՀՀ ՊԵԿ-ի տվյալներով, որպես տնօրեն աշխատել է միայն 2018թ. դեկտեմբեր ամսից:

Որպես ծախս ներկայացված՝ «Արթվոյաժ» ՍՊ ընկերության հետ 16.06.2016թ. կնքված պայմանագրով, «ընկերությունը 17.06.2016թ.-28.06.2016թ. 5 տարբեր մակնիշի ավտոմեքենաներով կատարել է 1 մլն 375 հազ. դրամի ուղևորափոխադրումներ, մինչդեռ ՀՀ ՊԵԿ-ից ստացված տվյալներով, «Արթվոյաժ» ՍՊ ընկերությունը 2016-2017թթ., բացի տնօրենից, որևէ գրանցված աշխատակից չի ունեցել:

«Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել են ծախսեր, որոնց կապը Հռոմի Պապի այցի հետ որևէ հիմնավորում չունի: Այսպես՝ «Ադեպտա» ՍՊ ընկերության հետ 01.06.2016թ. կնքված պայմանագրով ձեռք են բերվել 1 մլն դրամի ֆինանսական համակարգման, ֆինանսական խորհրդատվության, վերահսկման ծառայություններ, իսկ «Էկվիտաս» ՍՊ ընկերության հետ 01.06.2016թ. պայմանագրով՝ 500 հազ. դրամի փաստաբանական ծառայություններ:

Այս պայմաններում, «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերության ընտրությունը, նշված ընկերությանը տրամադրված գումարների չափը, ընկերության կողմից կնքված պայմանագրերի գները, կամ կատարված ծախսերը որևէ հիմնավորում չեն ունեցել և արժանահավատ չեն:

Պարզվել է, որ ՀՀ կառավարության վերը նշված 09.06.2016թ. թիվ N և 23.06.2016թ. թիվ N գաղտնի որոշումների նախագծերը և դրանց ընդունման վերաբերյալ հիմնավորումները, որոնց հիման վրա «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերությանը հատկացվել են գումարներ, ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարի կողմից և նախագծերում որևէ հիմնավորում չկա ծախսերի բնույթի, անհրաժեշտության և չափի մասին, նշվել է միայն «Հռոմի Պապ Նորին Սրբություն Ֆրանցիսկոսի այցը պատշաճ կազմակերպելու նպատակով» արտահայտությունը:

Տվյալ ժամանակ գործող՝ ՀՀ նախագահի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 18.07.2007թ. թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 34-րդ կետի համաձայն՝ «Կառավարության քննարկմանը ներկայացվող հարցի հիմնավորվածության, ներկայացված նյութերի արժանահավատության, ամբողջականության և որակի համար պատասխանատվությունը կրում է հարցը ներկայացնողը»:

Այսպիսով, ուսումնասիրության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել 2016թ. ՀՀ մշակույթի նախարարության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու՝ ՀՀ կառավարության քննարկմանն անարժանահավատ տվյալներ ներկայացնելու, դրա հետևանքով պետական բյուջեի միջոցներից 60 մլն 192 հազ. դրամ անհիմն «Ինվիտրո Պրոդակշն» ՍՊ ընկերությանը հատկացնելու՝ պետության համար ծանր հետևանքներ առաջացնելու, պաշտոնեական դիրքն օգտագործելով առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 110 մլն 263 հազ. դրամի անարժանահավատ ծախսերի՝ վատնում կատարելու վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

5. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև 27.05.2008թ. կնքված ֆինանսական արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հատկացնում է ֆինանսական աջակցություն (պետական-վարկային միջոցներ)՝ նախատեսված Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման համար:

Նույն արձանագրության հավելվածի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն արձանագրության հոդված 1-ով նախատեսված ծրագրի նպատակը ջրագտման «Աերացիա» կայանի վերականգնումն է՝ կեղտաջրերի սկզբնական և ցեխանստվածքների նախնական մշակման բարելավման միջոցով:

Նշված արձանագրության հիման վրա, Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի և SADE Compagnie Generale de Travaux d' Hydraulique ֆրանսիական կազմակերպության միջև 30.12.2014թ. կնքված 10.386.756 եվրո արժեքով Երևանի «Աերացիա ԿՄԿ-ի վերականգնման աշխատանքներ» պայմանագրի 1.1.3.3 կետի համաձայն՝ ԿՄԿ-ի շինարարության ավարտ է սահմանվել 18 ամիս, իսկ պայմանագրի թիվ 7 փոփոխության 8.2 կետով ԿՄԿ-ի շինարարության և շահագործման հանձնման վերջնաժամկետ է նշված 20 ամիս:

Փաստորեն, «Աերացիա» ԿՄԿ-ն պետք է շահագործման հանձնվեր ոչ ուշ, քան 01.09.2016թ.-ից սկսած:

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի և SADE Compagnie Generale de Travaux d' Hydraulique ֆրանսիական կազմակերպության կազմած թիվ 16 ավարտական ակտով (ամիս-ամսաթիվը բացակայում է), ինչպես նաև «Համայնքային զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի և գլխավոր ֆինանսիստի կողմից 31.08.2017թ. կազմված հաշվետվության համաձայն՝ «Աերացիա» ԿՄԿ-ի վերականգնման աշխատանքների դիմաց փուլերով (վճարումների ժամկետների վերաբերյալ տվյալներ առկա չեն) վճարվել է շուրջ 7.12 մլրդ ՀՀ դրամին համարժեք՝ 14.895.319 ԱՄՆ դոլար:

Մինչդեռ, պարզվել է, որ Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանը մինչ օրս շահագործման չի հանձնվել:

ՀՀ կառավարության 31.08.2017թ. թիվ 1062-Ն որոշման 3-րդ կետի հիման վրա Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրի արդյունքում ստեղծված գույքը և փաստաթղթերը, ինչպես նաև դրա հաշվեկշռում մնացած գույքը, ամրացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին:

ՀՀ ջրային կոմիտեի կանոնադրության 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ջրային կոմիտեի նպատակներն են ՀՀ ջրային ոլորտի քաղաքականության մշակման և իրագործման ապահովումը:

Կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ջրային կոմիտեի խնդիրներն են՝ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը: 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ջրային կոմիտեի գործառույթներն են՝ ոլորտի զարգացման և բարեփոխումների ռազմավարության, այդ թվում՝ ֆինանսական ռազմավարության մշակումը և իրականացման ապահովումը:

Բացի այդ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Հրազդան գետի ջրի որակի մոնիթորինգ՝ Երևան քաղաքից 9 կմ ներքև հատվածում: Այս դիտակետում 2014-2019թթ. ընթացքում ջրի որակը գնահատվել է բացառապես 5-րդ

դասի՝ վատ որակի՝ պայմանավորված Երևան քաղաքի չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ազդեցությամբ:

Փաստորեն, ՀՀ ջրային կոմիտեի պատասխանատու պաշտոնատար անձինք, չկատարելով կոմիտեի կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով և 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ու անվտանգ օգտագործման ապահովման, ինչպես նաև ոլորտի զարգացման և բարեփոխումների ռազմավարության, այդ թվում՝ ֆինանսական ռազմավարության, մշակման և իրականացման խնդիրներն ու գործառնությունները, «Աերացիա» ԿՄԿ-ի նոր կառուցվածքների շահագործման համար գործուն միջոցներ չեն ձեռնարկել:

Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև 27.05.2008թ. կնքված ֆինանսական արձանագրությամբ նախատեսված Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման և մաքրման նպատակով ոչ ուշ, քան 01.09.2016թ. դրությամբ շահագործման հանձնելու պարտադիր պայմանով կառուցված «Աերացիա» ԿՄԿ-ն մինչ օրս շահագործման չի հանձնվել և Երևանի խմելու ջրի համակարգի բարելավման ու մաքրման նպատակով հատկացված առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 7.12 մլրդ ՀՀ դրամի պետական միջոցները ծախսվել են ոչ նպատակային, ինչպես նաև չեն կանխվել հնարավոր էկոլոգիական վտանգները՝ առաջացնելով ծանր հետևանքներ:

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում նշված փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է ծավալվել նաև ՀՀ պետական վերահսկողական ծառայության և հաշվեքննիչ պալատի հետ:

2020 թվականի ընթացքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել 21 տարբեր ուսումնասիրությունների նյութեր, որոնց կապակցությամբ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում հարուցվել է 21 քրեական գործ:

Հարուցված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասը նախնական հաշվարկով կազմել է 4 մլրդ 591 մլն ՀՀ դրամ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2019 թվականին հրապարակած 19 հաշվետվությունից ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում պահանջվել և ուսումնասիրվել է 11-ը, որոնցից 3-ով վարչության դատախազների կողմից հարուցվել են քրեական գործեր, 10 դրվագով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են տարածքային դատախազություններ, որոնց արդյունքներով հարուցվել է 12 քրեական գործ:

Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառնությի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունում շարունակվել են պետական գերատեսչություններից ստացված՝ իրենց ներքին վերահսկողական գործիքակազմով իրականացվող ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրությունները և բավարար հիմքերի դեպքում դրանց հիման վրա քրեական վարույթների հարուցման գործընթացները:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական գույքի կոմիտեից ստացված տեղեկության և կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա ՀՀ

գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 12 դեպքով կատարված ուսումնասիրությունների արդյունքներով հարուցվել է 12 քրեական գործ, որոնցով արձանագրվել է պետությանը պատճառված ընդհանուր շուրջ 1 մլրդ 206 մլն 329 հազ. դրամի գույքային վնաս:

ՀՀ գլխավոր դատախազության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է հանրապետության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ընդհանուր առմամբ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, նրանց ենթակայության կամ մասնակցությամբ կազմակերպություններում աշխատանքային հարաբերությունների հետ կապված կոռուպցիոն սխեմաների և դրանցում ներգրավված անձանց շրջանակի բացահայտմանն ուղղված միջոցառումները:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ դատախազության գործառույթների շրջանակներում ակտիվացվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների աշխատանքը՝ հանրապետության ողջ տարածքի ընդգրկմամբ վերոնշյալ հաստատությունների հաստիքացուցակների և իրական աշխատակիցների համապատասխանությունը պարզելու, խնդիրների առկայության դեպքում դրանց և վերաբերելի այլ փաստաթղթերում հնարավոր կեղծիքների առկայությունը ստուգելու, առերևույթ հանցավոր արարքների հատկանիշների դեպքում պատասխանատուների շրջանակը բացահայտելու, քրեադատավարական ընթացակարգեր ապահովելու նպատակով:

Ուսումնասիրության առարկա են հանրապետության շուրջ 222 կրթական հաստատության հաստիքային աշխատողների վերաբերյալ տվյալները, 182 անձի մասով արձանագրվել են չարաշահումներ կամ տարաբնույթ խախտումներ:

Արդյունքում, հանրակրթական հաստատություններում գրանցված, սակայն աշխատանքի չհաճախած կամ փաստացի աշխատանք չկատարած աշխատողների և նրանց անվամբ ձևակերպված աշխատավարձերի արձանագրված հափշտակության կամ կոռուպցիոն այլ դեպքերի վերաբերյալ հարուցվել է 59 քրեական գործ:

Քննված քրեական այդ գործերից 7-ի վարույթը կարճվել է ոչ արդարացման հիմքով, 7 անձի վերաբերյալ 4 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ընդհանուր առմամբ պատճառված վնասը նախնական հաշվարկով կազմել է շուրջ 100 մլն ՀՀ դրամ, որից արդեն իսկ վերականգնվել է շուրջ 19 մլն ՀՀ դրամը:

Նախանշված ուղղություններով արդյունքների ապահովման միջոցով ՀՀ դատախազությունը շարունակելու է արմատացած և համատարած բնույթ ստացած վերոնշյալ արատավոր պրակտիկան, կոռուպցիոն մեխանիզմները վերացնելու հարցում դրսևորվող հետևողականությունը:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից 2020թ. հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է **20 մլրդ 607 մլն ՀՀ դրամ /2019թ.՝ 29 մլրդ 299 մլն/:**

Այսպիսով, վերը բերված թվային ցուցանիշների համադրումը վկայում է այն մասին, որ վերջին տարիներին պետական շահերի պաշտպանության ոլորտում՝ դատախազությանը օրենքով վերապահված գործիքակազմի կիրառմամբ պետության և համայնքների շահերին պատճառված վնասի վերհանման և օրենքով սահմանված կարգով դրանց վերականգնման դեպքերի աճի միտումը պահպանվել է: Թեև հաշվետու ժամանակահատվածում արձանագրված օբյեկտիվ դժվարությունները (նոր կորոնավիրուսի համավարակ, արցախյան պատերազմ) իրենց ազդեցությունն են թողել

իրականացված աշխատանքների ծավալների վրա, սակայն պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ **պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է շուրջ 21.5 մլրդ դրամ**, ինչը համադրելի է նախորդ տարիներին արձանագրված ցուցանիշների հետ: Ընդ որում, 2018-2020թթ. պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքի շնորհիվ հայտնաբերված՝ **պետությանը պատճառված վնասը ընդհանուր կազմել է ավելի քան 103 մլրդ դրամ**:

Վերջին տարիներին արձանագրված արդյունքները հիմնականում պայմանավորված են երկու գործոնով: Նախ՝ ողջունելի է գործադիր իշխանության մարմինների կողմից պետությանը պատճառված վնասների բացահայտման նպատակով օրենքով նախատեսված իրենց վերահսկողական լծակների գործադրման և դրանց արդյունքները ՀՀ դատախազությանը ներկայացնելու հարցում դրսևորվող նախաձեռնողականությունը, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում դատախազության համար՝ գործադրելու իր իրավասությունից բխող գործառնությունները:

Մյուս հիմնական գործոնն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից դեռևս 2017թ. նախանշված և 2018թ. արմատավորված՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառնության շրջանակներում դատախազական ներգործության միջոցներն ամբողջ ծավալով կիրառելը դատախազության համապատասխան ստորաբաժանումների տարեկան ծրագրային գործունեության պարտադիր բաղադրիչ դարձնելու մոտեցումը շարունակում է հստակորեն պահպանվել, որի կատարման և արդյունքների ապահովման հարցում դրսևորվում է առանձնակի հետևողականություն:

Այս իմաստով պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազության արձանագրած արդյունքները, դրանք բազմապատկելու հանրության հստակ ձևակերպվող պահանջները, ինչպես նաև գործնականում օբյեկտիվորեն ծագող խնդիրների լուծման հրատապ անհրաժեշտությունն արդիական են դարձնում դատախազությանը լիարժեք պետական շահերի պաշտպանի դեր վերապահելու խնդիրը: Այս նպատակով նախապատրաստվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է ավելացնել պետական շահերին առնչություն ունեցող դատական ակտերի բողոքարկման գործընթացում դատախազության լիազորությունները, ընդլայնել «պետական շահեր» եզրույթի բովանդակային սահմանները և ապահովել դրա օրենսդրական իրացումը: Մասնավորապես, պրակտիկան ցույց է տալիս, որ առանց դատախազների համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության, համայնքների նկատմամբ իրականացվող վերահսկողության պայմաններում առաջանում են համայնքային միջոցների անարդյունավետ տնօրինման էական ռիսկեր: Բացի այդ, գործնականում հանդիպում են դեպքեր, երբ պետական շահերին վերաբերող քաղաքացիական կամ վարչական այն գործով, որում դատախազությունը մասնակցություն չի ունեցել, ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից դատական ակտը չի բողոքարկվում և այն մտնում է օրինական ուժի մեջ: Գործող կարգավորումները այսպիսի դեպքում նման ակտը բողոքարկելու հնարավորություն չեն տալիս, քանզի սահմանված է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարող է բողոքարկվել միայն այն դեպքում, եթե նշված գործով ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, ի պատասխան դատախազության հարցմանը, հայտնել է, որ չի բողոքարկելու համապատասխան դատական ակտը: Նման կարգավորման դեպքում ակտի

բողոքարկման հնարավորությունն անտեղի սահմանափակվում է, որի հետևանքով, շատ դեպքերում, զուտ օրենսդրական սահմանափակ կարգավորմամբ պայմանավորված, հնարավոր չի լինում պետական շահերի պաշտպանության համար բողոք ներկայացնել և բեկանել դատական ակտը:

7. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում 2020 թվականի ընթացքում կատարվել է 1134 ստուգում և ուսումնասիրություն /2019թ. ընթացքում՝ 1233/, որոնց արդյունքում հայտնաբերվել է 63 խախտում /2019թ.՝ 591/: Պատկան մարմիններին ուղարկվել է 5 հաղորդում /2019թ.՝ 9/: Ներկայացվել է 20 միջոցորդագիր /2019թ.՝ 47/, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 16 ակտ /2019թ.՝ 41/: Ղատախազների կողմից հարուցվել է 6 քրեական գործ /2019թ.՝ 12/, կասեցվել է օրենսդրությանը հակասող 17 ակտ /2019թ.՝ 40/:

Վերը նշված 1134 ստուգումից և ուսումնասիրությունից 913-ը կատարվել են ձերբակալվածներին պահելու վայրերում /2019թ.՝ 920/, 123-ը՝ քրեակատարողական հիմնարկներում /2019թ.՝ 205/, 58-ը՝ ՀՀ պրոբացիայի ծառայությունում /2019թ.՝ 100/, 39-ը՝ ՀՀ ԱՆ ՂԱՀԿ ծառայությունում /2019թ.՝ 7/, 1-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատությունում /2019թ.՝ 1/:

Նշված 6 քրեական գործից 5-ը հարուցվել է ՀՀ ԱՆ «Ղատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում արձանագրված դեպքերով, որոնցից 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի հատկանիշներով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի, ևս 1-ը՝ 137-րդ հոդվածի հատկանիշներով, իսկ 1-ը՝ ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով:

Ինչպես նշվեց, քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է 123 ստուգում: Մասնավորապես, ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ-ում ուսումնասիրվել է ՀՀ դատախազության նախկին տարիներին կատարված ստուգումներով վերհանված խնդիրների և խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների արդյունավետության վիճակը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախկինում արձանագրված խախտումների մի մասը վերացված չէ: Դրանք հիմնականում վերաբերում են ՀՀ Կառավարության՝ 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված պահանջների չպահպանմանը: Մասնավորապես, խցերում պահվող անձանց որոշ քնելատեղերն առանց համապատասխան թույլտվության վարագուրապատվել են, չեն պահպանվել դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման ընթացակարգային պահանջները, չեն պահպանվել նաև կարճատև տեսակցության ժամային սահմանափակման վերաբերյալ պահանջները, չվարձատրվող աշխատանքներում ներգրավված դատապարտյալները չեն հրահանգավորվել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման վերաբերյալ և այլն:

Վերը նշված ուսումնասիրության արդյունքներով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին ուղարկվել է հաղորդում: Հաղորդման հիման վրա ձեռնարկված համապատասխան միջոցներով արձանագրված խախտումների մեծ մասը վերացվել է, իսկ

ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի մեկ դատապարտյալ ենթարկվել է կարգապահական տույժի՝ արգելված իրեր, առարկաներ պահելու պատճառաբանությամբ: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումները, բացթողումները և թերությունները վերացնելու և հետագայում դրանք բացառելու համար ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի ծառայողներին և աշխատակիցներին տրվել են խիստ հանձնարարականներ, նրանց ցուցաբերվել է մեթոդական օգնություն, համապատասխան ծառայողներին հանձնարարվել է սահմանել մշտական խիստ վերահսկողություն:

ՀՀ ԱՆ ՍԿոշ» և ՍԱրթիկ» քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հանցագործության դեպքերի, դրանց պատճառների և նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին ներկայացվել են համապատասխան միջնորդագրեր, որոնց համար հիմք են հանդիսացել առանձին քրեական գործերով պարզված հանգամանքները: Մասնավորապես՝ փաստվել է, որ մի դեպքում ՀՀ ԱՆ ՍԿոշ» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի պետի տեղակալը, տեղեկացված լինելով նույն հիմնարկի դատապարտյալի մոտ արգելված առարկայի՝ բջջային հեռախոսի առկայության մասին, միջոցներ չի ձեռնարկել այն առգրավելու, արձանագրելու և օրինական ընթացք տալու ուղղությամբ, իսկ մյուս դեպքում՝ ՀՀ ԱՆ ՍԱրթիկ» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի իրավասու ծառայողները պատշաճ զննության չեն ենթարկել դատապարտյալի հիվանդասենյակ մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց, ինչի հետևանքով դատապարտյալը հնարավորություն է ստացել ձեռք բերելու թմրամիջոց և արգելված առարկա՝ բջջային հեռախոս:

Ի պատասխան ներկայացված միջնորդագրերի՝ ՀՀ ԱՆ ՍԱրթիկ» և ՍԿոշ» քրեակատարողական հիմնարկների ու ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պահպանության ապահովման բաժնի համապատասխան պատասխանատու ծառայողների ուշադրությունը հրավիրվել է միջնորդագրում հիշատակված թերությունների, բացթողումների վրա և տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Բացի այդ, հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ տարվող պայքարի կարևորությունը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին հասցեագրված գրությամբ կոնկրետ քրեական գործի հանգամանքների վկայակոչմամբ հանձնարարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ և 223.2-րդ հոդվածներով նախատեսված ենթադրյալ հանցագործության դեպքեր հայտնաբերելիս և քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության մասին հետևության հանգելիս չբավարարվել բացառապես գնահատման ոչ ենթակա օպերատիվ մարմնի կողմից կազմված տեղեկանքներով, այլ այդ տեղեկանքներում արտացոլված տվյալները ստուգել անհրաժեշտ դատավարական գործողությունների և գնահատման ենթակա օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով, ինչից հետո միայն ստացված փաստական տվյալները գնահատել գործ հարուցելու հիմքերի բավարարության տեսանկյունից:

Հիշյալ ժամանակահատվածում ստուգվել է նաև դատապարտյալներին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու մասին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի /այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով/ կայացրած 43 որոշում, որի

արդյունքում 11 որոշում կասեցվել է և դրանք վերանայելու միջնորդագրեր են ուղարկվել Տեղաբաշխման հանձնաժողովին: 10 որոշում Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից վերանայվել է և փոփոխվել, իսկ 1-ի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի կայացվել: Վերը նշված 11 որոշումից մեկի հիման վրա դատապարտյալը կիսաբաց ուղղիչ հիմնարկից տեղափոխվել է բաց ուղղիչ հիմնարկ, մեկով՝ փակ ուղղիչ հիմնարկից՝ կիսափակ, իսկ մնացած 9 որոշումով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք կիսափակ ուղղիչ հիմնարկներից տեղափոխվել են կիսաբաց ուղղիչ հիմնարկ:

Տեղաբաշխման հանձնաժողովը, հիմքում ունենալով դատապարտյալների վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը, մեկուսացվածության ավելի ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկում դատապարտյալի հետ տարվող աշխատանքների ավելի լայն հնարավորությունը, **որոշումներ է կայացրել** ցմահ ազատազրկման դատապարտված **21** անձի մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու մասին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների շրջանակներում վերը նշված որոշումների գործող օրենսդրության համապատասխանությունը ստուգելու արդյունքում, դատախազները որոշումներ են կայացրել այդ ակտերից տասը կասեցնելու և դրանք վերանայելու միջնորդություն ներկայացնելու մասին, նկատի ունենալով, որ Տեղաբաշխման հանձնաժողովն իր որոշումներով չի հիմնավորել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց կողմից դրական վարքագիծ դրսևորելու փաստը, որպիսի հանգամանքը ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ ինպերատիվ պահանջ է՝ դատապարտյալին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու համար:

Հանձնաժողովի որոշումների հիմքում դրված փաստաթղթերի, ինչպես նաև դատապարտյալների անձնական գործերի և անհատական քարտերի ուսումնասիրությամբ դատապարտյալների կողմից պատիժ կրման ընթացքում **դրական վարքագիծ դրսևորելու հանգամանքը չի հիմնավորվել**: Մինչդեռ՝ դրական վարքագիծը պետք է հիմնավորվի դատապարտյալի վարքագծում ընդգծված դրական դինամիկայով, ընդ որում՝ այդ դինամիկայում պետք է հստակ երևա նոսրանալ օրինապահ վարքագծից դրական տարբերությունը:

Ավելին, մի շարք դեպքերում Հանձնաժողովը դատապարտյալներին կիսափակ, այնուհետև կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու համար հաշվի է առել բացառապես նույն ելակետային տվյալները, ինչն անընդունելի է և ակնհայտ անհիմն, քանի որ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրելու պայմաններն էապես տարբերվում են կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրելու պայմաններից: Կիսաբաց ուղղիչ հիմնարկը մեկուսացվածության աստիճանով շատ ավելի մեղմ է, հետևաբար դատապարտյալին կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրելու վերաբերյալ որոշում կայացնելիս Տեղաբաշխման հանձնաժողովը պետք է առնվազն հիմնավորի, որ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալի հետ իրականացվել է սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների՝ տվյալ ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ ու բավարար ծավալը՝ ուղղված դատապարտյալի վերասոցիալականացմանը և ուղղման գործընթացի իրականացմանը, ինչը որոշումներում որևէ կերպ չի հիմնավորվել:

ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի 279-Ն հրամանի հավելված 1-ի 32-րդ կետի համաձայն. «Դատապարտյալների հետ իրականացվող

սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներն ընթացիկ փուլում ներառում են՝

(...) 21) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ՝ պատժի առանձնահատկություններով պայմանավորված աշխատանքներ իրականացնելը: Այդ աշխատանքները ներառում են անհատական և խմբային խորհրդատվությունը, անձնային զարգացում ապահովող մեթոդները, ագրեսիվության մակարդակը նվազեցնող աշխատանքի ձևերը, ինչպես նաև նպատակային այլ ուղիներ և մեթոդներ»:

Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումներով որևէ կերպ հիմնավորված չի եղել նաև դատապարտյալների հետ նմանատիպ աշխատանքներ իրականացնելու հանգամանքը, ինչը, իր հերթին, ևս լրացուցիչ իրավական հիմնավորում է հանդիսացել դատախազների կողմից որոշումները կասեցնելու համար:

Այս համատեքստում ուշադրության է արժանի նաև այն իրողությունը, որ առանձին դեպքերում Տեղաբաշխման հանձնաժողովը կայացված որոշումների իրավաչափությունը հիմնավորելու համար վկայակոչել է այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված ստուգման արդյունքում դատախազների կայացրած որոշումներով հերքվել են:

Այսպես. Տեղաբաշխման հանձնաժողովը որոշումների հիմքում դրել է դատապարտյալների խրախուսված լինելու հանգամանքն այն դեպքում, երբ խրախուսելու մասին որոշումը դատախազի կողմից մինչ այդ կասեցված է եղել, հետևաբար այն չէր կարող իրավական հետևանք առաջացնել, կամ արձանագրվել է դատապարտյալի կողմից ստեղծագործ աշխատանքով զբաղվելու հանգամանքը, մինչդեռ քրեակատարողական հիմնարկում վարվող համապատասխան մատյանում դատապարտյալը հաշվառված չի եղել որպես ստեղծագործող դատապարտյալ, կամ դատապարտյալին վերագրվել է դրական վարքագիծ, մինչդեռ, նրա անհատական քարտում կատարված գրառումների համաձայն, Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից որոշման կայացմանը նախորդող երկու տարվա ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի հետ տարվել են քրեածին վարքից հրաժարվելու ուղղությամբ հոգեբանական գրույցներ, ինչը վկայում է, որ դատապարտյալը մինչ այդ քրեածին վարքագիծ է դրսևորել և այլն:

Ավելին, դատախազների կողմից կասեցված 10 որոշումից 7-ով բացատրություններ են ստացվել քրեակատարողական հիմնարկներում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացրած իրավասու պաշտոնյաներից:

Վերջիններս իրենց բացատրություններում ուղղակի նշել են, որ «(...) Դատապարտյալների հետ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրելու ընթացքում ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված աշխատանքներ չեն տարվել, կամ տարվել են մասամբ: Հետևաբար՝ գտնվելով կիսափակ ուղղիչ հիմնարկում՝ դատապարտյալները դրական վարքագիծ չեն դրսևորել և չեն կարող տեղափոխվել կիսաբաց ուղղիչ հիմնարկ»:

Այլ կերպ ասած՝ դատապարտյալներին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու պարտադիր պահանջ հանդիսացող դրական վարքագծի բացակայությունը հաստատվել է նաև այն իրավասու պաշտոնյաների կողմից, որոնք դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում իրականացնում են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ՝ դատապարտյալի մոտ դրական վարքագիծ ձևավորելու համար:

Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից օրենքով նախատեսված իմպերատիվ պահանջի անտեսմամբ դրական վարքագիծ չդրսևորած դատապարտյալին

մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հետևանքով խախտվում է ոչ միայն օրենքը, այլև կարող է նվազել տվյալ ոլորտում համապատասխան գործառույթներ իրականացնող պետական մարմնի հեղինակությունը, խաթարվել ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը:

Ստուգվել է նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ տույժի կամ խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների պետերի կայացրած 7 որոշում, որոնցից 4-ը կասեցվել է և վերանայման միջնորդագրեր են ուղարկվել քրեակատարողական հիմնարկների պետերին: Ընդ որում՝ տույժի միջոց կիրառելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների պետերի որոշումների կասեցման համար հիմք է հանդիսացել այն, որ ներքին կանոնակարգի խախտում թույլ տալու վերաբերյալ նյութերը նախապատրաստվել են խիստ թերի, իսկ երբեմն՝ որոշակի հակասություններով: Ինչ վերաբերում է խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների պետերի որոշումների կասեցմանը, ապա դրա պատճառն այն է, որ նման որոշումներ կայացնելիս չեն պահպանվել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածի պահանջները, որի 1-ին մասի համաձայն՝ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ իրավական նախապայման են հանդիսանում օրինապահ վարքագիծը, աշխատանքի և ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը, դատապարտյալների՝ ինքնագործ միավորումների աշխատանքներին և միջոցառումներին ակտիվորեն մասնակցելը, ինչպես նաև դրական վարքագիծ դրսևորելը:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում, փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2020 թվականի ընթացքում իրականացրել է 4661 վարույթ, որոնցից 2020-ը վերաբերել են նշանակված պատիժների կատարմանը, 1611-ը՝ իրականացվող վերահսկողություններին, իսկ 1030-ը՝ դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին կազմված զեկույցներին:

Հաշվետու ժամանակահատվածում նշանակված պատիժների կատարման վերաբերյալ իրականացված 2020 վարույթից 1364-ը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված «տուգանք» պատժատեսակի կատարմանը, 420-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված **որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուն**, իսկ 236-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածով նշանակված «հանրային աշխատանքներ» պատժատեսակին:

Սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 1611 վարույթից 1242-ը վերաբերում են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված պատիժը պայմանականորեն չկիրառելուն, 365-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով նախատեսված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելուն, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելուն, իսկ 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված

հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելուն կամ պատժից ազատելուն:

2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ պորբացիայի ծառայությունում հաշվառված է եղել 41 անչափահաս անձ /2019թ.՝ 34 անձ/, որից պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով՝ 34 անչափահաս /2019թ.՝ 27/, 1 անչափահաս՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման /2019թ.՝ 0/, 4-ը՝ «տուգանք» պատժատեսակի դատապարտվելու /2019թ.՝ 2/, 2-ը՝ նշանակված պատիժը «հանրային աշխատանքներ» պատժատեսակով փոխարինելու /2019թ.՝ 0/ հիմքով: Երեք անչափահաս ազատվել է քրեական պատասխանատվությունից և նրանց նկատմամբ կիրառվել են դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ /2019թ.՝ 5/:

Դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին կազմվել է 698 զեկույց:

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա՝ ընդհանուր գումարով 475.421.850 ՀՀ դրամի տուգանքից փաստացի բռնագանձվել է 128.778.390 ՀՀ դրամի չափով, 45.926.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու գործընթացը դադարեցվել է համաներման, ներման, դատապարտյալի մահվան, վաղեմությունն անցնելու, տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու կամ այլ պատճառներով, իսկ 300.717.460 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով տուգանք բռնագանձելու գործընթացը շարունակվում է:

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով **մասնակցել են 1252 դատական քննության:**

Վերը նշվածներից 430-ը վերաբերում են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն /2019թ.՝ 460/, 29-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը /2019թ.՝ 23/, 30-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն /2019թ.՝ 19/, 22-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն /2019թ.՝ 8/, 24-ը՝ հանրային աշխատանքներն ազատագրկմամբ փոխարինելուն /2019թ.՝ 29/, 333-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն /2019թ.՝ 181/, 31-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն /2019թ.՝ 26/, 47-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ այն դադարեցնելուն /2019թ.՝ 89/, իսկ 306-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին /2019թ.՝ 1035/:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 48-ով բերվել է վերաքննիչ բողոք /2019թ.՝ 49/, որոնցից 17-ը բավարարվել է /2019թ.՝ 12/, 5-ով բերվել է վճռաբեկ բողոք /2019թ.՝ 8/, որոնց վարույթ ընդունելը մերժվել է: /2019թ. 1-ը բավարարվել է, 1-ը վերադարձվել է, իսկ 7-ի վերաբերյալ որոշում չի կայացվել/:

Խնդրահարույց իրավիճակ է ստեղծվել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից գործող օրենսդրական կարգավորումների ակնհայտ խախտմամբ՝ առանց դատախազի մասնակցության, 2020 թվականի ապրիլի 23-ին կայացված երկու դատական ակտերով, որոնցով ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի երկու դատապարտյալ պայմանական վաղաժամկետ ազատվել են նշանակված պատժի մնացած մասը կրելուց: Մինչդեռ, դատարանը չէր կարող դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատել, քանի որ նույն դատարանն այլ կազմով 2020 թվականի փետրվարի 24-ին քննության էր առել նրանց դիմումները՝ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան չներկայացնելու, ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի որոշումը վերացնելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելու մասին: Նույն օրը դատարան էին մուտքագրվել դատապարտյալների դիմումները, որոնցով վերջիններս խնդրել էին իրենց բողոքը թողնել առանց քննության և այդ օրվա դատական նիստն անցկացնել առանց իրենց ներկայության, ինչը հաշվի առնելով՝ դատարանը, առանց հիմքերին անդրադառնալու, դատապարտյալների դիմումները մերժել էր: Հետևաբար՝ դատարանը 2020 թվականի ապրիլի 23-ին չէր կարող դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատել, քանի որ չէր անցել այդ հարցերի կրկին քննարկման համար սահմանված 6 ամիս ժամկետը:

Վերը նշված որոշումները դատախազների կողմից բողոքարկվել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ՀՀ վերաքննիչ դատարանը նույն հանգամանքների առկայության պայմաններում, մի դեպքում՝ 2020 թվականի հուլիսի 03-ին բավարարել էր դատապարտյալ Ա.Այդինյանի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ բերված բողոքը և բեկանել այն: Մյուս դեպքում, նույն դատարանը, այլ դատավորի նախագահությամբ, մերժել էր դատապարտյալ Ս.Հարությունյանի վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ բերված նույն պատճառաբանությամբ բողոքը:

Վերը նշված որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք, սակայն այն վարույթ չի ընդունվել:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահի նախագահությամբ 2020 թվականի ապրիլի 23-ին կայացված վերը նշված երկու դատական ակտերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան հաղորդում է ուղարկվել ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահին, իսկ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի կողմից՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահին: Նշված հաղորդումների վերաբերյալ վերջնական պատասխան չի ստացվել, իսկ դատավոր Հ.Սարգսյանը ազատվել է պաշտոնից՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Ուշադրության է արժանի նաև Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից օրենսդրությամբ չնախատեսված գործառույթների իրականացմամբ դատական ակտերի ի կատար ածելու ընթացքին միջամտելը: Հաշվի

առնելով այն, որ դատավորը, օրինական ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու մասին կարգադրության կատարումը կասեցնելու և կից փաստաթղթերի հետ այն դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության Տավուշի բաժնի պետին 2020 թվականի հուլիսի 23-ին և 28-ին համապատասխան գրություններ հասցեագրելով, թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որն իր բնույթով եղել է դիտավորության կամ կոպիտ անփութության հետևանքով, ինչը հիմք է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու: Ուստի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2020 թվականի հուլիսի 30-ին ՀՀ արդարադատության նախարարին ուղարկվել է համապատասխան միջնորդություն: Արդյունքում՝ ՀՀ բարձրագույն դատական խորհուրդն իր՝ 2021 թվականի հունվարի 25-ի որոշմամբ դատավորին հայտարարել է խիստ նկատողություն:

Այլ գործերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնցից մեկը բավարարվել է, իսկ մյուսն ընդունվել է վարույթ:

Խնդրահարույց է նաև ՍԴՈ-1439 գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման պայմաններում դրա տարբերակված կիրառումը տարբեր դատարանների կողմից:

Մասնավորապես.

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1439 գործով 2019 թվականի հունվարի 22-ի որոշման համաձայն. «/.../ մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին»:

Մինչդեռ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020 թվականի ապրիլի 29-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին թիվ ԿԴՅ/0003/13/20 դատական գործով 2020 թվականի հունիսի 24-ի որոշմամբ նշել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պատիժ կրելու ընթացքում դատապարտյալի և պատժի կատարումն ապահովող մարմնի միջև կարող են առաջանալ բազմաթիվ իրավահարաբերություններ, որոնք իրենց բնույթով քրեակատարողական հարաբերություններ են և կարգավորվում են ոչ միայն քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերով, այլև այլ իրավական ակտերով:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պատժի կատարման հետ կապված այն հարցերը, որոնց նյութաիրավական հիմքը քրեական օրենսդրությունն է, կարող են լուծվել բացառապես քրեական դատավարության օրենսդրությամբ:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ համաներման ինստիտուտն իր բնույթով քրեաիրավական ինստիտուտ է, քանի որ նախատեսված է քրեական օրենսդրությամբ և կարգավորում է քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու, պատժի փոխարինման, ինչպես նաև դատվածության վերացմանը վերաբերող հարցեր, հետևաբար՝ համաներման մասին օրենքի դրույթների կիրառելիության

վերաբերյալ ծագած վեճերը կարող են լուծվել բացառապես քրեադատավարական օրենսդրությամբ»:

2020 թվականի մայիսի 26-ի թիվ ԱՐԴ1/0009/15/1 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ «(...)քրեակատարողական հիմնարկի վարչակազմի անգործության դեմ ներկայացված բողոքով դատապարտյալ Ա. Արծրունին բարձրացրել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի կրկին գործադրման համար անհրաժեշտ նվազագույն ժամկետը /նշված հարցի վերաբերյալ նախկին իրավակարգավորումների համաձայն՝ վեց ամիս, իսկ ըստ ներկա իրավակարգավորումների՝ երեք տարի/ լրացած լինելու, հետևաբար՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցը կրկին քննարկելու ու դատարանի առջև բարձրացնելու հիմնախնդիրը: Նկատի ունենալով, որ վերոհիշյալ հարցը ուղղակիորեն վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի շրջանակին, հանդիսանում է դրանց կենսագործունեության համար պարտադիր նախադրյալ, ուստի դրա վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության կամ անգործության դեմ բերված բողոքը ևս ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին»:

Պատժի կատարման հետ կապված հարցի վերաբերյալ ստորադաս դատարանների նմանատիպ տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու և օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի ԿԴ3/0003/13/20 գործով դատական ակտի դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանն ընդունել է վարույթ:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք դատական ակտով ակնկալվում է, որ առկա իրավահարաբերությունների վերաբերյալ ստորադաս դատարանների կողմից ոչ միատեսակ մոտեցումը կչեզոքացվի և, մինչև Ազգային ժողովի կողմից անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների հարցի լուծումը, դատարաններն իրավակիրառ պրակտիկայում կառաջնորդվեն ՀՀ Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ:

Այլ գործերով բերված վճռաբեկ բողոքներից մյուսը վերաբերում է թմրամիջոցների չափերի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ կատարված փոփոխության արդյունքում անձի կատարած արարքի իրավաբանական որակմանը: Մասնավորապես. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հուլիսի 3-ի դատավճռով ամբաստանյալ Արարատ Բագրատյանին մեղավոր է ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և այդ հոդվածի սանկցիայով դատապարտել ազատազրկման՝ 1 /մեկ/ տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Ա.Բագրատյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման համաձայն՝ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի խոշոր չափ է սահմանվել 12.5-62.5 գրամը, իսկ 2.5-12.5 գրամը համարվել է զգալի չափ:

Կատարված փոփոխության արդյունքում Արարատ Բագրատյանին մեղսագրված արարքը համապատասխանել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասին:

Նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու նպատակով ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը բավարարվել է:

2020թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1292 անձ /2019թ.՝ 1292/, որոնցից 249-ը՝ պատժի լրիվ կրումով /2019թ.՝ 266/, 199-ը՝ պայմանական վաղաժամկետ /2019թ.՝ 212/, 13-ը՝ համաներումով /2019թ.՝ 93/, 612-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով /2019թ.՝ 505/, 53-ը՝ դատարանի դահլիճից /2019թ.՝ 138 անձ/, 18-ը՝ հիվանդության պատճառով /2019թ.՝ 10/, 145-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ /2019թ.՝ 67/, 3-ը՝ այլ հիմքերով /2019թ.՝ 0/, հաշվետու ժամանակահատվածում ներման հիմքով դատապարտյալ չի ազատվել /2019թ.՝ 1/:

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով քրեակատարողական հիմնարկներում մահացել է 5 պահվող անձ /2019թ.՝ 21/, որոնցից 2-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում առողջական վիճակի վատթարացման հետևանքով /«Էրեբունի» և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ներում՝ 1-ական դեպք/, 3-ը՝ քրեակատարողական հիմնարկում /«Արմավիր» ԲԿ՝ 1 դեպք՝ առողջական վիճակի վատթարացման հետևանքով, իսկ 1-ը՝ ինքնասպանություն, «Ղատապարտյալներ հիվանդանոց» ԲԿ՝ 1 դեպք՝ կրկին առողջական վիճակի վատթարացման հետևանքով/:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան ունի հետևյալ պատկերը.

- 2011 թվականին՝ 32 պահվող անձ:
- 2012 թվականին՝ 28 պահվող անձ:
- 2013 թվականին՝ 19 պահվող անձ:
- 2014 թվականին՝ 38 պահվող անձ:
- 2015 թվականին՝ 28 պահվող անձ:
- 2016 թվականին՝ 29 պահվող անձ:
- 2017 թվականին՝ 17 պահվող անձ:
- 2018 թվականին՝ 18 պահվող անձ:
- 2019 թվականին՝ 21 պահվող անձ:
- 2020 թվականին՝ 5 պահվող անձ:

Այսպիսով, վերը նշված թվական տվյալներից տեսանելի է, որ վերջին տասը տարվա համեմատ 2020 թվականին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է այնտեղ պահվող անձանց մահվան ամենացածր ցուցանիշը: Հարկ է նշել, որ ՀՀ դատախազության կոլեգիայի 2019 թվականի փետրվարի 27-ի նիստին կոլեգիան որոշել է հանձնարարել ապահովել, որպեսզի ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում և հարկադիր բուժման վայրում պահվող անձի մահվան հանգամանքները պարզվեն բացառապես հարուցված քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցներին, հատկապես տուժողի իրավահաջորդի՝ օրենքով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նախադեպերով սահմանված իրավունքների երաշխավորմամբ:

2020 թվականի ընթացքում 2 դատապարտյալի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով /2019 թվականին նման փաստ չի արձանագրվել/:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 1967 /2020թ.՝ 2221/, որոնցից 914-ը՝ կալանավորված անձ՝ 17-ը՝ կին և 5-ը՝ անչափահաս տղա /2020թ. հունվարի 01-ի դրությամբ՝ 1017 կալանավորված անձ՝ 35 կին, 8 անչափահաս տղա/, 1053 դատապարտյալ՝ 29 կին, 1 չափահաս տղա՝ մինչև 21 տարեկան /2020թ. հունվարի 01-ի դրությամբ՝ 1204 դատապարտյալ, որոնցից 34-ը՝ կին, 1 չափահաս տղա՝ մինչև 21 տարեկան/:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիճակագրությունը հետևյալն է.

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 5142 մարդ, որոնցից 1437-ը՝ կալանավորված անձ:

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 4532 մարդ, որոնցից 1215-ը՝ կալանավորված անձ:

2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 4756 մարդ, որոնցից 1228-ը՝ կալանավորված անձ:

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3923 մարդ, որոնցից 1035-ը՝ կալանավորված անձ:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3880 մարդ, որից 1113-ը՝ կալանավորված անձ:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3873 մարդ, որոնցից 1114-ը՝ կալանավորված անձ:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3833 մարդ, որոնցից 1200-ը՝ կալանավորված անձ:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 3536 մարդ, որոնցից 1297-ը՝ կալանավորված անձ:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2266 մարդ, որոնցից 929-ը՝ կալանավորված անձ:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2221 մարդ, որոնցից 1017-ը՝ կալանավորված անձ:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1967 մարդ, որոնցից 914-ը՝ կալանավորված անձ:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 88 անձ /2020թ.՝ 91/:

2020 թվականի ընթացքում ազատազրկման վայրերից Իրանի Իսլամական Հանրապետություն է տեղափոխվել 28 անձ /2019թ՝ 1 անձ/, Նորվեգիայի Թագավորություն՝ 3 անձ, Ուկրաինա՝ 1 անձ, ՌԴ՝ 4 անձ /2019թ՝ 4 անձ/:

ՌԴ ազատազրկման վայրերից ՀՀ ազատազրկման վայրեր տեղափոխվել է 2 անձ /2019թ՝ 12 անձ/, Բելառուսից՝ 1 անձ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2020 թվականի ընթացքում ստացվել է հացադուլ հայտարարելու 601 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով, հիմք ընդունելով ՀՀ դատախազության կոլեգիայի՝ 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման պահանջները, ուսումնասիրվել է հացադուլ հայտարարողի նկատմամբ ՔԿ հիմնարկում ձեռնարկված միջոցառումների իրավաչափությունը, պարզվել են հացադուլ հայտարարելու պատճառները, բոլոր դեպքերում հացադուլ հայտարարած անձը հարցման

է ենթարկվել, ընդ որում մի շարք դեպքերում դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության շնորհիվ կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձանց կողմից 2020 թվականի ընթացքում արձանագրվել է **ինքնավնասման 537** դեպք, որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական, առողջական խնդիրների հետ, որոշ դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են անօրինական պահանջներ:

Յուրաքանչյուր ինքնավնասման դեպքով նախապատրաստվել են նյութեր, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ ՔԿՀ հոգեբանի կողմից կատարվել են հոգեբանական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ հետագայում անձի կողմից ինքնավնասման փորձերը կանխելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրված ինքնավնասումների, ինքնախեղումների և հանցագործության դեպքերի վերաբերյալ իրականացվող քննության արդյունավետությունը բարձրացնելու, այդ բնագավառում հնարավոր բացթողումներն ու տեղի ունեցածին ոչ ճիշտ իրավական գնահատական տալու հնարավոր դեպքերը բացառելու, կատարված դեպքը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ենթադրյալ ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պայմանավորված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկածներ լինելու, ինչպես նաև փաստական հանգամանքներով պայմանավորված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից մարզերի և վարչական շրջանների դատախազներին տրվել է համապատասխան հանձնարարական, որպեսզի 1. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից ինքնավնասման, ինքնախեղման և հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ստանալիս, կատարվածը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ենթադրյալ ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պայմանավորված լինելու դեպքում (օրինակ՝ քրեակատարողական հիմնարկի համապատասխան խցում տեղաբաշխելու կանոնները խախտելը), այն անմիջապես ուղարկվի ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն:

2. Ոչ հատուկ սուբյեկտների անմիջական գործողություններից, այլ անուղղակի, այդ թվում՝ վերջիններիս լուռ համաձայնությամբ տեղի ունեցած դեպքով, ինչպես նաև փաստական հանգամանքներով պայմանավորված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իրավակարգավորման շրջանակներում, քրեական գործ հարուցելու համար նյութերի նախապատրաստումը հանձնարարվի ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանման քննիչին:

3. Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից ինքնավնասման, ինքնախեղման դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերի շրջանակներում, նրանց կողմից ինքնախեղման, ինքնավնասման պատճառների վերաբերյալ բացատրություն տալուց հրաժարվելու կամ ողջամիտ պատճառաբանություն

չներկայացնելու դեպքում, վերջիններիս հարցման ենթարկել և, ըստ ստացված տեղեկության, 1-ին կետում նշված հանգամանքները պարզելու դեպքում, հարցման ենթարկելու մասին արձանագրությունն ու նախապատրաստվող նյութերն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն, կամ 2-րդ կետում նշված հանգամանքները պարզելու դեպքում հարցման ենթարկելու մասին արձանագրությունն ու նյութերն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանման քննիչին:

Միաժամանակ, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում առկա են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնց լուծումը կարևոր նշանակություն ունի ինչպես ՀՀ դատախազության՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության պատշաճ իրականացման, այնպես էլ՝ հանցավորության դեմ պայքարի, անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Այսպես.

Նախորդ տարվա հաղորդման մեջ նշվել էր, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում առկա են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից մշակվել են «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր՝ ուղարկելով այն ՀՀ արդարադատության նախարարին, մինչդեռ դրանք չեն ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում առկա մի շարք իրավական խնդիրներ ի հայտ են եկել հաշվետու տարում, որոնց համալիր քննարկման և իրավակիրառ պրակտիկայի համապարփակ վերլուծության արդյունքում ՀՀ դատախազությունը պատրաստել է օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծեր և ուղարկել ըստ իրավասության, և առկա խնդիրների լուծման ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ գրություն է ուղարկվել իրավասու մարմիններին:

Այսպես.

1. «Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազն իրավունք ունի ստուգելու քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան

վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու պետական մարմնի ղեկավարին:

Այս դրույթի հետ կապված իրավական խնդիրը հետևյալն է. դատախազության կողմից իրավական ակտը կասեցնելու և վերանայման միջնորդագիր ներկայացնելու արդյունքում պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կատարող մարմինը կարող է նորից ընդունել օրենսդրությանը հակասող իրավական ակտ:

«Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Դատախազությանը Սահմանադրությամբ վերապահված այս գործառնության արդյունավետ և բովանդակային առումով լիարժեք կենսագործման նախապայմանը օրենսդրությամբ դատախազին այնպիսի լիազորությունների վերապահումն ու դրանց իրականացման ընթացակարգերի նախատեսումն է, որոնք կապահովեն ինչպես անձի հիմնական իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգի, հիմքերի ու պայմանների պահպանումը: Հակառակ դեպքում, օրենքում հսկողական գործառնության բխող դատախազական լիազորությունների բացակայության պայմաններում, այս ոլորտում դատախազական հսկողությունը կդառնա առարկայագուրկ և պատրանքային:

Հսկողության՝ որպես պետական գործառնության պարտադիր բովանդակային բաղադրիչը հսկողության օբյեկտի կողմից օրենքի հնարավոր խախտումը կանխելուն և թույլ տրված խախտման հետևանքները վերացնելուն ուղղված անմիջական ներգործության մեխանիզմների կիրառման հնարավորությունն է: Տեսական գրականության մեջ ևս հսկողությունը դիտվում է որպես «օրենքի խախտումների հայտնաբերման ու վերացման, ինչպես նաև նախականխման» միջոցով օրինականության ապահովմանն ուղղված գործունեություն:

Գործող կարգավորումը, սակայն, իրավական կարգավորման չի ենթարկել այն դեպքերը, երբ օրենքի ակնհայտ խախտում հայտնաբերելու դեպքում դատախազը միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմին կամ տվյալ մարմնի վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, կամ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ իրավասու պետական մարմնի ղեկավարին, սակայն խախտումը վերացնելու իրավունք ունեցող մարմինները և պաշտոնատար անձինք դատախազի միջնորդությունը թողնում են անհետևանք՝ շարունակելով պահպանել անձի իրավունքների կամ պատժի կրման կարգի խախտման հանգեցրած վիճակը, ընդ որում՝ բոլոր հաջորդական կասեցումները և վերանայելու վերաբերյալ միջնորդագրերը ևս թողնվում են անհետևանք: «Դատախազության մասին» օրենքը նման իրավիճակի համար որևէ հստակ կարգավորում չի նախատեսում՝ դատախազական հսկողությունը դնելով հարցականի տակ և դրանով իսկ նսեմացնելով «Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի նորմատիվային նշանակությունը: Այլ խոսքով, սահմանադրի կողմից «Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով դատախազությանը վերապահված գործառնությամբ չէզոքացվում է՝ դրա իրականացման օրենսդրական գործիքակազմ չնախատեսելու եղանակով: Նման մոտեցումը զրկում է սահմանադրական մարմնին՝ կոնկրետ դեպքում դատախազությանը, իրականացնելու իր սահմանադրական գործառնությամբ:

Բացի այդ, գործնականում լինում են դեպքեր, երբ համապատասխան միջնորդագիր ներկայացնելուց հետո տևական ժամանակ քրեակատարողական ծառայողի կողմից քննարկվում և վերանայվում է դատախազի միջնորդագիրը, իսկ այդ ընթացքում քրեակատարողական ծառայողի կողմից կայացված ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող որոշումը շարունակում է իրավական հետևանքներ ունենալ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի համար /օրինակ՝ որոշում է կայացվում պատիժը կրելու համար դատապարտյալին մեկուսացվածության առավել ցածր՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու մասին, դատախազի կողմից համապատասխան միջնորդագիր է ներկայացվում այդ ակտը վերանայելու համար, սակայն մինչ վերանայումը դատապարտյալը շարունակում է գտնվել մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկում, կամ հակառակ, օրինակ, երբ, ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող որոշմամբ դատապարտյալին հետագա պատիժը կրելու նպատակով որոշում է կայացվում տեղափոխել մեկուսացվածության առավել բարձր ուղղիչ հիմնարկ և այլն/։ Նշվածից ակնհայտ է, որ դատախազի կողմից ներկայացված միջնորդագրի քննարկման անհապաղության սկզբունքը բխում է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցի ենթարկված անձանց իրավունքներից և նշված ոլորտում դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի արդյունավետ իրականացման գործընթացից։

Նշված խնդիրները լուծելու համար առաջարկվում է սահմանել, որ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազն իր որոշմամբ կասեցնում է այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմին կամ այն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու պետական մարմնի ղեկավարին։ Դատախազի կողմից օրենսդրությանը հակասող ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշումը պարտադիր է քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի համար։ Քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի կայացրած ակտերը վերանայելու վերաբերյալ միջնորդագիրը պետք է քննարկվի ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում՝ քննարկման օրվա և ժամի մասին նախապես գրավոր տեղեկացնելով միջնորդությունը ներկայացրած դատախազին։ Ընդ որում՝ վերջինս իրավունք ունի ներկա գտնվելու քննարկմանը։

Դատախազի միջնորդագրի քննարկման արդյունքում վերանայված ակտի՝ օրենսդրությանը հակասելու դեպքում, դատախազի վերադաս դատախազը, իսկ պետական մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից ակտ կայացրած լինելու դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազը կամ նրա՝ ոլորտը համակարգող տեղակալը կարող է իր որոշմամբ վերացնել այդ ակտը։

Առաջարկվող փոփոխությունները հիմնված են նաև օտարերկրյա (օրինակ՝ Ուկրաինա, Բելառուսի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) պետությունների փորձի և գործող օրենսդրությունների ուսումնասիրության վրա։

Նշված առաջարկությունն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն։

2. Գործող օրենսդրական կարգավորումները չեն սահմանում հետախուզվող դատապարտյալին հայտնաբերելու դեպքում այդ մասին դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին հայտնելու

պարտականություն, ինչի արդյունքում գործնականում առկա են դեպքեր, երբ հետախուզվող անձն իրավասու մարմնի կողմից հայտնաբերվում է, ներկայացվում համապատասխան հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացրած դատարան, սակայն դատապարտյալին հայտնաբերելու մասին վերջինիս վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինը մնում է անտեղյակ: Արդյունքում՝ հնարավոր է դատարան ներկայացնելուց հետո դատապարտյալը չներկայանա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին, իսկ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինը՝ դատապարտյալին հայտնաբերելու վերաբերյալ տեղեկություններ չունենալու պատճառով չձեռնարկի համապատասխան քայլեր՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Նման պայմաններում ակնհայտ է, որ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը կարող է տևական ժամանակ դուրս մնալ վերջինիս վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի տեսադաշտից՝ դրանով իսկ վտանգելով պատժի նպատակների իրականացման գործընթացը, քանզի նման իրավիճակը հանգեցնում է դատապարտյալի՝ պատիժը կրելուց խուսափելուն:

Այս խնդիրը լուծելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 434¹ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված հետախուզվողին հայտնաբերելուց և դատարան ներկայացնելուց հետո, դատարանը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, հետախուզվողին հայտնաբերելու մասին տեղեկացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին: Այսպիսի կարգավորման դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված հետախուզվողին հայտնաբերելուց և դատարան ներկայացնելուց հետո, դատարանը կունենա հստակ իրավական պարտականություն՝ հետախուզվողին հայտնաբերելու մասին տեղեկացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին, ինչն էլ կապահովի վերջինիս գործառույթների լիարժեք իրացումն ու պատժի ի կատար ածումը:

3. Մեկ այլ իրավական խնդիր է այն, որ մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մեկ անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը դատարանի կողմից մեկ վարույթում միացնելու հարցի վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումն ընդհանուր իրավասության դատարանների կողմից կիրառվում է հակասող մեկնաբանություններով:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի իրավակարգավորման համաձայն՝ մեկ վարույթում նույն ամբաստանյալի վերաբերյալ տարբեր քրեական գործերի միացումը դատարանի հայեցողական լիազորությունն է, քանզի քննարկվող հոդվածով այդպիսի իմպերատիվ պահանջ չի սահմանվում, այլ օգտագործվում է ընկալող են միացվել² արտահայտությունը, սակայն դատարանների կողմից ոչ միասնական մոտեցում ցուցաբերելու պատճառով, հետագայում, տարբեր ժամանակահատվածներում, նույն անձի վերաբերյալ ընդհանուր իրավասության

դատարանների կողմից նշանակված պատժաչափերի և պատժի կրման ժամկետների հաշվարկման մասով արդեն դատապարտյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց համար ստեղծվում է անբարենպաստ վիճակ:

Նույն ամբաստանյալի վերաբերյալ տարբեր դատարաններում և (կամ) նույն դատարանի տարբեր դատավորների վարույթներում քննվող քրեական գործերի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի կարգով չմիացնելու դեպքում, նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հիմքով, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացվել են բազմաթիվ վճռաբեկ բողոքներ, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքները վարույթ չեն ընդունվել:

Ընդ որում՝ առկա է օրենսդրական բաց՝ այնքանով, որքանով օրենսդիրը չի սահմանել նման դեպքերում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու օրենսդրական կարգավորում, ինչը, իր հերթին, կարող է հանգեցնել պատժի համաչափության, պատիժներ նշանակելիս օրինականության սահմանադրական սկզբունքների խախտման: Վերոշարադրյալ դատավարական խնդրի լուծված չլինելու հանգամանքն իր արտացոլումն է գտել իրավակիրառ պրակտիկայում:

Նշված խնդիրը կարգավորելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կողմից պատրաստվել է օրենսդրական փոփոխության համապատասխան նախագիծ, որն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրքի/ 223¹-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկները քննում են ուղղիչ հիմնարկներում և կալանավորվածներին պահելու վայրերում Օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Այսինքն, քրեակատարողական հիմնարկը, բացի Օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերից, իրավասություն չունի Օրենսգրքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու այլ բնույթի վարչական իրավախախտում կատարած կալանավորված անձանց և դատապարտյալներին, մինչդեռ գործնականում քրեակատարողական հիմնարկներում կատարվում են այլ զանցանքներ ևս, ինչպիսին են, օրինակ, Օրենսգրքի 44¹-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ *առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը* և 53-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ *ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը մանր չափերի վնաս է պատճառել:*

Օրենսգրքի 267-րդ հոդվածի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ այն չի ներառում իրավանորմեր, որոնք հնարավորություն կտան կալանավորված անձանց կամ դատապարտյալներին մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննությանը: Արդյունքում խախտվում է վերը նշված անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքը, իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը: Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ այն դեպքերում, երբ խախտում կատարած անձը գտնվում է անազատության մեջ, իրավասու պաշտոնատար անձի պատճառաբանված գեկուցագրի հիման վրա ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարը նշագրում է կատարում վարույթ

չհարուցելու մասին՝ մինչև խոչընդոտող հանգամանքի վերացումը, և ոստիկանության տարածքային բաժինները կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ վարչական վարույթ չեն հարուցում: Արդյունքում՝ կալանավորված անձինք և դատապարտյալները վարչական պատասխանատվության չեն ենթարկվում:

Վարչական իրավախախտում կատարելու համար կալանավորված անձանց և դատապարտյալներին պատասխանատվության չենթարկելու պրակտիկան հակասում է օրենքի առջև հավասարության սկզբունքին՝ դրանով իսկ իմաստազրկելով վարչական պատասխանատվության ինստիտուտի էությունը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ արդարադատության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում համապատասխան օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու հնարավորությունը քննարկելու նպատակով գրություն է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն:

Անհանգստացնողն են ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դրսևորումներն ու դրանց ծավալները:

Քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո, այս բնույթի հանցագործության դեպքերի վերաբերյալ 2020 թվականի ընթացքում հարուցվել է 16 քրեական գործ: Որպես կանոն, այս բնույթի հանցավոր արարքների վերաբերյալ քրեական վարույթ հիմնականում նախաձեռնվել է ՀՀ ԱԱԾ և ՀՀ ոստիկանության կողմից, ինչի մասին է վկայում նաև այն, որ հարուցված 16 քրեական գործից միայն 5 դեպքով է քրեակատարողական ծառայությունը ներգրավվել անհրաժեշտ օպերատիվ տեղեկության իրացմանը: Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկների իրավասու պաշտոնատար անձինք՝ որպես դատապարտյալների և կալանավորված անձանց հետ ամենօրյա ռեժիմով շփումներ ունեցող հետաքննության մարմիններ, առավել քան տեղեկացված պետք է լինեն քրեական ենթամշակույթի տարբեր դրսևորումներին, հետևաբար, ամենօրյա աշխատանքի միջոցով, քրեադատավարական գործիքակազմով ընձեռված հնարավորությունների շրջանակներում, պարտավոր են, անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ճանապարհով, գործուն միջոցներ ձեռնարկել քրեական ենթամշակույթին առնչվող արարքները բացահայտելու, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելու, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց դիմելու հանցավոր սխեմաները՝ այդպիսիք կանխարգելելու և չեզոքացնելու ուղղությամբ իրացնելով իրենց դատավարական հնարավորությունները: Այս նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում հրավիրվել են մի շարք խորհրդակցություններ, որոնց մասնակցել են նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության իրավասու պաշտոնատար անձինք: Քննարկման արդյունքում նախանշվել են կազմակերպված հանցավորության առավել վտանգավոր այս դրսևորումների նախականխման, բացահայտման, նման գործերով քննության որակի և ճիշտ մեթոդիկայի ապահովման ուղղությունները, ինչպես նաև քննության տարբեր փուլերում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ

իրականացնող և նախաքննական մարմինների համագործակցության արդյունավետ եղանակները:

Մտահոգիչ է նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ դեպքերի վիճակագրությունը: Մասնավորապես 2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրանց ձեռքբերման վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների տարբեր մասերով հարուցվել է 91 քրեական գործ: Ինքնին առավել քան մտահոգիչ իրողություն է քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ներգրավվածությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերին: 2020 թվականի ընթացքում քրեական հետապնդում է իրականացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների 12 աշխատակցի նկատմամբ, որոնցից 4 անձի մասով քրեական հետապնդումը վերաբերել է քրեակատարողական հիմնարկի տարածքում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը:

Հաշվի առնելով այս բնույթի հանցագործությունների բարձր լատենտայնությունը՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ վիճակագրությունը, մեր կարծիքով, ամբողջությամբ չի արտացոլում առկա իրավիճակը, հետևաբար այս բնույթի հանցագործության դեպքերի նախականիսման առումով էական նշանակություն ունի ինչպես թմրամոլության հակում ունեցող անձանց նկատմամբ առավել արդյունավետ հսկողությունը, այնպես էլ անազատության մեջ պահվող անձանց անվամբ ստացվող հանձնուքների առավել դետալային ստուգումը, որպիսի հանգամանքը էականորեն կնվազեցնի քրեակատարողական հիմնարկների տարածք թմրամիջոցներ փոխանցելու հնարավոր դեպքերը:

Այս առումով առանցքային նշանակություն ունի նաև քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ գտնվող անձանց մոտ բջջային հեռախոսներ պահելու հնարավոր դեպքերը բացահայտելու ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունավետությունը, նկատի ունենալով, որ անազատության մեջ գտնվող անձինք թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվում են բջջային հեռախոսների միջոցով թմրամիջոցների իրացմամբ զբաղվող անձանց հետ կապ պահպանելու եղանակով: Նշված խնդրին արմատական լուծում կարող է տալ նաև քրեակատարողական հիմնարկների տարածքում բջջային կապի ծածկույթը բացառող անհրաժեշտ միջոցների ներդրումը:

2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ է ընդունվել նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած 96 անձ: Նշվածն ինքնին վկայում է այն մասին, որ պատժի կատարման ընթացիկ և ավարտական փուլերում հիշյալ անձանց հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, ինչպես նաև հետպատժա փուլում՝ անձի նկատմամբ իրականացված վերասոցիալականացման միջոցառումները՝ հասարակությունում վերաինտեգրվելու և օրինապահ վարքագիծ ձևավորելու աշխատանքները, բավարար մակարդակի վրա չեն գտնվել, հետևաբար առկա վիճակագրությունը փաստում է, որ կատարված աշխատանքները չեն նպաստել ռիսկերի և պահանջմունքների ճիշտ գնահատմանը և այնպիսի միջոցառումների պլանավորմանը, որոնք հնարավորություն կտային նվազեցնելու կատարված հանցագործության կրկնության հավանականությունը, դատապարտյալի մոտ բացասական հակումների բացահայտմանը, դրանց հիման վրա ուղղման անհրաժեշտ ծրագրի կազմմանը և այդ ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը: Մինչդեռ, վերասոցիալականացման միջոցառումների արդյունավետությունը հնարավոր է գնահատել պատժի նպատակների

իրացված լինելու տեսանկյունից՝ պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի՝ հասարակությանը վերաինտեգրվելով, նրան շրջապատող միջավայրում գտնվող անձանց հետ փոխհարաբերությունները բարելավելով, հանցավոր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտություն է Քրեակատարողական ծառայության և, ընդհանրապես, պատժի կատարման գործընթացների արմատական բարեփոխումները՝ սկսած այդ գործընթացների կառուցակարգերից մինչև դրանցում ներգրավված աշխատակիցների կրթական, մասնագիտական, իրավական ու սոցիալական երաշխիքների համապարփակ զարգացումը: Այս ոլորտում արդեն իսկ նախաձեռնված բարեփոխումների արդյունքներն ակնառու են (ինչպես վկայում են վերը բերված տվյալները), սակայն դրանց շարունակականությունն ու կատարելագործումն անհրաժեշտություն է:

8. Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ

Հայաստանի Հանրապետության դատախազության հիմնական առաջնահերթություններից է միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառնությունների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին միջնորդություններ.

Չգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ուղարկված և ստացված միջնորդությունների թիվը:

2020 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 315 միջնորդություն (2019թ.՝ 161), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 520 միջնորդություն (2019թ.՝ 456), ընդամենն ուղարկվել է 835 միջնորդություն (2019թ.՝ 617), որից 52-ը՝ կոռուպցիոն հանցագործություններով (2019թ.՝ 35):

Պետք է նշել, որ 2020թ. ընթացքում դատախազության կողմից մշակվել և քննչական մարմիններին են ուղարկվել կոռուպցիոն հանցագործությունների գործերով քննվող քրեական գործերով տարբեր օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող՝ իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություններ կազմելու վերաբերյալ ուղեցույցներ, ինչի արդյունքում թափափուր են բարելավվել է դրանց որակը և կրճատվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից դրանց կատարման ժամկետները:

Հասարակական հնչեղություն ունեցող, բարդ, բազմադրվազ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, հատկապես հանցավոր ճանապարհով ձեռք բերված, օտարերկրյա պետություններում գտնվող գույքի հայտնաբերման, արգելադրման ուղղությամբ դատավարական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ 2019-2020 թվականներին իրավական օգնություն ցույց տալու մասին ավելի քան 60 միջնորդություն է ուղարկվել՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Շվեյցարիայի Համադաշնության, ինչպես նաև Չեխիայի, Իտալիայի, Ավստրիայի, Հունաստանի, Լատվիայի, Ֆրանսիայի, Լիբանանի Հանրապետությունների իրավասու մարմիններին:

Նույն նպատակով ակտիվորեն օգտագործվել են նաև Եվրոջասթի ուղիները: Իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ընթացքում ակտիվ կապ է պահպանվել առանձին գործընկեր երկրների իրավասու մարմինների հետ:

Տեսակապով քննարկումներ են կազմակերպվել՝ նաև վարույթ իրականացնող մարմինների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով պարզաբանելու միջնորդությունների

կատարման հետ կապված հարցեր և նպաստելու միջնորդությունների պահանջների արդյունավետ կատարմանը:

2018 թվականի սեպտեմբերին Դատախազների միջազգային ասոցիացիայի 23-րդ տարեկան համաժողովի շրջանակներում հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների հայտնաբերման և վերադարձման հարցում համագործակցության շուրջ Շվեյցարիայի Համադաշնության գլխավոր դատախազի հետ ձեռք բերված գործնական և առարկայական պայմանավորվածությունների իրագործման արդյունքում՝ նշված պետության գլխավոր դատախազության կողմից նշանակվել են ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցության համար պատասխանատու աշխատակիցներ, որոնք օպերատիվ կերպով կատարել են վերոնշյալ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունները: Արդյունքում ստացվել են քրեական գործերի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցներ, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որոնց շնորհիվ բացահայտվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման բարդ սխեմաներ:

2018 թվականին կայացած ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազների հանդիպման արդյունքում զգալի առաջընթաց է արձանագրվել ԻԻՀ իրավասու մարմինների կողմից քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ժամկետների կրճատման ուղղությամբ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային համագործակցության վարչությունում նույնպես նշանակվել են ՀՀ գլխավոր դատախազության հետ համագործակցության համար պատասխանատու աշխատակիցներ, որոնց հետ ամենօրյա համագործակցության շնորհիվ ևս ստացվել են քրեական գործերի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցներ և ներկայումս քննարկվում է հանցավոր ճանապարհով ստացված գույքերի վրա կալանք դնելու հարցը:

Լատվիայի Հանրապետության գլխավոր դատախազության հետ համագործակցության արդյունքում կատարվել են վերոնշյալ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունները և արդյունքում ստացվել են քրեական գործերի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցներ, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, կալանք է դրվել նաև բանկային հաշվի վրա:

Այդուհանդերձ, այս ոլորտում ակտիվ շարունակական աշխատանքի կարիք դեռ կա՝ նկատի ունենալով, որ առանձին դեպքերում, առանձին երկրների իրավասու մարմինների կողմից պատշաճ, լիարժեք չեն կատարվում անհրաժեշտ տեղեկությունների փոխանցումը, առանձին դատավարական գործողությունները՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ երկրների ներքին օրենսդրական կարգավորումների խնդիրը, միջազգային որոշ պայմանագրերի չանդամակցությունը, ինչպես նաև համագործակցության բավարար մակարդակի բացակայությունը:

Այս խնդիրները լուծելու նպատակով՝ ակտիվորեն ներգրավվում են նաև դիվանագիտական կառույցների հնարավորությունները, աշխատանքներ են տարվում նաև իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների պատշաճ, կոնվենցիոնալ պահանջներին բավարարելու բաղադրիչներն ապահովելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 148 միջնորդություն (2019թ.՝ 129), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 29 միջնորդություն (2019թ.՝ 34), ընդհանուր առմամբ ստացվել է 177 միջնորդություն (2019թ.՝ 163), որոնցից 6-ը՝ կոռուպցիոն հանցագործություններով:

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

2020 թվականի ընթացքում ուղարկվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 38 միջնորդություն (2019թ.՝ 40), որոնցից 26-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների, իսկ 12-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 38 հանձնման միջնորդությունից 12-ը բավարարվել է (2019թ.՝ 14), 6-ը մերժվել է (2019թ.՝ 7), 20-ը քննարկման փուլում են: Բավարարվել է նաև նախկինում ներկայացված ևս 6 միջնորդություն:

Հարկ է նշել, որ ՌԴ գլխավոր դատախազության հետ սերտ համագործակցության շնորհիվ ՌԴ գլխավոր դատախազության կողմից բավարարվել է ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Լևոն Սարգսյանին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը, և նա տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 20 միջնորդությունից (2019թ.՝ 31) բավարարվել է 6-ը, մերժվել՝ 2-ը, 6-ն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 6-ը գտնվում է քննարկման փուլում:

Բավարարվել է նաև նախորդ տարվանից փոխանցված 4 միջնորդություն:

ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 141 անձի վերաբերյալ (2019թ.՝ 187):

Դատախազները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարան են ներկայացրել միջնորդություններ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր, հանձնման համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորման ժամկետները երկարացնելու մասին և մասնակցել դրանց քննության դատական նիստերին:

Դատախազները մասնակցել են նաև հանձնումը թույլատրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումների դեմ բերված բողոքներով կայացած դատական նիստերին:

Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիության, ինչպես նաև քաղաքական ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու համար լիազոր մարմին դիմած լինելու հարցը պարզելու նպատակով՝ համապատասխան հարցումներ են կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, անմիջապես տեղեկացվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինները, պահանջվել են հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ նրանց ՀՀ քաղաքացի հանդիսանալու դեպքում առաջարկվել է ուղարկել հարուցված քրեական գործերը՝ ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Շարունակում է չլուծված մնալ դատախազության կողմից նախկինում վեր հանված ներքոնշյալ խնդիրը:

Օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց կողմից իրենց նկատմամբ օրենքով նախատեսված կարգով որոշակի դատավարական և հանձնման բնագավառում գործող միջազգային պայմանագրերով նախատեսված մեխանիզմների իրագործումը խաթարելու, փախստականների և ապաստանի բնագավառը կարգավորող միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության իրավունքի չարաշահման հարցը կարգավորելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազությունը մշակել էր մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթ:

Նախագծերի փաթեթը մշակելու նպատակն էր հստակեցնել օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու հայցով դիմելու կարգն ու ժամկետները, սահմանել այդ հայցերի քննարկման արագացված ժամկետներ, կրճատել բացասական որոշումների բողոքարկման և դրանք ՀՀ դատարանների կողմից քննելու ժամկետները՝ հաշվի առնելով ակնհայտորեն անհիմն հայցերի դեպքում իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքը:

Սակայն, նախագծերի փաթեթը կառավարության կողմից հավանության արժանանալուց և ՀՀ Ազգային ժողով ներկայացվելուց հետո, հանվեց ՀՀ Ազգային ժողովի նիստի օրակարգից և հարցն այդպիսով մնաց չլուծված ու առկախված:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված մի շարք հետախուզվողներ ազատվել են կալանավորումից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կալանավորման համար նախատեսված առավելագույն ժամկետը լրանալու և նրանց կողմից ներկայացված՝ ապաստան ստանալու վերաբերյալ դիմումներով վերջնական որոշում ընդունված չլինելու պատճառով, իսկ հետագայում անհրաժեշտություն առաջանալիս հնարավոր չի լինում նրանց հայտնաբերել:

Այդուհանդերձ՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից դրսևորած հետևողականության շնորհիվ վերոնշյալ փոփոխությունների փաթեթը ՀՀ իրավասու գերատեսչության կողմից 2020թ. կրկին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը և հավանության արժանացել ու կրկին ուղարկվել ՀՀ Ազգային ժողով:

2020 թվականին կարգավորվել է նաև ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած և ՀՀ տարածքում հայտնաբերված ՀՀ քաղաքացիներին կալանավորելու խնդիրը:

Չնայած ՀՀ արդարադատության նախարարության կողմից միասնական մոտեցման բացակայությանը՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ձևավորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478. 3-րդ հոդվածի 8-րդ մասի կիրառման պրակտիկա, որի արդյունքում բացառվել են անձանց անհարկի արգելանքի տակ պահելու, նրանց կալանավորելու մասին վիճահարույց միջնորդություններ դատարան ներկայացնելու դեպքերը:

Մանավորապես՝

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների մեղադրանքով հետախուզվող և ՀՀ

տարածքում հայտնաբերված ՀՀ քաղաքացիները վարույթը ստանալու նպատակով, ինքնաբերաբար, 30 կամ 40 օր ժամկետով այլևս չեն կալանավորվում:

Նրանց ձերբակալման դեպքում հարցն օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հետ քննարկվում է օպերատիվ կերպով և, ձերբակալման համար նախատեսված 72 ժամվա ընթացքում քրեական գործերը ՀՀ իրավասու մարմիններին փոխանցելու վերաբերյալ հստակ ժամկետներ և համապատասխան միջնորդություն օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից չստացվելու դեպքում, ՀՀ քաղաքացիներն ազատվում են արգելանքից, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.3-րդ հոդվածի 8-րդ մասի կիրառման պրակտիկայի փոփոխության շնորհիվ բացառվել են առանց օտարերկրյա պետության համապատասխան միջնորդության ՀՀ քաղաքացիներին կալանավորելու մասին միջնորդություններ դատարան ներկայացնելու դեպքերը:

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր).

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 4 քրեական գործ (2019թ.՝ 15), որոնցից 3-ը ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 1-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից վարչությունում ստացվել է 12 քրեական գործ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 10):

2020թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է զարգացնել և ընդլայնել համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների, պետական այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Մասնավորապես.

ա) Համագործակցությունն այլ պետությունների դատախազությունների հետ.

1. Շարունակելով համագործակցությունը ՌԴ գլխավոր դատախազության հետ՝ 2020 թվականին նախապատրաստվել և 2021 թվականի հունվարի 12-ին ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազների կողմից ստորագրվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև 2021-2022 թվականների համագործակցության հերթական ծրագիրը:

Համագործակցության ծրագրով երկու դատախազությունների աշխատակիցների ներգրավմամբ նախատեսվում է անցկացնել 4 միջոցառում, որոնցից 2-ը Երևանում, 2-ը՝ Մոսկվայում:

Միջոցառումների հիմնական թեմաներն են՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսանենգության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ դատախազական հսկողության, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազական հսկողության արդյունավետության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները բռնագանձելու, շրջակա միջավայրի պաշտպանության և բնօգտագործման ոլորտում օրինականության ապահովման, ինչպես նաև անչափահասների իրավունքների և օրինական շահերի ապահովման հետ կապված արդիական հարցերը:

Համագործակցության ծրագրով նախատեսված է նաև երկու դատախազությունների միջև գերատեսչական և գիտական հրապարակումների, մեթոդական նյութերի փոխանակում:

2. ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վահե Հարությունյանը 2020թ. դեկտեմբերի 22-ին ընդունել է Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն աշխատանքային այց կատարած Ռուսաստանի Դաշնության հարավային ռազմական օկրուգի զինվորական դատախազ Սերգեյ Կոլոմիեցին և ՌԴ քննչական կոմիտեի՝ հարավային ռազմական օկրուգի զինվորական քննչական վարչության ղեկավար Սերգեյ Արեֆևին:

ՀՀ զինվորական դատախազը բարձր է գնահատել ՀՀ և ՌԴ զինվորական դատախազությունների միջև ձևավորված և շարունակվող բարձր մակարդակի ու արդյունավետ համագործակցությունը, որը բխում է երկու երկրների միջև առկա բարեկամական և ռազմավարական հարաբերությունների ոգուց: ՀՀ զինվորական դատախազը հավելել է, որ Արցախի Հանրապետությունում ՌԴ խաղաղապահ ուժերի տեղակայումը էապես ընդլայնում է Արցախի և արցախահայության անվտանգության երաշխիքները, հիմքեր ստեղծում շփման գծում ընդհանուր լարվածության թուլացման համար: Վահե Հարությունյանը նշել է, որ Արցախում ռուսական խաղաղապահ ուժերի առկայությունը լրացուցիչ խթան է համագործակցության առավել սերտացման, աշխատանքային հանդիպումների և առաջացող խնդիրներն օպերատիվ կերպով լուծելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՌԴ հարավային ռազմական օկրուգի զինվորական դատախազության և քննչական վարչության կողմից Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի իրավական սպասարկման կազմակերպման, այդ շրջանակում իրավական ոլորտում ՀՀ և ԱՀ դատախազական և քննչական մարմինների գործակցության կառուցակարգերին և եղանակներին վերաբերող հարցեր:

բ) Համագործակցությունը ԱՊՀ շրջանակներում գործող կառույցների հետ.

2020թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը մասնակցել է ԱՊՀ անդամ երկրների դատախազների համակարգող խորհրդի հերթական առցանց նիստին:

Նիստի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն անդրադարձել է Ադրբեյջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմին, դրա ընթացքում Ադրբեյջանի զինված ուժերի կողմից իրականացվող ծանրագույն հանցագործություններին, մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի աղաղակող ու կոպտագույն խախտումներին, արձանագրված դեպքերին, դրանց առթիվ հարուցված քրեական գործերով իրականացվող նախաքննությանը:

Գլխավոր դատախազն իր գործընկերների ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ այդ հանցավոր գործողությունները, լայնածավալ ռազմական գործողություններն իրականացվում են պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների, մասնավորապես՝ միջազգային կոնվենցիաներով խստորեն արգելված զինատեսակներով, ազգային ատելության շարժառիթով, քաղաքացիական բնակչության կյանքի համար վտանգավոր եղանակներով և դրանց հետևանքով սպանվել են բազմաթիվ զինծառայողներ և քաղաքացիական անձինք, շատերը ստացել են մարմնական վնասվածքներ, անձանց գույքին պատճառվել է մեծ չափի վնաս:

ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է, որ վերոնշյալ քրեական գործերի քննության շրջանակներում ձեռք բերված փաստական տվյալները վկայում են իրականացվող ռազմական գործողություններին Ադրբեջանի կողմից Սիրիայից և Լիբիայից տեղափոխված անօրինական զինված ահաբեկչական, ծայրահեղական խմբավորումների վարձկան գրոհայինների ներգրավվածության մասին:

Համակարգող խորհրդի նիստին մասնակցող ԱՊՀ երկրների գլխավոր դատախազների ուշադրությունը հրավիրելով այդ խմբավորումների՝ հակամարտության գոտում տեղակայելու միջոցով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տարածաշրջանի բոլոր երկրների ներքին ու արտաքին անվտանգության համար ստեղծվող լրջագույն սպառնալիքի վրա՝ Արթուր Դավթյանը շեշտել է միջազգային ահաբեկչության և դրա տարածման անընդունելի դրսևորումների կանխման, բացահայտման, նման որջերի ոչնչացման, դրանցում ընդգրկվող անձանց պարտադիր պատասխանատվության ենթարկելու նպատակով անդամ-երկրների ջանքերը համատեղելու և լայն համագործակցություն ծավալելու անհրաժեշտությունը: Նա հավելել է, որ Հայաստանը պատրաստ է լիարժեքորեն ներգրավվելու այդ աշխատանքներում:

ԱՊՀ անդամ երկրների դատախազների համակարգող խորհրդի նախագահ, ՌԴ գլխավոր դատախազ Ի. Կրասնովն իր խոսքում անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազի բարձրացրած հարցին, որպես առաջնահերթ խնդիր, ընդգծել է քաղաքացիների պաշտպանության և անվտանգության ապահովումը՝ հատկապես կոնֆլիկտի տարածքում վարձկանների և ահաբեկիչների ներգրավման ցանկացած փորձ կասեցնելու եղանակով:

զ) Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ.

1. 2020թ. հոկտեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը մասնակցել է Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ-պետությունների գլխավոր դատախազների հերթական տարեկան առցանց նիստին, որին մասնակցել է նաև ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

Նիստի օրակարգում քննարկված հարցերի շրջանակում Արթուր Դավթյանը մասնակից երկրների դատախազներին ներկայացրել է նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները:

Մասնավորապես, նա նշել է, որ հայ ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից ավելի քան երեք շաբաթ շարունակվող պատերազմական գործողությունների ընթացքում հրթիռահրետանային միջոցներից, այդ թվում՝ միջազգայնորեն արգելված զինատեսակներից, դիտավորյալ և նպատակաուղղված հարվածների թիրախներ են դարձել նաև բնակավայրերն ու քաղաքացիական ենթակառուցվածքները, ինչի հետևանքով մահացել կամ վիրավորում են ստացել ռազմական գործողությունների հետ որևէ առնչություն չունեցող բազմաթիվ խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ մանկահասակ երեխաներ, ինչպես նաև միջազգային պաշտպանության ներքո գտնվող անձինք՝ լրագրողները:

ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է նաև արդեն իսկ միջազգային հանրության կողմից փաստված՝ հակամարտության գոտի միջազգային ահաբեկչական խմբավորումների անդամների, վարձկանների տեղափոխման և Ադրբեջանի կողմից

ռազմական գործողություններին և կատարված հանցագործություններին նրանց ներգրավելու իրողությունը: Նա շեշտել է, որ նման հանցավոր վարքագիծը լրջագույն սպառնալիք է ինչպես տարածաշրջանի, այնպես էլ միջազգային անվտանգության համար, քանի որ ահաբեկիչների կործանարար գործունեությունն արդեն իսկ դուրս է եկել հակամարտության գոտուց և ներթափանցում է տարածաշրջանի առանձին երկրներ՝ վերածվելով անկախ սահմաններից խաղաղ բնակչության անվտանգության համար իրական «դամոկյան սրի»:

Հղում կատարելով այն հանգամանքին, որ Շանհայի համագործակցության կազմակերպության հիմնական նպատակներից մեկը այդ մեծ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ապահովումն է, միջազգային ահաբեկչության համատեղ հակազդումը, Արթուր Դավթյանն անթույլատրելի է համարել ռազմական գործողություններին ահաբեկչական տարրի ներգրավումը, խաղաղ բնակիչների, զինծառայողների նկատմամբ ահաբեկիչ ծայրահեղականներին բնորոշ վայրագությունների իրականացումը:

ՀՀ գլխավոր դատախազը հայտնել է ՀՀ դատախազության պատրաստակամությունը՝ համագործակցելու կազմակերպության անդամ երկրների համապատասխան իրավապահ կառույցների հետ ոչ միայն տարածաշրջանային, այլ արդեն իսկ միջազգային հանրությանը սպառնացող ահաբեկչության դեմ ընդհանուր պայքար մղելու գործում:

Պետք է նշել, որ Ադրբեջանի կողմից Թուրքիայի օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ 2020թ. սանձազերծած ագրեսիվ պատերազմի և դրա ընթացքում իրականացվող ծանրագույն հանցագործությունների, մարդու իրավունքների ու միջազգային մարդասիրական իրավունքի աղաղակող և կոպտագույն խախտումների խնդիրները բարձրացվել են նաև Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, Եվրոջասթի շրջանակներում, ինչպես նաև գործընկեր դատախազությունների ղեկավարներին հասցեագրված նամակներով:

Մասնավորապես, ուշադրություն է հրավիրվել այն հանգամանքին, որ Ադրբեջանի կողմից, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառմամբ, ազգային ատելության շարժառիթով, քաղաքացիական բնակչության կյանքի համար վտանգավոր եղանակով իրականացվում են լայնածավալ ռազմական գործողություններ: Հայաստանի և Արցախի բազմաթիվ խաղաղ բնակավայրերը, քաղաքացիական, այդ թվում՝ բնապահպանական, բնակչության քաղաքացիական պաշտպանության, կրթական ենթակառուցվածքները թիրախավորված հարվածներ են ստանում հեռահար հրթիռների միջոցով, որի հետևանքով ՀՀ և ԱՀ պետական սահմանին մերձ բնակավայրերի, Արցախի՝ շփման գծից զգալիորեն հեռու քաղաքների, գյուղերի բնակչության շրջանում 20-ից ավելի քաղաքացիական անձ, այդ թվում՝ մանկահասակ երեխաներ են մահացել, մեծ թվով քաղաքացիական անձինք մարմնական վնասվածներ են ստացել, անձանց գույքին պատճառվել են մեծածավալ վնասներ:

Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմական գործողություններին անմիջականորեն ներգրավված են Սիրիայից և Լիբիայից տեղափոխված անօրինական զինված ահաբեկչական, ծայրահեղական խմբավորումների վարձկան զինյալներ, իսկ առկա տվյալները վկայում են զինված հակամարտությունում Թուրքիայի

ներգրավվածության, վերջինիս ազդեցությամբ հակամարտության էսկալացիայի խորացման մասին:

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև Ադրբեջանական զինված ուժերի կողմից հակամարտության տարածքում իրենց մասնագիտական պարտքը կատարող լրագրողներին, այդ թվում՝ միջազգային անկախ լրատվամիջոցների ներկայացուցիչներին բնակավայրերում դիտավորությամբ թիրախավորելու, նրանց կյանքի ու առողջության համար սպառնալիք ստեղծելու և բնականոն գործունեության իրականացմանը խոչընդոտելու դրսևորումների վրա:

ՀՀ գլխավոր դատախազը գործընկերներին և վերոնշյալ միջազգային կառույցների ղեկավարներին տեղեկացրել է, որ Ադրբեջանի կողմից ագրեսիվ պատերազմ վարելու, վերոնշյալ այլ հանցագործությունների փաստերի առթիվ հարուցվել են քրեական վարույթներ և ակտիվ դատավարական գործողություններ են իրականացվում այդ հանցագործությունների մանրամասն փաստագրման, ապացույցների ձեռքբերման միջոցով լիարժեք քրեաիրավական գնահատականներ տալու և հանցագործություն կատարած անձանց նաև միջազգային իրավունքի համատեքստում քրեական պատասխանատուության ենթարկելուն հետամուտ լինելու համար:

Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախագահին ուղղված նամակում ընդգծել է նաև Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի և Հայաստանն ընդդեմ Թուրքիայի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից միջանկյալ միջոց կիրառելու նշանակությունը և շեշտել կիրառված միջանկյալ միջոցառումների անհապաղ կատարման կարևորությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք) և 3-րդ հոդվածների (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելում) պաշտպանության ու երաշխավորման տեսանկյունից:

Տեղեկացվել է նաև, որ ՀՀ դատախազությունը միջոցներ է ձեռնարկում Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից մարդու հիմնարար իրավունքների տոտալ խախտումների վերաբերյալ փաստական տվյալները ՄԻԵԴ ներկայացնելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ գլխավոր դատախազը ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդին, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդին կոչ է արել օգտագործել իրենց կազմակերպությունների հեղինակությունն ու ազդեցությունը՝ նպաստելու Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու և իրենց միջազգային պարտավորությունները կատարելուն ուղղված միջազգային հանրության, հակամարտության կարգավորման միջնորդական առաքելության մանդատով օժտված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ ամենաբարձր մակարդակով գործադրվող ջանքերին:

Գործընկեր դատախազություններին և միջազգային կառույցներին են փոխանցվել նաև ռազմական գործողություններին վարձկանների ներգրավման, ահաբեկչության ֆինանսավորման, մշակութային արժեքների ոչնչացման «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից Ժնևի 1977 թվականի 1-ին Լրացուցիչ արձանագրության կոնկրետ նորմերի լուրջ խախտումներ թույլ տալու, այն է՝ պաշտպանությունից օգտվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց սպանության, խոշտանգելու, նրանց

նկատմամբ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ ապացույցներ:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՌԴ և ԵՄ անդամ-պետությունների դատախազություններ ներկայացված նամակներով բարձրացվել են հատկապես ահաբեկչության դեմ պայքարին առնչվող բազմակողմ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ահաբեկիչների, ինչպես նաև խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ապահովման ուղղությամբ արդյունավետ համագործակցություն ծավալելու անհրաժեշտության ու կարևորության, ինչպես նաև մեղավոր անձանց քրեական հետապնդման ենթարկելու վերաբերյալ հարցեր:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ադրբեջանի բանակը ագրեսիվ պատերազմական գործողություններ էր ծավալել անմիջականորեն Իրանի հետ սահմանին, ահաբեկիչների հայտնաբերման ու չեզոքացման հարցը բարձրացվել է նաև ԻԻՀ գլխավոր դատախազին ուղղված նամակներում:

2020թ. ընթացքում զանգվածային լրատվության միջոցները, հղում կատարելով Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական աղբյուրներին՝ տեղեկություններ են հրապարակել ադրբեջանական իշխանությունների կողմից ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արման Բաբաջանյանի, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի, Արցախի Հանրապետության պաշտպանության նախկին նախարար-պաշտպանության բանակի հրամանատար Ջալալ Հարությունյանի, Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Ղավիթ Բաբայանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և միջազգային հետախուզում հայտարարելու վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ Ադրբեջանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից վերոնշյալ անձանց նկատմամբ իրականացվող հետապնդումը որևէ իրավական հիմք չունի և, ըստ էության, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից ազգային ատելության շարժառիթներով իրականացվող պատերազմական գործողությունների տրամաբանական շարունակությունն է, ՀՀ գլխավոր դատախազությունը, դրանց մասին հայտնի դառնալուց հետո, դիմել է ապօրինի հետախուզման դեմ ուղղված կանխարգելիչ քայլերի:

Մասնավորապես՝ նշվածի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի հետ համատեղ, Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (Ինտերպոլ) գլխավոր քարտուղարությանը իրազեկել են Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից մի շարք միջազգային պայմանագրերի պահանջների խախտմամբ, ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և իրականացնելու շրջանակներում, տարբեր ահաբեկչական խմբավորումների անդամ հանդիսացող, նյութական հատուցում ստանալու նպատակով վարձկանների հավաքագրման և ռազմական գործողություններում նրանց օգտագործելու, միջազգային սովորութային մարդասիրական իրավունքի նորմերի կոպտագույն խախտումներով ռազմական հանցագործությունների կատարման, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառմամբ, ազգային ատելության շարժառիթով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով բազմաթիվ զինձառայողների և քաղաքացիական անձանց ապօրինաբար կյանքից զրկելու, մեծ ծավալի զինատեսակներով դիտավորությամբ քաղաքացիական, հումանիտար և մշակութային

ենթակառուցվածքները, գույքը ոչնչացնելու կամ վնասելու բազում դեպքերի վերաբերյալ ստացված փաստական տվյալների ու ապացույցների, դրանց կապակցությամբ իրականացվող քննության մասին:

Միջոցներ են ձեռնարկվել Ինտերպոլի գլխավոր քարտուղարության միջոցով ապօրինի հետախուզման փորձերը կանխելու, հետախուզում հայտարարելու մասին հարցումներ ստանալու դեպքում դրանց ընթացք չտալու, նշված անձանց հետախուզման վերաբերյալ տվյալները Ինտերպոլի համապատասխան պահոցներում չներառելու և դրանց կապակցությամբ Ինտերպոլի ուղիներով որևէ համագործակցություն չիրականացնելու ուղղությամբ: Այս առումով, առաջին հերթին, հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ըստ Ինտերպոլի Կանոնադրության 3-րդ հոդվածի՝ կազմակերպությանը խստիվ արգելվում է որևէ գործունեություն ծավալել կամ միջամտել քաղաքական, զինվորական, կրոնական, ռասայական բնույթ կրող գործերին և հարցերին:

ՀՀ դատախազությունը հետևողական կերպով հետամուտ է եղել նաև նույն հիմնավորմամբ օգտագործելու այլ հետախուզական ուղիները՝ Ադրբեյջանի փորձերը կասեցնելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունն այս կապակցությամբ համապատասխան գրություն է ուղարկել նաև ՌԴ գլխավոր դատախազություն՝ վերոնշյալ անձանց նշված հիմնավորումներով ԱՊՀ շրջանակներում գործող ուղիներով հետախուզման անթույլատրելիության վերաբերյալ:

Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հիմնավորումների՝ ՌԴ գլխավոր դատախազության գրությամբ հայտնվել է նշված անձանց հետախուզման վերաբերյալ տվյալների բացակայության մասին և կրկին վերահաստատվել դիրքորոշումն առ այն, որ անձանց հանձնման մասին միջնորդություններ ստանալու դեպքում դրանք քննարկվելու են օրենսդրության, այդ թվում՝ քաղաքական հանգումներին և այդ պետության տարածքում հանցավոր չհամարվող արարքների համար հանձնման անթույլատրելիության համատեքստում:

Պետք է նշել, որ դեռևս 2017 թվականից, օտարերկրյա գործընկերների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում, ՀՀ դատախազությունը համապատասխան քայլեր է ձեռնարկել քաղաքական և ազգային պատկանելիության շարժառիթներով Ադրբեյջանի իրավասու մարմինների կողմից անձանց նկատմամբ անհիմն հետախուզում հայտարարելու համար նախաձեռնված հարցումները ձախողելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ ինչպես Արցախ այցելած, այնպես էլ այնտեղ գործունեություն ծավալող անձանց, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների և ՀՀ գործող ու նախկին որոշ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով, Ադրբեյջանի կողմից միջազգային հետախուզում հայտարարելու փորձերի կապակցությամբ ձեռնարկված քայլերի արդյունքում, Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության /Ինտերպոլ/ գլխավոր քարտուղարության կողմից ձևավորվել է դիրքորոշում՝ այդ գործերով հարցումները Ինտերպոլի կանոնադրության 3-րդ հոդվածին չհամապատասխանող համարելու վերաբերյալ, արդյունքում ադրբեյջանական կողմից ստացված նմանատիպ հարցումներին Ինտերպոլի գլխավոր քարտուղարության կողմից ընթացք չի տրվում:

Բացի այդ, ՀՀ դատախազությունը հետևողականություն է դրսևորում նաև նույն շարժառիթով ԱՊՀ հետախուզական ուղիները օգտագործելու՝ Ադրբեջանի փորձերը ձախողելու ուղղությամբ:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը 2020թ. հուլիսի 3-ին ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովային, որն ավարտում է իր առաքելությունը Հայաստանում:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի դերակատարությունը և աջակցությունը Հայաստանում ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ զարգացման, դատաիրավական ոլորտի բարեփոխումների իրականացման գործընթացներում և շնորհակալություն է հայտնել տիկին Վուտովային այդ շրջանակներում ՀՀ դատախազության հետ համատեղ ծրագրերի առաջնդմանն ու իրագործմանն ուղղված համագործակցությունը խորացնելու հարցում ԵՆ Երևանյան գրասենյակի ունեցած մեծ ներդրման համար: ՀՀ-ում առաքելությունն ավարտելու կապակցությամբ Արթուր Ղավթյանը տիկին Վուտովային մաղթել է հաջողություններ իր հետագա աշխատանքային գործունեության ընթացքում:

Շնորհակալություն հայտնելով նախընթաց շրջանում Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի և ՀՀ գլխավոր դատախազության միջև փոխադարձ վստահության վրա ձևավորված աշխատանքային սերտ ու կառուցողական հարաբերությունների համար՝ տիկին Վուտովան համոզմունք է հայտնել, որ այդ ընթացքում նախանշված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը հաջողությամբ կշարունակվեն՝ նպաստելով Հայաստանում քրեական արդարադատության զարգացմանը, օրենքի գերակայության ամրապնդմանը, կոռուպցիայի, հանցավորության դեմ համակողմանի և համակարգային պայքարի արդիականացմանն ու արդյունավետության բարձրացմանը, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական արժեքային միջավայրին Հայաստանի առավել ինտեգրմանը:

Հանդիպման ընթացքում մտքեր են փոխանակվել դատաիրավական ոլորտի օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի կառուցակարգերի վերաբերյալ:

Անդրադարձ է կատարվել նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով ՀՀ դատախազության համար նախատեսված գործառույթների, այս ինստիտուտի ներդրման նպատակով ՀՀ դատախազությունում իրականացվող նախապատրաստական աշխատանքների մասին:

դ) Համագործակցությունն այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ.

1. ՀՀ գլխավոր դատախազը 2020թ. դեկտեմբերի 1-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրիին:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ ՀՀ-ի և ԻԻՀ-ի հարաբերությունները բոլոր՝ այդ թվում նաև իրավական գործակցության ոլորտում, գտնվում են բարձր մակարդակի վրա, ինչը հնարավորություն է տալիս երկու երկրների իրավապահ մարմինների միջև արդյունավետ և փոխադարձ վստահության հենքին սերտ շփումների ծավալմանը, առաջացող օպերատիվ խնդիրներին արագ և փոխշահավետ արձագանքմանը:

ՀՀ գլխավոր դատախազն իր գոհունակությունն է հայտնել 2018թ. նոյեմբերին իր՝ ԻԻՀ կատարած այցի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածությունների, այդ այցի

ընթացքում ՀՀ և ԻԻՀ դատախազությունների միջև ստորագրված 2019-2020թթ. համագործակցության ծրագրով նախատեսված կոնկրետ միջոցառումների կատարման ընթացքի ու արդյունքների առթիվ և ավստսանք հայտնել կորոնավիրուսային համավարակի տարածման պատճառով ԻԻՀ գլխավոր դատախազ Մոհամադ Ջաֆար Մոնթագերիի՝ այս տարվա գարնանը Հայաստան նախատեսված այցի անհնար դառնալու կապակցությամբ: Նա հույս է հայտնել, որ առաջիկայում, առաջին իսկ պատեհ հնարավորության դեպքում, այդ այցը կկազմակերպվի:

Հանդիպման ընթացքում քննարկվել են քրեական արդարադատության ոլորտում երկու երկրների միջև գործակցության զարգացմանը, միմյանց երկրներում ՀՀ-ի և ԻԻՀ-ի քաղաքացիների, հատկապես՝ քրեական հետապնդման ենթարկվող անձանց, դատապարտյալների, մեղադրյալների քրեադատավարական, դատական իրավունքների պաշտպանությանը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում երկու երկրների միջև առկա օրենսդրական իրավակարգավորումներից ածանցվող խնդիրների լուծման նոր հնարավորություններին, ապօրինի միգրացիայի դեմ պայքարին առնչվող հարցեր:

Դեսպանը շնորհակալություն է հայտնել ՀՀ իրավասու մարմինների կողմից ԻԻՀ-ի քաղաքացիների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի համար: Նա նաև վստահություն է հայտնել, որ պատերազմական գործողությունների դադարից հետո իրավիճակի կայունացումը հնարավորություն կտա երկու երկրներին իրականացնելու նախատեսված համատեղ ծրագրերը՝ նշելով, որ Իրանը Հայաստանին մոտենում է որպես հին բարեկամի և «անվտանգ պատուհանի»:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ պատերազմի ընթացքում Հայաստանը զգացել է բարեկամ Իրանի հավասարակշռված և ՀՀ-ի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ ներդրած ջանքերը՝ բարձր գնահատելով հատկապես տարածաշրջան միջազգային ահաբեկչության ներթափանցման դեմ ԻԻՀ-ի սկզբունքային դիրքորոշումը: Արթուր Դավթյանն այս կապակցությամբ հավելել է, որ պատերազմի ընթացքին զուգահեռ իր կողմից Իրանի իր գործընկերոջը տեղեկացվել է ռազմական գործողությունների գոտում միջազգային ահաբեկչական խմբավորումների ներկայացուցիչների առկայության մասին՝ տրամադրելով դրանք հաստատող ապացույցներ և փաստական տվյալներ: Եվ մտահոգություն հայտնելով ՀՀ-ի և ԻԻՀ-ի սահմանների հարևանությամբ միջազգային ահաբեկչության ռիսկերի մեծացման իրողությունների կապակցությամբ՝ Արթուր Դավթյանը կրկին պատրաստակամություն է հայտնել իրանական կողմի հետ ընդլայնելու և զարգացնելու ահաբեկչության դեմ պայքարում երկկողմ համագործակցությունը:

2. ՀՀ գլխավոր դատախազը 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին:

ՀՀ գլխավոր դատախազը վստահություն է հայտնել, որ իր նախկին՝ Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնում պարոն Կոնյուկի աշխատանքային փորձառությունը, այդ համատեքստում երկու երկրների դատախազությունների միջև ծավալված երկկողմ և բազմակողմ գործակցությունը, միջանձնային ջերմ և անմիջական հարաբերությունները լուրջ նախադրյալներ են ստեղծում երկու կառույցների միջև համագործակցությանը նոր որակ հաղորդելու համար՝ միտված այն առավել սերտ, թիրախային դարձնելուն:

Բելառուսի Հանրապետության նորանշանակ դեսպանը, իր հերթին, պատրաստակամություն է հայտնել, արդեն իսկ առկա բազայի և իր համար տեսանելի ինստիտուցիոնալ կարիքների հիման վրա, խթանելու իրավական ոլորտում երկու երկրների հարաբերությունների ընդլայնմանը, անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում երկու երկրների իրավապահ մարմինների ռեսուրսներն առավել նպատակային կիրառելուն ուղղված նախաձեռնությունները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են իրավական փոխօգնության ոլորտում գործակցությանը, երկու երկրների դատախազությունների միջև փորձի փոխանակմանը, դրանից բխող համատեղ ծրագրերին, հնարավոր ուղղություններին և մեխանիզմներին վերաբերող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության կողմից նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 16 (2019թ.՝ 14) օրենսդրական նախաձեռնություն: Նշված նախաձեռնություններից քրեական արդարադատության ոլորտին առնչվում են հետևյալները.

– Մշակվել և շահագրգիռ պետական մարմիններին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասը փոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ նախատեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքում իշխանության ներկայացուցիչ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայող այն անձը, որը ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված է կարգադրիչ լիազորություններով, իսկ 316-րդ հոդվածում իշխանության ներկայացուցիչ է համարվում նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը: Բացի այդ, նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել նոր՝ 317¹ հոդվածով, որի 1-ին մասով նախատեսվում է սահմանել, որ հանրային ծառայության մեջ գտնվող անձին վիրավորելը կամ զրպարտելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Միաժամանակ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ այդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զանգվածային լրատվության միջոցներով կամ հրապարակային այլ եղանակով՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության ներկայացուցչի պարտադիր տարր է հանդիսանում, ի թիվս այլնի, կարգադրիչ լիազորություններով օժտված լինելու հանգամանքը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձանց կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրվել կամ բռնություն գործադրելու սպառնալիք է եղել, մինչդեռ հնարավոր չի եղել արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, քանի որ վերը նշված կարգադրիչ լիազորությունը բացակայել է: Բացի այդ, գործող

կարգավորումներով «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, քրեական պատասխանատվություն նախատեսված չէ (որոշակի բացառություն է կազմում ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածը), ինչը հաճախ արարքի որակման առումով խնդիրներ է ստեղծում և հանգեցնում ոչ արդարացի քրեաիրավական գնահատականի:

– Մշակվել և շահագրգիռ պետական մարմիններին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայում, որպես պատժատեսակ, նախատեսել ազատազրկումը՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելուց զրկելը նախատեսելով որպես լրացուցիչ պատժատեսակ, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի սանկցիայում խստացնել ազատազրկման ժամկետները՝ ներկայումս գործող առավելագույնը 1 տարի ժամկետով ազատազրկման փոխարեն սահմանելով առավելագույնը 6 տարի ժամկետով ազատազրկում:

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող իրավակարգավորումների պայմաններում անձին ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ ընտրելիս պետք է նշանակվի կամ տուգանք, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Այսինքն՝ այն դեպքում, երբ դատարանի կողմից նշանակվում է միայն որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժը, անձն ընդամենն ազատվում է իր զբաղեցրած աշխատանքից և առավելագույնը երեք տարի ժամկետով կարող է զրկվել այդ գործունեությամբ զբաղվելու իրավունքից, ինչը բացարձակապես չի համապատասխանում քննարկվող հանցագործության հասարակական վտանգավորությանը և բնույթին, նշանակված պատիժը մեղմ լինելու պատճառով չի ծառայում պատժի նպատակներին: Իսկ եթե նշանակվում է տուգանք, ապա այդ դեպքում էլ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատիժը նշանակվել չի կարող, մինչդեռ քննարկվող օբյեկտիվ կողմն ամբողջությամբ կապված է աշխատանքային գործունեության թերացումների, բացթողումների, պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետ, և շատ դեպքերում այդ պատժի չնշանակումը կարող է վտանգել կատարած արարքի և վրա հասնող հարկադրանքի համաչափության պահանջը, հետագայում անձի կողմից համանման բնույթի հանցագործությունների կանխման անհրաժեշտությունը և այլն:

– Մշակվել և շահագրգիռ պետական մարմիններին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված՝ «ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելը» բառերը փոխարինել «ապօրինի ձեռք բերված արմատախիլ արված կամ հատված կամ մասնատված ծառերը, թփերը տեղափոխելը» բառերով:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման առանձին եղանակ հանդիսացող՝ «ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելու» եզրույթի հետ կապված գործնականում հանդիպող խնդիրները:

– Մշակվել և շահագրգիռ պետական մարմիններին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 434¹ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված հետախուզվողին հայտնաբերելուց և դատարան ներկայացնելուց հետո, դատարանը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, հետախուզվողին հայտնաբերելու մասին տեղեկացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին:

Այսպիսի կարգավորման դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված հետախուզվողին հայտնաբերելուց և դատարան ներկայացնելուց հետո դատարանը կունենա հստակ իրավական պարտականություն՝ հետախուզվողին հայտնաբերելու մասին տեղեկացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին, ինչով էլ կապահովվի վերջինիս գործառնությունների լիարժեք իրացումը և պատժի ի կատար ածումը:

– ՀՀ դատախազության անմիջական ներգրավվածությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ, մշակվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որի առանցքում դրված է կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարման կասեցմանն առնչվող իրավակարգավորումների հստակեցումը, ինչը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտվելու նշված գործիքակազմից: Նշված փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ուղարկվել է Ազգային ժողով:

ՀՀ դատախազությունն ակտիվորեն ներգրավված է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով և Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների իրականացման մեջ: Նշված միջոցառումների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով 30.06.2020թ. ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է համապատասխան հրաման, որի համաձայն՝ մշանակվել են պատասխանատու ստորաբաժանումներ: Կատարված աշխատանքների արդյունքում սահմանված ժամկետներում ապահովվել է սահմանված ժամկետներում ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող միջոցառումների կատարումը:

Մասնավորապես, հարկ է արձանագրել, որ, ի կատարումն մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի 4-րդ կետի, մշակվել է «Հայաստանի Հանրապետության

գինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի հրամանի նախագիծը, ինչպես նաև, ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 34-րդ կետի, մշակվել է «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության առանձնահատկությունները» վերտառությամբ մեթոդական ուղեցույցը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունը շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը ունենալ մինչդատական քրեական վարույթի թվայնացման աշխատանքներում: Մասնավորապես, պետական հատվածի արդիականացման 3-րդ ծրագրի շրջանակում «Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարման և տեղադրման» առաջադրանքի իրականացման նպատակով, ՀՀ դատախազության, ՀՀ վարչապետի աշխատակազմի և IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC (Հայաստան) համատեղ ձեռնարկության միջև 14.12.2020թ. կնքվել է PSMP3-GO-2-2-4 պայմանագիրը:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Ղատախազության մասին» ՀՀ օրենքի կիրառման շուրջ եռամյա պրակտիկայի վերլուծություն, այդ թվում նաև՝ ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումներից ստացված կարծիքների հիման վրա: Արդյունքում մշակվել է «Ղատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվող իրավական նոր կարգավորումներն ուղղված են ապահովելու ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների արդյունավետ իրացումն օրենսդրության մեջ: Մասնավորապես, ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի վերաբերելի կետերի իրականացումն ապահովելու նպատակով, օրենքի նախագծով նախատեսվել է փոփոխել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի ձևավորման կարգը, որպեսզի որակավորման հանձնաժողովի անդամների մեծամասնությունը նշանակվի ՀՀ գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող ընթացակարգով: Որպես լուծում՝ նախագծով առաջարկվել է տվյալ իրավասությունը վերապահել ՀՀ դատախազության կոլեգիային:

«Ղատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով լրացում է կատարվել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության կարգը սահմանելու մասին» 2018 թվականի ապրիլի 9-ի N 20 հրամանում, որի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի 3 դատախազ անդամներից առնվազն մեկի պաշտոնը պետք է նախատեսված լինի «Ղատախազության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով: Ընդ որում, ներկայումս արդեն էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամներից մեկը զբաղեցնում է նման պաշտոն: Նշված փոփոխությունը ևս բխում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրից:

2020թ. օգոստոսին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր գիտամեթոդական խորհուրդ, որի նպատակն է գիտամեթոդական

աջակցություն ցուցաբերել ՀՀ դատախազության ստորաբաժանումներին իրենց գործառույթներն իրականացնելիս, համագործակցել ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և ակադեմիական կենտրոնների, օտարերկրյա իրավապահ մարմինների համանման խորհուրդների հետ: Նշված նախաձեռնությունը պայմանավորված է հիմնականում դատախազության գործունեությունը գիտականորեն առավել հիմնավորված և միջազգային լավագույն փորձի հենքի վրա շարունակաբար կատարելագործելու հրամայականով հաշվի առնելով հանցավորության շարժընթացում արձանագրվող միտումները, քրեական արդարադատության ոլորտում զարգացող միջազգային չափանիշների տեղայնացման խնդիրը, քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունմամբ դատավարական նոր ընթացակարգերի նախատեսումը: Բացի այդ, պետական շահերի պաշտպանության ոլորտում վերջին տարիներին դատախազության նկատելի ակտիվացումը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացը ևս առաջացնում են դատախազության աշխատանքներում նորարարական մոտեցումներ և ուղղություններ ներդնելու և այդ նպատակով գիտական առավել լայն պոտենցիալ օգտագործելու անհրաժեշտություն:

Գիտամեթոդական խորհրդի հիմնական խնդիրներն են մշակել գիտականորեն հիմնավորված խորհրդատվական բնույթի նյութեր դատախազական գործունեության ուղղությունների իրավակիրառ պրակտիկայի խնդրահարույց հարցերի վերաբերյալ, ներկայացնել առաջարկություններ հանցավորության դեմ պայքարի ուղղությունների և եղանակների մասին, վերլուծել ՄԻԵԴ նախադեպային իրավունքի զարգացումները:

Խորհրդի անդամներ են նշանակվել ինչպես գործող դատախազներ, այնպես էլ ներկայացուցիչներ գիտական շրջանակներից:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազությունում ուսումնասիրվել են դատախազների ծանրաբեռնվածության թվային ցուցանիշները՝ նախորդ տարիների հետ համադրության մեջ: Արդյունքում պարզվել է, որ քրեական գործերի քանակի աննախադեպ շարունակական աճի պայմաններում դատախազների անխուսափելի գերծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ դատախազությանը վերապահված գործառույթների իրականացման արդյունավետության նվազեցմանը, ինչը վերջնարդյունքում կարող է բերել հանցավորության դեմ արդյունավետ պայքարի և պետության քրեական քաղաքականության պատշաճ իրականացման հարցում առկա հանրային սպասելիքների չիրականացմանը:

Ընդ որում, դատախազների գերծանրաբեռնվածությունը ակնառու է դառնում 2008 և 2019 թվականներին առկա ընթացիկ քրեական գործերի, նախապատրաստվող նյութերի նկատմամբ դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանության գործառույթների իրականացմանն առնչվող քանակական տվյալների պարզ համադրման արդյունքում: Հարկ է նշել, որ 2008 թվականը որպես իրականացված ուսումնասիրության ելակետ ընտրելը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2008 թվականից ի վեր դատախազական հաստիքների փաստացի աճ գրեթե տեղի չի ունեցել. եթե **2008 թվականին նախատեսված է եղել 337 դատախազական հաստիք, ապա 2019 թվականի մայիսի 15-ի դրությամբ առկա է 351 հաստիք:**

Դատախազության սահմանադրական գործառույթներից միայն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության ոլորտին վերաբերող թվային ցուցանիշների համադրումը վկայում է, որ առկա է դատախազների ծանրաբեռնվածության աննախադեպ աճ: Այսպես, 2008 թվականի ընթացքում դատախազական հսկողություն և

դատավարական ղեկավարում է իրականացվել 20.329 նյութի նախապատրաստման և 16.593 քրեական գործի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: 2019 թվականի տվյալներն այսպիսին են՝ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել 58.290 նյութի նախապատրաստման (աճը կազմել է **27.961 նյութ կամ շուրջ 137 %**) և 35168 քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ (աճը կազմել է **18.575 գործ կամ շուրջ 112 %**): Այսինքն, եթե 2008 թվականի ընթացքում քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 49,2 գործ, ապա 2019 թվականի ընթացքում այն կազմել է 130,7 գործ:

Ընդ որում, քրեական գործերի և նախապատրաստվող նյութերի անշեղ աճի միտումների պայմաններում, 2008-2020 թթ. ընթացքում տեղի է ունեցել քննիչների թվաքանակի որոշակի ավելացում, ինչը որևէ կերպ համադրելի չէ նշված ժամանակահատվածում դատախազների թվաքանակի աճի հետ: Այսպես, 2008թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր նախաքննական մարմիններում նախատեսված է եղել քննիչների 705 հաստիք, իսկ 2020թ. մայիսի 1-ի դրությամբ նախատեսված է 843 հաստիք (աճը կազմել է **138 հաստիք կամ շուրջ 19,5 %**)⁶: Մինչդեռ քննարկվող ժամանակահատվածում դատախազների հաստիքներն ավելացել են **ընդամենը 14 հաստիքով կամ 4,1 %-ով**: Նման պայմաններում, բնականաբար, անհամաչափորեն աճել է դատախազների ծանրաբեռնվածությունը, ինչի լուծումը հնարավոր է միայն դատախազների թվաքանակի համաչափ աճի միջոցով:

Դատախազների թվաքանակի ավելացման անհրաժեշտությունն ակներև է դառնում նաև ԵՆ անդամ մի քանի պետություններում 100,000 բնակչին բաժին ընկնող դատախազների թվաքանակի՝ ՀՀ նմանատիպ ցուցանիշի հետ համեմատելիս: Այսպես, 2016 թվականի դրությամբ 100,000 բնակչին բաժին ընկնող դատախազների թվաքանակը ՌԴ-ում կազմել է 25, Լատվիայում՝ 23, Լիտվայում՝ 24, Մոլդովայում՝ 19, Ուկրաինայում՝ 24, Հունգարիայում՝ 19, Լեհաստանում՝ 15, Ռումինիայում՝ 13, Սլովակիայում՝ 17, Բուլղարիայում՝ 21, իսկ ՀՀ-ում՝ **շուրջ 11 դատախազ**:⁷

Վերը նշված խնդրի լուծման նպատակով ՀՀ դատախազությունում մշակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որն ընդունվել է ՀՀ վարչապետի կողմից: Արդյունքում ՀՀ դատախազության հաստիքների թվաքանակը ավելացվել է 72-ով՝ 653-ից դառնալով 726: Ակնկալվում է, որ սույն փոփոխությունները հնարավորություն կտան որոշ չափով թեթևացնել դատախազների ծանրաբեռնվածությունը՝ բարձրացնելով աշխատանքի արդյունավետությունը: Ընդ որում, նոր ստեղծված հաստիքները որակյալ երիտասարդ կադրերով համալրելու նպատակով փոփոխություններ են կատարվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն՝ իջեցվել է դատախազ դառնալու համար օրենքով անհրաժեշտ նվազագույն տարիքային շեմը՝ 25-ից դարձնելով 22, ինչպես նաև

⁶ Ը ն որ ո, և մ ր եյ ար ձ ան ա գ որ լ և 2 վ ր ձ ի 5 5 ը ա վ ե լ ա ց վ ի լ ա յ Հ ք ն ն չ ա կ ան ի տ ե ո 2 0 2 0 թ վ ա կ ա ը փ թ ա ց ք ու մ

⁷ Տ վ յ ա լ Վ եր ց վ ան ծ European Judicial Systems : գ ել ր ն ր և յ ց ի բ ց ի ր ց ն ց ի խ ո ը <https://rm.coe.int/168092v04e88v/i1e6w803h4edfամֆ>

նախատեսվել է, որ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու նպատակով անցկացվող բաց մրցույթը կարող է անցկացվել նաև ըստ անհրաժեշտության՝ ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել են աշխատանքները զբաղեցրած պաշտոնին դատախազների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու բնագավառում: Մասնավորապես, այդ նպատակով 2020 թվականի ընթացքում հերթական ատեստավորման է ներկայացել 99 դատախազ: ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումների համաձայն՝ 78 դատախազ համապատասխանել է զբաղեցրած պաշտոններին, 17-ը՝ համապատասխանել է զբաղեցրած պաշտոններին՝ ներառելով ծառայողական առաջխաղացման ցուցակում, 4-ը՝ համապատասխանել է զբաղեցրած պաշտոններին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանի համաձայն՝ արտահերթ առաջխաղացման է ներկայացվել 36 դատախազ, որոնցից 35-ի վերաբերյալ հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, 1-ի վերաբերյալ՝ բացասական:

2020թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացրել է 5 բաց մրցույթ (հունվար, հունիս, հուլիս, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներ), որոնցից 2-ն անցկացվել են դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով, 2-ը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով, ևս 1-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով:

- Բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 156 հավակնորդ, որոնցից 13-ը չեն ներկայացել բաց մրցույթին, 1-ի դիմումը մերժվել է:

- 57 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է դրական եզրակացություն՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Բացասական եզրակացություն ստացած դիմորդներից 1-ը կրկնակի դիմում է ներկայացրել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար ու ստացել դրական եզրակացություն և դրական եզրակացություն ստացած 58 հավակնորդի ՀՀ գլխավոր դատախազը ընդգրկել է դատախազների թեկնածությունների ցուցակում:

- Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 45 անձ ուղարկվել է ՀՀ արդարադատության ակադեմիա՝ ուսումնառություն անցնելու:

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով հայտարարված բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 30 հավակնորդ, որոնցից 3-ը չի ներկայացել բաց մրցույթին:

- 10 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է դրական եզրակացություն՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող

դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, որոնց ՀՀ գլխավոր դատախազն ընդգրկել է դատախազների թեկնածությունների համապատասխան ցուցակում:

- Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 10 անձ ուղարկվել է Արդարադատության ակադեմիա՝ ուսումնառություն անցնելու, սակայն 10-ից 1-ը Արդարադատության ակադեմիայի քննություններից մեկը չհանձնելու հիմքով հանվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառնություններ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակից:

- ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով հայտարարված 1 բաց մրցույթին մասնակցելու համար դիմել է 3 հավակնորդ, որոնցից 2-ը չեն ներկայացել բաց մրցույթին:

- 1 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազին դրական եզրակացություն է ներկայացրել՝ ՀՀ գլխավոր դատախազի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

2020թ. ընթացքում փակ մրցույթին մասնակցելու խնդրանքով դիմել է 25 անձ: 1 հավակնորդի ՀՀ գլխավոր դատախազը չի թույլատրել մասնակցել փակ մրցույթին: ՀՀ գլխավոր դատախազը 24 դիմորդի թույլատրել է մասնակցելու փակ մրցույթին, սակայն 8-ի վերաբերյալ հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ նրանց՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, իսկ 16-ի վերաբերյալ՝ դրական:

ՀՀ գլխավոր դատախազի 29.10.2020թ. N 384-Ա հրամանի համաձայն՝ 26 դատախազ՝ 1-ը կամավորական հիմունքներով, և ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի 28.10.2020թ. N 13/316-Ա հրամանի համաձայն՝ ՀՀ դատախազության 1 աշխատակից՝ կամավորական հիմունքներով, մասնակցել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ստորաբաժանումների կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած զինված հարձակմանը և ռազմական գործողություններին՝ կամավորական հիմունքներով մասնակցած 2-ը՝ Արցախի Հանրապետությունում, 25-ը՝ Սյունիքի մարզում: Եվս 3 դատախազ մասնակցել է մարտական գործողությունների՝ հայտարարված զորակոչի շրջանակներում:

2020 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի 02.04.2020թ. N 27 հրամանով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ ՀՀ դատախազության դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածից 10.000.000 ՀՀ դրամ հատկացվել է կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի համար բացված գանձապետական համապատասխան հաշվեհամարին:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազի 2020թ. համապատասխան հրամաններով, ՀՀ զինված ուժերին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով, «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին փոխանցվել է շուրջ 141.150.520 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների դիմում-բողոքների, պետական այլ մարմիններից ստացված հաղորդումների, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, ՀՀ

դատախազության ստորաբաժանումների ղեկավարների կողմից ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերի հիման վրա իրականացվել է 56 ծառայողական ուսումնասիրություն՝ 73 դատախազի նկատմամբ (2019թ.՝ 29 ծառայողական ուսումնասիրություն՝ 27 դատախազի նկատմամբ):

Ծառայողական ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք են հանդիսացել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների առերևույթ խախտումներ թույլ տալը և այլն:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հարուցվել է 7 կարգապահական վարույթ՝ 7 դատախազի նկատմամբ:

Կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել՝ 5 դեպքում՝ Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, 1 դեպքում՝ 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ դատախազի վարքագծի կանոնները խախտելը, 1 դեպքում՝ դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը և դատախազի վարքագծի կանոնները խախտելը միաժամանակ:

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» կարգապահական տույժը (հիմքը՝ դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը), որոնցից մեկի նկատմամբ՝ հետագայում հարուցված առանձին կարգապահական վարույթի արդյունքներով՝ «խիստ նկատողություն» կարգապահական տույժը (հիմքը՝ դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը), 1 դատախազի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով նշանակվել է «պաշտոնի իջեցում» կարգապահական տույժը, այնուհետև նույն դատախազի նկատմամբ հարուցված առանձին կարգապահական վարույթի արդյունքներով «պաշտոնից ազատում» կարգապահական տույժը (հիմքը՝ դատախազի պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը և դատախազի վարքագծի կանոնները խախտելը միաժամանակ), իսկ 1 դատախազի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարել կարգապահական խախտման փաստը, որում հաստատված չի համարել դատախազի մեղավորությունը: 2 դատախազի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը դադարեցվել է՝ ՀՀ գլխավոր դատախազի 05.06.2018թ. N 49 հրամանի 26-րդ կետի հիմքով: Հրամանի նշված կետի համաձայն՝ եթե կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, գլխավոր դատախազը դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում չի ներկայացնում էթիկայի հանձնաժողովի քննարկմանը, ապա կարգապահական վարույթը դադարում է:

9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

2020թ. ընթացքում ՀՀ ՋՈւ-ի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 5601 դեպք՝ նախորդ տարվա 3495-ի դիմաց: Աձ է արձանագրվել 2106 դեպքով կամ 60.2%-ով: Արձանագրված դեպքերից 2557-ը կամ 45.7%-ը եղել են պատահարներ, 3016-ը կամ 53.8%-ը՝ հանցագործություններ, այդ թվում՝ 2429-ը կամ 80.5%-ը՝ զինվորական, 587-ը կամ 19.5%-ը՝ այլ ընդհանուր բնույթի: 28 դեպքի, կամ դեպքերի 0.5%-ի հանգամանքներն ամփոփումների պահին դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 9 դեպքով կամ 0.4%-ով, հանցագործությունները՝ 2087-ով, կամ 224%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործություններն աճել են 1873-ով, կամ 336%-ով, իսկ այլ՝ ընդհանուր բնույթի հանցագործությունները՝ 214-ով, կամ 57.4%-ով:

Հարկ է նշել, որ հանցագործությունների դեպքերի կտրուկ աճը պայմանավորված է Ադրբեյջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմով: Մասնավորապես, հանցագործություններ դեպքերից 1501-ը, կամ 49.8%-ը արձանագրվել են ռազմական դրության ընթացքում:

Եթե 2019թ. ընթացքում արձանագրված 929 հանցագործությունից 141-ը կամ 15,2% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 110-ը՝ ծանր, իսկ 31-ը՝ առանձնապես ծանր, ապա 2020թ. արձանագրված 3016 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 1659-ը, կամ 55%-ը, որոնցից 1019-ը՝ ծանր, 640-ն՝ առանձնապես ծանր: Նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործություններն աճել են 909 դեպքով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 609 դեպքով: Այսինքն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններն աճել են համապատասխանաբար՝ 826-ով և 1964 %-ով: Սակայն, այստեղ ևս պետք է նշել, որ առանձնապես ծանր հանցագործություններից 538-ը, կամ 84,1 %-ը պայմանավորված են եղել ռազմական դրությամբ:

2020թ. արձանագրված 640 առանձնապես ծանր հանցագործություններից 9-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 2-ը՝ համաժառայակցի կողմից կատարված սպանության, 1-ը՝ զինժառայողի կողմից քաղաքացիական անձի սպանության, 1-ը՝ պահեստազորայինի կողմից պահեստազորայինի սպանության, 1-ը՝ պահեստազորայինի կողմից սպայի սպանության, 84-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 2-ը՝ համաժառայակցի կողմից կատարված սպանության փորձի, 1-ը՝ պայմանագրային զինժառայողի կողմից քաղաքացիական անձի սպանության փորձի, 1-ը՝ խոշտանգման, 2-ը՝ կաշառք ստանալու, 5-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի նկատմամբ բռնություն գործադրելու, 18-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, իշխանության անգործության, 374-ը՝ ռազմական դրության ժամանակ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 3-ը՝ ռազմական դրության ժամանակ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 2-ը՝ ռազմական դրության ժամանակ հրամանը չկատարելու, 103-ը՝ ռազմական դրության ժամանակ դասալքության, 2-ը՝ ռազմական դրության ժամանակ անդամախեղման, 1-ը՝ մարտ վարելու միջոցները հակառակորդին թողնելու, 10-ը՝ ագրեսիվ պատերազմի, 14-ը՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարման ժամանակ, 1-ը՝ միջազգային ահաբեկչության, 1-ը՝ ահաբեկչության, 1-ը՝ պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելու, 1-ը՝ ահաբեկչության ֆինանսավորման դեպքեր են:

2020թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 46 զինժառայող⁸, որոնցից 8-ը՝ հակառակորդի կողմից սպանության, 4-ը՝ սպանության, 3-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 13-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու, 5-ը՝ հիվանդության, 7-ը՝ ավտովթարի, 1-ը՝ մարտական հերթապահություն կրելու կանոնները խախտելու, 1-ը՝ ականի պայթյունի, 4-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով: 2019թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 20 զինժառայող, այդ թվում 4-ը՝ հակառակորդի կողմից:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում 2020թ. ընթացքում արձանագրվել է 87 զինժառայողի մահվան դեպք, որոնցից 21-ը՝ ժամկետային զինժառայող, 30-ը՝ պայմանագրային զինժառայող, 5-ը՝ ենթասպա, 23-ը՝ սպա և 8-ը՝ պահեստազորային:

⁸ Նշվածված պահանջներն առաջարկվում են ընդհանուր առմամբ 2020 թ. հունիսի 1-ին հաստատված «Մարտական գործողության ժամանակահատվածում զինված ուժերում ծառայողների մահացման դեպքերի մասին» հրահանգի 1-րդ հոդվածի 1-րդ կետի և 2-րդ կետի 1-րդ կետի հիմամբ:

87 զինծառայողից 46-ի մահվան դեպքերը կապված են եղել զինվորական ծառայություն անցնելու հետ, 41-ը տեղի է ունեցել զինվորական ծառայության հետ չկապված հանգամանքներում:

Մասնավորապես՝

Զինվորական ծառայություն անցնելու հետ կապված մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 8-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության հետևանքով,
- 13-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 3-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով,
- 4-ը՝ սպանության հետևանքով,
- 4-ը՝ դժբախտ պատահարից,
- 5-ը՝ հիվանդությունից,
- 7-ը՝ ծառայության հետ կապված ավտովթարներից,
- 1-ը՝ մարտական հերթապահություն կրելու կանոնները խախտելու հետևանքով,

- 1-ը՝ ականի պայթյունից:

Զինվորական ծառայություն անցնելու հետ չկապված 41 մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 4-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 5-ը՝ դժբախտ պատահարից,
- 18-ը՝ հիվանդությունից,
- 14-ը՝ ծառայության հետ չկապված ավտովթարներից:

Համեմատության համար նշենք, որ 2019թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում արձանագրվել էր 49 զինծառայողի մահվան դեպք, որոնցից 14-ը՝ ժամկետային զինծառայող, 22-ը՝ պայմանագրային զինծառայող, 5-ը՝ ենթասպա և 8-ը՝ սպա:

2019թ. ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԱՀ ՊԲ-ում զինվորական ծառայություն անցնելու հետ կապված մահվան 20 դեպքն արձանագրվել էր հետևյալ պատճառներով.

Զինվորական ծառայություն անցնելու հետ կապված մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 4-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության հետևանքով,
- 7-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով,
- 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով,
- 1-ը՝ հիվանդությունից,
- 4-ը՝ սպանության հետևանքով,
- 2-ը՝ դժբախտ պատահարից,
- 1-ը՝ ծառայության հետ կապված ավտովթարներից:

Զինվորական ծառայություն անցնելու հետ չկապված 29 մահվան դեպքերը՝ ըստ պատճառների՝

- 14-ը՝ ծառայության հետ չկապված ավտովթարներից,
- 12-ը՝ հիվանդությունից,
- 3-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով:

Համեմատական դիտարկումը վկայում է, որ ՁՈՒ-երում մահվան դեպքերը նախորդ տարվա համեմատ ընդհանուր առմամբ աճել են 38-ով կամ 77.5%-ով:

2020թ. հուլիսի 13-ին և 14-ին, հայ-ադրբեջանական սահմանագծի Տավուշի մարզի հաստատում ադրբեջանական մարտական հենակետերից տարբեր զինատեսակներից, այդ թվում՝ տարբեր տրամաչափի հրազենային, հրետանային միջոցներից կրակոցներ և արկեր են արձակվել մի շարք բնակավայրերի, մասնավորապես՝ մարզի Բերդ քաղաքի, Բերդ համայնքի Այգեպար, Չինարի, Նորաշեն, Ներքին Կարմիր Աղբյուր, Տավուշ բնակավայրերի ուղղությամբ: Բացի այդ, հակառակորդի զինված ուժերը, ազգային ատելության և կրոնական մոլեռանդության շարժառիթով, երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, տարբեր տրամաչափի հրետանային միջոցների, ականանետների կիրառմամբ արկակոծության են ենթարկել ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության տեղամասում գտնվող մի քանի մարտական դիրքերի տարածքները՝ կիրառելով նաև «Կամիկաձե» անօդաչու թռչող սարքեր:

Խաղաղ բնակչությանը՝ ՀՀ քաղաքացիներին սպանելու դիտավորությամբ կատարված կրակոցների, արկերի պայթյունների արդյունքում տարբեր աստիճանի վնասներ են հասցվել այդ բնակավայրերի խաղաղ բնակիչների, քաղաքացիական անձանց անշարժ և շարժական գույքերին, բնակավայրերում տեղակայված քաղաքացիական և արտադրական նշանակության օբյեկտներին:

Վերոնշյալ դեպքերի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Բերդի քննչական բաժնում հարուցվել է **13 քրեական գործ**, որոնցից՝ 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 13-րդ կետերով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:

Իրականացվող նախաքննության շրջանակներում իրականացվել են դեպքի վայրերի զննություններ, նշանակվել են զոհված զինծառայողների դիակների դատաբժշկական փորձաքննություններ, բոլոր վիրավորները ճանաչվել են տուժող, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, կատարվել և շարունակվում են նաև այլ անհրաժեշտ քննչական գործողություններ:

Նախաքննությամբ արդեն իսկ հիմնավորվել է, որ ՀՀ սահմանամերձ բնակավայրերը և քաղաքացիական օբյեկտները Ադրբեջանի զինված ուժերի կողմից թիրախավորվել են միտումնավոր՝ ազգային ատելության շարժառիթներով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով ապօրինաբար խաղաղ բնակիչներին կյանքից զրկելու և գույքը ոչնչացնելու նպատակով:

2020 թվականի ընթացքում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1024 զինծառայող (2019թ.՝ 1042), այսինքն՝ նվազում է արձանագրվել 18-ով, կամ 1,7%-ով: Այդ թվում՝ 46 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք (2019թ.՝ 58):

Բացի այդ, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական դեկավարության կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում ծավալված ռազմական գործողությունների արդյունքում տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել նաև 9094 անձ:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնադրային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներ), ինչպես նաև

զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 361-364-րդ հոդվածներ): Այսպես՝ եթե 2019թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 309 դեպք, ՀՀ քրեական օրենսգրքի 361-364-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 145 դեպք, ապա 2020թ. դրանց թիվը համապատասխանաբար կազմել է 306 և 1918, այսինքն, թեև առաջինի դեպքում նվազում է տեղի ունեցել 3-ով կամ 1%-ով, իսկ երկրորդի դեպքում ահռելի աճ՝ 1773-ով կամ 1223%-ով, որը պայմանավորված է եղել պատերազմական իրավիճակով, միևնույն է, նշված բնույթի հանցագործությունների թիվը եղել և մնում է անհանգստացնող:

Ըստ հանցատեսակների՝ զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները նվազել են 10%-ով: Փոխարենը աճել են զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 1223%-ով, հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 300%-ով, ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործությունները՝ 288%-ով, ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ 58.8%-ով, զինվորական պաշտոնեական հանցագործությունները՝ 57.6%-ով, կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները՝ 68.5%-ով, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները՝ 40.0%-ով, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները՝ 36.5%-ով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները՝ 118%-ով, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները՝ 100%-ով, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները՝ 33.3%-ով, այլ հանցագործությունները՝ 42.5%-ով:

Հանցագործությունների բացահայտումը կազմել է 99.3%, 2019թ.՝ 97.0%:

Վերլուծությունը ցույց է տվել, որ հատկապես բռնություններով պայմանավորված դեպքերը, այն է՝ զինծառայողների կողմից կանոնագրքով նախատեսված փոխհարաբերությունների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելը՝ ծառայության ընթացքում իրենց համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու, ինչպես նաև զինվորական կարգապահությանը չհարմարվելու և փողոցային բարքերով առաջնորդվելու հետևանք են: Ցավալի է, որ թեև քիչ, այնուամենայնիվ, կան այդպիսի վարքագծի դրսևորումներ նաև սպաների շրջանում, որն առավել մտահոգիչ է և այդ ուղղությամբ յուրաքանչյուր դեպքով ձեռնարկվում են համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ:

Ինչ վերաբերում է զորամասն ինքնակամ թողնելու դեպքերին, ապա պետք է փաստել, որ վերջին տարիներին և հաշվետու տարում դրանց թիվն էապես նվազել է, քանի որ նախկինում դրանց հիմնական պատճառ հանդիսացող որոշ հանգամանքներ, մասնավորապես՝ պարտադիր ժամկետային զինծառայողների դեպքում՝ հարազատների հանդեպ կարոտը, նրանց տեսնելու ցանկությունը, ինչպես նաև որոշ դեպքերում՝ անձնական հարցերը, իսկ պայմանագրային զինծառայողների և սպաների դեպքում՝ սոցիալական և ֆինանսական խնդիրները, արդեն իսկ մղվել էին երկրորդ պլան, սակայն պատերազմական իրավիճակով պայմանավորված ինչպես զորամասն ինքնակամ լքելու,

այնպես էլ դասալքության դեպքերը բավականին աճել են, համապատասխանաբար կազմելով 399 և 120:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2020թ. ընթացքում արձանագրված հանցագործությունների յուրաքանչյուր դեպքով զինվորական իրավապահ մարմինների կողմից (դատախազություն, քննչական և ՌՌ ստորաբաժանումներ) արվել են հնարավոր ամեն ինչ, որպեսզի կատարվի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն, կատարված հանցագործությունները բացահայտվեն ամբողջությամբ և մեղավոր անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության ու պատժի:

Առանձնակի կարևորվել են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների և զորամասերի միջին ու բարձր հրամանատարական կազմի հետևողականության դրսևորումները: Ցավոք, դարձյալ պատերազմական իրավիճակով պայմանավորված, ունենք դրանց ահռելի աճ:

Սպանության, ինքնասպանության, սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դարձել նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և, առհասարակ, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով հնարավորինս վերհանվել են նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, ձեռնարկվել և ձեռնարկվում են դատախազական ներգործության միջոցներ (գրվում են միջնորդագրեր, հաղորդումներ, դատախազները մասնակցում են դրանց քննարկումներին, անում են գործնական առաջարկություններ դրանց կանխարգելման ուղղությամբ և այլն):

Բացի այդ, որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, կայագործների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հաճախակի՝ զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում, անցկացվում են գրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվում են պարզաբանումներ, կատարվում են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2020 թվականի ընթացքում, ՀՀ ՁՈւ-ում արձանագրված հանցագործությունների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության ընթացքում հիմնական դժվարությունները կապված են եղել տեղի ունեցած դեպքերի փաստական հանգամանքների խորքային և իրական պատճառների վերհանման, պարզաբանման և ապացույցների ձեռքբերման հետ:

Նախապատրաստված բազմաթիվ նյութերի և հարուցված քրեական գործերի վերլուծությունները ցույց են տվել, որ շատ հանցագործությունների կատարման պատճառ են հանդիսացել զինծառայողների նկատմամբ համաժառայակիցների, կրտսեր և ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնագրքային վարքագծի տարաբնույթ դրսևորումները, որոնք երբեմն հանգեցրել են զորամասը կամ ծառայության վայրը լքելուն Հետևաբար դրանց իրական պատճառներն ու կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու, վեր հանելու, հանցագործություն կատարած

զինծառայողներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու դեպքում զգալիորեն կրճատվել ու նվազել են վերը հիշատակված բնույթի հանցագործությունները:

2021թ. հիմնական առաջնահերթություններից պետք է դառնան հանցագործությունների կանխարգելման, դրանց նպաստող պայմանների ու պատճառների վերացման ուղղությամբ տարվող ակտիվ աշխատանքները: Այդ շրջանակներում անողոք պայքար պետք է մղվի բանակում քրեական ենթամշակույթին բնորոշ դրսևորումների վերացման, զինծառայողների հետ ինտենսիվ բացատրական աշխատանքների իրականացման ուղղությամբ: ՀՀ գլխավոր դատախազի կողմից զինվորական դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է զինծառայողների նկատմամբ բռնության բոլոր այն դեպքերով, որոնց քննությունների ընթացքում անձը չի հաստատում իր կողմից նախապես հայտնած տեղեկությունները, դատախազների կողմից պարտադիր կազմակերպել նրանց ընդունելությունը:

Ցանկացած առանձնապես ծանր հանցագործության դեպքով քննության առարկա պետք է դառնան նաև դրա կանխման, բացահայտման պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունները և խիստ վերահսկողություն իրականացվի տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

Ըստ վերլուծությունների՝ արձանագրվել է սպայական անձնակազմի կողմից կատարված հանցագործությունների ու այլ իրավախախտումների զգալի աճ: Այս հանգամանքի վերլուծությունը ևս փաստել է, որ այն պայմանավորված է պատերազմական իրավիճակով, ինչը անչափ մտահոգիչ է, եթե հաշվի առնենք, որ սպայական անձնակազմը իր օրինակելի վարքագծով պարտավոր էր ազդել ստորադաս զինծառայողների բարոյահոգեբանական վարքագծի վրա և օրինակ հանդիսանար նրանց համար: Եվ որքան էլ որ սպաների կողմից կատարված հանցագործությունները մշտապես գտնվել են իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, նրանց հետ բազմիցս, առանձնակի տարվել են բացատրական աշխատանքներ, ցավոք՝ արդյունքը գոհացուցիչ չէ: Այս իմաստով հատկանշական է, որ զգալիորեն աճ է արձանագրվել 101-ով, կամ 57.4%-ով: Եթե 2019թ. ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործությունների 176 դեպք, ապա 2020թ. դրանց թիվը կազմել է 277:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2020թ. արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 17.2% (2019թ.՝ 19.5%), ենթասպաներինը՝ 1.5% (2019թ.՝ 2.8%), պայմանագրային զինծառայողներինը՝ 37,3% (2019թ.՝ 18,1%), ժամկետային զինծառայողներինը՝ 44% (2019թ.՝ 59.6%):

Ջինվորական դատախազության դատախազների կողմից հանցագործություններին նպաստող գործոնների վերացմանն ուղղված 181 միջնորդագիր է ուղարկվել պատկան մարմիններին ու կազմակերպություններին (2019թ. ընթացքում զինվորական դատախազության դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 181 միջնորդագիր): Միջնորդագրերի քննարկման արդյունքներով, խախտումներ թույլ տված զինծառայողների նկատմամբ կիրառվել են ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնակարգով սահմանված տույժեր:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2020թ. ընթացքում ՀՀ ՔԿ ՋՔԿ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ

հողվածի հատկանիշներով հարուցված 2011 քրեական գործ (2019թ.՝ 3089), որոնցից 399-ը փոխանցվել է նախորդ տարվանից, 991-ը հարուցվել է հաշվետու տարում, 45-ը ստացվել են այլ մարմիններից, 576-ով նախաքննությունը վերսկսվել է:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերից 882-ի նախաքննությունն ավարտվել է: Դրանցից 21-ը՝ մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարաններ, 861-ով՝ վարույթները կարճվել են: Ընդ որում՝ 301-ով վարույթները կարճվել են ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 438-ով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի, 122-ով՝ այլ հիմքերով: Իրադրության փոփոխման հիմքերով վարույթները կարճված քրեական գործերից 289-ով վարույթները կարճվել են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ, 149-ով՝ զորակոչիկի զինված ուժեր զորակոչվելու կապակցությամբ: 649 քրեական գործով վարույթները կասեցվել են, 11-ով՝ միացվել են այլ քրեական գործերի, 469 քրեական գործ փոխանցվել է 2021թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու վերաբերյալ նախապատրաստվել է 1158 նյութ, որոնցից 115-ով մերժվել է քրեական գործի հարուցումը: Դրանցից 112-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 3-ը՝ այլ հիմքերով:

Ջինվորական դատախազության դատախազների ամենօրյա առանձնակի հսկողության տակ են գտնվել հաշվետու ժամանակահատվածում արձանագրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունները և դրանց նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության իրականացումը:

2020թ. ընթացքում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 151 դեպք (2019թ.՝ 154), որոնց վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարմամբ և դատախազական հսկողությամբ նախապատրաստված նյութերից 146-ով հարուցվել են քրեական գործեր (2019թ.՝ 145):

Ընդհանուր առմամբ 2020թ. ընթացքում ՀՀ ՔԿ ՁՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 261 քրեական գործ: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 25 քրեական գործ՝ 58 անձի վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են այն մասին, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունները թեև քիչ, այնուամենայնիվ, նվազել են 1,3%-ով: Նվազումը պայմանավորված է ինչպես կոռուպցիոն դրսևորումների դեմ ձևավորվող հասարակական անհանդուրժողականությամբ, նմանօրինակ դեպքերի բացահայտմանն ուղղված տարաբնույթ միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ այդպիսի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության անխուսափելիությամբ:

Խստացվել է վերահսկողությունը զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում նյութական միջոցների ստացման, պահպանման և օգտագործման նկատմամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով արվում է հնարավոր ամեն ինչ հասարակության ինքնագիտակցությունը, ինչպես նաև հասարակության և իրավապահ մարմինների միջև փոխվստահությունը բարձրացնելու համար:

Պարզվել է նաև, որ 2020թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված, ավարտված, ինչպես նաև տարվա ընթացքում քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով և նախապատրաստված նյութերով արձանագրվել է 18.646.894.933 ՀՀ դրամի վնաս, որից վերականգնվել է 447.071.493 ՀՀ դրամը, իսկ մի մասով քրեական գործերի նախաքննությունը շարունակվում է:

2020թ. շուրջ 20%-ով նվազել են կրկնահանցագործությունները, ինչը մեծապես պայմանավորված է հանցագործություններ կատարած զինծառայողների զորամասերի հրամանատարությունների, ՌՌ բաժինների և կայազորների զինդատախազությունների աշխատակիցների իրականացրած հսկողությամբ, նրանց հետ տարված բացատրական աշխատանքներով, զրույցներով, ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներին, կատարած հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներին ծանոթացնելով:

2020 թվականին զինվորական դատախազության դատախազները էական աշխատանքներ են իրականացրել նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման և հետախուզական աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման, առկա թրոությունների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՔԿ ՁՔԿՎ քննչական ստորաբաժանումների վարույթներում եղել է նախորդ տարիներից փոխանցված, ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված 1070 քրեական գործ (2019թ.՝ 1046): 2020թ. ընթացքում նույն հիմքով կասեցվել է 67 քրեական գործ (2019թ.՝ 192): Կատարված վերլուծությամբ պարզվել է, որ 2020թ. ընթացքում ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կասեցված քրեական գործեր չեն վերսկսվել, նախկինում կատարված հանցագործությունների բացահայտման դեպքեր չեն արձանագրվել:

2020թ. ընթացքում, ղեկավարվելով ՀՀ զինվորական դատախազի 12.06.2017թ. N 13 կարգադրության և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, սպասարկման տարածքներում տեղակայված ՀՀ ՊՆ ՌՌ բաժիններում և բաժանմունքներում մշտապես ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված քրեական գործերով կազմված օպերատիվ փնտրողական գործերը՝ հանցանք կատարած անձանց բացահայտման ուղղությամբ դատախազական գործունեության կազմակերպման միասնական կառուցակարգեր ձևավորելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ուսումնասիրության ընթացքում հետազոտման առարկա են դարձել հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով իրականացված միջոցառումների՝ օպերատիվ հարցումների, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման նպատակով տարբեր իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների իրավական հիմքերը, դրանց կատարման անհրաժեշտությունը, ժամանակին կատարված լինելը և դրանց արդյունքում ստացված տեղեկությունների հավաստիությունը:

Նախաքննության մարմնի՝ քննիչի կողմից տրված գրավոր հանձնարարությունների հիման վրա իրականացվել են համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Քրեական գործերով ձեռք բերված տվյալների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տեղեկությունների միջև հակասություններ չեն հայտնաբերվել:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցների կողմից իրենց պաշտոնական լիազորությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումներ չեն հայտնաբերվել:

2020թ. ընթացքում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների և հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման ու լուծման մասին օրենքի և մյուս համապատասխան իրավական ակտերի, հանձնարարականների (ցուցումների) պահանջների կատարումն ապահովելու նպատակով, կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հետաքննության մարմիններում անցկացվել են 692 ստուգում և ուսումնասիրություն՝ նախորդ տարվա 458-ի դիմաց:

Կատարած ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է 74 իրավախախտումների դեպք (2019թ.՝ 75), 32 անձի վերաբերյալ դատախազները ներկայացրել են միջնորդություններ՝ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ (2019թ.՝ 75): Արդյունքում 3 անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

2020թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների հսկողությամբ նախապատրաստվել և ավարտվել է 5914 նյութ (2019թ.՝ 5423), որոնցից 2339-ը՝ քննչական (2019թ.՝ 2596), 3575-ը՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից (2019թ.՝ 2827):

Հետաքննության մարմինների նախապատրաստած նյութերով կայացված 2038 մերժման որոշումներից 21-ը դատախազների կողմից վերացվել է և հարուցվել են քրեական գործեր (2019թ.՝ 6): Դրանցից 6-ով վարույթները կարճվել են, 14-ով նախաքննությունն ընթացքի մեջ է:

2020թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազները վերահսկողություն են իրականացրել կայազորների զինվորական դատախազություններից ստացված 1815 նյութերով կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականության նկատմամբ (2019թ.՝ 1381): Բոլոր նյութերով կայացված որոշումների օրինականությունը վերստուգվել և հաստատվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ՋՔԳՎ բաժինների վարույթում քննվող 5351 քրեական գործի նկատմամբ (2019թ.՝ 5088):

1708 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է (2019թ.՝ 2609): Ավարտված քրեական գործերից 350-ը՝ 543 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ (2019թ.՝ 503 գործ, 752 անձ, 1 գործ 1 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ) ուղարկվել են դատարաններ, 1358 քրեական գործով վարույթները կարճվել են (2019թ.՝ 2105), 759 քրեական գործով վարույթները կասեցվել են

(2019թ.՝ 1248), 83 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2019թ.՝ 65), 263-ը միացվել է այլ գործերի (2019թ.՝ 189), 2456-ը՝ փոխանցվել 2021թ. (2019թ.՝ 841):

2020թ. ընթացքում վերացվել է քրեական գործերով վարույթները կարճելու 45 (2019թ.՝ 78) որոշում:

Ջինժառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 346 քրեական գործ՝ 540 անձի (2019թ.՝ 503 գործ, 752 անձ և 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ) վերաբերյալ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 348 քրեական գործ 494 անձի (2019թ.՝ 407 գործ, 614 անձ) վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 307 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 437 անձ (2019թ.՝ 416 անձ):

Դատարանների որոշումներով 35 քրեական գործ 47 անձի վերաբերյալ կարճվել է (2019թ.՝ 92 գործ, 184 անձ), այդ թվում՝ 19 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2019թ.՝ 154 անձ): 6 քրեական գործով 10 անձի վերաբերյալ (որից 1 առանձին քրեական գործով 1 անձի մասով) կայացվել է արդարացման դատավճիռ (2019թ.՝ 7 գործով 12 անձի և 2 առանձին քրեական գործերով 2 անձի մասով):

Դատապարտված 437 անձից 396-ը եղել է զինժառայող (2019թ.՝ 375), այդ թվում՝ 87-ը՝ սպա (2019թ.՝ 122): Նախորդ տարվա համեմատությամբ 21-ով աճել է դատապարտված զինժառայողների թիվը: Ջինժառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 41 քաղաքացիական անձ, այդ թվում՝ 2 անչափահաս:

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրողների կողմից օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և որոշումների դեմ բերվել է 54 վերաքննիչ բողոք՝ 57 անձի վերաբերյալ: ՀՀ զինվորական դատախազի կողմից բերվել է 3 վճռաբեկ բողոք:

Ջգալի աշխատանք է տարվել զինված ուժերում պետական շահերի պաշտպանության դատախազական գործառույթի իրականացման համատեքստում: Մասնավորապես, պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 2020թ. ընթացքում կատարվել է 303 ուսումնասիրություն, որոնց ընթացքում հայտնաբերվել է 188 խախտում: Դրանք հիմնականում վերաբերել են թիկունքային ծառայության, սպառազինության, ռազմաբժշկական, կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման և այլ բնագավառներին: Հարկ է նկատել, որ 2019թ. համեմատ 2020թ. իրականացված ուսումնասիրությունների քանակային ցուցանիշները շուրջ 24%-ով ցածր են նախորդ տրված ցուցանիշից, սակայն 2020թ. իրականացված ուսումնասիրությունների և դրանց արդյունքում հայտնաբերված խախտումների համեմատական վերլուծության արդյունքում ստացվում է, որ հաշվետու ժամանակահատվածում խախտումներ են հայտնաբերվել ուսումնասիրությունների շուրջ 62%-ի դեպքերում, ինչը մոտ 4.5%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Այդ խախտումներով պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ 2020թ. ընթացքում տրվել է 99 նախազգուշացում, ինչը 2019թ. համեմատ նվազել է 76-ով կամ 43.4%-ով: Իսկ ուսումնասիրություններով պարզված՝ առերևույթ հանցագործության հատկանիշ պարունակող տվյալների ձեռքբերմամբ հարուցվել է 91 քրեական գործ:

ՀՀ զինվորական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից ուսումնասիրվել է զինծառայողների բնակարանային ապահովության, այդ թվում, ՀՀ ՊՆ համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, ՀՀ ՊՆ հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու բնագավառում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Վերոնշյալ բնագավառում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ուսումնասիրությունները նախաձեռնվել են դեռևս 2019 թվականին և, հետագայում նախատեսվելով ՀՀ դատախազության և ՀՀ զինվորական դատախազության աշխատանքային ծրագրերով, շարունակվել են 2020թ. 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում և ընդգրկել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության ողջ գործընթացը՝ սկսած հաշվառումից մինչև բնակարանային պայմանների վերջնական բարելավում:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից ուսումնասիրությունների սկզբնական փուլում ՀՀ ՊՆ ՋՍՊ վարչությունից պահանջվել և ստացվել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանային ֆոնդի (այն բնակելի տարածությունների, որոնք կարող են տրամադրվել սեփականության իրավունքով) 5 հասցեում գտնվող 5 բնակելի շենքերի բնակարաններից կատարված հատկացումների վերաբերյալ ընդհանուր թվով 150 բնակարանային գործեր:

Պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից պահանջված և ստացված 150 բնակարանային գործերից 2020թ. ընթացքում ուսումնասիրվել է 93-ը կամ շուրջ 62 %-ը:

Ուսումնասիրված 93 բնակարանային գործերից խախտում է հայտնաբերվել 22-ի կամ 23%-ի դեպքում: Այս փուլում ստացված բնակարանային գործերից շուրջ 40 %-ը ուսումնասիրության փուլում է:

Արձանագրված խախտումների առնչությամբ 2020թ. ընթացքում ներկայացվել է 14 զեկուցագիր, որոնք վերաբերում են 27 զինծառայողի 25 բնակարան և բնակարան ձեռք բերելու համար ընդհանուր 21.401.000 ՀՀ դրամ անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու գործընթացներում թույլ տրված չարաշահումներին:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումների փաստի առթիվ նախապատրաստվել են 12 նյութեր և ՀՀ ՔԿ ՋԲԳ վարչությունում հարուցվել է 12 քրեական գործ, որոնք նախաքննության ընթացքում են:

Հաշվի առնելով նշված ոլորտում 2020թ. 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում արձանագրված խախտումների քանակը և բնույթը, ուսումնասիրվող բնագավառի ծավալը, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում ընթացող ռազմական գործողությունների հիմքով Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը և շահառուների կողմից ստացվող դիմումները՝ նախատեսվել է ՀՀ ՊՆ զինծառայողների բնակարանային ապահովության ոլորտի ուսումնասիրությունները շարունակել նաև 2021թ. ընթացքում, ինչը հնարավորություն կտա, ձևավորելով միասնական պրակտիկա, վեր

հանելու բնագավառում առկա առավել խորքային խնդիրները և բարձրացնելու պետական շահերի պաշտպանության արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությունների շրջանակներում արձանագրվել է պետությանը պատճառված շուրջ 2 մլրդ (2019թ.՝ շուրջ 12 մլրդ ՀՀ դրամ) ՀՀ դրամի վնաս:

Հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է շուրջ 1.2 մլրդ ՀՀ դրամի վնաս կամ 2019թ. (1.2 մլրդ ՀՀ դրամ) համեմատ գրեթե նույնքան: Կարելի է փաստել, որ հաշվետու տարում վերականգնվել է արձանագրված վնասի 60.0%-ը՝ նախորդ տարվա 11.3%-ի համեմատ: Պետությանը պատճառված չվերականգնված գույքային վնասի վերականգնման ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվում հարուցված քրեական գործերի շրջանակներում:

10. 2020թ. պատերազմական գործողությունների ընթացքում արձանագրված հանցագործությունների քննություն

ՀՀ դատախազության հետևողական հսկողության և դատավարական ղեկավարման ներքո ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ՔԿ

տարածքային ստորաբաժանումներում, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում և ՀՀ ՀԲԾ-ում քննվում է Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հարուցված 1683 քրեական գործ:

Նշված քրեական գործերի մեծ մասի քննությունն իրականացվում է միավորված մի քանի վարույթների շրջանակներում: Հաշվի առնելով դրանց բազմաձևավալությունը՝ այդ քրեական գործերը քննվում են նախաքննական մարմիններում ձևավորված քննչական խմբերի կողմից, իսկ դատավարական հսկողությունն իրականացվում է ստեղծված դատախազական խմբերի կողմից:

Նկատի ունենալով 2020թ. հուլիս-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ և ԱՀ նկատմամբ սանձազերծված պատերազմական գործողությունների ընթացքում բազմաթիվ հանցավոր դրսևորումների բացահայտման, մեղավոր անձանց հայտնաբերման, քրեական հետապնդման ոլորտում կատարված ծավալուն աշխատանքները, սույն հաղորդման մեջ դրանք ներկայացվում են 2 ուղղությամբ.

1. Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության, զինված ուժերի կողմից կատարված հանցագործություններ:

2. Պատերազմական գործողությունների ընթացքում ՀՀ և ԱՀ պաշտպանունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված հանցավոր դրսևորումներ:

Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության, զինված ուժերի կողմից կատարված հանցագործություններ

1. 2020թ. հուլիսի 12-ից 17-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից, կիրառելով ականանետային-հրթիռահրետանային համակարգեր և անօդաչու թռչող սարքեր, ՀՀ զինված ուժերի մարտական հենակետերը, զորամասերը, ինչպես նաև հայ-ադրբեջանական շփման գծի Տավուշի մարզին հարող խոր թիկունքում և մարտական գործողություններին չմասնակցող ութ խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությանը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի և շփման սահմանագիծը հարող խիտ բնակեցված շրջաններում ապրող կանանց և տարեցներին, կարևորագույն քաղաքացիական ենթակառուցվածքներին՝ շինություններ, ճանապարհներ, տներ և այլ ենթակառուցվածքներ, առանձին քաղաքացիական անձանց համակարգված, կանխամտածված և նպատակաուղղված գրոհների թիրախ դարձնելու բազմաթիվ դեպքերի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնում և Տավուշի մարզային քննչական վարչության Բերդի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 34-104-րդ, 185-րդ հոդվածների տարբեր մասերով և դրանց տարբեր համակցություններով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 38 քրեական գործ, որոնք միացվել են մեկ վարույթում:

2. Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը սանձազերծված և իրականացված ագրեսիվ պատերազմի ընթացքում, 1994 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ մտած եռակողմ

համաձայնագրի խախտմամբ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի XXIX նստաշրջանի բանաձևով հաստատված ազդեցիկ ռազմական գործողությունների արգելքի անտեսմամբ, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» ժնկի կոնվենցիայի, ինչպես նաև միջազգային սովորության մարդասիրական իրավունքի համապատասխան նորմերի, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառման արգելքի անտեսմամբ, ազգային ատելության շարժառիթով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու և պայթյունի եղանակով գույքի ոչնչացման դիտավորությամբ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությանը, զինված ուժերի մարդուժին և ռազմական նշանակության ենթակառուցվածքները, տեխնիկական միջոցները կանխամտածված և նպատակաուղղված գրոհների թիրախ դարձնելու, խոր թիկունքում գտնվող քաղաքացիական բնակչությանը և քաղաքացիական օբյեկտները ոչ ընտրովի հարձակման օբյեկտներ դարձնելու բազմաթիվ դեպքերի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության իրավասու մարմինների կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ, 390-րդ, 391-րդ, 387-րդ, 104-րդ, 34-104-րդ, 185-րդ, 226-րդ, 397.1-րդ հոդվածների տարբեր մասերով և համակցություններով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 45 քրեական գործ:

Նշված քրեական գործի շրջանակներում քննության առարկա են դարձել, մասնավորապես՝

- Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերը, մասնավորապես՝ մայրաքաղաք Ստեփանակերտի, հանրապետության բոլոր՝ Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի, Մարտունու, Մարտակերտի, Շահումյանի, Հադրութի շրջանների բնակավայրերին, քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական օբյեկտներին գրեթե բոլոր զինատեսակներով թիրախավորված կամ ոչ ընտրովի հարվածներ հասցնելու, ՊԲ զինծառայողներին, քաղաքացիական անձանց դիտավորությամբ մահ պատճառելու, գույքային հսկայական վնասներ հասցնելու դեպքերը:

- Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում ՀՀ զինված ուժերի ռազմաօդային ուժերի ՍՈՒ-25 գրոհիչի խոցումը, որի հետևանքով սպանվել է ՀՀ ԶՈՒ օդաչու, մայրը Վալերի Դանելիանը:

- Հարվածային անօդաչու թռչող սարքերով և այլ միջոցներով Գեղարքունիքի մարզի Գեղամասար Համայնքի Սոթք բնակավայրում գտնվող մարդատար ավտոբուսի, նույն բնակավայրի մի շարք բնակելի տների, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում տեղակայված զորամասի շինությունների հրթիռակոծումը:

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատվան, Նորաբակ համայնքների հրետակոծումը, ինչպես նաև հարվածային ԱԹՍ-ից Մեծ Մասրիկ բնակավայրի հրթիռակոծումը, ինչի հետևանքով զոհվել է մեկ քաղաքացի, երկու քաղաքացիական անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վիրավորում, Վարդենիս-Սոթք ավտոճանապարհի, Վարդենիսի Կուր գյուղի հրթիռակոծումը:

- Հակառակորդի չորս անօդաչու թռչող սարքերի, ՀՀ սահմանը ապօրինի հատելը և Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի օդային տարածքում հայտնվելը, որոնք չեզոքացվել են ՀՀ զինված ուժերի կողմից:

- Արցախը ՀՀ-ին կապող ավտոճանապարհի վրա գտնվող՝ Հակարի գետի վրայով անցնող կամրջի հրթիռակոծումը:

• Վարդենիս քաղաքի բնակչի առանձնատանը հասցված հրթիռահրետանային հարվածը, որի հետևանքով մեծ վնասներ են հասցվել այնտեղ գտնվող նյութական միջոցներին, գույքին:

• Հարվածային անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կաղնուտ բնակավայրի կանխամտածված և նպատակաուղղված հրթիռակոծումը, որի արդյունքում սպանվել է երեք զինծառայող, վնասվել են նույն բնակավայրի՝ մարտի մեջ չգտնվող ռազմական տեխնիկան՝ պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

• ՀՀ տարածքում, Վարդենիսի տարածաշրջանի Շատվան համայնքին հարակից տարածքում մարտական հերթապահություն իրականացնող զինտեխնիկային անօդաչու թռչող սարքերի միջոցով հասցված թիրախային հարվածը, որի հետևանքով զոհվել է ՀՀ ՋՈՒ երկու, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացել 10 զինծառայող, հարակից դաշտավայրում գյուղատնտեսական աշխատանքով զբաղվող խաղաղ բնակիչների թիրախավորումը, ինչի հետևանքով մեկ անչափահաս երեխա ստացել է ծանր մարմնական վնասվածքներ և տեղափոխվել հիվանդանոց:

• Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից զինված ընդհարման ժամանակ, ինչպես նաև դրանից հետո, ԱՀ ՊԲ զինծառայողների, քաղաքացիական անձանց գերեվարումները, միջազգային կոնվենցիաների, միջազգային մարդասիրական իրավունքի մի շարք նորմերի կոպտագույն խախտումների, մասնավորապես, Ադրբեջանի զինված ուժերի մոտ գտնվող և վերոնշյալ կոնվենցիաներով պաշտպանության իրավունք ունեցող ռազմագերիների և քաղաքացիական անձանց սպանության, խոշտանգելու, նրանց նկատմամբ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու բազմաթիվ դեպքերը: Մասնավորապես, առկա են փաստագրված տվյալներ պատերազմի ընթացքում Ադրբեջանի Հանրապետության ՋՈՒ զինծառայողների կողմից հայ ռազմագերիներին գլխատելու և լուսանկարները համացանցում տեղադրելու, վիրավոր ռազմագերիներին գնդակահարելու, հայ ռազմագերիների մարմինների տարբեր մասերը կտրելու, նրանց հարվածներ հասցնելու, ստորացուցիչ արարքներ կատարելու հարկադրելու վերաբերյալ:

Դրանց վերաբերյալ տվյալները պատշաճ իրավական ընթացակարգով ստուգվում են, իրականացվել և իրականացվում են դատավարական գործողություններ՝ ադրբեջանական զինված ուժերի կատարած հանցագործությունների ապացույցների ամբողջացման, դրանց քրեաիրավական խիստ գնահատականներ տալու հիմքերի ապահովման, հանցագործություն կատարած անձանց նույնականացման և քրեական պատասխանատվության ենթարկմանը հետամուտ լինելու նպատակով:

Արդեն իսկ ձեռք բերված բավարար օբյեկտիվ ապացույցների գնահատմամբ փաստվում է, որ Ադրբեջանի Հանրապետության ՋՈՒ պատասխանատու պաշտոնատար անձինք, կենտրոնացված կազմակերպմամբ, բազմաթիվ զինծառայողների նկատմամբ, ազգային ատելության ընդգծված շարժառիթով, իրականացրել են ծանրագույն հանցագործություններ՝ միջազգային մարդասիրական իրավունքի հանրաճանաչ կանոնների դիտավորյալ ու նպատակային խախտումներ:

Նշված առանձին դրվագներով Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի առանձին ներկայացուցիչների արարքներին քրեաիրավական գնահատականներ տալու, քրեական հետապնդումների ենթարկելու ուղղությամբ առկա են կոնկրետ արդյունքներ:

- Միջազգային սովորութային մարդասիրական իրավունքի համապատասխան նորմերի, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառմամբ, ազգային ատելության շարժառիթով, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հումանիտար և մշակութային օբյեկտները, մասնավորապես, ինչպես ռազմական ակտիվ գործողությունների ընթացքում, այնպես էլ 2020թ. նոյեմբերի 9-ին հրադադարի հաստատման մասին եռակողմ հայտարարության ստորագրումից հետո, Ադրբեյջանի զինված ուժերի ներկայացուցիչների կողմից հայկական պատմական հուշարձանները, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, ծագումով հայերի գերեզմանները ոչնչացնելու, վնասելու կամ պղծելու արձանագրված բազմաթիվ դեպքերի վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալները:

Դրանք ստուգվում են պատշաճ իրավական ընթացակարգով, ձեռնարկվում են քննչական և այլ դատավարական գործողություններ, օպերատիվ-հետախուզական աշխատանքներ՝ նմանատիպ այլ դրսևորումների վերաբերյալ փաստերի հավաքագրման, նշված դեպքերի բոլոր հանգամանքների բացահայտման, պատմական և պատմամշակութային արժեք ունեցող հուշարձանները, ծագումով հայերի գերեզմանները ոչնչացնելուն, վնասելուն, պղծելուն ուղղված գործողություններ կատարած անձանց ինքնությունը պարզելու, ռազմական հանցագործություններին բնորոշ նման արարքներին լիարժեք քրեաիրավական գնահատականներ տալու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու նպատակով:

- Ադրբեյջանի «Ղարաբաղ» ֆուտբոլային ակումբի մամուլի քարտուղարի կողմից, սոցիալական ցանցում, ազգային պատկանելության հիման վրա, հայերի դեմ ցեղասպանությունն արդարացնելու, վերջիններիս նկատմամբ թշնամանք հարուցելու, ատելություն և բռնություն հրահրելուն ուղղված գրառում կատարելու դեպքի հանգամանքները:

- Հայաստանի Հանրապետության Կապան համայնքի Դավիթ Բեկ բնակավայրին, վերջինիս բնակիչներին, քաղաքացիական ենթակառուցվածքներին մեծ տրամաչափի հրթիռահրետանային միջոցներով ինտենսիվ հարվածներ հասցնելու, դրա հետևանքով Դավիթ Բեկ բնակավայրի երկու բնակչի մարմնական վնասվածք հասցնելու, Կապան համայնքի բնակչին մահ պատճառելու, բնակավայրին նյութական մեծ վնասներ, ավերածություններ հասցնելու դեպքի առթիվ:

- ՀՀ Չեղարքունիքի մարզի Խաչաղբյուր, Շատջրեք, Մեծ Մասրիկ և Ակունք բնակավայրերում քաղաքացիական բնակչության նկատմամբ անօդաչու թռչող սարքեր կիրառելու դեպքի առթիվ (վերջիններս հայտնաբերվել և ոչնչացվել էին ՀՀ զինված ուժերի կողմից):

3. Ահաբեկչության և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 217.1-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել են 1-ական քրեական գործեր, որոնք միացվել են վերոնշյալ մայր գործին: Մասնավորապես՝ Ադրբեյջանի Հանրապետության կողմից ագրեսիվ պատերազմ վարելու առաջին իսկ օրվանից տարբեր ահաբեկչական խմբավորումների անդամ հանդիսացող, նյութական հատուցում ստանալու նպատակով հատուկ հավաքագրված անձանց՝ վարձկանների հավաքագրելու և օգտագործելու վերաբերյալ ստացված փաստական տվյալների հիման վրա, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում միջազգային ահաբեկչության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է

քրեական գործ: Նախաքննության ընթացքում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական, ինչպես նաև անհետաձգելի քննչական և այլ դատավարական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ 2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը ծրագրել է ագրեսիայի ակտ իրականացնել Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ, ուստի Ադրբեջանի զինված ուժերը միջազգային ահաբեկչական խմբավորումների վարձկաններով համալրելու վերաբերյալ նախնական համաձայնություն է ձեռք բերել Թուրքիայի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության հետ:

Նշված համաձայնությունն իրագործելու, այդ թվում՝ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում ահաբեկչություն կատարելու նպատակով, Թուրքիայի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը, գործելով կազմակերպված խմբի կազմում, նույն ժամանակահատվածից սկսած, համապատասխան ֆինանսական/դրամական միջոցներ, ինչպես նաև զենք և ռազմամթերք է տրամադրել «Սուլթան Սուլեյման Շահ /Ալ Ամշաթ», «Սուկուր», «Ալ Համզաթ», «Սուլթան Մուրադ» միջազգային ահաբեկչական խմբավորումներին:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած «Սուլթան Սուլեյման Շահ /Ալ Ամշաթ» և «Սուլթան Մուրադ» միջազգային ահաբեկչական խմբավորումների կազմում ընդգրկված շուրջ երկու հազարից ավելի վարձկան անդամներն Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի հետ ներգրավվել և ակտիվ մասնակցություն են ունեցել նախապես ծրագրված, համակարգված և նպատակաուղղված ռազմական գործողություններին:

Վերոգրյալի հիման վրա՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում 2020 թվականի նոյեմբերի 23-ին ահաբեկչության ֆինանսավորման դեպքի առթիվ հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 217¹-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, որը ևս միացվել է վերոնշյալ մայր գործի վարույթում:

Մայր գործին է միացվել նաև միջազգային ահաբեկչության դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նյութերով ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում 2020 թվականի նոյեմբերի 25-ին ահաբեկչության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործը:

Համաձայն վերջինիս նյութերի՝ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիայի ակտ իրականացնելու նպատակով, Ադրբեջանի զինված ուժերը, միջազգային ահաբեկչական խմբավորումների վարձկաններով համալրելու վերաբերյալ Ադրբեջանի և Թուրքիայի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատու պաշտոնատար անձանց նախնական համաձայնության շրջանակներում, վերոնշյալ միջազգային ահաբեկչական խմբավորումներին ֆինանսական/դրամական միջոցներ, ինչպես նաև զենք և ռազմամթերք տրամադրելու արդյունքում, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, «Սուլթան Սուլեյման Շահ /Ալ Ամշաթ» միջազգային ահաբեկչական խմբավորման ղեկավարը, եղբոր հետ, մի շարք անձանց միջոցով համալրել է իր ենթակայությամբ ահաբեկչական գործունեություն իրականացնող խմբավորման անդամների շարքերը՝ նյութական հատուցում տալու, այն է՝ 2000 ԱՄՆ դոլարին համարժեք թուրքական տարադրամով գումարի դիմաց հավաքագրելով Սիրիայի Արաբական Հանրապետության

երկու հազարից ավելի այլ քաղաքացիների: Հավաքագրված վարձկաններին ռազմական գործողություններին ներգրավելու նպատակով՝ նշված խմբավորման ղեկավարը Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսային հատվածում տեղակայված Շեյխ Հադիդ գյուղում գտնվող ռազմական կենտրոնում կազմակերպել է հավաքագրված վարձկանների մասնակցությամբ եռամսյա զորավարժանքներ, որոնց ընթացքում վերջիններս անցել են կրակային և ֆիզիկական պատրաստության դասընթացներ, ձեռք բերել տարբեր զինատեսակների կիրառման հմտություններ:

Շարունակելով հանցավոր մտադրությունը՝ վերջիններս, Թուրքիայի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության աջակցությամբ, տվյալ պետության տարածքով անարգել, առանց անձը հաստատող որևէ փաստաթղթերի առկայության, 500 անձից բաղկացած խմբերով, Ադրբեջանի Հանրապետություն են տեղափոխել 2020 թվականի սեպտեմբերի 25-ի դրությամբ մոտ 1000, իսկ մինչև հոկտեմբերի 18-ը՝ ևս մոտ 1000 վարձկան ահաբեկիչների: Բոլոր վարձկանները ստացել են Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի համազգեստ, զենք, զինամթերք, ռադիոկապի սարքավորումներ, ինչպես նաև մարտ վարելու համար անհրաժեշտ այլ միջոցներ:

Գտնվելով արդեն Ադրբեջանի Հանրապետությունում՝ խմբավորումները ղեկավարող անձինք, տեղում, Ադրբեջանի և Թուրքիայի զինված ուժերի ներկայացուցիչների հետ, համակարգել են այնտեղ տեղափոխված վարձկան ահաբեկիչների գործողությունները՝ ներգրավելով սանձազերծված ռազմական գործողություններին և հրաման տալով հարձակվել արցախյան և հայկական գյուղերի վրա, ոչնչացնել տեղի քաղաքացիական բնակչությանը, զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձանց, զինվորականներին, գլխատել նրանց, քաղաքացիական բնակավայրերում իրականացնել հրկիզումներ, պայթյուններ՝ նպատակ հետապնդելով ահաբեկել քաղաքացիական բնակչությանը, ներգործել պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման կամ գործողության կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու վրա:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած՝ «Սուլթան Սուլեյման Շահ /Ալ Ամշաթ» և «Սուլթան Մուրադ» միջազգային ահաբեկչական խմբավորումների մի խումբ վարձկան անդամներ, գործելով կազմակերպված խմբի կազմում, Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի հետ ներգրավվել և ակտիվ մասնակցություն են ունեցել նախապես ծրագրված, համակարգված և նպատակաուղղված ռազմական գործողություններին, որի ընթացքում սպանվել են Արցախի Հանրապետության ՊԲ զինծառայողներ, քաղաքացիական բնակիչներ, ինչպես նաև հրկիզվել են շինություններ, տներ և այլ կարևորագույն քաղաքացիական ենթակառուցվածքներ:

Քրեական գործի շրջանակներում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 389-րդ հոդվածով, 390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 395-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքով, 2020թ. հոկտեմբերի 31-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալվել է Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմին մասնակցող վարձկան՝ 1988թ. ծնված, ազգությամբ արաբ, Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի, Սարմադի քաղաքին հարակից Աթմի գյուղի բնակիչ Մուհիռաբ Մուհամմադ Ալ Շխերին, իսկ նոյեմբերի 2-ին՝ ազգությամբ արաբ, Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի, Իդլիբ նահանգի Ջսեր Ալ Շահուր

քաղաքի Ալ Զիեդիե գյուղի բնակիչ, 1975թ. ծնված Յուսեֆ Ալաբեթ Ալ Հաջին, որոնք ռազմական գործողությունների ծավալման վայրերում հայտնաբերվել և ՀՀ իրավասու մարմիններին են հանձնվել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի զինծառայողների կողմից:

Պատշաճ դատավարական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված ապացույցների բավարար համակցության հիման վրա, Մուհեաբ Մուհամմադ Ալ Շիեթիին և Յուսեֆ Ալաբեթ Ալ Հաջին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 389-րդ հոդվածով, 34-390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-390-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 395-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ձեռք բերված ապացույցների հիման վրա, վարույթն իրականացնող մարմնի որոշումներով, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից սանձազերծած ռազմական գործողություններին մասնակցած վերոնշյալ խմբավորումների բազմաթիվ վարձկան անձանց նկատմամբ հարուցվել են քրեական հետապնդումներ:

4. ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ, 4-րդ մասի 1-ին կետով հարուցվել և մայր գործին միացված վարույթով քննվում են մեկական քրեական գործեր՝ ԱՀ Հադրութ քաղաքի մի բնակչուհու տուն Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի շուրջ 10 զինվորականների ներխուժման, բռնություն գործադրելով՝ ձեռքերից քարշ տալով, իր կամքին հակառակ մեքենա նստեցնելու և բացահայտ առևանգելու եղանակով Ադրբեջանի Հանրապետության Բաքու քաղաք տեղափոխելու, մինչև հոկտեմբերի 28-ն այնտեղ պահելու փաստի, ինչպես նաև ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող Հադրութ քաղաքի այլ բնակչի՝ 1937թ. ծնված անձի Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների կողմից տեղահանելու, իր կամքին հակառակ Ադրբեջանի Հանրապետություն տեղափոխելու, անմարդկային վերաբերմունքի ու խոշտանգումների ենթարկելու և ապօրինաբար դիտավորությամբ նրան կյանքից զրկելու, ինչպես նաև մարտական գործողությունների ընթացքում ծանր վիրավորում ստացած անձին զնդակահարելու վերաբերյալ ստացված տվյալների հիման վրա:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության դեմ ոտնձգելու, ագրեսիվ պատերազմ սանձազերծելու շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ գյուղում թռիչք իրականացնող՝ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի «ՄԻ 24» տեսակի ռազմական ուղղաթիռը հրթիռահրետանային սարքերի կիրառմամբ խոցելու և դրա արդյունքում երկու անձի սպանվելու ու մեկ անձի մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ: Նույն օրն Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը պաշտոնական հայտարարությամբ հաստատել էր իրենց զինված ուժերի կողմից Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի հաշվեկշռում գտնվող վերոնշյալ ուղղաթիռի խոցման փաստը: Նշված քրեական գործով նախաքննությունը կատարվում է ՀՀ ՔԿ հատուկ հանձնարարությունների, կազմակերպական-վերլուծական և քրեագիտական գլխավոր վարչության քրեագիտական վարչության քննիչների կողմից:

Վերոնշյալ խումբ քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավված են վարձկան գրոհայիններ, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ ընդհանուր 37 անձ, որոնցից 2-ը կալանավորված է, իսկ 35-ի նկատմամբ հայտարարվել է

միջազգային հետախուզում, նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ այս փուլում ձեռք բերված ապացույցներով հնարավոր է հանգել հետևությունների առ այն, որ Ադրբեջանի կողմից, սկսած 2020թ. օգոստոսի սկզբից, Ադրբեջանի զինված ուժերում Թուրքիայի զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումների մեծաքանակ զինծառայողների ներկայության և Ադրբեջանի ՋՈՒ զինծառայողների հետ իրականացված զանգվածային մարտական պատրաստությունների, ընդհանուր զորահավաքով իրականացված պահեստազորի զորակոչով, կանոնավոր բանակի զորամիավորումները Ադրբեջանի և Արցախի սահմանագծին մոտ գտնվող մարտական դիրքերում, իսկ հրետանային միջոցներն ու այլ զինտեխնիկան՝ նաև սահմանամերձ բնակավայրերում տեղակայելու և այլ միջոցառումներով, իրականացվել են մասշտաբային նախապատրաստական աշխատանքներ՝ Արցախի դեմ ագրեսիվ պատերազմի սանձազերծման նպատակով, որն իրականացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան:

Պարտադրված պատերազմի ողջ ընթացքում խախտելով 1994 թվականի մայիսի 12-ին ուժի մեջ մտած հրադադարի եռակողմ համաձայնագիրը, անտեսելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի XXIX նստաշրջանի բանաձևով հաստատված ագրեսիվ ռազմական գործողությունների, պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառման արգելքները, «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» ժնևի կոնվենցիան, միջազգային սովորության մարդասիրական իրավունքի համապատասխան նորմերը՝ Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության և զինված ուժերի կողմից կատարվել են պատերազմական բազմաթիվ հանցագործություններ: Մասնավորապես՝

➤ ԱՀ և ՀՀ խոր թիկունքում և մարտական գործողություններին չմասնակցող խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությունը, կարևորագույն քաղաքացիական ենթակառուցվածքները՝ շինություններ, ճանապարհներ, տներ, կրթական, հոգևոր-մշակութային, առողջապահական, էներգետիկ և այլն, առանձին քաղաքացիական անձինք, այդ թվում պաշտպանության միջազգային իրավական երաշխիքներով ապահովագրված լրագրողներ, վիրավորներ, բուժաշխատողներ, երեխաներ և այլն, ենթարկվել են՝ երբեմն հստակ թիրախավորված, իսկ երբեմն նաև ոչ ընտրովի համակարգված, կանխամտածված և նպատակաուղղված գրոհների, որոնց հետևանքով սպանվել, կամ մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել տասնյակ հազարավոր զինծառայողներ, քաղաքացիական անձինք, այդ թվում՝ երեխաներ, կանայք և ծերեր:

➤ Ինչպես խաղաղ բնակչության, այնպես էլ ԱՀ զինված ուժերի դեմ Ադրբեջանի զինված ուժերի կողմից կիրառվել են արգելված, այդ թվում նաև՝ քիմիական որոշակի արգելված բաղադրություններով զինատեսակներ:

➤ Ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ անցած, գերեվարված ԱՀ ՋՈւ զինծառայողներ, քաղաքացիական անձինք ենթարկվել են խոշտանգումների, նվաստացման, ինքնադատաստանների միջոցով ամենադաժան ձևերով սպանությունների, զոհված զինծառայողների, քաղաքացիական անձանց մարմինները ենթարկվել են անդամահատումների, հրկիզումների, անարգանքի տարատեսակ դրսևորումների:

➤ Ազգային ատելության շարժառիթով ոչնչացվել, պղծվել, վանդալիզմի տարատեսակ դրսևորումների են ենթարկվել հայկական պատմական հուշարձանները,

պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, ծագումով հայերի գերեզմանները:

➤ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում ահաբեկչություն կատարելու նպատակով, Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության փոխհամաձայնությամբ կազմակերպվել է միջազգային ահաբեկչական խմբավորումների կազմում ընդգրկված հազարավոր վարձկանների՝ մերձավորարելյան տարածաշրջանից ապօրինի կերպով Թուրքիայի տարածքով դեպի Ադրբեջան տեղափոխումը, նրանց զինումը, ռազմական գործողություններին նախապատրաստումը, համապատասխան հանդերձանքով ապահովումը, վարձատրումը և Ադրբեջանի ՋՈւ կողմից իրականացված ռազմական գործողություններին անմիջական մասնակցության իրացումը՝ հայկական խաղաղ բնակչության շրջանում սպանություններ, ահաբեկչական ակտեր իրականացնելու նպատակով:

➤ Նախորդիվ նշվածն իրականացնելու համար ապահովվել է միջազգային ահաբեկչության ֆինանսավորումը:

Վերոնշյալ քրեական գործերով իրականացվող լայնածավալ, բազմադրվագ քննությունների շրջանակներում, քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարող մարմինների կողմից, նաև քրեական գործերի քննությունների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների համապատասխան ցուցումների և հանձնարարությունների հիման վրա, ձեռնարկվում են բոլոր հնարավոր իրավաչափ միջոցները՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից Թուրքիայի Հանրապետության լիակատար աջակցությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված և իրականացված ագրեսիվ պատերազմի, դրա ընթացքում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի այլ ներկայացուցիչների, ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատու պաշտոնատար անձանց հանցավոր գործողություններն ամբողջացնելու, մեղքը հիմնավորող ապացույցների բավարարությունն ու լիարժեքությունն ապահովելու ուղղությամբ: Դրանց արդյունքներից ելնելով՝ հընթացս համապատասխան անձանց նկատմամբ հարուցվում են քրեական հետապնդումներ և իրականացվում դրանից բխող՝ նրանց հայտնաբերման ու պատասխանատվության ենթարկմանն ուղղված միջոցներ՝ գործադրելով նաև ՀՀ օրենսդրությունից, միջազգային համաձայնագրերից և երկկողմ պայմանագրերից բխող՝ իրավական փոխօգնության, միջազգային համագործակցության բոլոր կառուցակարգերն ու ընթացակարգերը:

Պատերազմական գործողությունների ընթացքում ՀՀ և ԱՀ պաշտպանունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ պատերազմական ագրեսիայի սանձագերծումից հետո, մարտական գործողություններով պայմանավորված, ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, փոխադրելու, հափշտակելու կամ շորթելու շուրջ երեք հարյուրի հասնող դեպքերից 95-ով հարուցվել են քրեական գործեր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի տարբեր մասերի և 238-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ զենքերը, ռազմամթերքը պայթուցիկ նյութերը կամ սարքերը ձեռք են բերվել Արցախի Հանրապետության պաշտպանական տարբեր շրջաններից և նախատեսված են եղել կամ օգտագործվել են ռազմական գործողություններում թշնամու դեմ կիրառելու համար: Թաքցվելով հիմնականում Արցախից մեկնող ավտոմեքենաներում՝ զենք-զինամթերքը (հիմնականում հրազեն հանդիսացող «ԱԿ» տեսակի ինքնաձիգներ, ռազմամթերք հանդիսացող տարբեր տրամաչափի փամփուշտներ, պայթուցիկ սարք հանդիսացող նռնակներ, սառը զենք հանդիսացող սվին-դանակներ) ապօրինի կերպով տեղափոխվել կամ փորձ է արվել տեղափոխել Հայաստան՝ առանձին դեպքերում խմբի կազմում մի քանի անձանց նախնական համաձայնությամբ և գործակցությամբ: Այդ զենք-զինամթերքի զգալի մասը հայտնաբերվել է հիմնականում Ստեփանակերտ-Գորիս ավտոճանապարհի տարբեր հատվածներում ծառայություն իրականացնող համապատասխան իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից՝ ավտոմեքենաների զննությամբ, ինչպես նաև իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

Քննվող նշված քրեական գործերով մի քանի տասնյակ անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, 4 քրեական գործ 6 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, վերջիններից 3-ով 5 անձի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ, որոնց նկատմամբ որպես պատիժ է նշանակվել ազատազրկումը՝ որոշակի ժամկետներով:

2. 2020թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծված ագրեսիվ պատերազմի ընթացքում, ռազմական դրության ժամանակ, ՀՀ ՊՆ և ԱՀ ՊԲ զինծառայողների կողմից զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման, մասնավորապես՝ զորահավաքային զորակոչից խուսափելու, հրաման չկատարելու, դասալքության, անդամախեղման եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու, զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու, հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու, կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու բազմաթիվ դեպքերով, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ, 356-րդ, 361-րդ, 362-րդ, 363-րդ, 364-րդ, 365-րդ հոդվածների տարբեր մասերով հարուցվել է 1445 քրեական գործ: Վերոնշյալ քրեական գործերով հանցավոր արարքներ կատարելու համար մեղադրանքներ են առաջադրվել տասնյակ անձանց, մի քանի տասնյակ անձանց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Այս քրեական գործով ներկայում քննչական, դատավարական այլ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են իրականացվում նմանատիպ արարքներ կատարած այլ անձանց հայտնաբերելու, տեղի ունեցածի պատճառների և հանգամանքների բացահայտման ուղղությամբ:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով քննվող՝ ռազմական դրության պարագայում զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքի վերաբերյալ մեկ գործով քննության առարկա են Շուշիի, Հադրութի, Մեխակավանի, Հորադիզի

ուղղություններով գործերի և ստորաբաժանումների գործողությունների ղեկավարման, հակառակորդի կողմից բնակավայրերի գրավման հանգամանքները:

Մասնավորապես՝ զանգվածային լրատվամիջոցների, սոցիալական ցանցերի մշտադիտարկման արդյունքում, դեռևս 2020թ. նոյեմբերին, ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է տվյալների հավաքագրում. ՋԼՄ-ներով, սոցիալական տարբեր ցանցերի հարթակներով արված բազմաթիվ հրապարակումներ, գրառումներ և տեսանյութեր, որոնցում առկա են եղել պնդումներ և ընդհանուր բնույթի տվյալներ պատերազմի ընթացքում Արցախի պաշտպանության բանակի ու կամավորականների՝ Արցախի Հանրապետության հարավ-արևելյան ուղղություններում, այդ թվում նաև դեպի Շուշի քաղաք, քաղաքի մատույցներում և քաղաքի ներսում պաշտպանություն իրականացնող ստորաբաժանումներին անհիմն նահանջելու հրաման տալու միջոցով Շուշի քաղաքը դիտավորությամբ նպատակային և պլանավորված կերպով Ադրբեյջանի զինված ուժերին հանձնելու, առանձին դեպքերում՝ առանց հրամանի դիրքերը լքելու միջոցով զինվորական ծառայության պարտականությունները չկատարելու դեպքերի մասին: Ամբողջացումից հետո դրանք ՀՀ գլխավոր դատախազի կողմից ուղարկվել են ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտ՝ դրանցում ներկայացված հանգամանքները լիարժեք պարզելու և պատշաճ քրեաիրավական գնահատական տալու նպատակով:

Քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու նպատակով, նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից այս կապակցությամբ տրվել է քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու ցուցում: Նույն օրը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրվել է գրություն՝ սեղմ ժամկետում վերոնշյալ ցուցումով սահմանված ու դրանից բխող քննչական և այլ դատավարական գործողությունները կատարելու և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների հետ նախաքննական մարմնի համագործակցության ապահովմամբ գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելուն ուղղված համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Քրեական այս գործի շրջանակներում մանրակրկիտ քննության առարկա դարձնելու նպատակով, հընթացս, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ԱԱԾ քննչական դեպարտամենտ են ուղարկվել նաև ՋԼՄ-ների բազմաթիվ այլ վերաբերելի հրապարակումներ, մասնավորապես՝ Արցախի Հանրապետության հարավ-արևելյան ուղղություններում, դեպի Շուշի քաղաք, քաղաքի մատույցներում և քաղաքի ներսում ծավալված ռազմական գործողությունները լուսաբանած հայտնի ռուս լրագրողի հրապարակային արված դիտարկում-վկայությունները, ենթադրաբար Արցախի Հանրապետության նախագահի մասնակցությամբ ձայնագրությունը, ԱՀ անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի՝ 12.12.2020թ. հրապարակված հարցազրույցը և այլն:

3. 15 քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 372-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է ռազմական դրության ժամանակ զինծառայողի կողմից անձնական օգտագործման համար իրեն տրամադրված զգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները, ինչպես նաև ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը կամ ռազմական այլ գույքը դրանց պահպանության կանոնների խախտմամբ կորցնելու կամ փչացնելու դեպքերի առթիվ:

4. Ռազմական դրության ժամանակ պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով իշխանությունը կամ պաշտոնական դիրքը չարաշահելու, իշխանազանցության կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելու, ինչպես նաև իշխանության անգործության դեպքերի առթիվ հարուցվել է 5, ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի կողմից անփույթ վերաբերմունք դրսևորելու դեպքերի առթիվ՝ 9 քրեական գործ: Նշված քրեական գործերից մեկով, որով նախաքննությունն իրականացնում է ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտը, քննության առարկա է դարձել պատերազմի ընթացքում անհամարժեք փոխհատուցմամբ գրահաբաձկոններ ձեռք բերելու հարցը:

5. Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով անհետ կորած, գերության մեջ հայտնված զինծառայողների ծնողներից, հարազատներից խարդախությամբ գումարներ, այդ թվում՝ խոշոր չափերի, հափշտակելու հատկանիշներով հարուցվել և տարբեր քննչական մարմիններում քննվում է 5 քրեական գործ, որոնցով առկա են որպես մեղադրյալ ներգրավված և նախնական կալանքի տակ գտնվող անձինք:

Ըստ քրեական գործերի նյութերի՝ առանձին անձինք, ներկայանալով որպես բարձրաստիճան զինվորականներ կամ ՀՀ ԱԱԾ-ի, այլ երկրի անվտանգության ծառայության հետ կապեր ունեցողներ, զոհված կամ անհայտ կորած համարվող զինծառայողների ծնողների, հարազատների վստահությունը չարաշահելու եղանակով, նրանց հավաստիացրել են, թե իրենց որդին որպես ռազմագերի գտնվում է Ադրբեյջանում և իրենք կարող են, օգտագործելով իրենց կապերը, ապահովել նրա բուժման, գերությունից ազատվելու և ՀՀ տեղափոխելու խնդիրը՝ այդ պատրվակով խարդախությամբ նրանցից հափշտակելով կամ փորձելով հափշտակել խոշոր չափերի գումարներ: Սակայն իրենց հանցավոր մտադրությունները տվյալ անձինք ամբողջությամբ իրականացնել չեն կարողացել, քանի որ իրացված օպերատիվ-հետախուզական և այլ միջոցառումների արդյունքում բռնվել են ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից:

6. 2020թ. տեղի ունեցած պատերազմի առնչությամբ քննվում են նաև մեկական գործեր՝ պետական դավաճանություն կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդված) և լրտեսության (ՀՀ քրեական օրենսգրքի 302-րդ հոդված) հատկանիշներով, որոնցով իրականացվում են քրեական հետապնդումներ կոնկրետ անձանց նկատմամբ:

7. 2020թ. նոյեմբերի 19-ին «Հայելի ակումբ»-ում ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական վերահսկողության ծառայության նախկին պետ Մովսես Հակոբյանի ասուլիսից անմիջապես հետո, դրա տեսագրությունը ՀՀ գլխավոր դատախազի ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկվելու և այդ կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ՝ Արցախում տեղի ունեցած պատերազմի ընթացքում ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար մի խումբ անձանց կատարած այնպիսի արարքների վերաբերյալ, որոնք հակասել են ՀՀ պաշտպանության նախարարության մի շարք փաստաթղթերում առկա կարգավորումներին, որոնք բացասական ազդեցություն են ունեցել զինված ուժերի մարտունակության վրա և ազդել են պատերազմի արդյունքի վրա:

Նախաքննության ընթացքում, քրեական գործին կցելու, դրանում տեղ գտած հանգամանքների շուրջ քննություն իրականացնելու նպատակով, դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը վարույթն իրականացնող մարմնին է ուղարկել

Ադրբեջանի նախագահի սուրհանդակի և ՀՀ վարչապետի ներկայացուցչի՝ Երրորդ Երկրում հանդիպման, դրա ընթացքում Արցախի 7 շրջանի դիմաց 5 մլրդ դոլար վճարելու առաջարկ պարունակող նամակ հանձնելու և հայկական կողմից դրան համաձայնելու վերաբերյալ հրապարակումները:

Բացի այդ, քրեական գործին կցելու և քննության առարկա դարձնելու նպատակով, վարույթն իրականացնող մարմնին է ուղարկվել ՀՀ ԱԱԾ մի շարք բարձրաստիճան սպաների կողմից տարածված հայտարարությունը՝ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև եղած կապի արդյունքում միլիարդավոր դոլարների դիմաց Արցախի տարածքների հանձնման շուրջ սակարկությունների վերաբերյալ:

Քննության առարկա դարձնելու նպատակով, դատախազությունը վարույթն իրականացնող մարմնին է ուղարկել նաև առանձին իրավաբանների, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմում-հաղորդումները՝ ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ մասում տեղակայված ՀՀ զինված ուժերի դուրս բերման և Ադրբեջանի Հանրապետությանը զիջման, սահմանագատման ուղղությամբ Սյունիքի մարզում կատարված գործընթացների, դրանցում պետական դավաճանության հատկանիշների առկայության վերաբերյալ: Քննություն կատարելու և լիարժեք հանգամանքները պարզելու նպատակով այս քրեական գործին են միացվել նաև «OCA-AK» հակաօդային պաշտպանության միջոցների և «ՍՈՒ-30ՍՄ» բազմաֆունկցիոնալ ինքնաթիռների ձեռքբերման գործընթացի վերաբերյալ հրապարակումները:

ՀՀ գլխավոր դատախազության նախաձեռնությամբ ՀՀ ՀՔԾ-ում քննության առարկա է դարձել նաև ՀՀ ԱԱԾ նախկին տնօրենի կողմից հայերեն լեզվին տիրապետող ադրբեջանցիներին անձնագրային բաժանմունքների պետերի միջոցով 1400 հայկական անձնագիր բաժանելու, 400 ադրբեջանցիների կողմից Նախիջևանից Քաջարանով Արցախ անցնելու, 2018թ. ՀՀ-ում իրականացված հեղափոխության համար Նիկոլ Փաշինյանի և նրա թիմակիցների կողմից թուրքերից ու ադրբեջանցիներից 48 մլն ԱՄՆ դոլար ստանալու մասին նյութերը: Այդ տվյալները հրապարակած անձը, սակայն, հրաժարվել է իր հայտնած հանգամանքների վերաբերյալ բացատրություն տալուց, իսկ նրա կողմից նշված հանգամանքների ստուգման նպատակով վարույթի շրջանակներում ՀՀ ոստիկանության և ՀՀ ԱԱԾ-ի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նման տվյալներ չեն ստացվել: Ելնելով դրանից՝ կայացվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով վերոնշյալ հայտարարությունների առթիվ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, որից հետո հարուցվել է քրեական գործ՝ սուտ մատնության հատկանիշներով:

8. Բացի վերոնշյալից, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում և ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվող քրեական գործերի շրջանակներում քննության առարկա են նաև ՀՀ ՊՆ-ի կարիքների համար տարբեր զենք-զինամթերքի, ռազմական հանդերձանքի և պարագաների, սննդամթերքի ձեռքբերման գործարքների իրավաչափության, դրանց իրականացման գործընթացում պաշտոնատար անձանց մասնակցությամբ առերևույթ յուրացման կամ վատնման եղանակով հափշտակություններ, խարդախություններ կատարելու, պաշտոնեական կեղծիքների, իշխանազանցության կամ պաշտոնեական անգործության դեպքերը: Այդ գործերի շրջանակներում ՀՀ դատախազության նախաձեռնությամբ քննության առարկա են դարձել ՋԼՄ-ներով և սոցիալական ցանցերով տարածվող՝ նման գործընթացների վերաբերյալ՝

իրենց մեջ որոշակիություն ունեցող հանցագործության հատկանիշներ պարունակող հայտարարություններն ու տեղեկությունները, դրանց կից ներկայացվող փաստաթղթերը: Նման առանձին գործերով ևս կան որպես մեղադրյալ ներգրավված անձինք:

9. Պատերազմի ընթացքում զոհված, անհետ կորած զինծառայողների հարազատների կողմից, ինչպես ՀՀ դատախազությանն ուղղված դիմումների միջոցով, այնպես էլ ՀՀ զինվորական դատախազությունում կազմակերպված ընդունելության ժամանակ, ստացվել է 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ին կատարված ռազմական գործողությունների տարբեր դրվագների, առանձին զորամիավորումների տեղաշարժերի և գործողությունների, դրանց շրջանակներում հրամանատարների կողմից տրված հրամանների, վարքագծի դրսևորումների իրավաչափության վերաբերյալ 5 հաղորդում, որոնցից յուրաքանչյուրով հարուցվել է քրեական գործ, իսկ 17 դիմում՝ դրանցում նշվող վերոնշյալ բնույթի այլ հանգամանքների վերաբերյալ, ուղարկվել է վարույթ իրականացնող նախաքննական մարմիններ՝ պատերազմին առնչվող քրեական գործերով ստուգման ու քննության և քննության առարկա դարձնելու նպատակով: Այս գործերով ևս առանձին սպաների, այդ թվում նաև՝ բարձրաստիճան, առաջադրվել են մեղադրանքներ:

10. Պատերազմի ընթացքում առանձին էպիզոդիկ դեպքերի առթիվ ևս հարուցվել են մի քանի քրեական գործեր:

Ընդհանուր առմամբ պատերազմական գործողությունների ընթացքում ՀՀ և ԱՀ պաշտպանունակության, զինվորական ծառայության դեմ ուղղված առերևույթ հանցագործությունների դեպքերի առթիվ քննվող՝ վկայակոչված քրեական գործերով նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա, որոշումներ են կայացվել 628 անձի որպես մեղադրյալ ներգրավելու մասին, այդ թվում նաև բարձրաստիճան սպաների:

Արցախյան 2-րդ պատերազմին առնչվող քրեական գործերով վարույթն իրականացնող մարմիններին հանձնարարվել է հետևողականություն ցուցաբերել հայկական զինված ուժերի ղեկավարման և ռազմական առաջադրանքների կատարման մակարդակներում կատարված հանցավոր արարքների բացահայտմանը՝ ըստ կոնկրետ դեպքերի, իրավիճակների, ռազմական գործողությունների ուղղությունների՝ հատկապես շեշտը դնելով պատերազմի աղետալի հետևանքներին հանգեցրած հանցավոր պատճառների և պայմանների ամբողջացման վրա: Ըստ էության՝ առանձնացվել են քննությունների առանցքային մի քանի ուղղություններ. մասնավորապես՝

- զորահավաքային զորակոչի, զորահամալրման գործընթացների ընթացքում թույլ տրված խախտումները, դրանց բնույթը, ընդգրկումը,
- պատերազմից առաջ և այդ ընթացքում սպառազինության, ռազմական պարագաների գնումների պլանավորման ու ձեռքբերման գործընթացի համապատասխանությունը ՀՀ և ԱՀ անվտանգության կարիքներին, դրանցում հնարավոր կոռուպցիոն սխեմաների գործադրումը,
- ռազմավարական ու մարտավարական մակարդակներում ռազմական գործողությունների ղեկավարման և իրականացման հետ կապված հանցավոր թերացումների, սխալների ի հայտ բերումը, դրանց համար պատասխանատու պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափության պարզումը,
- կոնկրետ դեպքերում ու իրավիճակներում հրամանատարության կողմից տրված հրամանների, մարտական առաջադրանքների կատարումից հրաժարվելու դեպքերը, դրանց պատճառները և առաջացրած հետևանքները:

Ընդ որում՝ խնդիր է դրվել հանցավոր դրսևորումներին իրավական գնահատականներ տալ նաև ընդհանրության մեջ՝ պատերազմի ելքի վրա դրանց թողած ազդեցության տեսանկյունից: Այս իմաստով դատախազությունը կաշկանդված չէ, բավարար հիմքերի, ապացույցների ձեռքբերման դեպքում, ցանկացած անձի, այդ թվում՝ անկախ զբաղեցրած դիրքից՝ պաշտոնատար անձի, նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ հարուցմանը հետամուտ լինելու հարցում:

Վերոնշյալից բացի, ինչպես պատերազմի ողջ ընթացքում, այնպես էլ դրանից հետո, ՀՀ գլխավոր դատախազությունն իր լիազորությունների ամբողջ ծավալով գործադրել է միջազգային կապերի բոլոր հնարավոր մեխանիզմներն ու հարթակները՝ կարևորելով ՀՀ-ի և ԱՀ-ի բնակչության դեմ իրականացված վերոնշյալ մասշտաբային ռազմական հանցագործությունների, դրանց հետևանքների վերաբերյալ միջազգային իրազեկվածության ապահովումը, նրանց կողմից համարժեք արձագանքին հետամուտ լինելը՝ իր գործընկեր երկրների, կազմակերպությունների ղեկավարներին, միջազգային համագործակցության շրջանակներում, պարբերաբար առաքվող նամակներով, ընթացքում ձեռք բերվող փաստական տվյալների փոխանցմամբ վերջիններիս ուշադրությունն է հրավիրել, մասնավորապես, ՀՀ-ի և ԱՀ-ի դեմ իրականացված ագրեսիվ պատերազմի ողջ ընթացքում, Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև համագործակցությամբ մերձավորարևելյան տարածաշրջանից միջազգային ահաբեկչական խմբավորումների անդամներին, վարձկաններին, գումարային վարձատրության դիմաց հավաքագրելու և Թուրքիայի Հանրապետության տարածքով անարգել Ադրբեջանի Հանրապետություն տեղափոխելու, նրանց Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կազմում ներառելու և Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության բնակչության դեմ նախապես պլանավորված ռազմական գործողություններում, հանցագործություններում ներգրավելու վերաբերյալ իրողությունների, ձեռք բերված փաստերի ու ապացույցների վրա՝ բազմիցս վերահաստատելով իր պատրաստակամությունը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով լայն համագործակցություն ծավալելու միջազգային ահաբեկչության տարածման, տարածաշրջանում ահաբեկչական նոր կենտրոնների ստեղծման ու ամրապնդման փորձերը կանխելու, դրանցում ներգրավվող անձանց հայտնաբերելու և պարտադիր պատասխանատվության ենթարկելու հարցում:

Այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկությունը նկարագրված է միջազգային իրավական համագործակցության բաժնում:

11. Քաղաքացիների ընդունելության, դիմում-բողոքների քննարկման և հանրային կապերի ոլորտ

2020թ. ՀՀ դատախազությունում քաղաքացիներից ստացվել է 10.435 դիմում-բողոք՝ նախորդ տարվա 11.862-ի համեմատ: Ստացված դիմումների թիվը նվազել է 1427-ով: Դիմումներից 2036-ը եղել է կրկնակի, 1011-ը բավարարվել է (2019թ.՝ 889), 2862-ին տրվել է պարզաբանում, 2095-ը մերժվել է (2019թ.՝ 1969), 143-ը թողնվել է անհետևանք (2019թ.՝ 141), 9-ը վերադարձվել է դիմումատուին (2019թ.՝ 12), 22 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2019թ.՝ 15), 93 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2019թ.՝ 181), 4041 դիմում ուղարկվել է այլ մարմին, 159 դիմումի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ (2019թ.՝ 55):

Ձուկված զինծառայողների հարազատների կողմից ստացվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսված 44-օրյա պատերազմին առնչվող հանցագործության մասին 5 հաղորդում, որոնցով հարուցվել են քրեական գործեր:

Պատերազմում զոհված, անհետ կորած ու գերեվարված զինծառայողների հարազատներից ստացվել է նաև 17 դիմում: Ստուգելու և քննության առարկա դարձնելու նպատակով դիմումներն ուղարկվել են պատերազմին առնչվող քրեական գործերով վարույթ իրականացնող նախաքննական մարմիններ:

2020թ. ստացված դիմում-բողոքների գերակշիռ մասը՝ 3045-ը, վերաբերում է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին:

Կոռուպցիոն բնույթի և մարդու դեմ ուղղված հանցագործությունների մասին դիմումներն ու հաղորդումները 1500-ից ավելի են:

2020թ. դատախազությունում կազմակերպվել է 1375 ընդունելություն:

Գլխավոր դատախազի մոտ կազմակերպվել է 28 ընդունելություն, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների և ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների մոտ՝ 10, վարչությունների դատախազների մոտ՝ 155, Երևանի ու վարչական շրջանների դատախազություններում՝ 264, մարզերի դատախազություններում՝ 692:

Ձինդատախազությունում 196 այցելություն է կազմակերպվել, ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում՝ 33 ընդունելություն:

Պետք է նշել, որ դատախազությունում կազմակերպված ընդունելությունների արդյունքում առանձին դեպքերում նոր երևան եկած հանգամանքների հիմքով հարուցվել են վարույթներ:

Մասնավորապես, քաղաքացու ներկայացրած հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանությունը քրեադատավարական կարգով նյութեր է նախապատրաստել, սակայն վարույթն իրականացնող մարմինը կայացրել էր քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում: Այդ կապակցությամբ քաղաքացուց ստացվել է բողոք, կազմակերպվել է վերջինիս ընդունելությունը ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականի մոտ: ՀՀ դատախազությունում այդ որոշման օրինականության ստուգման և գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում, հաշվի առնելով նաև ընդունելության արդյունքները, նոր երևան եկած հանգամանքի հիմքով հարուցվել է վարույթ, և գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե՝ նախաքննություն կատարելու հանձնարարությամբ:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և դատախազության գործունեության

վերաբերյալ հանրության պատշաճ իրազեկվածությունը՝ քրեական հետապնդման մարմինները, այդ, թվում, մասնավորապես, ՀՀ դատախազությունը, 2020թ. ընթացքում շարունակում են հանրության և թիրախավորված մասնագիտական շրջանակների հետ արդյունավետ նախաձեռնողական հաղորդակցությունը՝ դրան ուղղված եղանակների ու միջոցների բազմազանության ապահովմամբ, կատարվող աշխատանքների ամենօրյա լուսաբանմամբ:

ՀՀ դատախազության կողմից վարվող տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները կատարվել են հետևյալ ուղղությունների վրա:

- Հանրապետությունում ընդհանուր առմամբ և մարզերում առանձին-առանձին հանցավորության ընդհանուր վիճակի, դինամիկայի, հանցագործությունների կանխարգելման, խափանման, բացահայտման ուղղությամբ կատարված և ընթացիկ աշխատանքների լուսաբանումը:

- Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, դրանց վերաբերյալ քննվող քրեական գործերով կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ կատարման մեջ մեղադրվող պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումների ինչպես կոնկրետ դեպքերը, այնպես էլ այս ոլորտում իրավապահ մարմինների կողմից իրականացված համագործակցված, ուղենիշային աշխատանքները, հանրային առավել մեծ վտանգավորություն և հնչողություն ունեցող հանցատեսակներով, ինչպես նաև սոցիալական նշանակության ոլորտներում կատարված հանցագործությունների դեպքերով կոնկրետ քրեական գործերի հարուցման, դրանց նախաքննության ընթացքի և արդյունքների ներկայացումը:

- Հատկապես կարևորվել է քրեական ենթամշակույթի, անչափահասների հանցավորության, բնակարանային գողությունների, ապօրինի անտառահատումների, դեմ քրեաիրավական պայքարին ուղղված դատախազության նախաձեռնությունների առանձին ոլորտներում, ինչպես, օրինակ, սոցիալական աջակցության, ճանապարհաշինության, պետական կառավարման, ջրօգտագործման, էներգետիկայի, բնապահպանության, պետական գույքի մասնավորեցման, և տեղական ինքնակառավարման մարմիններում, նրանց ենթակայության կամ մասնակցությամբ կազմակերպություններում աշխատանքային հարաբերություններում հանցավոր մեխանիզմների բացահայտումները, զինված ուժերում կոռուպցիայի դեմ պայքարի, հանցավորության մակարդակի նվազեցմանը միտված միջոցառումները, նախկինում կայացված մեղադրական դատական ակտերի վերանայմանն ուղղված նախաձեռնությունների պատշաճ հանրային իրազեկման ապահովումը:

- Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազական գործառույթի իրացման շրջանակներում դատախազության կողմից կատարված ոլորտային ուսումնասիրությունների արդյունքների, դրանց հիման վրա հարուցվող քրեական գործերի, դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքներին պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ գործադրված ջանքերի արդյունքների, դատարան ներկայացվող պետությանը պատճառված վնասների վերականգնմանն ուղղված հայցապահանջների, դրանց քննության արդյունքների լուսաբանումը՝ ինչպես համապատասխան վիճակագրության հրապարակման, այնպես էլ կոնկրետ դեպքերով արդյունքների հանրայնացման միջոցով:

- Տարածքային մակարդակով դատախազության մարմինների և բնակչության հաղորդակցության բարելավման նպատակով դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ տեղական, մարզային լրագրողների պարբերական հանդիպումների կազմակերպումը:

- Հանցագործությունները ծնող պատճառների ու պայմանների վերացման ուղղությամբ դատախազների կողմից պետական և համայնքային իշխանության մարմիններին հասցեագրված միջնորդագրերի, հաղորդումների, ինչպես նաև նախաքննությունների արդյունավետության բարձրացմանը, տաք հետքերով հանցագործությունների բացահայտմանն ուղղված՝ նախաքննության և հետաքննության մարմիններին տրվող ցուցումների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հանձնարարությունների, դրանց արդյունքների մասին հանրության իրազեկումը:

- Իրավունքի զարգացման, քրեադատավարական պրակտիկայի բարելավման, ինչպես նաև հանցագործությունների կատարմանը նպաստող օրենսդրական բացերի, թերությունների վերջնական նպատակով դատախազության նախաձեռնությունները, առաջարկությունները և դրանց հետևանքների վերաբերյալ հնարավորինս մատչելի տեղեկատվության հանրայնացումը:

- Սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ագրեսիվ պատերազմի, դրա ընթացքում ադրբեջանական զինված ուժերի, ռազմաքաղաքական ղեկավարության կողմից կատարված՝ մարդկության և խաղաղության դեմ ուղղված ծանրագույն հանցագործությունների, միջազգային հումանիտար իրավունքի կոպտագույն խախտումների, ահաբեկչության, ահաբեկչության հովանավորման դեպքերի, դրանցով հարուցվող քրեական գործերի, քրեական հետապնդումների վերաբերյալ համապարփակ իրազեկվածության ապահովումը:

- Ադրբեջանի կողմից կատարված հանցագործությունների և դրանց հարուցած հումանիտար ճգնաժամի վերաբերյալ ՀՀ դատախազության գործընկեր միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների դատախազությունների հետ տարված աշխատանքի լուսաբանումը:

- Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում կատարված այլ բնույթի առերևույթ հանցագործության դեպքերով կատարվող քննությունների ընթացքի, միջանկյալ արդյունքների հանրայնացումը:

- Հասարակական կազմակերպությունների, հատկապես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ սերտ գործակցության ծավալմանը՝ հատկապես հակակոռուպցիոն վարքագծի խրախուսմանը, միտված ուսուցողական նախաձեռնությունների իրականացումը:

- ՀՀ դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նոր գործառույթի իրականացման նպատակով ստեղծված նոր ստորաբաժանման ձևավորման, այդ նպատակով անցկացված՝ թափուր հաստիքների համալրման մրցույթների անցկացման գործընթացի լիարժեք թափանցիկության, հանրային վերահսկողության ապահովումը՝ ողջ գործընթացի վերաբերյալ հընթացս տեղեկության տրամադրումը: Իսկ դատախազության վերոնշյալ ստորաբաժանման ձևավորումից հետո հիմնական խնդիր դարձավ նաև ապօրինի ձեռք բերված գույքի բռնագանձման ուսումնասիրությունների վարույթների վերաբերյալ ընդհանրական ձևով հանրության տեղեկացվածության ապահովումը:

Հիմնական թիրախային նպատակներից է մնում հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների անշեղորեն կենսագործման հարցում հասարակական հանդուսնի ամրապնդումը:

Այս աշխատանքներն իրականացվել են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ զինվորական դատախազության և ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների

ղեկավարների, քրեական գործերով դատավարական ղեկավարում և հսկողություն իրականացնող դատախազների կողմից տարբեր ձևաչափերով՝ ասուլիսներին մասնակցությամբ, ճեպագրույցների, առանձին հարցազրույցների անցկացմամբ, ՀՀ դատախազության կողմից պատրաստվող հեղինակային՝ տեղեկատվական-քարոզչական բնույթի թեմատիկ տեսանյութերին, ռեպորտաժներին ներգրավման միջոցով:

Մասնավորապես, դատախազների մասնակցությամբ ինչպես դատախազության ռեսուրսներով, այնպես էլ հեռուստատեսային, համացանցային լրատվամիջոցների և լրագրողների հետ համատեղ աշխատանքի արդյունքում, պատրաստվել է 90 տեսանյութ:

Բացի այդ, տեղեկատվական հոսքերն ապահովվել են նաև ամենօրյա ռեժիմով պաշտոնական հաղորդագրությունների, բանավոր և գրավոր հարցումներին օպերատիվորեն պատասխանելու, օրախնդիր հարցերի, դատախազության գործունեության այս կամ այն կողմին վերաբերող՝ հանրային կարծիքի վրա ազդեցություն ունեցող հրապարակումներին, գրառումներին արձագանքելու, պաշտոնական պարզաբանումներով հանդես գալու նախաձեռնություններով, դատախազության պաշտոնական կայքում համապատասխան հրապարակումների տեղադրմամբ: Միայն ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջով հանրությանը հասանելի է դարձել 248 հաղորդագրություն:

Առաջնային է համարվել տեղեկատվության ազատության ներպետական օրենսդրության հիման վրա լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացվող գրավոր հարցումներին սահմանված ժամկետներում, ՀՀ դատախազության իրավասությունների շրջանակներում հնարավորինս բովանդակային պատասխանելու խնդիրը: 2020թ. ընթացքում միայն լրատվամիջոցներից ստացվել է 184 գրավոր հարցում, իսկ բանավոր հարցումների և դրանց պատասխանների տվյալները վերջինիս գերազանցում են մի քանի անգամ, ինչը երաշխիք է լրատվության օպերատիվությունը ապահովելու համար:

Հանրային կապերն ապահովելու, հանրության և դատախազության միջև հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ՋԼՄ-ներով հրապարակվող՝ առերևույթ հանցագործությունների վերաբերյալ հրապարակումներն արձանագրելու և դրանցով հետագա իրավական ընթացակարգերն ապահովելու նպատակով իրականացվել և շարունակաբար իրականացվում է 15 տպագիր մամուլի, 120 էլեկտրոնային տեղեկատվական կայքերի և ռեսուրսների, 15 հեռուստա- և ռադիոընկերությունների մշտադիտարկում: Դրա արդյունքում ընթացք է տրվել 219 հրապարակման: